ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1905 № 8 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԹԻՖԼԻՍ

ԲԱՑՈՒՄՍ Է ԲԱԺԻՆՆՈՒՐԴՍԿԳՐՈՒԹԻՒՆ 1906 ԹՈՒԱԿԱՆԻ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը ոչ մի չը տպուելու յօդուած չի վերադարձնում. ցանկացողները յետ ստանալ՝ կամ պէտք է իւրերը դիմեն յետ ստանալու եւ կամ ուղարկեն փոստի ծախքը:

2. Խմբագրութիւնը իրաւունք ունի հարկաւոր դէպքում փոփոխել կամ կրճատել տպագրուելի յօդուածները:

3 Խմբագրութեան ուղարկած յօդուածները պէտք է լինեն գրուած մաքուր, պարզ եւ մի երեսի վերայ. մանաւանդ պարզ պէտք է գրել յատուկ անունները ու օտարազգի բառերը:

4. Խմբագրութիւնը իրաւունք ունի բոլոր յօդուածները ենթարկել իւր ուղղագրութեան:

5. Թարգմանական յօդուածների հետ միշտ պէտք է ուղարկել եւ բնագիրը, առանց որի ոչ մի թարգմանութիւն չի կարող տպուել:

6. Խմբագրութեան զանազան հարցերով դիմողները պարտաւոր են ուղարկել պատասխանի համար նամակադրոշմ:

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 50 կոպէկ դրամով կամ նամակադրոշմով:

8. «Լուսայիր» որեւէ համար չը ստանալու դէպքում պէտք է յայտնել խմբագրութեան առանձին նամակով մի ամսուայ ընթացքում, որպէս զի կարողանանք պատշաճաւոր դիմում անել փոստային վարչութեան:

Լոյս տեսաւ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

(նկար Եղիշէ Թադէոսեանի)

իւղատիպ մեծադիր պատկերը (96×66 սանտ.) տպուած Լայպցիգի Էմիլ Պինկաու նշանաւոր գործարանում 14 գոյնով:

Գինն է առանց ճանապարհի ծախքի 3 ռուբլի:

Միւնոյն պատկերը, տպուած միւնոյն դիրքով **ԿՏԱՒԻ** վերայ, վաճառւում է իւրաքանչիւր օրինակը 15 ռուբլիով: Ցանկացողները կարող են դիմել մեզ, ուղարկելով պատկերի արժէքը:

ԳԻՒՏ Ա. ՔԱՀ ԱՂԱՆԵԱՆՑ



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1905 № 8 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԹԻՖԼԻՍ 1905
Տպարան Ա. Քուրաբեկեանի. № 21.

Այս համարը հրատարակում է առանց նախնական ցենզուրայի։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

I *Սրտիս տենչանքը. ԽՈՍՏՈՒԿ* . . . 5

II *Հօրական տունը. ՅՈՎՀ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ.* . 6

III *Բուդհայականի բարոյականութիւնը. գերմ. թարգմ. ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս.* . . . 20

IV *Ցիշատակ. ՀԱՄԲ. ԻՍԱՀԱԿԵԱՆ* . . . 29

V *Հակումներ. դրամա. Ց. ԲՈՋԻԵԱՆ* . . 30

VI *Ջէկի, ֆրանս. թարգմ. Տ. Վ.* . . . 49

VI *Պետութեան էութիւնն ու ձեւերը. Հ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ* 56

VIII *Երկրորդ Պահլաւունիք. ՔՆՆԱՍԷՐ.* . . 68

IX *Նոր Իսրայէլի սաղմոսներից ՅՈՎՀ. ԿՈՍՏԱՆԵԱՆ* 76

X *Պրոֆ. Մ. Կաւալեւսկին եւ Ռուսաստանի հպատակները. ԳԱՐ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ* . . . 79

XI *Բէհայիներ կամ Բաբիզմ. ԱՏՐՊԵՏ.* . . 88

XII *Այդեմիրկան. չերքեզական երգ. ՑԱՐ. ԹՈՒՄԱՆԵԱՆ.* 97

XIII **ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ**

*Նամակ Կ. Պոլսից. ***—Նամակ Մոսկուայից. Մ. ՇՈՎՐԵԱՆ.* 101

XIV **ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ**

Բերլինգի հսկայական գիւտը. ՕՐ. ՆՈՒԱՐԴԱՂԱՆԵԱՆՑ. 117

XV **ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ**

1. Մարգար. Հալածանքի ծնունդը։ 2. Ժ. Մասօն. նապաստակ Խէչանի վրէժխնդրութիւնը կամ՝ ինքդ քեզ օգնիր։ 3. Ցար. Եսայեան. Միեւնոյն դագաղում։ 4. Совѣщаніе учителей начальныхъ училищъ*։ 5. Ալէքսանդրապօլից Ղանլիճա. Ն. Ք. Նիկողոսեան։ ԲՐԻՋ։ —Ստացուած գրքեր* 120

XVI **ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

Բարձրագոյն մանիֆէստ կոնստիտուցիայի մասին։—Համառուսական գործադուլ։ Հոկտեմ-

բերի 17-ի մանիֆէստը։ Ժողովրդի քաղաքացիական ազատութիւն։ Ազատութեան տօնախմբութիւնը Ռուսիայում։ Ազատութեան թշնամի տարրերը եւ նոցա դիմադրութիւնը ազատական շարժման։ Խուլիգանային բարբարոսութիւններ հայրենասիրական դիմակի տակ։ Ռուս մամուլի միահամուռ բողոքը կատարուած զազանութիւնների դէմ։ Կառավարութեան մեծ սխալը։ Ի՞նչպէս պիտի հաստատուի սահմանադրութիւնը Ռուսաստանում։—Ազատութեան տօնը Թիֆլիսում։ Հոկտ. 21-ի պարադը։ Մանիֆէստացիայի նախօրը։ Մամուլի ազատութիւն։ Հոկտ. 22-ի Ջարդը։ Սպանուածներ եւ վիրաւորներ։ Խմբագրութեանց գնդակումը։ Սպանուածների թաղումը։ Ռումբերի առասպելը։ Հայ ժողովրդի շնորհաւորութիւնը Հոկտ. 17-ի մանիֆէստի առիթով։ Կուսակցութիւնների երեւան գալը։ Զինուորական դրութեան վերացումն։ Դպրոցական գործադուլ։ Եւրոպական տէրութեանց սպառնալիքը։—Հայոց Ջարդը։—ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ։ Նամակ խմբագրութեան . . 126

XVII ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

«Լումայի» խմբագրութեան։ Մ. ՇԻՈՏ. . 137

XVIII ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ . . 143

XIX ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

XX ՅԱՒԵԼՈՒԱԾ

I. Փրէդերի Միսթրալ. Միրէյօ. Պրովանսական քերթուած. քնն. ուսումնասիրութեամբ թարգմ. ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ. . 17—32

III. Ժ. Ժ. Ռուսսօ. Էմիլ. II գիրք. գերմ. թարգմ. ԻՍ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ . 65—80

ՍՐՏԻՍ ՏԵՆՉԱՆՔԸ

Անհաւաս դարիս յուսահաս զաւակ,
Կարոտ եմ տեսիդ յուսոյ արեգակ,
Ես սէր փնտռեցի եւ ծաղիկ բնութիւն
Եւ սիրոյ կեանքի սուրբ ազատութիւն։

Ուա՜ղ, մանկական ցնորքներ սիրուն.
Կոյսի նազանքով անցաք երերուն
Եւ սիրտս որբացած այրուում է յաւիտ,
Մայր մտաւ տժգոյն լուսատոյ կեանքիս։

Եկէ՛ք պատեցէ՛ք անցած տուներներ,
Եւ ներշնչեցէ՛ք նոր նոր երազներ։
Ցնորքն ու երազ հերոսի կրծքում,
Ցնորքն է բառել գիտունի գանգում։

Ցնորքն ու երազ մեր կեանքի թեւեր
Մարդու մեծութեան, հանճարի ընկեր.
Երկինքն մարդկութեան ցնորքն է սիրում.
Այնտեղ մարգարէն գալիքն երազում։

Երազ եմ ինտռում եւ ոչ տեսութիւն,
Կեանքի ծառն է միայն զուարթ ու սիրուն.
Սեւ կասկածն է հիմք դարիս գիտութեան
Հեռու ինձանից կասկածն յաւիտեան։

Տուէ՛ք շողշողուն փայլը աստղերի,
Որբազանոգին մարգարէների,
Եւ բանաստեղծի վառվռուն երազանք
Այս է իմ սրտի այրուող տենչանք։

ԽՈՍՏՈՒԿ

ՀՈՐԱԿԱՆ ՏՈՒՆ

(Պատկեր իրական կեանքից)

Առանձնասենեակի դուռը բացուեց և ներս մտնող աղախինը յայտնեց ճարտարապետի գալուստը։

—Խնդրիր—, ձայնեց Մելքոն աղան և վերկենալով տեղից շարժուեց դէպի դուռը։

—Ա-ա, բարև ձեզ Մելքոն աղայ—, քիչ յետոյ ներս մտնելով ձայնեց ճարտարապետը և ձեռի կոլորած թուղթը դրեց սեղանի վրայ։

Մելքոն աղան ինքն սկսեց յետ ծալել թուղթը և նայել գծագրած յատակագծին։

—Գեղարուեստի վայելչութիւնը նրա արտայայտութեան մէջն է կայանում. իսկ արտայայտութիւնը անցնում է մեզ գլխաւորապէս մեր տեսողութեան ու լսողութեան միջոցով. եթէ որևէ բան խանգարում է նրա կանոնաւոր և ներդաշնակ արտայայտութիւնը՝ գեղարուեստը խանգարւում է, կորցնում է իւր իլիւզիան։ Օրինակի համար, վերցնենք մի վայելչահասակ կին. երբ տեսնում ես հեռուից՝ գրաււում ես նրա վայելչութեամբ. մօտենում ես, նայում ես դէմքին. և ի՞նչ վատ ես զգում, երբ նրա փարթամ հասակին համապատասխան դէմք չես տեսնում. ամբողջ տպաւորութիւնդ յեղաշրջւում է և ինչ որ անհաճոյ տրամադրութիւն գալիս վրադ։

—Բոլորովին ճիշտ է, պարոն ճարտարապետ, բոլորովին—, հառաչ արձակելով նրա ասածին արձագանք տուեց Մելքոն աղան։

—Նոյնը և տունն է. դա ևս մի գեղարուեստական

քան է. եթէ չկառուցանես նրան համաչափ և ամեն մի մասը իր տեղում, նա կորցնում է իր ամբողջ գեղեցկութիւնը,

Մելքոն աղան խիստ լաւ հասկանում էր ճարտարապետի ասածի միտքը և ըմբռնում. և այդ մտքից աւելի էր յուզւում, երբ մտաբերում էր, որ խարազ Սբէլը չի ուզում իւր փոքրիկ տան տեղը ծախել։ Նեղութիւնը մի նոր ալիքով գալիս էր վրան և նրա տրամադրութիւնն աւելի վատացնում։

—Այդ բոլորը լաւ ես ասում, պարոն ճարտարապետ. բայց դրանով գործը չդրստուեցաւ. դու դրա հնարը գիտես, հնարն ասա։

—Հնարը, հարցնում ես:

—Այո. հնարը։

—Հնարը այդ մի կտոր հողն առնելն է. ուրիշ հնար չկայ։

—Իսկ եթէ չուզենայ ծախել, —պապիրոսի մոխիրը մատի ծայրով թափելով խօսեց Մելքոն աղան։

—Շատ փող առաջարկիր, գրաւիր.

—Իսկ եթէ այդ էլ անեմ, չգրաւի, չծախէ։

—Այն ժամանակ այդ տեղ տուն շինելու մտքից պէտի հրաժարուիս։

—Ինչ, հրաժարուիմ,— համարեա բարկացած կանչեց Մելքոն աղան։

—Այո, հրաժարուիս. այդպիսի դէպքում աւելի լաւ է չշինելը, քան շինելը։

—Պարոն ճարտարապետ, գիտէք դուք ինչ էք ասում,—զայրոյթով առաջ տարաւ, Մելքոն աղան,—ինչպէս կարող եմ ես տուն չշինել. ինչպէս կարող եմ ես առանց տուն մնալ. և այս տունն է, որ ես բնակւում եմ. ոչ կանոնաւոր մուտք ունի, ոչ բաւականին սենեակներ. մի պատուաւոր մարդ է գալիս՝ փողոցի վրայ պատդեզդ չկայ, որ ընդունեմ, հրաւէր պէտք է սարքեմ՝ սեղանատունս 50 մարդուց աւելի չի տանում. նոր կահ-

կարասի պէտք է առնեմ՝ չգիտեմ որտեղ դնեմ. մի խոսքով մնացել եմ շուարած. ինքներդ ասէք, ինչպէս չշինեմ։

Մելքոն աղայի այդ ասածի տոնը այնքան ստիպողական էր, որ նա ինքը ուրիշ կերպ չհասկանալով՝ կասես պահանջում էր, որ ուրիշներն ևս ուրիշ կերպ չհասկանային։

—Այդ ամենը խիստ լաւ ես ասում, բայց և այնպէս այդ պլանով տուն շինելը միտք չունի։ Նայեցէք խնդրեմ մի րոպէ այստեղ,—յատակագիծը բաց անելով մատով սկսեց ցոյց տալ ճարտարապետը.— այս կողմը փողոց է, միւս կողմը նոյնպէս փողոց, որ իրար կտրում են. իսկ այդ իրար կտրած տեղի անկիւնը ձերը չէ, որը հիանալի ճակատ կլինի. ասել է տունդ առանց ճակատի է լինելու։

Մելքոն աղան այդ լսելով աւելի և աւելի յուզուեց, ծխաքարշը հուպ տալով ատամների մէջ՝ չաղլիկ մատը դրեց յատակագծի այն տեղին, որ իրեն չէր պատկանում, ուզելով կասես պոկելու հանելու թղթի երեսից այդ կտորը, որ խանգարում էր իր շինութեան գործը։

—Իսկ եթէ երկու փողոցի երեսին երկու ճակատ անես՝ դա այնքան անճոռնի կը լինի, ինչպէս անճոռնի է դէմքը առանց քթի։

—«Թիւ՛ւ», աւելի զայրացած շշնջաց Մելքոն աղան, և յիշեց դէմքը թափած քթով։ Նրա համար այդ րոպէ դրանից աւելի զզուելի բան չկար.—ուրեմն։

—Ուրեմն այն, որ կամ չպիտի շինես, կամ եթէ ուզում ես անպատճառ շինել՝ այդ մի կտոր տեղը ուժան թէ թանդ պիտի ձեռք բերես. այլապէս բոլոր ծախքդ իզուր է։

Հարցը դրուած էր Մելքոն աղայի համար վճռական կերպով։ Նա մի-երկու վայրկեան մտածող աչքերով նայեց ճարտարապետի երեսին, ձեռը տարաւ լայն ճակատին ու ճաղատ գլխին ձայնեց, «պիտի աշխատել»...

II

Երեկոյ էր։ Մեղմիկ զեփիւռը օրօրուելով անց կենալով քաղաքով՝ փարում էր ծառերի կատարները, մտնում էր բաց դռներն ու պատուհանները, ներս էր սողում տանիքները, գուրգուրում էր իրար հետ ընդգրկուած թփերն ու մացառները, շոյում էր վաստակաբեկ մարդկանց ճակատները, տատանում էր կանանց թել-թել կախ ընկած մազերը, խաղում էր մարդկանց վրայի ամառուայ թեթեւ զգեստների հետ իւր ալիքներով փռփռացնելով նրանց փեշերը. սողում, վազում էր ամեն տեղ իւր հանգիստ բերող զովութիւնն ու թարմութիւնը տարածելու։

Ամառուայ անուշ մի երեկոյ էր։

Պատից քաշ արած լամպարի աղօտ լոյսի տակ նստած էր խարազ Աբելի ընտանիքը։ Լապտերի երերուն ճառագայթները հազիւ լուսաւորում էին խարխուլ շինութեան ցածր պատերը, որոնք իրար հետ մէկ եղած կարծես ճիգ էին թափում պահելու իրենց վրայ կառուցած խարխուլ ձեղունը։ Նեղլիկ լուսամուտից ներս էր հոսում օդը և պտոյտներ կազմելով նորից ետ դառնում, երբեմն-երբեմն տատանելով լամպարի աղօտ երերուն բոցը։

Թաղթի վրայ նստած էր Աբելի ամուսինը՝ Ասլին իր երեք փոքրիկ զաւակներով։ Նրանք լուռ էին։ Կենդանութիւն տուողը մոխրագոյն կատուն էր, որ մէջքով քսուելով մանուկների մէկին, միւսին՝ մեղամաղձոտ մրմռոց էր արձակում և պոչով շոյում փոքրիկների ձեռքերը ն ու դէմքերը։

Տնակի դուռը ճռռալով բացուեց և ներս մտաւ Աբէլը։

Նրա գալը իրեն հետ կասես կենդանութիւն ներս բերեց։

—Հայրիկս, հայրիկս,— կանչեցին մանուկները և վեր թռան նստած տեղերից։ Ամենից մեծը Աւօն վազ տուեց դէպի հայրը, նրա ետևից Սաթիկը, իսկ ամենա-

փոքրը Լուսիկը թևերը պարզեց ու կանգնած տեղից կանչեց.

Հայրիկ, ինձի՛ ալ, հայրիկ, ինձի՛։

—Հիմա, բալիկս,—ձայնեց հայրը։

Ասլին վեր կացաւ տեղից, ընդունեց ամուսնու ձեռից սղլուխի մէջ կապած ընթրիքի համար բերած մթերքը և դրեց դարակի վրայ։

—Հայրիկ, հայրի՛կ, գլկէ։

—Հա՛։ հա՛, գառնուկս, Լուսիկս, Լուսս,—խօսեց հայրը և գրկելով նրան պինդ հուպ տուեց դէմքին։

—Հայրի՛կս, հայրի՛կս,—ձայնեց Սաթիկը և թռաւ նրա գիրկը։

Իսկ Աւօն մնաց հօր ծնկան հետ կանգնած։

—Ասլի, ջուր տուր քիչ լուացուեմ, զովանամ. ովվէ՜հ, էսօր 6 զոյգ ոտնաման եմ կարել՝ հոգիս դուրս է եկել. օրը շո՛ք, երկա՛ր. սաստիկ յոգնել եմ։

—Դէ՛, հայրիկին հիմի մի քիչ հանգիստ թողէք գայ լուացուի. իջէք գրկից,—խօսեց Ասլին և ջուրը տալով ամուսնուն՝ ինքը գնաց խոհանոց ընթրիք պատրաստելու։

Աբէլը լուացուեց, սրբուեց, շորը փոխեց, էլի նստաւ իւր տեղը, երեխաները հաւաքեց չորս բոլորը։

Զեփիւռը շարունակ խաղում էր տնակի շուրջը բոլորած ծառերի կատարների ու թփերի խմբերի հետ, շարունակ առաջացնելով մի ընդհատուող սօսափիւն։ Օդը քանի գնում աւելի և աւելի զօրեղ և աղմկող էր դառնում,

Անհուն երջանկութիւն էր զգում խարազ Աբէլը, որ օրուայ աշխատանքից յետոյ երեկոյեան հովին հանգիստ էր առնում հօրական տան մէջ, բոլորուած իր զաւակներով։

—Իմ բալաս, իմ սիրուն բալաս. էս մայրիկդ քեզ նոր շո՛ր է կարել։

—Հըմ,—ժպտաց Լուսիկը և ծռուելով դէպի Սաթի՛կը չարաճճի ժպիտով նայեց նրա երեսին։

—Մայրիկս ինձ համար էլ է կարել, ա՛յ,—աղմկեց Սաթիկը և վազ տուեց մօր սնդուկից իր նոր շրջազգեստը հանելու։

—Իմս էլ վաղը պատրաստ կլինի,— գլուխը ետ ու առաջ տանելով խօսեց Աւօն, որ հօր ծնկից չէր հեռանում։

—Հա՛, հա՛ Վարդավառին բոլորդ էլ նոր շոր կունենաք,—կրայ բերեց Ասլին, որ ներս մտաւ սեղան պատրաստելու։

—Հայրիկ,—կանչեց Սաթիկը, որ կիսով չափ հօր գիրկն էր բարձրացել։

—Ասա՛ բալիկս։

—Մանչերը Վարդավառին շորերիս վրայ ջուր չե՞ն ածի։

—Որ խելօք մնաք, ինչի՞ պիտի ածեն,—վրայ բերեց մայրը։

—Բա ես հերու խելօք էի, ապա ինչո՞ւ Մարանենց Սիրօն վրէս ջուր ածեց։

—Ու դու էլ վեր-վեր ընկար,—ծաղրեց Սաթիկը։

—Հա՛, վեր-վե՞ր ընկար,—կատակի տուեց հայրը։

—Ճատ սառն էր, հայրիկ ջան, «Պաղ Աղբիւրի» ջրից էր։

—Ամծթ քեզ, հազա՛ր ամօթ, որ ուսումնարան գնալու տղայ ես՝ ջրից վախենում ես,—կատակը շարունակեց հայրը։

Մանուկը ոտքը ոտքի ետևը տարաւ և ամաչելուց խուլ կերպով ժպտաց։

—Ամո՜թ թեզ, հազա՛ր ամօթ,— ջգրացրեց նրան Լուսիկը։

—Էստարի Վարդավառին մենք կերթանք «Պաղ Աղբիւր»,—խօսեց հայրը,—հետներս կը տանենք հաց, ձու կանաչի, տանձ...

—Խնծոլ,—ձայնեց Լուսիկը։

—Սալոր,—վրայ բերեց Սաթիկը։

—Ասեղ,—աւելացրեց մայրը։

—Ասեղ... հա, հա, հա,—ծիծաղեց Աւօն.—ինչի։

—Որ ով շատ խօսի՝ նրա լեզուն ծակենք,— վրայ բերեց մայրը։

Մանուկները չարաճճի ժպիտով նայեցին իրար երեսի և լուռ ծիծաղեցին։

Սեղանն արդէն պատրաստ էր, նրանք բոլորուեցան նրա շուրջը։

—Փառք Քեզ Տէր, Փառաց թագաւոր. գոհանամ շուքրիմ տուածիդ—պարգևածիդ Աստուած. կինս ժիր, երեխաներս կայտառ, ինքս առողջ. տէր եմ ու արժանի չեմ,—գոհունակութիւն յայտնեց Աբէլը, և խաչակնքելով երեսը ձեռը տարաւ բոզբաշին։

III.

Երեկոյ էր։ Սեղանի վրայի դրած հսկայ լամպարը իր լուսամփոփի պատերի միջով արձակում էր մեղմ կաթնագոյն լոյս։

Մելքոն աղան դարձեալ նստած էր իր սովորական տեղում, բազկաթոռին, երկու արմուկով յենուած ծնկներին՝ ճաղատ գլուխը շարժել էր առաջ, որի մսալի կատարը պսպղում էր լամպարի շեշտակի ճառագայթների դիմաց։ Նա հատ-հատ գցում էր սև սաթ թագբէյի խոշոր հատերը, և շրթունքների արանքով երկու կողմից դուրս էր թողնում ծխի սիւնեակները։

Սենեակի և Մելքոն աղայի լուութիւնը խանգարեց քայլերի փափուկ ձայնը։ Նա գլուխը վեր բարձրացրեց և տեսաւ իւր դիմաց խարազ Աբէլին։

—Ա-ա, Աբէլ ջան, դու ես. եկար։

—Հրամանք ես. բարի իրիկուն։

—Բարով եկար։ Հրամէ, նստի։

Աբէլը նստեց Մելքոն աղայի դիմաց և մտածեց. «անպատճառ էլի տանս համար կանչած կլինի, եթէ չի-

բաւի էլի դրա համար է, էլ էս անգամին ոչ մի բան խնայելու չեմ, ինչ բերանս գայ ասելու եմ»։

Մելքոն աղան դանդաղ ետ շրջուեց բազկաթոռի մէջին ու հարցրեց.

—Այսօր օրն ի՞նչ է։

—Հիգշաբթի։

—Ասել է վաղը ուրբաթ, միւս օրը շաբաթ, էն միւս օրը կիրակի Վարդավառ։ Չէ՞։

—Հրամանք ես։

—Ասել է դեռ երկու օր կայ Վարդավառին։

—Այո,—ձայնեց Աբէլը և սպասեց, թէ ինչ էր լսելու Մելքոն աղայից։

—Աբէլ ջա՛ն, էս երկօրս մի ազատ օր չունի՞ս։

—Ինչ կայ որ—, անորոշ հարցրեց Աբէլը։

—Խանթի համար թթու ջուր է հարկաւոր, ոչ ոք չունեմ էնպէս մէկը, որ գնայ բերէ. կիրակի իրիկունը հազար տեղից թթու ջուր են ուզելու, քանի օրէ ջուրը հատել է։ Յոյսս էլի դու ես, տեղի հետ ծանօթ ես. գիտես։ Թէ կարաս վերցրու 2 ջորի, մի 200 հատ էլ շիշ գնա՛ բեր։ Շշին $1^1/_2$ կոպէկ քեզ. խորջդ էլ իմ վրաս։

Երեք ռուբլի՞. դա այնպիսի մի գումար էր Խարազ Աբէլի համար, էն էլ մի օրում, որ նրա համար կատարեալ մի գիւտէր մի բաղդաւորութիւն. ո՞վ գիտէ, քանի օր պիտի նստէր աշխատէր, որ կարողանար երեք ռուբլի ձեռ բերել։ Սաստիկ ուրախութիւնը պատեց նրան և նա մաքում խօսեց. «Վարդավառի ծախքս Աստուած ուղարկեց».

—Ուզում ես մի ընկեր հետդ վերցրու,—մեղմ նայուածքով ատամների արանքով հազիւ բաց թողեց Մելքոն աղան, որ լսողը կը կարծէր, թէ նա ալդ ասում էր երեք ռուբլին մի մարդու տալուն մեղքանալուն համար. մինչդեռ դրա հակառակն էր. նրան հարկաւոր էր, որ երեք ռուբլին միայն Աբէլը առնէր և նա միայնակ ջրի գնար։

—Ընկերն ինչ եմ անում. ինքս մենակ հերիք եմ։

—Լաւ։ Ե՞րբ կգնաս,—այս անգամ բարձր և ուրախ հարցրեց Մելքոն աղան։

—Վաղը ուրբաթ է, ձեռքիս գործերը վերջացնեմ տէրերին տամ, որ գիմացի երկու օրը իրար վրայ կիրակի են, մուշտարիներս առանց ոտնամանի չմնան, շաբաթ առաւօտ կերթամ. կիրակի ծէգին այստեղ կլինեմ։

—Լաւ. շատ լաւ,—գոհ եղանակով ձայնեց Մելքոն աղան և աւելացրեց.—Էնպէս լինի, որ կիրակի առաւօտ ջուրն էստեղ լինի։

—Աչքիս վրայ—, խօսեց Աբէլը և վերկացաւ գնալու։

—Սպասիր, ինչ ես շտապում. սպասիր մի պատառ հաց ուտենք,— նրան նստելու ձեռքով նշան արեց Մելքոն աղան. ապա շաղլիկ ձեռը տարաւ սեղանի վրայի վոհանաձև զանգակին և հնչեցրեց. ու ներս մտնող աղախնին հարցրեց.—

—Սեղանը պատրաստ է։

—Հիմա կլինի,— պատասխանեց ձայնի վրայ ներս մտնող աղախինը և հեռացաւ։

—Է՜է, հիմի Աբէլ ջան, հօ եղածն եղել անցել գընացել է, ծուռը նստենք շիտակ խօսենք,— քիչ լռութիւնից յետոյ հառաչ քաշելով առաջ տարաւ Մելքոն աղան։

«Զէ, ուրեմն սրա կանչելը էլի տան համար է եղել. էտ ջուրը միմիայն պատճառ է», անցկացաւ Աբէլի մտքով։

—Ինչի՞ էտ մի կտոր հողը չծախեցիր, որ էս քանի տարի է ուզում եմ շինութիւն անել, մնացել եմ։

—Մելքոն աղայ, եթէ կարելի լինէր ծախել, մի՞թէ քո խաթրդ կկոտրէի, կմերժէի։

—Ինչո՞ւ համար չէր կարելի։

—Նրա համար, որ հօրիցս ժառանգութիւն մնացած տուն է, չեմ ուզում, որ ծախեմ։ Ողորմած հէրս մեռնե-

լիս ասաց. «որդի՛, ես քեզ բացի էս մի աչք տանից ոչինչ չեմ թողնում, էտ էլ հօրից մնացած օջախ է. պահպանիր, ու դուէլ քու որդոցդ թող. սեպհական մի անկիւն ունենալը լաւ բան է

Մելքոն աղայի դէմքը փայլեց մի տարօրինակ ժպիտով. այդ ժպիտը նենգութիւն էր, թէ բարկութիւն՝ դժուար էր որոշելը. սակայն երևում էր, որ այս ժպիտի մէջ մի գաղտնի, խորհրդաւոր բան կար։ Դառաւ։

—Հէրդ շատ խելօք բան է ասել, ամեն մի հայը էլ իւր որդոցը միևնոյն բանն է ասում։ Բայց այդ չի նշանակում թէ անպատճառ տունդ այն ինչ կամ այս ինչ տեղում պիտի ունենաս։ Տուն ունեցի՛ր, այդ միևնոյնն է, որտեղ ուզում է լինի։

Աբէլի սիրտը նրա ասածի հետ չգնաց, տուն ասելով նա սովոր էր յիշել այն տունը, որ հայրն էը թողել, և այն տեղը, ուր նա շինած էր. ուրիշ կերպ նա չէր կարողանում հասկանալ. խօսեց.

—Չէ աղայ, ուրիշ բան է հօրական տունը։

Մելքոն աղայի հասկացող հայեացքից ծածուկ չմնաց Աբէլի զգացածը. սակայն իբրև թէ ոչինչ չի հասկանում՝ շարունակեց.

—Ես քեզ համար կգտնէի մի ուրիշ ընդարձակ հող, կտալի բաւականին փող, որ գնայիր աւելի լաւը և աւելի ընդարձակը շինէիր։ Սակայն չուզեցիր մի լաւութիւն անել, տունս թողիր շինելու։

—Ինչ անեմ աղայ ջան. ես մեղաւոր չեմ,—խեղճացած ձայնեց Աբէլը և ուսերը վեր թօթուեց, կասես այդպիսով ուզենալով իւր վրայ բարդած մեղքը դէն ձգել։

—Լաւ բան չարիր... մենք այսքան տարուայ իրար դրացի ենք, դեռ իրար հաւի «քշշ» չենք ասել. իրարու լաւն ենք կամեցել... իսկ դու...

Մի րոպէ Աբէլը մնաց լուռ, մտածելիս. նա մտաւ իւր դրացու գրութեան մէջ. սակայն այդ րոպէ երբ յիշեց հօր «պահպանիր» խօսքը՝ իր դրութիւնն աւելի զօրեղ կերպով պատկերացաւ նրան։

— Գուցէ հիմա միտքդ փոխել ես, հա՜,—նրա դէմքի բարի արտայայտութեանը նայելով սիրալիր հարցրեց Մելքոն աղան։

—Աստուածս չանէ, որ հօրս խօսքը գետին ձգեմ,— կտրուկ խօսեց Աբէլը։

—Գեղեցիկ. ասենք էդ լաւ ես ասում. ապա ինչ ես անելու մի քանի ժամանակից, երբ տունդ թափուի. ինչո՞վ պիտի շինես,

—Աստուածս ողորմած է. մէկ օր կհարստանամ, կքանդեմ կշինեմ։

—«Ի՞նչ... ա՜-ա՜-ա՜... դրան մտիկ արա... դեռ բաւական չէ, որ չի ծախում, այլ և ուզում մէկ օր էլ շինել... տանս առաջը կտրել... լա՜... կտեսնե՞նք»... շրջունքները կրծոտելով քթի տակ մրմռաց Մելքոն աղան։

—Ընթրիքը պատրաստ է։ համեցէ՛ք,—դռան միջից ձայնեց աղախինը։

IV

Վարդավառի առաւօտն էր։ Սաղ քաղաքը ոտքի վրայ էր։ Ամեն տեղ կենդանութիւն էր տիրում։ Կարծես Շ... քաղաքացիները որոշել էին այդ տարի վարդավառն աւելի ուրախ անցկացնել։ Վաղ առաւօտից մարդիկ շարան շարան որոնք կառքով, որոնք ոտքով, որոնք ձիով գնում էին քաղաքից դուրս հով այգիները, դալար պարտէզները օր անցկացնելու քէֆ անելու։ Հեռուից լսւում էր փողի ու թմբուկի ձայնը, որ վաղ առաւօտեան «սահարին» էր սկսել. թառի ու ջութակի արձագանքը, որ «ճէզալիրն» էր նուագում. սրնգի երկար ու ձիգ հնչիւնները, որ «Առաւօտ լուսաբեր» էին երգում։ Դրանց հետ խառնուել էին երգերի, խաղերի, պարերի և ուրախութեան աղաղակների ձայները, որոնք մերթ այս կողմից, մերթ այն կողմից արձագանք էին տալիս օդում։ Երևում էր, որ մարդկանց սրտում կուտակուած ուրախութիւնը իւր ընկեր վշտի հետ առիթ էր գտել դուրս թռչելու նրանց

կրծքերից։ Գեղեցիկ էր և սիւնեաց աշխարհի բնութիւնը. իրաքանչիւր քերծ ու ժայռ, իւրաքանչիւր խոտ ու արօտ, իւրաքանչիւր ծառ ու ծաղիկ այնտեղ ունին իրենց վայելչութիւնը։ Թռչունների երգը, երկնքի կապուտակը, ծաղկած բուսականութեան անուշահոտութիւնը, բացուած վարդի տեսքը, խոխոջող առուակը կարկաչող աղբիւրը... այդ բոլորը, բոլորը միասին թեև առած կասես պարում էին իրար հետ։ Մարդը, բնութեան այս ազիզ արարածը զգում էր այդ, օգտւում և վայելչանում նրանով։

Խարազ Աբէլի ընտանիքն ևս պատրաստւում էր գնալու, Ասլին առաւօտ վաղ վերկացած օրուայ պաշարն էր խուրջինում տեղաւորում, տղայոց երեսները լուանում, նրանց շորերը հագցնում, ինքը կոկւում-զուգւում, որ «Պաղ-Աղբիւրը» գնային, սպասում էին Աբէլին, սակայն արևն արդէն ծագել էր, Աբէլը դեռ չէր երևում։

—Դէ՛, Աւօ ջան, դու էս աղլուխը բռնիր տար պատշգամբ, ես մինչև խուրջինը դուրս կբերեմ. նստի՛ր, զգոյշ, մէջը ձուեր են. վայր չձգես, չկոտրես։

—Մայրիկ, խնձո՞ւը. ո՞ւլ է։

—Այստեղ է, զամբիւղի մէջ է, բալիկս։

—Մայրիկ, հայրիկը դեռ շատ է ուշանալու։

—Չէ, հիմի կգայ. քիչ էլ սպասենք,—Սաթիկին պատասխանեց մայրը. և երեխաների հետ դուրս գալով դէպի պատշգամբ՝ նստեց այնտեղ Աբէլի ճամբան սպասելով։ Բայց ուշանում էր Աբէլը։ Արևն արդէն մի նիզակի բոյ վեր էր բարձրացել, Աբէլը դեռ չէր երևում։

—Էդ մարդն ինչի՞ էդքան ուշացաւ։ Բոլոր քաղաք արդէն դատարկուեց. լաւ տեղերը բռնեցին։ Իսկ նա դեռ չկայ։

Այդ ասելու հետ կասես Ասլու սիրտը տրորուեց. կասես դարդը այն չլինէր, որ դրացիներն առաջ գնացին, լաւ տեղերը բռնեցին, այլ այն, որ Աբէլը չէր երևում։ Այդ բոպէ նրա աչքին ընկաւ դրացու որդին. կանչեց.

—Միքէլ, ա՛ Միքէլ։

—Ասա՛ ազի։

—Քը մտաղ, մի գնաս Մելքոն աղունց տուն, իմանաս, թէ Աբէլէն ինչ խաբար ունեն։

—Ի՞նչպէս հարցնեմ,—կանգ առնելով հարցրեց Միքէլը։

—Ասա՛, որ Աբէլին որ խրկել էիք Թթու ջուրը, դեռ չէ եկել։

—Լա՛ւ,—ձայնեց պատանին և թռաւ։

Ասլին մնաց իւր ձագերով նստած պատշգամբում, և միևնոյն միտքն էր որոճում, «ինչի՞ ուշացաւ». և այդ միտքը քանի գնում աւելի և աւելի ծանր էր դառնում նրա համար և անմարսելի։ Նրա մտածմունքները քանի գնում բարդւում էին, ուռճանում և սև գոյն կրում։ Այդ անորոշ թախիծը հետզհետէ քօղաւորում էր մանկամարդ կնոջ սիրտը և ծածկում վշտի շղարշով, որը հետզհետէ ստուարանում էր և հաստատուն դառնում։ Նրա սիրտը ինչ որ անախորժ բան էր նախազգում. „Տէր Աստուած, սա ինչ բան է. արար աշխարհքը այսօր ուրախանում է, իսկ ես...

—Վա՛յ,—յանկարծ ճչաց նա և անզգայօրէն ձեռով խփեց ծնկանը։

—Ի՞նչ եղաւ քեզ մայրիկ,—իրար հետ հարցրին Աւօն ու Սաֆիկը։

—Ոչինչ. էնպէս,—մանուկներին հանգստացրեց Ասլին և յիշեց գիշերուայ երազը, որ իրենք պտրտիզում մի թուալան զուշ ունէին՝ թռաւ ծառի վրայէն գնաց... Այդ երազը վայրկենաբար վերայիշուեց նրա ուղեղում, բայց տպաւորութիւնը չանհետացաւ։ Գիտակցութիւնը նրա սրտի անորոշ տխրութեան հետ զոյգ դարձած աւելի ծանրացաւ նրա մանկատի սրտի վրայ։

Այդ ժամանակ առաջ քալելով երևաց Միքէլը.

—Ասում են «մենք էլ չգիտենք. ջորու մէկն եկել է բեռնով, միւս ջորին ու ինքը չեն երևում»։

—Չեն երևում,—ձայնեց Ասլին և մնաց քարացած.

Նրա ուղեղը վայրկենաբար կանգ առաւ մտածելուց, սիրտն սկսեց սաստիկ բաբախել ու լեզուն համրացաւ բերանում։

—Ասում են, որ մարդ են խրկել ետևից,—իւր խաբարը վերջացրեց Միքելը։

Ասլին մնաց նոյն դրութեան մէջ։ Նրա լացը կամաց-կամաց սկսեց գալ, կոկորդը ճնշւում էր, սակայն նա չուզենալով երեխաների սիրտը կսկծացնել զսպում էր իր արտասուքը։

Մանուկներն զգալով մօր թախիծը, նրա ծնկների հետ շարուած արձանացած կեցել էին և չգիտէին ի՛նչ ասէին։

Այդ րոպէ քաղաքի չափառն երևաց և մօտենալով Ասլուն հարցրեց.

—Խարազ Աբէլի տունը սա՞ է։

—Հրամանք ես, աղայ, Աբէլը ինքը տանը չէ. ինչի՞ համար ես հարցնում։

—Ինչի համա՞ր,—ակամայ կրկնեց չափառը և երեսը շրջեց դէպի փողոցի միւս կողմը։

Այդ ժամանակ երկու մարդ շալակած բերում էին մի արնաքամ դիակ։

Ասլին ճանաչեց այդ դիակը.

—Վա՜յ մայրիկ ջան, ի՛նչ եմ տեսնում,—սաստիկ ճիչ արձակեց նա և ընկաւ ամուսնու սառած դիակի վրայ։

V

Մի տարի, յետոյ Մելքոն աղայի տունը շինուած էր։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱԼԽԱՍԵԱՆ

ԲՈՒԴՀԱՅԱԿԱՆԻ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Պանդուն, մի հարուստ ակնավաճառ էր բրահմանների դասից, կառքով իւր ծառայի հետ գնում էր Բենարէս մի առևտուր գլուխ բերելու. ճանապարհին հանդիպեց մի բուդհայական կրօնաւորի, որ ակնածելի տեսք ունէր ու գնում էր նոյն ուղղութեամբ. ակնավաճառը առաջարկեց նրան նստել իւր կառքի մէջ։ Կրօնաւորը Նարադա էր կոչւում, ընդունեց հրաւէրն ու ասեց.—Ներողութիւն, որ չեմ կարող փող հատուցանել, միայն երևի հնար կունենամ ձեզ փոխադարձ ծառայութիւն մատուցանել որև է խրատով, որ վերցնելու եմ իմ մեծ վարդապետ Բուդհայի, մարդկութեան ուսուցչի հոգևոր դանձից։

Ճանապարհը իրար հետ շարունակեցին. Պանդուն մեծ բաւականութիւնով ականջ էր դնում Նարադայի զրոյցներին։ Մի առ ժամանակից ետ հասան այնպիսի տեղ, ուր ճանապարհը գրեթէ անանցանելի էր. անձրևի հեղեղից փոս էր կտրուել, մի գիւղական սայլ էլ եկել մէջը մնացել։ Սայլի տէրը՝ Դէվալան գնում էր Բէնարես բրինձ վաճառելու. հետևեալ առաւօտ լոյս ծէգին պէտք է քաղաքում լինէր, եթէ ուզում էր ապրանքը ծախել։

Ակնավաճառը այս խափանարիթների վրայ չարանալով հրամայեց իւր ծառայ Մահադուտային, որ գիւղացու սայլը մի կողմը քաշնէի։ Գիւղացին ընդդիմացաւ ու ասեց.— երկիւղալի է սայլին դիպչելը, կարող է պարանուել. այն ժամանակ ես ի՞նչ անեմ, եթէ վրայի բեռը փչանայ, կորչի։

Բայց Պանդուն ուշ չդարձրեց այդ առարկութեան վրայ. Մահադուտան էլ արեց, ինչպէս իրան հրամայած էր։ Սակայն երբ ճանապարհը պէտք է շարունակէին, կրօնաւորը ներքև թռաւ կառքից ու ասեց Պանդուին.— Ներողութիւն արէք, եթէ ձեզ այստեղ թողնեմ. ես բաւական հանգստացել եմ և որովհետև այն գիւղացու մէջ տեսայ ձեր նախնիներից մէկին վերածնուած, ուստի ձեր բարութիւնը փոխարինելու համար կամենում եմ գնալ ու նրան այդ նեղ վիճակում օգնել։

Բրահմանը այս տեղեկութեան վրայ խիստ վախեցաւ, սկըսեց սիեն կերպ պնդել, որ նրա ասածը անկարելի բան է. այն գիւղացին օտար մարդ է, իւր պապը չէ։ Կրօնաւորը պատասխանեց.

—Ես գիտեմ, որ ձեր ճակատագրի ու այս գիւղացու մէջ եղած կարևոր յարաբերութիւնները ձեզ անյայտ են։ Չէ՞ որ կոյրերը տեսնել չեն կարողանում. ցաւում եմ, որ դուք ձեզ վնաս էք պատճառում։ Ես փորձելու եմ ձեզ պաշտպանել ձեր կուրութեան հետևանքներից,

Վաճառականը որ իւր կեանքում նախատինք լսած չէր. սրտին առաւ կրօնաւորի խօսքերի մէջ պարունակուած յանդիմանութիւնը ու հրամայեց ծառային ճանապարհը շարունակել։

Նարադան դարձաւ գիւղացու մօտ, օգնեց, սայլը շտկեցին, ներքև թափուած տոպրակները կրկին բարձեցին։ Այս բանը այնպէս արագ կատարուեց, որ Դէվալան կարծեց թէ կրօնաւորը մի սուրբ մարդ է, աներևոյթ հոգիների հովանաւորութեան տակ, ուստի հարցրեց նրան.

—Ես այդ գոռոզ Բրահմանին երբէք չեմ վիրաւորել, ինչու՞ նա այնպէս տմարդի վարուեց։

—Իմ բարեկամ, ասեց կրօնաւորը, դուք անարդար բան չէք կրում, այլ համբերում էք այն վարմունքին, որ դուք ձեր անցեալ կեանքում ակնավաճառին արած կը լինէիք, եթէ նրա տեղը լինէիք։ Եթէ ձեր մտքերը գուշակելու մէջ սխալ չեմ, կարծում եմ, եթէ այս բոպէին ակնավաճառի տեղը լինէիք և այնպէս ուժեղ ծառայ ունենայիք, ճիշտ այնպէս կը վարուէիք, ինչպէս նա։

Գիւղացին լսածները խղճի տակ դնելով խոստովանեց, որ կրօնաւորը արդար է նկատում, խոստացաւ ապագայում աւելի յարգանքով վերաբերուել դէպի մարդիկ։

Սայլի բեռը արդէն ուղղած էր, ուստի երկուսն էլ ճանապարհը շարունակեցին դէպի Բենարէս։ Մէկ էլ յանկարծ այն տեսան, որ սայլի ձին խրտնեց ու կողքի վրայ քաշեց։

—Ա՜յ օձը, օձը, գոչեց գիւղացին։ Բայց կրօնաւորը լաւ դիտելով ընկած առարկան, որից ձին զարհուրել էր, տեսաւ որ ոսկով լիք քսակ էր։ Իսկոյն հասկացաւ, որ սա ակնավաճառինը պէտք է լինի։ Վերցնելով յանձնեց գիւղացուն և ասեց.

—Պահիր այս քսակը. Բենարէս հասնելուն պէս կը գնաս այն իջևանը որ քեզ կասեմ։ Այնտեղ կը հարցնես Պանդու Բրահմանի մասին ու քու ձեռով այս քսակը կը տաս նրան։ Քո դէմ արած տմարդի վարմունքի պատճառով նա անշուշտ ներողու-

թիւն կը խնդրի։ Կասես նրան որ դու արդէն ներել ես ու նրա բոլոր ձեռնարկութիւնների համար բաղդաւորութիւն ես ցանկանում։ Որովհետև՝ քանի որ նա շատ յաջողութիւն ունենայ, այնքան աւելի օգտաւէտ ու լաւ կը լինի քեզ համար։ Քու ճակատագիրը շատ պարագաներում կախուած է նրանից։ Եթէ ակնավաճառը աւելի բացատրութիւնների ետնից ընկնի, առաքիր նրան Վիհարա (Բուդհայական տաճար կամ ապաստանարան), ուր ես պատրաստ եմ նրան ամեն կարևոր բանում օգնելու։

Այդ միջոցին Պանդուն հասել էր Բենարէս և իւր առևտրի ընկեր Մալլիքային, հարուստ բանկիրին, գտել խօսում էր։

—Ես կործանուածի պէս եմ, պատասխանեց նա, չեմ կարող ոչ մի առևտուր սկսել ձեր հետ, եթէ չկարենամ մի սայլ ընտիր բրինձ գնել թագաւորի սեղանի համար։ Իմ հակառակորդը լսելով որ ես թագաւորի գանձապահի հետ պայման եմ կապել վաղուանից բրինձ մատակարարել, ինձ վնասելու համար Բենարէսում եղած բոլոր բրինձը գնել է։ Գանձապահին կաշառով գրաւել է, նա չի ուզում պայմանից պոկ գալ։ Այդ պատճառով վաղը դառնալու եմ մի մնանկ մարդ, եթէ Կրիշնան երկնքից մի հրեշտակ չուղարկի ինձ օգնելու։

Մալլիքան իւր վիճակից այսպէս դանդատուում էր, երբ Պանդուն նկատեց որ իւր ոսկու քսակը չկայ։ Կառքի մէջ փընտռեց, չկար. կասկածն ընկաւ ծառայ Մահադուտայի վրայ. նրանից խոստովանութիւն հանելու համար ենթարկեց խիստ հարց ու փորձի և ծեծի. խեղճ մարդը ինչքան էլ երդւում էր իւր անմեղութիւնը հաստատելու համար, զուր էր անցնում. անճարացած մտքի մէջ մխիթարւում էր թէ այդ պատիժն ու կսկիծները երևի առաջուց գործած մեղքերի և մանաւանդ այն անիրաւութեան պատճառով էին, որ նա խեղճ գիւղացուն հասցրել էր։

Ոստիկանը դեռ զբաղուած էր քամբաղդին վերջին հարուածները ուտացնելով, երբ վրայ հասաւ գիւղացին և ի զարմանս բոլոր ներկայ եղողների, Պանդուին յանձնեց ոսկու քսակը։ Իսկոյն ազատ թողնուեց ծառան դահճի ծնկան տակից. սակայն նա խոր վշտացած լինելով, այլ ևս չուզեց ծառայել, ծածուկ փախաւ իւր տիրոջ մօտից և միացաւ լեռներում շրջող մի աւազակախմբի, որ նրա ուժեղութեան ու աներկիւղութեան պատճառով ընտրեց իրան գլխաւոր։

Երբ Մալլիքան լսեց որ այդ գիւղացին ընտիր բրինձ ունի, թագաւորի սեղանին վայել, ողջ սայլի բեռը գնեց Դէվա-

լայի ուզածի եռապատիկը վճարելով։ Պանդուն գոհ և ուրախ որ իւր սեպհականութիւնը կրկին ձեռն եկաւ, շտապեց իսկոյն դէպի Վիհարա՝ Նարադայից ուրիշ տեղեկութիւններ խնդրելու։

Նարադան ասեց. ես կարող էի քեզ մի բացատրութիւն տալ. բայց իմանալով որ դու անընդունակ ես հոգևոր ճշմարտութիւն ըմբռնելու, գերադասում եմ լռել։ Այնուամենայնիւ քեզ կը տամ հետևեալ խորհուրդը, «Վարուիր քեզ հանդիպող մարդու հետ այնպէս, իբրև թէ այդ դու լինէիր. եղիր նրա հետ քաղցրաբարոյ, ինչպէս կը ցանկանայիր ինքդ քաղցրաբարոյութիւններ տեսնել և լսել։ Այս կերպով դու կունենաս բարի գործողութիւնների մի ցանք, որ անկասկած քեզ սիրուն պտուղներ կը բերի»։

—Տուր ինձ, ով Նարադա, քու խոստացած բացատրութիւնը, թախանձեց ակնավաճառը, նրանից ես աւելի լաւ կարող եմ քու խորհրդին հետևել։

—Դէ լաւ, խօսեց Նարադան, ես կը տամ քեզ գաղտնիքի բանալին, լսիր։ Ես մի պատրանք է, խաբէութիւն է, և նա ով միայն իւր Եսին է հետևում, հետևում է մի շրջմոլիկ լոյսի, որ նրան դէպի ճահիճն է տանում։ Ես խաբէութիւնը Մայայի քողն է, որ մեր աչքերը փակում է և չի թողնում մարդկանց հետ միացնող նեղ կապերը նշմարենք և մեր ես-ը ուրիշների ես-ի մէջ ճանաչենք։ Տգիտութիւնը մեղքի աղբիւրն է։ Ով ուրիշներին անիրաւութիւն է անում, իրան է անում։ Թող ես-ի խաբէութիւնը քո հոգուց չքանայ, իսկոյնևեթ կըգտնես արդարութեան ճանապարհը։ Նա, որի աչքը Մայայի քողով կուրացած է, տեսնում է միայն անթիւ ես-եր, դրանով անընդունակ է դառնում ըմբռնելու բոլոր կենդանի արարածների, ամենքան իւր մէջ պարունակող մանկութեան արժանիքը։

Ակնավաճառը պատասխանեց.

—Արժանապատիւ հայր, ձեր խօսքերը ինձ համար անասելի կարևորութիւն ունեն, նրանք յաւիտեան կըմնան յիշողութեանս մէջ։ Բենարէս գնալիս մի չնչին բարութիւն արի աղքատ կրօնաւորիդ ու նրա փոխարէն այսպէս առատ վարձատրուեցի։ Անհուն շնորհապարտ եմ ձեզ, որովհետև առանց ձեզ ոչ միայն քսակս կորցրած կը լինէի, այլ և անկարող Բէնարէսում գործ տեսնելու, որ ինձ գրեթէ աղքատութեան մէջ էր գցելու։ Բացի այդ ձեր հոգացողութիւնը գիւղացու համար, բրնձի սայլը քաղաք ուղարկելը իմ բարեկամ Մալլիքայի կործանման առաջն առաւ։ Եթէ բոլոր մարդիկ ձեր ուսմունքների ճշմարտութիւնը ճանաչել կամենային, ինչքան հրաշալի և սի-

ռուն կլինէր աշխարհը։ Իմ փափագն է, որ Բուդհայի խմաստութիւնը ողջ աշխարհին յայտնի դառնայ, ուստի իմ տանը շինելու եմ մի Վիհարա, խնդրում եմ ինձ յաճախ այցելութեան գաք, որպէս զի այդտեղը կարենամ Բուդհայի աշակերտների եղբայրութեանը նուիրել։

Դրա վրայ տարիներ անցկացան և Պանդուի Վիհարան Կաուզհամբի մէջ դարձաւ հռչակաւոր ուխտատեղի բուդհայական ուսուցիչների և աշակերտների համար։

Այդ միջոցին դրացի թագաւորը լսել էր Պանդուի ակնների գեղեցկութեան համբաւը, գանձապետին ուղարկեց նրա մօտ որ թանկագին ակներով զարդարուած ոսկէ թագ շինել տայ։ Պանդուն յանձն առաւ ու աշխատանքը աւարտելուց ետը վերցրեց թագը, ուղևորուեց թագաւորի մայրաքաղաքը, հետը տանելով ուրիշ հազուագիւտ զարդարանքներ էլ, յոյս ունէր այլ շահաւէտ գործեր անելու։ Քարուանը շրջապատած էր զինուորներ պահապաններով, բայց հէնց որ լեռների մէջ տեղը հասաւ, ենթարկուեց Մահադուտայի աւազակախմբի յարձակման ու ամբողջովին կողոպտուեց։ Պանդուն մեծ նեղութիւնով հազիւ ձեռներից ազատուեց։ Այս ձախորդութիւնը ահագին հարուած տուեց Պանդուի հարստութեան։ Դրանից ետ ուրիշ կորուստներ էլ կրեց։ Բնական է որ խիստ ընկճուէր, բայց այդ անաջողութիւնները քաջութեամբ տարաւ, որովհետև ինքն իրան այսպէս էր մտածում. «այս հարուածները կրում եմ այն մեղքերի համար, որ իմ անցեալ կեանքում գործել եմ։ Երիտասարդ հասակումս ես անողոք էի զէպի ուրիշները. եթէ այժմ իմ գործերի պտուղները հնձում եմ, տրտնջալու իրաւունք չունիմ»։

Պանդուն միայն այն պատճառով էր անխիթար, որ այլ ևս միջոց չունէր ուրիշներին բարութիւն անելու և իւր Վիհարայի միջով ճշմարիտ կրօնի ուսմունքների տարածմանը նպաստելու։

Դարձեալ բաւական տարիներ անցան. ճակատագիրը կամեցաւ, որ Նարադայի աշակերտ Պանտաքան Կաուզհամբից լեռների վրայով ճանապարհորդելիս աւազակների ձեռն ընկնի։ Որովհետև մօտը բան չունէր, աւազակապետը նրան լաւ ծեծեց ու թողեց որ հեռանայ։ Հետևեալ առաւօտ, երբ Պանտաքան անտառների միջով քայլում էր, ականջով ընկաւ մարդկանց վէճ ու աղմկալի կռիւ. մօտ գնալով նշմարեց բազմաթիւ կատաղի աւազակներ և նրանց մէջ տեղը իրանց գլխաւոր Մահադուտան։ Այս վերջինը կռուում էր յուսահատաբար, ինչպէս շներով

պաշարուած մի առիւծ. իւր վրայ յարձակուողներից շատերին թափել էր գետնին. բայց նրանք չափազանց շատ էին, երկար կռուելուց ետը ընկաւ Մահադուտան վէրքերով պատած և ըստ երևութին մեռած։ Հէնց որ աւազակները նրան թողին հեռացան, Պանտաքան մօտ վազեց վիրաւորին և տեսաւ որ դեռ վրէն շունչ կայ։

Մօտակայ առուից պաղ ջուր հասցնելով նրան ուշքի բերեց։ Վիրաւորը աչքերը բանալով բացականչեց. «Ո՞ւր են այն ապերախտ շները, որոնց ես յաղթութեան ու աւարի եմ առաջ նորդել։ Առանց ինձ, իրանց պետի նրանք շուտով կը չքանան հալածական չաղալների պէս։

—Այժմ մի մտածէք ձեր մեղսալից կեանքի ընկերների վրայ, ասեց Պանտաքան, այլ ձեր հոգու փրկութեան վրայ։ Ահա ձեզ խմելու ջուր, թողէք վէրքերդ լուանամ, գուցէ կարողանամ ձեր կեանքը ազատել։

—Ոհ, ոհ, կարեվէր հառաչեց Մահադուտան, արդեօք դուք այն մարդը չէ՞ք, որին երէկ ծեծեցի, այժմ եկել էք ինձ այս նեղ տեղը օգնելու։ Ջուր կանցնի ձեր ջանքը, աչքի լոյս, ես կորած մարդ եմ։ Ստոր արարածները խիստ ծանր են վիրաւորել, հարուածները իմ սովորցրածի պէս հասցնելով։

—Ինչ որ ցանել էք, այն էլ հնձում էք, աւելացրեց Պանտաքան, ձեր ստացած հարուածները ձեր սեպհական արարքներն են։

Ճշմարիտ, շատ ճշմարիտ է, ասեց աւազակը, իմ տեղս է. բայց ինձ համար խիստ տխրագին է, որ չար արարքներիս լիառատ հունձը ապագայ կեանքում պէտք է ճաշակեմ, Ոհ, սուրբ մարդ, խորհուրդ տուէք ինձ, ի՞նչ հնարով կարող եմ կուրծքս ճնշող այս կեանքի մեղքերը թեթևացնել։

Պանտաքան պատասխանեց։

—Դուրս հանեցէք ձեր մեղաւոր ցանկութիւնները, սպանեցէք չար կրքերը և լցրէք ձեր հոգին սիրով դէպի ձեր նմանները։

Աւազակապետն ասեց.

—Ես անթիւ չարիքներ եմ արել և ոչ մի բարիք։ Ի՞նչպէս կարող եմ դէն շպրտել այն ցանցը, որ մեղքերս գցել են իմ վրայ։ Ճակատագիրս տանելու է ինձ դժոխքը և ես երբէք հնար չեմ ունենալու ազատութեան ճանապարհն ընկնել։

Սրա վրայ Պանտաքան ասեց։

—Ճիշտ է, ձեր ճակատագիրը ապագայ վերածնման միջոցին պէտք է ձեր չար գործերի սերմերը հասունացնէ։ Ոչ ոք չի կարող իւր արարքների հետևանքից խոյս տալ։ Բայց և

այնպէս վնասելու պատճառ չունէր։ Մի մարդ, որ Ես-ի խաբէութիւնը իւր բոլոր մեղաւոր կրքով դուրս է վռընդել, նա կարող է օրհնութեան աղբիւր լինել իւր և ուրիշների համար։ Իբրև այդ բանի ապացոյց կրպատմեմ ձեզ հետեւեալը. «Կանդատա անունով մի հզօր աւազակ մեռաւ առանց զղջումի և իբրև չար ոգի կրկին ծնունդ առաւ դժողքի մէջ, ուր նա սոսկալի տանջանքներ կրեց։ Այնտեղ նա շատ կալպաս (հնդկական մեծ ժամանակաշրջան) անցկացրեց առանց փրկութեան, մինչև որ Բուդհան երկրի վրայ երևաց ու երկնային լուսաւորութիւն բերեց։ Դրանով լոյսի ու յոյսի մի ճառագայթ ընկաւ տանջուողների հոգու մէջ և Կանդատան բարձրաձայն կանչեց.

—Ով օրհնեալ Բուդհա, գթա ինձ, ես տանջւում եմ սարսափելի կերպով, ցանկանում եմ կրկին դառնալ դէպի առաքինութեան շաւիղը։ Բայց ինձ ու ինձ անկարող եմ, օգնեցէք, գթացէք ինձ, տէր։ Անշուշտ Կարմայի օրէնքն է, որ բարութեան ամենաչնչին գործողութիւնը բարութեան նոր սերմեր է ծնում, որոնք աճելով հոգուն սննդում են իւր զանազան թափառումների մէջ այնքան ժամանակ, մինչև որ նա բոլոր փորձութիւններից վերջնական ազատութիւն գտնում է Նիրվանայի մէջ։

Երբ Բուդհան աղաչող չար ոգու ձայնը լսեց, մի սարդ ուղարկեց նրա մօտ ոստայնի թելի վրայ։ Սարդը ասեց Կանդատային—ամուր կպիր այս թելին և բարձրացիր վերև։ Կանդատան պատուէրը կատարեց, այն էլ շատ յաջողութեամբ։ Թելը ամուր էր, չը կտրուեց. Կանդատան բարձրանում էր շարունակ վերև ու վերև։ Բայց յանկարծ նկատեց, որ թելը ճռճռում օրօրւում է. իւր տանջանքի մասնակիցներից շատերը նոյնպէս փորձ էին անում վեր բարձրանալու։ Ծանրութիւնը մեծ էր, թելը ձգուեց ու խիստ բարակեց։ Այս նշմարելով Կանդատան երկիւղի մէջ ընկաւ, չլինի թէ թելը կտրուի։ Նա մըտածեց միայն իւր անձի վրայ և իրան հետևողներին ձայն տուեց.—թելը բաց թողէք, այդ մենակ ինձ է։ Այդ իսկ վայրկենին կտրուեց թելը և Կանդատան ընկաւ կրկին դժողքը։

Այսպէս ուրեմն նա Ես ի խաբէութեանը դեռ չէր յաղթահարել, չէր ճանաչում անձնուրացութեան զարմանալի զօրութիւնը, որպէս զի առաքինութեան և արդարութեան ազնիւ ճանապարհին հասնի։ Այդ ճանապարհը բարակ է ինչպէս սարդի թելը, բայց կարող է միլիոնաւոր մարդիկ իւր վրայ կրել. քանի շատ է նրա վրայով ելնողների թիւը, այնքան թեթև է իւրաքանչիւր անհատի ուժերի լարումը։ Հէնց որ մարդի սրտի մէջ յղանում է այն միտքը, թէ թելը միայն ինձ համար է, ու-

բիշի բաժին չեմ տալ. իսկոյն կտրում է և նա ընկնում է դարձեալ ինքնասիրութեան ու դատապարտութեան նախկին վիճակը։ Ինչ բան է դժոխքը։ Նա ոչ այլ ինչ է, եթէ ոչ շահասիրութիւն, և Նիրվանան է արդարութեան կեանքը։

—Մի խնայէք ինձնից սարդի թելի պաշտպանութիւնը, ասեց մեռնող աւազակը, երբ Պանտաքան խօսքը վերջացրել էր— ես դրանով դժողքի խորքից կը բարձրանամ վերև։

Փոքր միջոց լռելուց ետ շարունակեց։

—Լսէք, արժանապատիւ հայր, ձեզ ասելու խոստովանք ունեմ։ Ես Կաուզհամբի ակնավաճառ Պանդուի ծառան էի. երբ նա ինձ անարդար տեղը գանակոծութեան ենթարկեց, ես փախայ նրա մօտից ու դարձայ աւազակապետ։ Մի ժամանակ լրտեսների միջոցով իմացայ, որ նա լեռներով անցնելու է, յարձակուեցի վրէն և հարստութեան մեծ մասը խլեցի։ Բարի եղէք, գնացէք նրա մօտ, ասէք, որ ես նրա գործած անիրաւութիւնը սրտանց ներել եմ, խնդրեցէք որ նա էլ իւր կողմից իմ յափշտակութիւնը ների։

Քանի որ նրա մօտ էի, նա քարից էլ ամուր էր. նրանից վերցրի ինքնասէր ընաւորութիւն։ Այնուհետև լսել եմ, որ նա սրտով փոխուել, այժմ դառել է գթութեան և բարեգործութեան տիպար։ Այդ պատճառով չեմ ուզում նրան պարտական մնալ. ասա, որ թաղաւորի համար շինած թագը և միւս գանձերը այստեղ մօտիկ մի այրի մէջ պահուած են։ Այդ բանը երկու հոգի գիտէին իմ մարդկանցից, նրանք էլ մեռած են։ Թող Պանդուն զինուած մարդկանցով գայ և իւր սեպհականութիւնը տանի։

Մահադուտան այրի տեղը մանրամաս նկարագրելուց ետ շունչը փչեց Պանտաքայի բազուկների վրայ։ Սա որ Կաուզհամբի հասաւ, գնաց ակնավաճառի մօտ և պատմեց նրան իւր զբաղխին եկածը։ Պանդուն զինաւոր մարդկանցով իսկոյն գնաց նկարագրած տեղը իւր ապրանքը բերելու։ Շուքով թաղեցին աւազակապետին և իւր ընկերներին։ Պանտաքան գերեզմանի վրայ ասեց Բուդհայի հետևեալ խօսքերը.

—Անձնասիրութիւնը ծնուում է չարիք և կսկիծ, միայն իւր սեպհական եսի միջոցով կարելի է չարիքից խոյս տալ և մաքրուել։ Սրտի մաքրութիւնը և անմաքրութիւնը Եսի բաղկացուցիչ մասերն են. ոչ ոք չի կարող ուրիշ մէկի մաքրել։ Դուք ինքներդ պէտք է հետամտէք մաքրուելու։ Միայն Բուդհաներն են ուսուցիչ և հրահանգիչ։ Մեր ճակատագիրը (կարմա) ոչ Իշվարայի գործ է, ոչ Բրահմայի, ոչ Ինդրայի և ոչ այլ աստ-

ծու, այլ ծնունդ է մեր սեպհական գործողութիւնների։ Իմ վար մունքը ինձ կրող մայրական գոգն է և ինձ բաժին ընկած ժառանգութիւն։ Նա նզովք է, երբ ես անիրաւութիւններով եմ ապրել, և օրհնութիւն՝ երբ առաքինի ու արդար եմ եղել։ Իմ կենցաղը այն միջոցն է, որով ես միայն կարող եմ իմ փրկութիւնը ձեռք բերել։

Պանդուն իւր գանձերը բերեց Կաուղհամբի, զգուշութեամբ գործ ածելով իւր կարողութիւնը առաջուանից մեծացրեց։ Երբ խոր ծերութեան էր հասել ու հոգևարք վիճակում էր, իւր մահ ճի շուրջը կանչեց բոլոր որդիներին, թոռներին ու ասեց.

—Իմ աչքի լոյս զաւակներ, ուրիշին մի դատապարտէք թէ ինչու գործով յաջողակ չէք։ Ձեր ձախորդութեան աղբիւրը փնտռեցէք ձեր մէջ։ Եթէ դուք ունայնասիրութեամբ չկուրանաք, կարող էք այդ աղբիւրը գտնել. երբ այն գտել էք, նըշանակում է գտել էք փրկութեան ճանապարհը։ Ձեր տառապանքների պալասանը ձեր մէջ փնտռեցէք։ Ամենեին մի թողէք, որ ձեր աչքերը խաւարին Մայայի քողով. յիշեցէք այս խօսքերը, որ Կեանքիս իբրև թալիսման պէտք են եկել.—Ով օգնում է ուրիշի, այդ իրան է օգնում։ Հանեցէք ձեր հոգու միջից Եսի խաբէութիւնը. դրանով դուք գնացած կը լինէք ճշմարտութեան և արդարութեան ճանապարհով։

Թարգ. գերմ. ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս.

ՅԻՇԱՏԱԿ

Ազգեր կը գան, կանհետանան,
Մարդիկ ծնուին, կը մահանան.
Միայն կանգուն, միշտ համարձակ,
Անմահ կը մնայ սուրբ յիշատակ։

Շքեղ տներ, մեծ պալատներ
Շուտով կանցնեն, որպէս ստուեր.
Միայն կանգուն, միշտ համարձակ,
Յաւէրժ կը մնայ սուրբ յիշատակ։

Կը թողուի գեղը գեղուհու,
Կանցնի ոյժը քաջ պատանու.
Միայն կանգուն, միշտ համարձակ,
Անվերջ կը մնայ սուրբ յիշատակ։

Կը փոխեն գետք իրենց ընթացք,
Կանհետանան շատ արարածք.
Միայն ատուած, միշտ նզուած
Անջինջ կը մնայ հա՛ր յիշատակ։

Ազգին սիրեց ազնիւ Վարդան,
Ազգը մատնեց անարգ Վասակ,
Ազգը մոռցաւ շա՜տ ու շա՜տ քան,
Բայց չը մոռցաւ Վասա՛կ, Վարդա՛ն։

ՀԱՄԲ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

5 յուլիսի 1899 թ.
Բագու

ՀԱԿՈՒՄՆԵՐ [1]

Դրամա 4 արարուածով

—

III ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Նինայի հիւրասենեակը. (տես I գործ.)։ Աղախինը կարգի է բերում սենեակը։

ԱՆՆԱ. Յոգնեցիք այս անթիւ հիւրասիրութիւններից։ Մի քանի օր է ընդամենը ինչ Նինան մի հիւրասիրութիւն էր կազմել Հենրիկի սիրուն, մի հիւրասիրութիւն էլ վաղն է կազմուած, երևի այս էլ մի ուրիշի սիրուն։ Թէ Նինային ես եմ ճանաչում, անշուշտ մի նորը գտած կը լինի։ Բժշկի սիրոյ այս մի շաբաթը շատ հետաքրքիր տեսարաններ ունէր։ Այսչափ համբոյրներից իսկապէս որ մարդ շուտ կը ձանձրանայ, ահա թէ ինչու Նինան միշտ նորն է փնտռում։ Բայց գովելի է, որ միշտ խաղաղութեամբ է գործը վերջացնում ու ճամպայ դնում։ Ասենք ճամպուողներն էլ աւելի ուրախ պիտի լինեն, քանի որ ոչինչ չեն կորցնում։

ՆԻՆԱ. (*Մտնում է դրսից*)։ Ամեն ինչ գնուած է, Աննա. նայիր ու կարգադրիր ծառային։ Վաղը երեկոյեան հիւրերը պարտիզում պէտք է անցնեն. պատուիրել կարգի բերել, պարտէզը մաքրեն և գոյնզգոյն լապտերներ կախեն։ Աթոռները հէնց այսօրուանից կարող են շարել։ Մի խօսքով այնպէս լինի, որ ես գոհ մնամ, դու հօ լաւ գիտես իմ ճաշակը։ (*Հանում է վերարկուն ու գլխարկը*)։

ԱՆՆԱ. Ամեն ինչ գոհացուցիչ կը լինի։ (*Օգնում է հանուելու*)։

ՆԻՆԱ. Դու այժմ նախ գնա, գնուած իրերը տեղաւորիր։

ԱՆՆԱ. Իսկոյն։ (*գնում է*)։

ՆԻՆԱ. Կատարեալ յոգնեցի այստեղ-այնտեղ վազվզելուց. հազարաւոր առնելիք կայի։ Լաւ է որ Աննայի պէս նաժիշտ ունինք, ամեն ինչ իսկութեամբ հասկանում է ու արագ կատարում, այլապէս տանն էլ հանգիստ չը պիտի ունենայի։ Մեծ նշանակութիւն ունի տան ծառան, մանաւանդ որ տան բոլոր գաղտնիքները ամենից շուտ ու լաւ միայն ծառաներն են նկատում։ Եւ ես Աննայից ոչ մի գաղտնիք չունիմ. ինչու թագցնել երբ նա ինքը կարող է ամեն ինչ հեշտութեամբ նկատել և դեռ աւելի վատ ենթադրութիւններ անել։ Երկար տարիներ մեր տանը լինելով, մենք իրար այնպէս ենք սովորել, որ այժմ վստահութեամբ կարողանում եմ նրա հետ զրուցել. ընկերից անգամ հաւատարիմ գաղտնապահ է, նոյն իսկ օգնում է ինձ խորհուրդներով։ Դեռ չը գիտէ Գէորգի մասին, շատ կ'ուրախանայ։ Ա՛ննա, Ա՛ննա։

ԱՆՆԱ. (Մտնում է)։

ՆԻՆԱ. Վերցրու գլխարկս ու վերարկուս տար այստեղից, գուցէ մէկը գալիս է։

ԱՆՆԱ. (Վերցնում է իրերը ու քայլում գնալու)։

ՆԻՆԱ. Դու գիտե՞ս վաղը ինչ հետաքրքիր հիւր պէտք է ունենանք։

ԱՆՆԱ. Նոր փեսա՞յ։

ՆԻՆԱ. Հենրի՞կը կարծում ես։

ԱՆՆԱ։ Աւելի նորը։

ՆԻՆԱ. Դու գիտե՞ս արդէն։

ԱՆՆԱ. Ոչինչ։

ՆԻՆԱ. Երևի չե՞ս էլ կարող գուշակել։

ԱՆՆԱ. ? !

ՆԻՆԱ. Գէ՞որգը. ճանաչո՞ւմ ես, Գէորգը,

ԱՆՆԱ. Գէ՞որգը. Տէր Աստուած։ (Վեր է դնում ճեռքի իրերը)։ Բայց այդ...

ՆԻՆԱ. Հա, հա... գիտե՞ս ես ով եմ։ Թող այժմ ամբողջ քաղաքը ճաքուի։ Տեսա՞ր ինչպէս սարքել գիտեմ։

ԱՆՆԱ. Բայց այդ ինչպէ՞ս եղաւ։

ՆԻՆԱ. Հենրիկն է մեզ ծանօթացրել անցեալ օրը ապա աչքերս այնպէս շարժեցի, որ մի կէս ժամից յետոյ նա այլ ևս ինձնից չէր կամենում բաժանուել։ Շատ ինտելիգենտ տղայ է. հաւանո՞ւմ ես։

ԱՆՆԱ. Ինչպէս թէ։ Այնքան հարուստ...

ՆԻՆԱ. Այո՛, շատ հարուստ է. այժմ ամեն ինչ լաւ կը լինի. ես կ'ամուսնանամ, քեզ էլ հետս կը տանեմ—

ԱՆՆԱ. Չէ, չէ, ես չեմ գալ, քեզ բարի ճանապարհ։

ՆԻՆԱ. Ինչու, կամենում ես ինձ թողնել։

ԱՆՆԱ. Ես կը մնամ մայրիկի մօտ, հիւանդ օրերին նրան մենակ թողնել լաւ չէ։ Քեզ հետ գալ... չէ, մեծ տուն է, մի քանի ծառաներ կ'ունենաք, իսկ նրանց մէջ հանգիստ ապրել անկարելի է։

ՆԻՆԱ։ Դու մոռանում ես, որ ամէն իրաւունք իմ ձեռքն է. ով կարող է քեզ բան ասել։ Բայց դու ճիշտ ես ասում, որ մայրիկին թողնելը լաւ չէ։ Զանգահարում են, տես ով է։

ԱՆՆԱ. (Գնում է)։

ՆԻՆԱ. Մնացել եմ տարակուսած չը գիտեմ Հենրիկի՞ն էլ հրաւիրեմ։ Նրա ներկայութիւնը խանգարում է ինձ աւելի մօտ լինել Գէորգին. բացի այդ, անցեալ գիշերուայ դէպքից յետոյ կարևոր է սպասել մինչև նա ներողութիւն խնդրելու գայ։ Զը հրաւիրելն էլ նշանակում է պարզ ասել թէ ամէն յարաբերութիւն ընդհատել եմ կամենում. իսկ այս դեռ վաղ է։ Մէկ էլ ճիշտն ասած Հենրիկը լաւ անձնաւորութիւն է, նա ինձ շատ էսիրում, մենք հօ կարող ենք բարեկամ մնալ։

ԱՆՆԱ. (Մտնում է)։ Բժիշկը հարցնում է։

ՆԻՆԱ. Ահ. խնդրիր։

ԱՆՆԱ. (Գնում է)։

ՆԻՆԱ. Պէտք է խիստ լինել և թոյլ չը տալ որ առաջինը ինքը դժգոհութիւն յայտնէ։ (Նստում է լուրջ, մէջքը դէպի դուռը)։

ՀԵՆՐԻԿ. (Մտնում է)։ Ցուսով եմ իմ այցելութիւնը անպատեհ չի համարուիլ։

ՆԻՆԱ. (Անուշադրութեամբ)։ Խնդրեմ։

ՀԵՆՐԻԿ. Խիստ մեծ դժգոհութիւն եմ նկատում, սակայն գրգռուած բոպէին ներելի յանցանք էր այն իմ կողմից և ես եկել եմ ներողութիւն խնդրելու։

ՆԻՆԱ. Նման դէպքեր անուշադրութեան միայն արժանի են։

ՀԵՆՐԻԿ. Եւ ներման։

ՆԻՆԱ. Նու, այո։

ՀԵՆՐԻԿ. Շնորհակալ եմ։ Կարծում եմ օրիորդը ժամանակու տրամադրութիւն կունենայ մի քանի կարևոր բացադրութիւնների համար։

ՆԻՆԱ. Ասենից առաջ ես չեմ ներում այդ տոնը, այդ սալոնական «դուք»-ը։ Մեր մէջ տեղի ունեցած բարեկամութիւնից յետոյ, դրանից աւելի վիրաւորական ձև չի կարող լինել։

ՀԵՆՐԻԿ. Մի՛ ձև սակայն, որը վիրաւորական էք գտնում միայն այսպիսի բոպէներում, երբ մենք մենակ ենք, ընդհակառակը կրկնակի վիրաւորուելով, երբ հասարակութեան մէջ յանդգնում եմ «դու»-ով խօսել։ Միթէ՞ նախանձելի դրութիւն է այս։

ՆԻՆԱ. Քանի՛ հասարակութեան ծանօթ չէ մեր յարաբերութիւնը. մենք ստիպուած պիտի լինենք այսպէս վարուել։

ՀԵՆՐԻԿ. Այն ամեն վիրաւորանքներից յետոյ, ինչ ես կըրեցի, հաղիւ այլ ևս մեր մէջ որ և է կապ, որև է ակնկալութիւն մնաց։ Մենք պաշտօնական ծանօթներ ենք այլ ևս։

ՆԻՆԱ. Եւ այդ լո՛ւրջ ես ասում, այս ամենը քեզնի՞ց եմ լսում, Հենրիկ։ Ուրեմն դու մերձեցել էիր ինձ միայն պարապ ժամերդ անհոգ անցնելու։

ՀԵՆՐԻԿ. Ես ձեզ մերձեցել էի շատ լուրջ զգացմունքով կեանքում ձեզ յարակցուելու, ձեր ընկերակցութեամբ ապրելու, սակայն այս մի շաբաթը բաւական եղաւ որոշելու, որ մենք տարբեր մարդիկ ենք և սիրով կապակցուիլ հաղիւ կարող ենք։

ՆԻՆԱ. Ես չէի սխալւում, երբ կասկածում էի ձեզնից։ Դուք սիրում էիք ինձ մի այնպիսի զգայմունքով որ հասարակ բշտիկով ատելութեան կարող էր փոխուել. Եւ ահա եկել, ձեր մէջքը ուրիշի վզով փաթաթել էք կամենում։ Լաւ առիթներ են, սակայն և գեղեցիկ նշան, որ դէպի ինձ որևէ լուրջ զգացմունք չէիք տածում։ Ես միամիտ էի և դուք կարողացաք փառաւոր օգտուել իմ միամտութիւնից։

ՀԵՆՐԻԿ. Դուք անկե՞ղծ էք խօսում, թէ՞ այս դէպքում էլ գործ էք դնում ձեր երկնային շնորհքը։

ՆԻՆԱ. Ես ձեզ արգելում եմ այդպէս խօսել։

ՀԵՆՐԻԿ. Ձեզ վիրաւորելու ես ամենևին նպատակ չունիմ։ Ես եկել եմ միայն պարզելու մեր յարաբերութիւնը, որ ինքնըստինքեան մի մեծ թիւրիմացութիւն է մեր վերաբերմամբ։ Թողէք լուրջ խօսենք ու քննենք։

ՆԻՆԱ. Այսքան վիրաւորանքներից յետոյ այլ ևս ի՞նչ խօսել, կամ էլ ի՞նչ յարաբերութիւն։

ՀԵՆՐԻԿ. Մեր մէջ ո՛չ մի յարաբերութիւն, ես կատարեալ համաձայն եմ ձեզ հետ և եկել եմ հենց այդ պարզելու։

ՆԻՆԱ. Եւ ինձ կրկնակի անպատուելու, աւելացրէք։ Սակայն այլ զէնք կարող էինք ընտրել։

ՀԵՆՐԻԿ. Ես չեմ եկել ձեզ անպատուելու կամ վիրաւորելու, և ոչ էլ օգտւում եմ որև է զէնքից։ Ես եկել եմ ձեզ հարցնելու միայն, կա՞յ արդեօք մեր մէջ որև է կապ կամ կարո՞ղ է

լինել և եթէ կայ, ի՞նչ են նշանակում ուրեմն այս ամենը։

ՆԻՆԱ. Անշուշտ մեր մէջ որև է կապ չը կայ, այլապէս այս տօնը, այս վիրաւորանքները ես չէի լսիլ։

ՀԵՆՐԻԿ Ուրեմն կրկին անգամ ես եմ մեղաւոր։

ՆԻՆԱ. Պարզ պէտք է լինի։

ՀԵՆՐԻԿ. Նինա, դուք չէիք կամենալ մի բոպէ ամեն ինչ օբյեկտիւ կերպով հաշուի առնել։

ՆԻՆԱ. Ես հաշուի առնելու այլ ևս ոչինչ չունեմ։ Մի անգամ եկաք, իմ բարեկամութիւնը խնդրեցիք, այժմ եկել այդ բարեկամութիւնը խլել էք կամենում։ Համեցէք։

ՀԵՆՐԻԿ. Ես եկել ձեր բարեկամութիւնը խնդրել եմ ամենալուրջ զգացմունքով, կրկնում եմ ձեզ։ Սակայն ցաւ ի սիրտ, պարզուեց ինձ. որ մեր շաղկապումը դժգոհութիւնների մի ահագին պատմութիւն պիտի ստեղծէ։ Ուրեմն և մեծ անխոհեմութիւն է հենց այժմ իսկ հաշուի չառնել այս ամենը ու պարզել մեր յարաբերութիւնը։ Ես յարակցուել եմ ձեզ. ստանալով ձեր ուրախ համաձայնութիւնը ու նկատելով փոխադարձ զգացմունքի ամենաջերմ արտայայտութիւններ։ Սակայն դուրս է գալիս որ ես սխալուել եմ։ Առանձին վայելելով ձեր հմայքը, հասարակութեան մէջ ես ձեզ համար անտանելի մարդ եմ եղել. ինչո՞ւ ուրեմն ձանձրացնեմ ձեզ կամ մինչև ե՞րբ։

ՆԻՆԱ. Դուք ինձ ամենևին չէք ձանձրացրել, այլապէս ես քաջութիւն կունենայի այդ ուղիղ ձեր երեսին ասելու։ Իսկ եթէ տեղի են ունեցել չնչին դէպքեր, այդ անպայման չնորհիւ ձեր զգայուն ու խանդոտ բնաւորութեան, կարծես յանցանք է մի երկու բոպէ ուրիշի հետ անցնել կամ պատասխանել շրջապատողներին։

ՀԵՆՐԻԿ. Ես իրաւ որ զարմանում եմ լսել իմ խանդոտութեան մասին, մանաւանդ որ դուք Գէորգի հետ էիք, որը շատ լաւ գիտէ ընկերոջ պատիւը յարգել և որը ապագայում ես կը մնայ իմ ընտանիքի մօտ բարեկամը։

ՆԻՆԱ. Ո՛չ, դուք խանդոտում էիք. այդ շատ պարզ է։

ՀԵՆՐԻԿ. Նու, ի՞նչ կայ որ։ Աւելի լաւ եթէ խանդոտում էի, դա հօ մաքուր ու մեծ սիրոյ նշան է։

ՆԻՆԱ. Յանուն սիրոյ խօսող մարդու տոն չէ այս, որ ահա ուղղուած է իմ դէմ. այլապէս կը խնայէիք իմ ջղերը։

ՀԵՆՐԻԿ. Ներէք ինձ, խնդրում եմ։ Սակայն թոյլ տուէք վերջին անգամ հարցնել ձեզ, կա՞յ մեր մէջ կապ, սիրո՞ւմ էք ինձ։

ՆԻՆԱ. (պառզա)։ Ի՞նչպէս էք կարծում դուք։

ՀԵՆՐԻԿ. Որ մենք անչափ տարբեր մարդիկ ենք։

ՆԻՆԱ, ?!

ՀԵՆՐԻԿ. Չէ՞։

ՆԻՆԱ. (Խորհում է)։ Ինչքան էլ ճիշտ լինի այդ, սակայն դժուար է հաշտուել այն մտքի հետ, որ դուք այլ ևս չը մոռանաք ինձ։

ՀԵՆՐԻԿ. Մենք ծանօթներ ենք և կը մնանք բարեկամ։

ՆԻՆԱ. Ցուսամ։

ՀԵՆՐԻԿ. Վստահ եմ։

ՆԻՆԱ. Դուք ազնիւ մարդ էք։ Ինչքան ցաւ է պատճառում ինձ այս, սակայն խոհեմութիւնը պահանջում է յետ վերցնել տուած խօսքս։

ՀԵՆՐԻԿ. Մենք ազատ ենք ուրեմն փոխադարձաբար յանձն առած պարտականութիւնից։ Ձեզ ցանկանում եմ երջանիկ կեանք, իսկ այս ամենի մասին միայն քաղցր յիշողութիւններ։

ՆԻՆԱ. Անպայման քաղցրիկ յիշողութիւններ։ Իսկ իբրև ապացոյց մեր բարեկամութեան, խնդրում եմ ձեզ վաղը երեկոյեան պատուել իմ անուանակոչութեան հանդէսը։

ՀԵՆՐԻԿ. Շնորհակալ եմ։ Այժմ հազիւ որ հանգիստ է իմ ներքին աշխարհը երկօրեայ վրդովմունքից։ Շնորհակալ եմ։ Ցը տեսութիւն։

ՆԻՆԱ. Ցը տեսութիւն։ Վաղը եկէք անպատճառ։

ՄԻՔԱՅԷԼ. (Մտնում է)։ Ա՜ա։ Դու ևս այստեղ ես։

ՀԵՆՐԻԿ. Այստեղ էի և այժմ կամենում եմ գնալ։

ՄԻՔԱՅԷԼ. Սպասիր փոքր, միասին կերթանք, երկար չեմ մնալու, եկայ մօրաքրոջս ու Կուզենայիս քէֆը հարցնելու։

ՆԻՆԱ. Այդ կողմից դու իսկապէս պարտաճանաչ մարդ ես, շնորհակալ պիտի լինել։

ՄԻՔԱՅԷԼ. Մօրաքոյրը ինչպէ՞ս է։ Դո՞ւք ինչպէս էք։ (Ցոյց է տալիս երկուսին)։ Հաշտ թէ՞—

ՆԻՆԱ. Ամենահաշտ բարեկամներ։

ՀԵՆՐԻԿ. Ես կամենում էի իսկապէս քեզ հետ առանձին տեսնուել։

ՆԻՆԱ. Այդ դէպքում ես կարող եմ ձեզ մենակ թողնել։

ՄԻՔԱՅԷԼ. Խնդրեմ, խնդրեմ։ Մենք յետոյ էլ տեսնուել կարող ենք։

ՆԻՆԱ. Ի դէպ ես փոքր գործ ունեմ, այժմ ինձ ներէք. իսկ դուք կարող էք հանգիստ զրուցել այստեղ։

ՀԵՆՐԻԿ. Շնորհակալ ենք։

ՆԻՆԱ. (Գնում է)։

ՄԻՔԱՅԷԼ. Ի՞նչ նորութիւն ունես։ Կրկին մռայլ։

ՀԵՆՐԻԿ. Ես կամենում եմ քո մասին հարցնել։

ՄԻՔԱՅԷԼ. Պատրաստ եմ պատասխանել։

ՀԵՆՐԻԿ. Դու հաստատ վճռել ես ամուսնանալ։

ՄԻՔԱՅԷԼ. Էլզայի հետ անպատճառ։

ՀԵՆՐԻԿ. Սիրում ես նրան։

ՄԻՔԱՅԷԼ. Անշափ։ Հաղիւ որ յաջողուեց ինձ գրաւել նրա սիրտը և կամուսնանամ անպայման, առանց տատանուելու։

ՀԵՆՐԻԿ. Բայց դու գիտես ինչ համարձակ քայլ ես անում, մտածե՞լ ես այդ մասին։

ՄԻՔԱՅԷԼ. Քեզ շատ լաւ յայտնի է, որ ինքս իմ մասին այնքան էլ մեծ կարծիքի չեմ, սակայն այս դէպքում սեպհական երջանկութեանս դէմ չեմ կարող։ Մի նախատիր ինձ. մի պընդիլ, որ ամէն ինչ ինձ համար կորած է։ Վերջապէս միթէ՞ մի երկրորդ փեսացու ինձնից աւելի բարձր է կանգնած։

ՀԵՆՐԻԿ. Ճիշտ ես շեշտում. շրջապատդ առանձին առաւելութիւններ, կամ բարոյական առաքինութիւն չունի։ Բարոյական այն մեծ այլասերումն, որին ենթակայ են մանաւանդ տղամարդիկ, դարձել է սովորական յանցանք, որին ժամանակակից հասարակութիւնը ժպտով է վերաբերւում։ Սակայն այդ յանցանքը քո մէջ շնորհիւ ստացածդ հիւանդութեան մի այնպիսի ձև է ստացել, որ դու այժմ պարտաւոր ես սահման դնել քո ձգտումներին։ Ընտանիք ունենալ քեզ համար սարսափելի միտք պիտի լինի, գոնէ առ այժմ, մի քանի տարիներ շարունակ։ Այժմ քեզ ամենից կարևոր է ստեղծել հանգիստ ու համապատասխան պայմաններ քո բժշկութեան համար։ Այդ դրութեամբ ամուսնանալ, նշանակում է տալ հասարակութեան հիւանդ, թոյլ ու համարեա այլանդակ սերունդ։

ՄԻՔԱՅԷԼ. Ես առաջինը չեմ, մի մոռացիր այս և մի շեշտիր որ ամեն ինչ ինձ համար անդառնալի կորած է։

ՀԵՆՐԻԿ. Ես չեմ պնդում, որ կեանքը քեզ համար կորած է, անգամ յաջող պայմանները մեծ յոյսեր կարող են տալ։ Ես մատնացոյց եմ անում միայն քո այժմեան դրութան վրայ, ղեկավարուելով մի շարք կարծիքներով, որոնք բժշկական օրէնքների անհրաժեշտ հետևանքներն են կազմում։ Ինչ վերաբերում է նրան, որ քեզպեսների թիւը լէգէոն է, չեմ կասկածում, սակայն դա շատ թեթև մխիթարանք պիտի լինի քեզ համար։ Դու մեծ ես, այո, սովորական տղամարդկանցից, որոնք պատճառաբանելով որոշ պայմաններ, հիմնուած նոյն իսկ բժշկական ու առողջապահական օրէնքների վրայ, խախտում են բարոյա-

կանութեան սահմանները։ Սակայն նրանց յանցանքը մեծ չէ, քանի որ նրանք մերձենում են ամուսնութեան այն հաստատ համոզմունքով, որ անցած անզուսպ կեանքը չէ կարող ֆիզիքական այլասեռումներ դրոշմել ապագայ սերունդի վրայ։ Եւ այստեղ նրանց խիղճը ազատ է։

ՄԻՔԱՅԷԼ. Նախատիր, յանդիմանիր, իրաւունք ունես։

ՀԵՆՐԻԿ. Ես չեմ յանդիմանում, այլ ներկայացնում եմ իրերի դրութիւնը այնպէս, ինչպէս նա կայ, ինչ հետևանք նա կունենայ ամուսնութեան դէպքում։ Ինձ ցանկալի է, որ դու լուրջ հաշուի առնես այս ամենը, քանի խնդիրը բարդ ձև չէ ստացել, քանի դու այդ էակի հետ ոչ մի լուրջ պայմանով չես շաղկապուել։

ՄԻՔԱՅԷԼ. Աւելի՞ լուրջ պայման, քան առաջարկութիւնս ու տուած խօսքս։

ՀԵՆՐԻԿ. Բայց աւելի թեթև դրութիւն, քան ամուսնութիւնը։

ՄԻՔԱՅԷԼ. Ես քեզ շեշտում եմ, որ սեպհական ձեռքով բախտաւորութիւնս աւերել չեմ կարող և չեմ ուզում (քայլում է)։ Դու չես կարող երևակայել. սիրոս լցուած է երջանկութեամբ։ Ես ցնցւում, դողդողում եմ հենց այն մի հատիկ մտքի տակ, որ ահա կը տեսնուեմ ինձ անկեղծ սիրող մի էակի հետ։ Ի՞նչ զմայլմունք, ինչ սփոփանք անեռանդ հոգու համար։ Ես նրան անչափ ու անհուն կերպով սիրում եմ։ Նա լցրել է իմ ամայի կեանքս, վերածնել ինձ և ես այլ ևս թեթև եմ մտքով ու սրտով։ Հասկանում ես ինչ է նշանակում թեթև լինել։ Մի շարք դաժան, խեղդիչ մտքեր հալուել անհետ կորել են նրա ազդեցութեան տակ և ուղեղս անդորր է այլ ևս։ Ինչպէ՞ս թողնեմ այս ապաւէնը, այս երջանկութիւնը։ Կոյր մարդու պէս սեպհական մատս հարազատ աչքս կոխե՞մ։ Ո՛չ, ազնիւ ընկեր։ Թող, մի շարժիր վէրքս։

ՀԵՆՐԻԿ. Սիրոյ զգացմունքը անչափ ուժեղ է ձայնում քո մէջ և դու գործում ես կատարեալ անգիտակ։ Սակայն ես կասկածում եմ, որ հազիւ քո մէջ այդ զգացմունքը երկարատև լինի, ի նկատի ունենալով այն ժանգի ոյժը, որ ներքնապէս ուտում, ոչնչացնում է քո եռանդը, քո թարմութիւնը։

ՄԻՔԱՅԷԼ. Հարցի գլխաւոր տարբերութիւնը հենց այդ տեղ է ահա։ Էլզայի դիմաց ես ոչ թէ կը սպառուեմ այլ ընդհակառակը կը սկսեմ ապրել, այս բառի ամենալաւ իմաստով։ Ես մերձենում եմ նոր կեանքի, որ երջանկութիւն ու մխիթա-

բանք է խոստանում, որ բարոյական վերածնման լայն դռներ է բանում առաջիս։ Եթէ անցածս փրկել չեմ կարող, գոնէ ապագաս կը պսակեմ բարոյականութեան մաքսիմներով։ Անասնական կեանք եմ վարել մինչև այժմ, սակայն նոր կեանքում կը փրկեմ խորտակուող պատիւս։

ՀԵՆՐԻԿ. Ուրեմն դու ձեռդ ես մեկնում սիրածդ էակին ոչ թէ նրան երջանիկ դարձնելու, այլ քո նեխուող կեանքին մի յենարան գտնելու։ Եւ դեռ խօսում ես սիրոյ անունից։

ՄԻՔԱՅԷԼ. Ես սիրում նրան, այո՛ և կրկնակի մեծարում, զգալով որ նա կը լինի և իմ կեանքի յենարանը։ Ինձ նման մարդու համար այս աւելի քան անհրաժեշտ է։ Դու կարծում ես ինձ չի՞ սարսափեցնում այն միտքը՝ որ այս թառամած բարոյականութեամբ, այս կեղտոտ ձեռներով պիտի փայփայեմ մի անարատ կոյսի։ Ինչե՞ր չէի տալ անհետ ջնջելու անցածս կեանքի կեղտոտ հետքերը, որ այսպէս խորը դրոշմուել են ճակատիս, դրոշմուել մտքիս ու սրտիս մէջ և լափում բարոյական ու ֆիզիքական առողջութեանս վերջին կտորը, վերջին յոյսը։ Անցածս կեանքի ինչին յիշողութիւնն անգամ խանձում է միտքս։ Ես սարսափում եմ, այո՛, որ այսպէս այլասերուած ու յագեցած սիրով եմ դիմում դէպ այդ էակը, որ մաքուր է ու անարատ, որպէս գարնան առաւօտ։ Օ՛, ուղեղս ճայթում է։ Սարսափելի է։

ՀԵՆՐԻԿ. Գիտակցում ես ու սարսափում. այլապէս աւելի ցածր մարդ կը լինէիր։ Ի՞նչպէս չը սարսափել այն մտքից, որ սիրածդ էակին պիտի համբուրես այն շրթունքներով, որ հազարաւոր ապօրինի համբոյրներից սրբապղծուել, այլ ևս անընդունակ է դարձել։ Բայց կրկնակի դաժան է այն միտքը, որ քո բախտաւորութեան, քո հաճոյքի համար զոհ ես ընտրում հէնց քո մտքի ամենաթանգ պատկերը։

ՄԻՔԱՅԷԼ. Զո՞հ։ Ի՞նչ ես ասում։ Եթէ իմ ամայի կեանքս յանձնում եմ նրան երջանկութեամբ լցնելու, միթէ՞ զոհում եմ նրան։ Ինչո՞ւ ես յամառում, որ ես նրան մաքուր սիրել ու երջանիկ դարձնել չեմ կարող։ Կը լարեմ ուշքս, նրան իմ մտքի բաղինը կը դարձնեմ, ուր և անդորը կապրի նա, իսկ ես կը վերածնուեմ։ Ինչ վերաբերում է նրան, որ ես ընտրում եմ ինձանից անհամեմատ բարձր ու անարատ էակի, այդ ինչքան ճիշտ է, նոյնքան էլ սակայն կարևոր է իմ ամայի կեանքին։ Նրա ազդեցութիւնը ինձ վրայ անչափ մեծ է, իսկ նրան իմ սրտից դուրս մղելու համար ինձ եռանդ, կամք է պակասում։ Նրանից խուսափելը դուցէ իդէալական քայլ ես համարում, սակայն ա-

նոյժ եմ սեպհական բախտաւորութիւնս աւերելու։

ՀԵՆՐԻԿ. Ծայրահեղ էգոիստութիւնը խեղդում է քո մէջ ազնիւ մտքերը, սակայն դու պարտաւոր ես վերջին ոյժերդ հաւաքելու այդ պատուաբեր քայլի համար։

ՄԻՔԱՅԷԼ. Այս դէպքում ես յիրաւի որ էգոիստ եմ։ Սակայն չեմ ուզում փիլիսոփայութիւն անել։ Այն միտքը, որ ահա կը տեսնեմ նրան և նրա անոյշ ձայնը կը հնչէ ականջներումս՝ «սիրում եմ քեզ», փշրում է ամէն յողդողդ կամք ու միտք իմ մէջ։ Նրան տիրանալը իմ մտքի փափագն է։ Չեմ ուզում անցեալս, սակայն պնդում եմ, որ ապագաս կը սրբէ անցեալս։ Ես ցոյց կը տամ, որ ամենապարտաճանաչ ամուսին կարող եմ լինել։

ՀԵՆՐԻԿ. Ես չեմ կասկածում, որ դու հաւատարիմ ամուսին կը լինես, սակայն քեզ պակասում է այլ ևս առողջութիւն ու թարմ եռանդ, իսկ այդ փոքրիկ բորբոք զգացմունքդ հազիւ երկար դիմանայ ժամանակի լափիչ ալիքներին։ Դրա հետ հանդերձ համոզուած եմ, որ քեզ երբէք չի յաջողուիլ անդորր ամուսնութիւն ստեղծել, քանի որ շուտ թէ ուշ կինդ պիտի ծանօթանայ քո այդ դրութեան հետ։ Հենց այս տեսակէտից ես աւելի յարմար եմ գտնում այժմ իսկ խօսել ընտրածիդ հետ և լսել նրա կարծիքն ու խորհուրդը։

ՄԻՔԱՅԷԼ. Խօսե՞լ. ասել է բարոյապէս մերկանա՞լ նրա առջև։

ՀԵՆՐԻԿ. Ապագայ դժգոհութիւններից խոյս տալու ամենալաւ միջոցն է այդ։ Մի մոռանար, որ քեզ վրայ կրկնակի պարտականութիւն կայ, իբրև շրջապատից բարձր մարդու, իբրև ինտելիգէնտի վրայ։ Ցանուն այն հիմնարկութեան, ուր քո կրթութիւնը ստացել ես, պարտաւոր ես աւելի քան ազնիւ լինել, պարտաճանաչ մնալ։ Մի մոռանալ այս ամէն։ Վերջապէս չէ՞ որ դու սիրում ես այդ էակին, ինչպէ՞ս ուրեմն չես սարսափում նրան մասնակից անել քո յանցանքին։

ՄԻՔԱՅԷԼ. Դու իզուր ես յուզւում։

ՀԵՆՐԻԿ. Ցանուն քո պատուի, յանուն այդ էակի սիրուն, քեզ կրկին շեշտում եմ յետ կանգնել այդ քայլից, կամ գոնէ նախապէս պարզել նրան իրերի այս անմխիթար դրութիւնը։ Ես պնդում եմ քեզ իբրև ընկեր ու իբրև բժիշկ։

ՄԻՔԱՅԷԼ. Դու սկսում ես պահանջկոտ դառնալ։

ՀԵՆՐԻԿ. Պարտաճանաչութիւնը ստիպում է ինձ այդ պահանջել քեզնից։ Կարծում եմ դու կը գերադասես այդպէս վարուել, նախ քան օտար աղբիւրներից օրիորդը տեղեկանայ։

ՄԻՔԱՅԷԼ. Թերևս մտածում ես այդպիսի դեր յանձն առնել։

ՀԵՆՐԻԿ. Ինձնից բացի գործին ծանօթներ շատ կան և եթէ դու զլանում ես պարտքդ կատարել, մնում է մեզ այդ քայլն անել։

ՄԻՔԱՅԷԼ. Ուրեմն դու մերժում ես մեր ընկերութիւնը։

ՀԵՆՐԻԿ. Դա կը լինի միմիայն հետևանք մեր կատարած պարտականութեան։

ՄԻՔԱՅԷԼ. Վատ պարտականութիւն։ (Պառզա)։ Թող լինի այնպէս, ինչպէս կամենում էք։

ՀԵՆՐԻԿ. Ինձ ցանկալի է քո բարեկամութիւնը, իբրև պարտակատար ընկերի։

ՄԻՔԱՅԷԼ. Այս պայմաններում մենք հազիւ ընկեր ենք։

ՀԵՆՐԻԿ. Այդպէս ուրեմն։ Այս դահլիճում թողեցի Նինայի ընկերակցութիւնը, թող խզուի և մեր բարեկամութիւնը։ (Գնում է)։

ՄԻՔԱՅԷԼ. Ստոր մարդիկ։ Նա ինձնից ոչնչով բարձր չէ, այն տարբերութեամբ միայն, որ բախտի մի բարի դիպուածով նա ազատ է մնացել այս ախտից, որ ահա արատաւորում է իմ պատիւը։ Նա մնացել է քաղաքակրթուած, ուստի և իրաւունք է համարում բարձր ձայնով բարոյականութեան մասին ճառել։ (Պառզա)։ Սակայն նա այժմ վտանգաւոր թշնամի է ինձ.— նա, իմ ամենամտերիմ ընկերը, դպրոցից սկսած։ Օ՛, դաժանկեանք, խաբուսիկ յոյս։ (Զանգահարում է)։

ԱՆՆԱ. (Մտնում է)։ Պարոնը ի՞նչ է հրամայում։

ՄԻՔԱՅԷԼ. Նինային այստեղ խնդրիր։

ԱՆՆԱ. Իսկոյն։ (Գնում է)։

ՄԻՔԱՅԷԼ. Սոսկալի մտքեր։ Յոյզերի այս ուժեղ բռնէին ես կրկնակի եմ գիտակցում, որ ամեն յանդիմանութիւն իմ հասցէին կատարեալ իրաւացի է, սակայն... ես ապրել եմ ցանկանում, ես երջանկութիւն եմ տենչում։ (Հուր քայլում է)։

ՆԻՆԱ. (Մտնում է)։ Պարոն Հենրիկը գնաց։ Ի՞նչ էիք այսքան երկար խօսում։ Դուք կռուե՞լ էք։ Ի՞նչ է պատահել որ։

ՄԻՔԱՅԷԼ. Նա իմ ընկերը չէ այլ ևս։

ՆԻՆԱ. Չեմ հասկանում։

ՄԻՔԱՅԷԼ. Ինձ այժմ ներիր։ Բարև մայրիկին։ (Գնում է)։

ՆԻՆԱ. Հետաքրքիր է, ի՞նչ կարող է լինել։ Հա, հա. Հենրիկին այժմ ոչինչ չի յաջողւում. մի կէս ժամում երկու մերժում։ Հա, հա, հա։ Ամեն ինչ սպասել կարելի էր, միայն ոչ այս աստիճան սիրալիր հրաժեշտ, բարեկամութիւնն էլ վերա-

գիր, թէ չէ առանց Հենրիկի բարեկամութեան ես կը մեռնէի, Ա՛, յիմար մարդիկ։ Կարելի է ականջներից բռնել ու շրջել ինչպէս կամենաս։ Օ՛, կին, կին, ինչեր անել չես կարող. առիւծներ անգամ հեծնում ես։ Այժմ ինձ մնում է լուրջ գործունէութիւն Դէորգին սանձահարելու. շատ վայրենին է երևում, սակայն կնոջ ազդեցութեան տակ նա պարտաւոր է դունչը գետնին քսել, և այն անպատճառ իմ առջև։

ԱՆՆԱ. (Մտնում է)։ Պարտէզը արդէն զարդարում են—

ՆԻՆԱ. Դու չիմացար ինչի մասին էին խօսում պարոնները։

ԱՆՆԱ. Վիճում էին խիստ տաք-տաք։

ՆԻՆԱ. Բայց ինչի՞ մասին։

ԱՆՆԱ. Չը կարողացայ լսել։

ՆԻՆԱ. Դու ոչնչով սկի չես հետաքրքրուում։

ԱՆՆԱ. Գործի այս եռուն ժամանակը ինչպէ՞ս հետաքրքրուէի։

ԼԻԶԱ. ԵՒ ԼԻՈՆՈՐԱ։ (Մտնում են)։

ՆԻՆԱ. Աա։ Եկաք։ Ափսոս, փոքր շուտ գայիք Միքայէլին ու Հենրիկին կը պատահէիք այստեղ։

ԼԻԶԱ. Այստե՞ղ։ Ի՞նչ կար որ։

ՆԻՆԱ. Հենրիկը եկել էր ներողութիւն խնդրելու ինձնից անցեալ գիշերուայ անքաղաքավարութեան համար։— Աննա, օգնիր Լիոնորային հանուելու։

ԱՆՆԱ. (Օգնում է հանուել Լիոնորային, որ միևնոյն ժամանակ լսում է Նինային)։

ՆԻՆԱ. Ապա հենց կամենում էր գնալ, երբ մտաւ Միքայէլը։ Նրանք ինչ որ առանձին խօսելիք ունէին, ուստի ես մենակ թողեցի, և երբ ես վերադարձայ, Հենրիկը գնացել էր արդէն, իսկ Միքայէլին խօսեցնել չը կարողացայ, նա միայն շեշտեց, որ Հենրիկն այլ ևս իր ընկերը չի։

ԼԻԶԱ. | Ի՞նչ։
ԼԻՈՆՈՐԱ. | Նո՛ւ։ Ի՞նչ է պատահել։

ՆԻՆԱ. Միքայէլն աւելի քան մռայլ դուրս գնաց։

ԼԻԶԱ. Չեմ հասկանում։ Ցամենայն դէպս ես կը հարցնեմ այսօր, (Թոյլ է տալիս Աննային օգնել իրան հանուելու)։

ՆԻՆԱ. Հետաքրքիր է. հարցրու Միքայէլին և պատմիր մեզ։ Այժմ սկսենք մեր գործը։

ԼԻՈՆՈՐԱ. Ի՞նչ ունես։

ՆԻՆԱ. Մի խելքը լաւ է, բայց երեքը աւելի լաւ։ Կարևոր է վաղուայ համար խորհրդակցել։ Կամենում եմ այս ան-

գամ իմ անուանակոչութիւնը շատ շքեղ տօնել։

ԼԻԶԱ. Վերջին անգամ իբրև օրիորդական անուանակոչութիւն. հետևեալ տարի կը լինես այլ ևս տիկնաց տիկին։ Հա, հա։

ԱՆՆԱ. (Օրիորդների հանուած իրերը վերցնում դուրս է գնում)։

ԼԻՈՆՈՐԱ. Ճիշտն ասած երեք հոգով գործը աւելի դանդաղ առաջ կերթայ, քանի որ ժամանակի մեծ մասը անցնում ենք խօսակցութեամբ։

ՆԻՆԱ. Այդ ևս կարևոր է։

ԼԻԶԱ. Իսկապէս շատ լաւ ժամանակներ են, յոյզերի շրջան. շարունակ զուբուում, սրտատրոփ սպասում ես նշանածիդ գալուն, ապա թէ ամեն յիմարութիւններ սարքում հրճւում ու զուարճանում։

ՆԻՆԱ. Տեսնում եմ շատ լաւ օրեր ես անցնում։

ԼԻԶԱ. Շտապիր, դու ևս նշանուիր, այն ժամանակ իրար աւելի լաւ կը հասկանանք,

ՆԻՆԱ. Այնպէս ես խօսում, կարծես նշանուած ժամանակ մի առանձին նորութիւն պիտի վայելենք. նորից նոյն սիրախօսութիւնները, խանդոտումները և այլ անթիւ անմիտ յիմարութիւններ, որ աւելի շուտ երեխայական զգացմունքի արտայայտութիւններ են։ Ոչ, ես այլ ևս հաստատ վերջ եմ դրել նման բաների միայն ամուսնանալ եմ ցանկանում, մի հաստատ ու որոշ կեանք հիմնելու նպատակով։

ԼԻԶԱ. Դու կատարեալ պրոզայիկ ես դարձել ահա ինչու այս ամենը յիմարութիւններ ես անուանում։ Սիրոյ այս որոշ շրջանը ունի ամենալաւ առաւելութիւններ, երբ մի շարք յոյզեր, քաղցրիկ մտքեր վառվռուն յոյսեր քեզ ոգևորում արբեցնում են. երբ հոգու այդ զգայուն դրութեամբ դու պատրաստուում ես ոտք դնելու մի նոր կեանքում ուր կոչում ես ընդունում քեզ վերայ, կապւում որոշ պարտականութեամբ, ուր այլ ևս որոշ է քո դիրքը և դու գործում ես այլ ևս մի նպատակով՝ —խնամել սիրածդ էակին և կազմակերպել օրինակելի ընտանիք։ Այս ամենի համար սէր է կարևոր, մաքուր ու հաւատարիմ սէր և ես ամուսնանալ ասելով, սիրածս էակի հետ կապուել եմ հասկանում։ Սրա հետ միասին չեմ ժխտում նոյպէս և այն, որ ամեն հաճոյքներով հանդերձ, ամուսնութեան միտքը բերում է և չար ու մթին նախազգացումներ։ Սակայն այդ առաջանում է այն մտքից, որ մենք թողնում ենք ամեն անհատական անկախութիւն և ոտք դնում մի նոր ասպարիզում ուր

այսպէս թէ այնպէս սահմանափակւում են որոշ պարտականութիւններով։

ԼԻՈՆՈՐԱ. Մարդ անպայման տատանումներով է ոտք դնում ամեն մի նոր ասպարիզում, այս իսկ պատճառով ամուսնութեան միտքը առաջ է բերում դժուարութիւններ, երկմտումներ։ Սակայն այդ ամենը չքանում են հենց այն րոպէին, երբ հաշուի ես առնում, որ այդ անծանօթ նոր կեանքում քեզ ընկերակցում է քո սիրածդ էակը, որ պատրաստ է փոխադարձաբար քեզ համար իր կեանքը զոհելու։ Սրանից էլ լաւ պայման։ Եւ դու երջանիկ կը լինես, Էլզա։ Քեզ մնում է այժմ միայն վերջին անգամ օբյեկտիւ քննել ձեր դրութիւնը—սիրում ես դու նրան այդ խօսքի իսկական իմաստով և սիրում է փոխադարձաբար նա քեզ այնպէս, որ կարող լինի քեզ կեանքում երջանիկ դարձնելու։

ԼԻԶԱ. Ես նրան սիրում եմ՝ իսկ թէ նա սիրում է ինձ փոխադարձաբար, չեմ կասկածում։

ՆԻՆԱ. Միքայելը համակրելի անձնաւորութիւն է, դու նրա հետ հաշտ կապրես։

ԼԻՈՆՈՐԱ. Ինձ շատ հետաքրքրում է Միքայելի ու Հենրիկի վէճը։

ՆԻՆԱ. Դու կարծում ես այդ վէճը այս հարցի հետ կապ ունի՞։

ԼԻՈՆՈՐԱ. Դժուարանում եմ ասել։

ՆԻՆԱ. Ինձ իսկապէս մի նման բան թւում է։

ԼԻՈՆՈՐԱ. Բայց ասա, Էլզա. Միքայէլը հիւանդ հօ չէ՞։

ԼԻԶԱ. Նա բեվմատիզմ ունի։ Սակայն դու մէկ բան կասկածում ես։

ԼԻՈՆՈՐԱ. Ես միայն մտածում եմ, թերևս նա լուրջ հիւանդ է։

ՆԻՆԱ. (Ընդհատում է)։ Ա՛խ, չէ։ Նա կատարեալ առողջ է։

ԼԻԶԱ. Ճիշտ որ ամուսնութիւնը սարսափելի ծանր հարց է։ Տեսէք այժմ ինչ՞ը չեն կարող ծնուել իմ գլխում։

ՆԻՆԱ. Թող յիմար մտքերը։ Համբերութիւն ունեցիր և շուտով կը հարցնես Միքայէլից, ես կարող եմ երաշխաւորել նրա առողջութեան համար։ Այժմ մենք խօսենք վաղուայ մասին։

ԼԻՈՆՈՐԱ. Բայց դու նախ պատմիր ինչպէս վերջացրիր Հենրիկի հետ։

ՆԻՆԱ. Մերժեցի, հասկանալի է։ Առհասարակ նրա վարմունքը ներել չի կարելի։

ԼԻԶԱ. Նորից դու էիր մեղաւոր։ Դու այնպէս գրաւուած ես Գէորգով, որ ինքդ էլ արածդ չես նկատում։ Բայց քեզ կրկին ասում եմ որ ես Հենրիկին կընտրէի։

ՆԻՆԱ. Դու այո և ոչ ես։ Քանի համեմատութիւն չը կար ես ես ոգևորուած էի Հենրիկով, սակայն այժմ նրա դիմաց կանգնած է Գէորգը, կատարեալ իմ ճաշակով մի մարդ

ԼԻԶԱ. Հարստութիւնից բացի, Հենրիկը կարող է գերադասուել միւս բոլոր առաւելութիւններով։ Նա ունի հասարակական որոշ դիրք և իբրև բժիշկ կատարեալ ապահով է գոյութեան կռուի մէջ հանգիստ ապրելու,

ՆԻՆԱ. Ի՜նչ ապահովութիւն, երբ ամբողջ դրութիւնդ կախուած կը լինի զանազան ողորմելի հիւանդների թուից ու առատաձեռնութիւնից։ Չեմ ասում և այն, որ բժիշկ մարդը շնորհիւ իր դրութեան, հազիւ ժամանակ ունի իր կնոջ սիրոյ համար։ Այն ինչ, ես կրկնում եմ, ինձ կարևոր է մի ամուսին որ օրուայ մեծ մասը ինձ հետ անցնելու յարմարութիւն ունենայ, միշտ ինձ նուիրուած, ինձ հոգատար։ Ես ոչ մի բոպէ առանց սիրուելու մնալ չեմ կարող, այլապէս դժբախտ կը լինեմ և ստիպուած նոր երջանկութեան ձգտել կը սկսեմ։

ԼԻԶԱ Իսկ Գէորգը քեզ առաջարկութիւն արդէն արե՞լ է։

ՆԻՆԱ. Համարեա։

ԼԻԶԱ. Ինչպէ՞ս։

ՆԻՆԱ. Անցեալ երեկոյ կամենում էր խօսել, բայց հենց այդ բոպէին մտաւ Հենրիկն ընթրիքի հրաւիրելու։ Բայց մենք ուշանում ենք, այժմ շտապենք պարտէզ։ Գիտէ՞ք ես վճռել եմ վաղը երեկոն պարտիզում անցնել՝ տաք գիշեր է, լուսնեակ գիշեր, շատ հրաշալի կը լինի։

ԼԻՈՆՈՐԱ. Սիրահար զոյգերի համար շատ նպաստաւոր է, մանաւանդ ձեր արանժերէյները աւելի քան յարմարութիւններ ունեն։

ԼԻԶԱ. Ամեն տեղ Նինան իր դրութիւնը ապահովել է աշխատում։

ՆԻՆԱ. Իբր թէ քեզ ձեռնտու չէ։ Վերջապէս մի փոքր էլ պոէզիայով պէտք է ոգևորուել. Լուսնեակ տաք գիշեր, կանաչ թաւուտում, սիրածս էակի կողքին, ազատ հետամտող հայեացքներից, երաժշտութեան ներդաշնակման տակ,—Օ՛, ինչ բերկրանք։ Եւ դուք դեռ շնորհակալ չէք։

ԼԻԶԱ. Կատարեալ շնորհապարտ։

ՆԻՆԱ. Վաղը երեկոյեան Հենրիկն էլ կը լինի։

ԼԻՈՆՈՐԱ. Այսքան պատմութիւններից յետո՞յ։

ՆԻՆԱ. Ի՞նչ պատմութիւններ։ Ես ջղային եմ, իսկ նա էլ փոքր անքաղաքավարի էր, եկաւ ներողութիւն խնդրեց և մենք հաշտուեցինք։

ԼԻՈՆՈՐԱ. Իսկ ձեր յարաբերութիւնը։

ՆԻՆԱ. Նու, պարզ է որ մենք տարբեր մարդ ենք, ուստի և յետ վերցրի տուած խօսքս, ապա հաշտութեամբ բաժանուեցինք։

ԼԻԶԱ. Բայց ի միջի այլոց թոյլ տուր ասել, որ անցեալ երեկոյեան դու շատ լաւ օգտուեցիր դէպքից, Գէորգի գիրկը նետուելու։ Այնպէս պինդ կպել էիր նրան։

ՆԻՆԱ. Ինչո՞ւ ես ասում։ Միթէ այդպիսի բոպէներին մարդ բան զգում է որ։ Գլուխս բարկութիւնից պտտուեց և ես կընկնէի, եթէ նա չը լինէր։

ԼԻԶԱ. Նու նու։

ԼԻՈՆՈՐԱ. Թողէք, լաւ։ Այժմ իջնենք պարտէզ նայելու ինչպէ՞ս են պատրաստում։

ՆԻՆԱ. Այո, դուք իջէք ես իսկոյն գալիս եմ, դեռ որսի հագուստս չեմ փոխել։

ԼԻԶԱ. ԵՒ ԼԻՈՆՈՐԱ. Շուտ արի։ (Խօսելով իջնում են պարտէզ։

ՆԻՆԱ. Աննա, աննա։

ԱՆՆԱ. (Մտնում է)։

ՆԻՆԱ. Աննա, օրիորդները գնացին պարտէզ, պատուիրիր կարևոր իրերը այնտեղ տանել իսկ դու նայիր, տես նը-րանք որտեղ են յարմար գտնում սեղան պատրաստելու։

ԱՆՆԱ. Լսում եմ։ Բայց ի՞նչ էր ասում բժիշկը։

ՆԻՆԱ. Հենրի՞կ. եկաւ ներողութիւն խնդրելու, իսկ ես հասկացրի նրան, ինձնից այլ ևս ոչ մի ակնկալութիւն չունենալ։ Նա լաւ մարդ է, Աննա, գիտես. առանց աղմուկի լսեց ու գնաց հաշտ։

ԱՆՆԱ. Իսկ այդ Գէորգը հաստատ խօսք տուե՞լ է։

ՆԻՆԱ. Հանգիստ մնայ, ես անփորձ երեխայ չեմ։ Բայց դու այժմ շտապիր գործի։ Վաղը ամեն ինչ կը վերջացնեմ նրա հետ։

ԱՆՆԱ. (Գնում է)։ Աստուած տայ։

ՆԻՆԱ. Այո, ես հաւատացած եմ, որ վաղը երեկոյեան նը-րան խելքի կը բերեմ։ Բայց անցեալ երեկոյ ի՞նչ լաւ էր նրա գրկում։ Ես իսկապէս լաւ դերասանուհի կարող եմ լինել. այնպէս գունատուեցի, սկսեցի այնպէս ցնցուել, ջղային դառ-նալ, որ մի բոպէ ինքս էլ կարծեցի թէ ահա կընկնեմ։

ԱՆՆԱ. (Մտնում է։ Շփոթուած) Գէորգը հարցնում է։

ՆԻՆԱ. Ա՛խ, ինչ անյարմար ժամանակ։ Մազերս կարգին են, լաւ եմ այսպէս։

ԱՆՆԱ. Շատ լաւ է, կարելի է ընդունել։

ՆԻՆԱ. Ընդունել, ի հարկէ ընդունել։ Խնդրիր այստեղ, ես խսկոյն գալիս եմ։

ԱՆՆԱ. (Գնում է)։

ՆԻՆԱ. Լաւ նշան է, բայց ինչո՞ւ զոյնս տալիս եմ։ (Գրնում է հակառակ դռնով)։

ԳԷՈՐԳ. (Մտնում է)։

ԱՆՆԱ. (Ուղեկցելով)։ Ներս համեցէք. օրիորդը խսկոյն կը գայ։

ԳԷՈՐԳ. Շնորհակալ եմ։

ԱՆՆԱ. (Գնում է)։

ԳԷՈՐԳ. (Դիտում է սենեակը)։ Մի քանի բոպէ ևս, և կլուծուի թերևս խնդիրը։ Տատանուե՞լ։ Ո՛չ, այլ ևս դրական պէտք է լինել։ Քանի-քանի դէպքեր եմ աչքից թոցրել և այժմ անա աւելի խճճուել իմ փիլիսոփայութեան մէջ։ Ինչո՞ւ չը լինել թէկուզ հենց մի սովորական մարդ. Ո՛չ, այս անգամ պէտք է վստահութեամբ գործել։ Այս էակը ոտից ցգլուխ ամբողջապէս կեանք է, նա կարող է ինձ տաքացնել իր սիրող շնչի տակ. չը պէտք է այլ ևս կասկածել։ Սակայն եթէ մերժի։ Ո՛չ, չեմ կարծում։ Նրա սիրառատ հայեացքները վստահութիւն են ներշնչում ինձ։

ՆԻՆԱ. (Մտնում է)։ Անչափ ուրախ եմ։

ԳԷՈՐԳ. (Դիմաւորում է)։ Գիտէի որ այսօր զբաղուած էք, բայց և այնպէս վստահացայ մի քանի բոպէով ձեզ մօտ մտնել։

ՆԻՆԱ. Օ՛, ժամանակ ես ունիմ. մեզ մօտ ամեն ինչ ծառաներն են կատարում։

ԳԷՈՐԳ. Ձեր թելադրութեամբ ի հարկէ։

ՆԻՆԱ. Անպայման իմ ճաշակով, այլապէս ինչպէս վստահանալ ծառաներին։ Բայց և այնպէս այժմ ես ազատ եմ, դուք ինձ չէք խանգարում։ Նստէք խնդրեմ։ (Նստում են)։

ԳԷՈՐԳ. Շնորհակալ եմ. այդ ինձ հաճոյք է պատճառում։ Ես մտայ ձեզ մօտ, վստահ, որ այդպէս էլ կը լինի, ուզում եմ ասել, որ ժամանակ կունենաք իմ ընդունելութեան համար։

ՆԻՆԱ. Այդ ինձ միմիայն բաւականութիւն կարող է պատճառել։

ԳԷՈՐԳ. Այլապէս ես խորը վիրաւորուած կը լինէի։ Ձը

կայ ծանր դրութիւն, քան փոխադարձ զգացմունքի չարժա-նանալ։ Իսկ ես վստահ եմ, որ վայելում եմ ձեր համակրանքը։

ՆԻՆԱ. Կարող էք վստահ լինել։

ԳԷՈՐԳ. Անչափ շնորհակալ եմ։ Կան զգացմունքներ, որոնք պէտք է ըմբռնել աւելի ներքին աշխարհով. իսկ այդ ներքին աշխարհը յոգուտ ինձ է կայանում։ Ահա ինչու շեշտում եմ որ վստահութեամբ եմ ոտք դնում ձեզ մօտ։

ՆԻՆԱ։ Ուրախ եմ և յուսով, որ ձեր ծանօթութիւնը ինձ համար պատուաբեր կըլինի։

ԳԷՈՐԳ. Երաշխաւորում եմ։ Մեր կարճ ծանօթութիւնը միջոց տուաւ ինձ իսկոյն հասկանալու, որ յանձին ձեզ ես ձեռք եմ բերել մի նրբամիտ էակի բարեկամութիւն։ Ես զգացի, որ ձեզ հետ կարող եմ ամենահետաքրքիր ժամեր անցնել, որ ձեր ներկայութեան երբէք կարելի չէ ձանձրանալ։ Իմ ամայի կեանքին մի մտերիմ բարեկամութիւն կրկնակի թանկագին է, իսկ ձեր բարեկամութիւնը աւելի քան ցանկալի, երբ կարելի է նոյն իսկ երջանկութեան տահմաններում ոտք դնել։

ՆԻՆԱ. Նու, նու։

ԳԷՈՐԳ. Այո, այս շեշտում եմ, ի նկատի ունենալով ձեր ծանօթութեան այն երկու տեսակցութիւնները, երբ ես կատարեալ գոհ ու անդորր էի. երբ պարզ զգում էի, որ կան պատահականութիւններ, երբ կարող են ջնջուել ամեն սկեպտիկ հայեացք քո մէջ, երբ կեանքը այլ ևս արժէքաւոր է դառնում։ Բացւում են յայն դռներ, որ դէպի երջանկութիւն են առաջնորդում, միայն թէ պակասում է մէկը, որ վստահութիւն ներշնչէ քեզ, ներշնչէ երջանիկ ու անդորր ապրելու մտքեր։ Այս ամենի համար, ահա, ես անչափ շնորհապարտ եմ ձեզ։

ՆԻՆԱ. Յիրաւի՞ ես կախարդական դեր եմ կատարել ձեր վերաբերմամբ։

ԳԷՈՐԳ. Այո, աւելի քան մեծ ազդեցութեամբ։ Ձեր դիմաց ստիպուած եղայ գիտակցաբար նայել իմ դրութեան ու քննել ինքս ինձ. Եւ ինչ, դուրս եկաւ, որ կեանքում դեռ շատ առաւելութիւններ կան, որոնց տիրանալու համար արժէ ապրել։ Սկեպտիկ փիլիսոփայութիւնը դադարել է այլ ևս ձայնել իմ մէջ և ես այժմ դրական միտումներով եմ ձեր անոյշ ներկայութիւնը վայելում։ Այժմ ես այլ մարդ եմ, գիտեմ ինչու եմ ապրում, կամ ինչի՞ ձգտում։

ՆԻՆԱ. Դուք այժմ այլ մարդ էք, այն էլ բախտաւոր մտքերով։

ԳԷՈՐԳ. Կատարեալ այդպէս։

ՆԻՆԱ. Նախանձելի է. արժէ ձեզ շնորհաւորել։

ԳԷՈՐԳ. Իսկ այդ միմիայն ձեր շնորհիւ, ձեր դիմաց։ Ձեր այդ ձայնը, որ այդքան ախորժալուր է հնչում եմ ականջներում, այդքան հանգստացուցիչ եմ ծանր մտքերի համար, կենսական ու թարմ սթափում առաջ բերաւ իմ նեխուող ամայի կեանքի մէջ։ Ես ցնցուեցի ձեր տպաւորիչ հայեացքի տակ, ձեր զուարթ ու կենսալից խօսակցութեան դիմաց. ցնցուեցի ու սթափուեցի որպէս գարնանային առաւօտեան։ Այլ ևս պարզ էր փայլում իմ գիտակցութիւնս։ Պարզ, որ կեանքում ես ևս երջանիկ լինել կարող եմ եւ այն, անպատճառ ձեր ներկայութեամբ, ձեր ընկերակցութեամբ։ Դուք սէր ներշնչեցիք ինձ, Նինա և ես այժմ սիրում եմ ձեզ։

ՆԻՆԱ. Դուք... այնքան սիրուն էք խօսում...

ԳԷՈՐԳ. Նինա, ես սիրում եմ քեզ։ Դու սթափեցրիր ինձ իմ սկեպտիկ դրութիւնից, այժմ էլ պարտաւոր ես ինձ ուղղութիւն տալ իրական կեանքում, ընկերակցելով ինձ հաւատարիմ սիրով։ Ես եկել, ահա քեզ աղերսում եմ, ձեռդ մեկնել, դնել կրծքիս վրայ, երջանկութիւն ներշնչել ինձ, թարմացնել իմ ամայի կեանքը քո կենսալից ու աշխոյժ բնաւորութեան, քո սիրող շնչի տակ։

ՆԻՆԱ. (Գլուխը ձեռներին լենած, խորհում է)։

ԳԷՈՐԳ. Դու լսում ես ինձ։ Չե՞ս կամենում պատասխանել։

ՆԻՆԱ. Լինում են րոպէներ, երբ անկարելի է տիրել յոյզերին։ Ես... գգացուած եմ...

ԳԷՈՐԳ. (Մօտենում, բռնում է նրա գլուխը)։ Խօսիր, աննման էակ։ Խօսիր և ներազդիր ինձ, որ ես դեռ կարող եմ երջանիկ լինել։ Ասիր, որ ինձ սիրում ես. որ ուրիշ ոչ ոք չի տիրում քո սրտին, քո մտքին։ Ասիր, որ դու ազատ ես և ես իրաւունք ունեմ քեզ սիրելու։ Խօսիր հոգիս։ Թող հնչէ քո արծաթաձայն անուշ ձայնը և իմ հոգին լցուի բերկրանքով։

ՆԻՆԱ. Գէորգ...։

ԳԷՈՐԳ. Նինա, կաթոգին էակ...

ՆԻՆԱ. (Սեղմուելով նրա կրծքում)։ Ես քեզ սիրում եմ։ Գէորգ...

Յ. ԲՈՋԵԱՆ

(ՎԱՐԱԳՈՅՐ)

(Վերջը հետևեալ համարում)

ԶԷԿԻ

(Léon Frapié)

Դա մի խոշոր, ուժեղ, ամենահասարակ տեսակի շներից մէկն էր։ Աճպարար բօշան և իւր ընտանիքը վաղուց է, որ տէր էին այդ շանը, կարելի է ասել իրենց տուն-տեղ լինելու օրից։ Տան մէջ եղած չորս փոքրերը, որոնցից մեծն արդէն եօթ տարեկան էր, նորա օրով էին լոյս աշխարհ տեսել։

Տան անդամներից մէկն էր նա, համարեա թէ խսկապէս ասելով, բօշան նայում էր նորան իբրև իւր խեղճ ազգականներից մէկի վրայ, որին պահում էին տան մէջ եղած բոլոր ծառայութիւնները կատարել տալու պայմանով։

Նորա դերը կատարեալ էր,—սիրում էին և չարչարում, հայհոյում և փաղաքշում, ծեծում և խորհուրդ հարցնում։

—Եթէ այս ճանապարհը բռնենք, ի՞նչ կասես, Զէկի, հ՞ը, —հարցնում էին նորան ամենայն լրջութեամբ։

Սայլակին լծած Զէկին իւր կարծիքն էր յայտնում խկոյն, հաղում էր՝ իւր հաւանութիւնը տալիս, գլուխը խոժոռած մի կողմն էր թեքում՝ հակառակ կարծիք ունեցած դէպքում, նայելով թէ օդի մէջ ինչ խորհրդաւոր ազդանշան էր նշմարւում,

Մի մեծ առաւելութիւն էլ ունէր, եթէ մանրավաճառ բօշան իւր սայլակի վրայ դարսոտած կողովներով, քաղալակներով ու բանջարեղէնի զանազան տեսակի կապոցներով երեկոյեան տուն էր դառնում ամբողջ անցած ճանապարհին ոչ մի բան չվաճառելով, ամենքը առաջուց գիտէին, թէ ում մեղն է դա. «բոլորն այս ապուշի մեղքն է»։

Տան մէջ պատահած տարաձայնութիւնների «կուժն ու կուլան» միշտ Զէկի մէջքին էր կոտրւում. գիտակից դէպի իւր պարտաւորութիւնը և սկզբունքով կողմնակից լինելով ընտանիքի մէջ բարի յարաբերութիւն պահպանելուն, ինքնակամ՝ վէճի բռնուած ամուսինների մէջ էր ընկնում, մինչև որ սայ-

լակի տակ մի քանի աքացիի հարուած չստանար, իբրև վարձատրութիւն ամուսիններին մէջ համերաշխութիւն ձգելու ջանքի։

Կատաղի, զարհուրելի պահապան էր. այնքան ոյժ ու քաջասրտութիւն ունէր, որ կարող էր հեշտութեամբ դիմադրել մի քանի մարդու յարձակման։

Իւր սիրելի զբաղմունքն էր՝ երեխաներին հսկել, խնամել և պաշտպանել. դայակից աւելի էր հոգ տանում նոցա, միևնոյն ժամանակ և նոցա խաղալիքն էր չարչարանքի, կատակների նշաւակը,—հօ չի՞ կարելի խաղալ կենդանի արարածի հետ, առանց նորան չարչարելու։ Այդ կողմից նորա համբերութիւնը չափ չունէր. մայրական ծայրահեղ առաքինութեան պարտականութեամբ կարող էր մարդկային արարածի հետ մրցել։

Տարէնը մի անգամ, զուտ առևտրական տեսակետից, իրաւունք էին տալիս նորան պտղելու։ Նոյն հոգատարութեամբ սնուցանում էր և իւր փոքրիկներին։ Եւ երբ փոքրիկները ծախում էին լալիս էր լուռ, մեկուսի մի անկիւնում, ինչպէս հասակաւոր մէկը, և շաբաթներ ամիսներ շարունակ չարչարւում, աշխատում էր, խաղում ու հսկում նախկին անձնադրութեամբ բայց նորա աչքերի մէջ կարելի էր կարդալ մի խորին, անմխիթար վիշտ, որ խօսում էր ձեր սրտի, հոգու հետ։

* *
*

Այդ տարին բոշաների համար ցաւի տարի էր։ Գարնան բացուելու հետ, բացուեցան և երկնքի դռները,—անձրև էր, որ շարունակ թափւում էր։

Օր եկաւ, որ ամուսինները կատարեալ կարօտութեան մէջ ընկան,—չամաչէին ձեռք կմեկնէին։ Ամբողջ օրը պտտել էին, թափառել, բայց ոչինչ չէին շահել և այժմ ճանապարհի մի կողմին կանգնած, ամեն ընակութիւնից հեռու, մոլորուել հնացել էին՝ սայլակի անիւը ՀԱՍՍուելու պատճառով։ Կինը չէր կարողացել «սաղցնել» իւր ոզորահիւսներից և ոչ մէկը. փոքրները ուզողութիւն էին արել, բայց անհետևանք, ամբողջ դաշտի մէջ աւեր տարու պատճառով աւերելու ոչինչ չկար, —ոչ պտուղ, ոչ «բոստան», աւելացրէք և այն որ Ջէկիի փոքրներն էլ դեռ հետն էին։

Իհարկէ, կարելի էր առժամանակ ծոմապահութեամբ անցնել. բայց սայլակի անիւը նորոգել տալու համար անհրաժեշտաբար փող էր պէտք։

Որտեղից որտեղ ճանապարհին մի որսորդ լոյս ընկաւ,

նիհար, արևառ դէմքով, ուրախ տրամադրութեամբ պարիկի հովերով (faunesque) բարձրահասակ էր, երկար սրունքները դեղնաւուն զանգապաններով սեղմած։ Իւր շիկաւուն փոքրիկ միրուքը, ժանգագոյն զգեստը հնադարեան նկարների մէջ պատկերացրած «աղա Սատանայի» պատկերն էր յիշեցնում։

Զէկին, իւր շուրջը խայտացող փոքրիկներով շրջապատուած, կապուած էր հաստ, երկաթէ շղթայով մօտիկ ծառին։ Անհոգ, ինչ որ եղանակ սուլող մօտեցող որսորդին ուղղեց մի խուլ, թշնամական մռմռոց։

Վերջինս յանկարծակիի եկաւ, կանգ առաւ, քննական հայեացքով զննեց ահռելի գազանը և իւր սերունդը։ Ցանկարծ բարձրաձայն, քահ-քահ ծիծաղ արձակեց։

—Է՜յ, բարեկամ, ի՞նչ տամ լակոտներին։ Հատը հինգ մանէթ, հը՞։ Զէ՞։ Լսեցէք, ուզում եմ իւր տեսակի մէկ աչքի ընկնող մի զուարճութիւն ունենալ, որ տեսել եմ արտասահմանում, մի տօնավաճառի ժամանակ,— պէտք է փոքրիկներին գնդակահարել՝ իրենց մօր աչքի առաջ։ Սպասեցէք, թողէք խօսքս վերջացնեմ։ Պէտք եղած անհրաժեշտ բաներն ունիք. մեր փոքրիկ զոհերին կծածկենք այս վառիկների կողովով, ճիշտ այնքան հեռաւորութեամբ, որ մայրը իւր կատաղի, անկանոն ոստիւնների ժամանակ միայն մի սանտիմետր հեռաւորութեամբ կարողանայ մօտենալ կողովին։ Է՜, առէք, չորսի համար կվճարեմ քսակիս մէջ եղած չորս տասնոց ոսկին, քսան ռուբլու փոխարէն... Այս է, աւելի չկայ։

Բոշաները,—մարդը, կինը, երեխաները,— հակառակեցին այդպիսի մի վայրենի զուարճութեան։ Այդ բոպէին նոքա առանձին թափով զգացին դէպի Զէկին տածած իրենց բոլոր սէրն ու քնքշանքը։ Վերջինս՝ անհանգիստ շարժումներով հծծում էր, կարծես շուրջը արագութեամբ փոփոխուող դիմագծերի շարժումներից զգալով մօտաւոր վտանգը։

Որսորդը տարօրինակի մէկն էր. որչափ ընտանիքի անդամների անկեղծ տրտմութիւնն էր աւելանում, այնչափ ինքն աւելի էր ուրախանում. հաստակողութիւնը բռնած՝ իւր ասածն էր պնդում և խեղճ ընտանիքն այնքան մեծ կարիք ունէր այդ յանկարծական, երկնքից իջած մանանայի նման, շահին որ ակամայից ընդունեց առաջարկը։

Բոշան խնդիրը վճռեց յանկարծակի և ոսկիները ընդունեց մի առանձին մռայլ քմծիծաղով, որին վայրագ զուարճասէրը նոյնքան ուշադրութիւն դարձրեց, որչափ նոցա գթասրտութեան ու անկեղծ մորմոքին։

* *
*

Փոքրիկ շնիկները գոցուեցան խոշոր ծակերով կողովի տակ, Զէկլիի շղթայի տարածութիւնը ամենայն հոգատարութեամբ ճշտուեցաւ։ Շունը մի կատաղի, վրիժառու հայեացք նետեց և իւր շղթան ուժեղ թափով ձգելով դիմեց դէպի կողովը, որ մի նոր առիթ տուեց որսորդին աւելի ևս ճշտելու մնացած տարածութիւնը,—շան քթի ծայրը համարեա քսուում էր ողորահիւս կողովին։

Կինը փախաւ, թաքնուեցաւ փոքրիկ սայլակի մէջ, ականջներ խցեց, որպէս զի ոչինչ չտեսնէ, ոչինչ չլսէ։

Որսորդը լցրեց հրացանը։

—Սպասեցէք, սպասեցէք, գոչեց բոշան։

Դիմեց մի քանի քայլ հեռու խմբուած իւր չարաճճիներին առանց բառ արտասանելու բռնեց մեծի թևից, տարաւ սայլակի մօտ, ուր ու ձեռքն ամուր կապեց սայլակի կողքին։ Իրաւունք ունէր. երեխան մի քանի խոշոր քար ձեռքի մէջ առել, սպասում էր, որի հետևանքը կարող էր շատ ծանր լինել վայրենու ճարպիկ, անվրէպ քար նետելու շնորհքն ի նկատի առնելով։

Զարհուրելի զուարճութիւնը բաւական երկար տևեց։ Որսորդը, կամենալով բաւական հեռուից նշան բռնել, մի քանի անգամ վրիպեց շնիկներին կպչելու, որոնք գլուխ կորցրած, կողովի տակ այս ու այն կողմն էին ընկնում մօրը կանչելով. բազմաթիւ վրիպումներից, ռազմամթերքն արագ սպառւում էր և բոշայինք կարծում էին, թէ այդպիսով կարող կլինէին մէկ-երկուսին ազատել. բայց, դժբաղդաբար, վերջին փամփուշտով սպանուեցաւ վերջին քոթոթիկը։

Այդ տմարդի զուարճութեան ամբողջ ժամանակը, Զէկլին զմայլմունքի կատարեալ պատկեր էր ներկայացնում։ Բուրդն ամբողջապէս փուշ-փուշ, բերանը փրփուր, աչքերը բոց-կրակ, որսորդի իւրաքանչիւր նոր նշանին ոստնում, ոռնում, կատաղում կռնչում, սրտմաշուկ հծծիւն էր արձակում. նորա հեծկլտանքը ոչնչով չէին զանազանւում մարդկային անվերջ տանջանքի հեծկլտանքից. դա մի խօսուն էակ էր, որի աչքերից աղի արցունք էին քամում դիակնացող շնիկներից ամէն-մէկի ջղաձիգ շարժումները։ Կսկիծ ու մորմոքից խելակորոյս մօր պաղատանքը աւելի սրտամորմոք լինել չէր կարող.—«Ո՛չ, ոչ, թոյլ մի տաք։ Դադարեցէք։ «Շնորհ» էին ասում նորա լացող աչքերը, պաղատող հայեացքը...

Զայրոյթի և անզօր կատաղութեան զարհուրելի արտա-

յայտութիւն էր ցոլում այդ ամենի տակից. անզուսպ թռիչքներ, կոյր անձնազոհութիւն ամեն նշանի,—կենդանին ուզում էր ամեն ինչ ջարդել-փշրել, իւր գլուխը մահու տալ, հասնել իւր թշնամուն մի ոստիւնով։ Ապա նորա չարագուշակ «աՀուՀ» ոռնոցը, որ ձգւում-տարածւում էր դաշտի ամենահեռաւոր վայրերը, դա լացող մօր անմխիթար մեղեդին էր, որին ամեն անգամ, և բօշայի կնոջ ու երեխաների աղեխարշ, լալկան «աՀուն» էր միանում։

—Ի՞նչ հրաշալի կենդանի է, շուն չէ սա, այլ մի վագր, մի առիւծ, ասաց որսորդը հրացանը մէջքը ձգելով։

—Կարծում էք, պատասխանեց հեգնօրէն բօշան։ Յամենայն դէպս, կարծում եմ, դուք վերջացրիք. պայմանը յարգուած և ոչ մէկս միւսի առաջ այլ ևս ոչ մի պարտականութիւն չունենք, այնպէս չէ՞։

Մի փոքր կանգ առաւ և յետոյ մի անհամբեր դէմքի ծմռտկոցով աւելացրեց։

—Է՜, այժմ կինդրեմ «շնորհքդ պակսեցնել», որովհետև շանս պիտի արձակեմ... կարծում եմ իրաւունք ունիմ, այսպէս վարուելու։

Որսորդը սպրտնեց, դողաց ամբողջ էութեամբ և երկիւղից կակազեց.

—Ի՞նչպէս, թէ... Ի՞նչպէս թէ... Օգնութիւն։ Մարդասպանութիւն է...

Դաժան աչքերն արագ դարձրեց դաշտի կողմը այնտեղ որևէ ապաստանարան որոնելու համար,—ողջ հորիզոնի վրայ բնակութեան հետք չկար։ Կանգնած տեղը վայրկեան դադար մնալ չէր կարողանում, կարծես երկիրն այրում էր նորա ոտները։ Եւ չնայելով, որ գրպանում կոպէկ չունէր տենդային շեշտով վերջին միջոցն էր փորձում։

—Ես... ձեզ կտամ... այս րոպէիս կստորագրեմ պարտագիր... հարիւր... հիգ հարիւր բուբլի...

- Ոչ, պատասխանեց բօշան հաստատ ձայնով, արդէն բաւական վարձատրել էք ինձ, հետն էլ սովորեցնելով՝ չզիջանել։

Ջէկին իւր շղթայի վրայ էր պտոյտներ անում. աչքերը անզուսպ վրիժառութեանը լի, կատաղի հոնչիւններ արձակելով։

Որսորդը ոստոստում էր կանգնած տեղը, փետում էր մազերը, աշխատում էր բօշային փաթաթուել։ Վերջինս յօնքերը կիտած, խոժոռ դէմքով արտասանեց իւր վերջին ասելիքը։

—Է՜, բարի, լսեցէք վերջին, միակ պայմանս ձեզ կթողնեմ, որ հիգ հարիւր քայլ առաջ անցնէք, այ մինչև այն բլրի

ծայրը, որտեղից ճանապարհը ծուում է... բայց վազեցէք, լաւ վազեցէք որչափ ոտքներումդ ոյժ կայ: Հասկացաք, ուրիշ ասելիք չունեմ:

Այլ ևս տատամսելու տեղ չկար. որսորդը մի վերջին հայեացք ձգելով բերանը փրփուր պատած, կատաղի կենդանուն, գժի պէս փախաւ:

Եւ երբ որսորդը հասաւ որոշած սահմանին, շղթայից արձակուած Զէկին թռաւ նորա յետևից, ահագին ոստիւններ անելով, փոշու սիւն բարձրացնելով իւր յետևից:

Սայլակի վրայ ելած բոշաները շուտով նկատեցին, որ երկու վազողների անջրպետը հետզհետէ փոքրանում էր արագ կերպով, և որչափ աւելի էր քչանում այդ տարածութիւնը, այնքան աւելի պարզ կերպով էին լսում կենդանու ձայնը, որ հետզհետէ աւելի սուր, կատաղի էր դառնում, կարծես շների մի ահագին վոհմակ էր հոնչում՝ կերակրի համար:

Փախչողն էլ էր զգում, որ շան իւրաքանչիւր նոր ոստիւնը իւր մահուան ճգնաժամի բոպէն էր մօտեցնում: Այն ժամանակ նաէլ սկսեց փախչելով՝ զարհուրելի ձայներ արձակել. կարծես մի կենդանի էր բառաչում. մարդկային ձայն չէր դա: Խելակորոյս, մահուան վրնջիւն էր դա. մինչ այն աստիճան զարհուրելի, որ ճանապարհի մօտ նստած տաւարը նայող մի մանուկ երկիւղից գլուխն ազատել ուզեց. վեր թռաւ, մի կողմ վազեց և յանկարծ հաւասարակշռութիւնը կորցնելով ճանապարհը եզերող խոր ճահճոտ տղմուտի մէջ ընկաւ:

Նոյն վայրկեանին հասաւ և շունը, որ հազիւ մի քանի քայլ միայն հեռու էր իւր թշնամուց: Յանկարծ մի այնպիսի ձայն արձակեց, որ կարծես մէկը նորան վառ հնոցի մէջ նետած լինէր, միևնոյն ժամանակ իւր կատաղի վազքի թափի յանկարծակի դադարից գետին գլորուեցաւ, թաւալուեցաւ փոշու մէջ այնպէս, որ հեռուից դիտողը կկարծէր թէ հրացանի գնդակի զոհ գնաց:

Բայց իսկոյն տեղից վեր ցատկեց, մի զարհուրելի հոնչիւն արձակեց, ասէք մի անտեսանելի, հզօր արգելք նորան ջախջախեց,—պէտք է ձեռքից փախցնէր իւր զաւակների սպանողին իւր արիւնն սպանողն ազատում էր... Նա չէր կարող տղմուտի մէջ սուզուող մանկանն անօգնական թողնել. աշխարհիս երեսին ոչ մի արգելք չէր կարող ստիպել նորան անցնելու, ոչ մի արգելառիթ դորանից աւելի ուժեղ թափով յետ պահել չէր կարող նորան:

Իսկոյն ջուրը նետուեցաւ, բռնեց երեխայի զգեստից և

ակռած՝ ճանապարհի խոտի վրայ քաշեց, հանեց։ Կանգ առաւ ուժգն հևացող լեզուով արագ-արագ լիզեց ուշագնաց երեխայի դէմքը ծածկող երկար մազերը, ուժով քաշքրտեց շորերը և կուրծքն ու թևերն արձակեց։

Եւ երբ պարտքը կատարած, ոտքի ելաւ պղտոր հայեացքով աչք ածեց դէպի այն կողմն, ուր փախչում էր ազատուած որսորդը,— նայեց, նայեց, յետոյ արագ-արագ յետ փախաւ իւր փոքրիկների մօտ, դարձաւ իւր ստրկութեան և պարտականութեան՝ աշխատանքին, դէպքի կսկիծը և անմիջական պարտականութիւնից խուսափելու խղճահարութիւնը սրտումը, մարդկային իսկական հեծկլտանք, սիրոյ և վշտի հեծկլտանք արձակելով։

Ֆր. Թ. Տ. Վ.

ՊԵՏՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԻՆՆ ՈՒ ՁԵՒԵՐԸ

Պետութեան ձեւերը. Ինչպէս տեսանք, պետութեան ա-ժենաէական նշանը՝ անկախ, կազմակերպող, մարդկանց միացնող, մի իշխանութիւնն է։ Զանազան պետութիւններում և նոյնիսկ միևնոյն պետութեան մէջ զանազան ժամանակամիջոցներում—շրջաններում այդ իշխանութիւնը շատ տարբեր ձևերով է կազմակերպուած լինում. հէնց այդ պատճառով էլ զանազան ձևերի—տիպերի պետութիւններ ենք տեսնում։ Այդ զանազանութիւնը խիստ մեծ է, ուստի և մեծ դժուարութեան ենք հանդիպում, երբ փորձում ենք պետութիւնները որոշ դասակարգութիւնների բաժանել։ Արիստոտելը գիտական հիմքերի վրայ դնելով իւր տեսութիւնը՝ պետութիւնները բաժանում է. միապետութեան (Монархія), ազնուապետութեան (аристократія), և բազմիշխանութեան (политія)՝ նայելով թէ իշխանութիւնը ում ձեռքին է գտնւում. մէկի՞, բազմութեան՞, թէ՞ ամբողջ ժողովրդի։ Եւ երկրորդ՝ շիտակ—ուղիղ և փչացած—այլանդակուած՝ նայելով թէ պետութիւնն իշխանութիւն իրեն շահերի—օգտի համար է գործ դնում, թէ ամբողջ պիտութեան— ժողովրդի։ Այլանդակ կամ այլասերուած պետութիւնների համար Արիստոտելը գործ էր ածում բռնակալ, օլիգարխ (սակաւապետութիւն—ջոջապետութիւն, որ կարելի է նոյնացնել ազնուապետութեան հետ) և դեմօկրատ եզրները (տերմին)՝ նայելով թէ դրանք ինչ ձևի պետութիւններ էին—միապետութիւն, ազնուապետութիւն, թէ՞ բազմիշխանութիւն։ (Դեմօկրատիա տերմինն Արիստոտէլից յետոյ սկսեցին լաւ իմաստով գործ ածել. այսինքն այն իմաստով, ինչ իմաստով որ Արիստոտել գործ էր ածում պոլիտիա տերմինը. այսինքն մի պետութիւն, ուր իշխանութիւնը պատկանում է ժողովրդին. ժողովուրդն է կառավարում ինքն իրեն և ոչ թէ մի միապետ, կամ մի խումբ արտօնեալներ։ Իսկ Արիստոտէլեան դեմօկրատիայի տեղ առաջ եկաւ օխլոկրատիայ տերմինը, որ նշանակում է ամբոխի պետութիւն, խուժանի իշխանութիւն)։ Արիստոտէլի դասակար-

գութիւնը շատ յարմար էր իրեն յայտնի՝ համեմատաբար հասարակ—պարզ կազմակերպութիւն ունեցող պետութիւնների համար։ Սակայն Արիստոտէլից յետոյ ստիպուած եղան մտցնել այդ դասակարգութեան մէջ նաև խառն պետութիւնների մի դաս. այսինքն այնպիսի պետութիւնների, որոց մէջ գտնուում են միաժամանակ զանազան տարրեր. և՛ միապետութիւն, և՛ ազնուապետութիւն, և՛ ժողովրդապետութիւն— դեմոկրատիա. (Հոմ)։ Ներկայումս այդ դասակարգութիւնները կատարելապէս անգործադրելի են. այլապէս բոլոր պետութիւնները (սակաւ բացառութեամբ) հարկ կը լինէր մտցնել խառն պետութիւնների դասի մէջ։ Եւ իրօք. ո՞ր ձևին վերագրել անգլիական պետութիւնը, ուր բարձրագոյն իշխանութիւնը պատկանում է ժառանգական թագաւորին, բայց այդ իշխանութիւնն էլ սահմանափակուած է պարլամենտով, որը բաղկացած է երկու պալատներից. մէկի մէջ նիստ են կազմում ծննդեամբ լորդերը (ազնուական), միւսի մէջ ժողովրդից ընտրուած ներկայացուցիչները. (վերջիններս ընտրուում են ոչ ամբողջ ժողովրդից, այլ ժողովրդի այն մասից, որը կալուածական իրաւունք—ցենզ ունի. այսինքն կամ անշարժ կալուածքի տէր է, կամ վարձով—կապալով է վերցնում որոշ արժէքից՝բարձր գին ունեցող հող, տուն կամ բնակարան)։ Այստեղ մենք տեսնում ենք և՛ միապետութեան, և՛ ազնուապետութեան, և՛ ժողովրդապետութեան տարր, թէև ոչ լրիւ։ Ըստ Պոլիբի ուղղած դասակարգութեան՝ ակնյայտնի է, որ Անգլիան պէտք է դասէինք խառն պետութիւնների կարգին. սակայն նոյն կարգին պէտք է դասէինք նաև Գերմանիան, Ֆրանսիան և այլն՝ և միայն Ռուսաստանն ու մի քանի ուրիշ պետութիւններ կը մնային զուտ միապետական։

Միապետութիւն եւ հասարակապետութիւն. Մի կողմ թողնելով ԺԸ և ԺԹ դարերի պետագէտների (государствовѣдъ) առաջարկած դասակարգութիւնները՝ աշխատենք ցոյց տալ, որ բոլոր դասակարգութիւնների մէջ էլ ընդունուում և ճանաչում է պետութիւնների երկու հիմնական ձև. միապետութիւն և հասարակապետութիւն։

Միապետութեան մէջ բարձրագոյն պետական իշխանութիւնը պատկանում է մի անհատի, որը մեծ մասամբ այդ իշխանութիւնն ստանում է ժառանգաբար և որպէս ինքնակալ՝ կառավարում է երկիրը սեփական իրաւունքով «Աստուծոյ շնորհութեամբ» և ոչ ժողովրդից որ և է պայմանով կամ առանց պայմանի ստացած իրաւունքով։ Այդ անհատը—միապե-

տը ուրիշ պետութիւնների հետ յարաբերութիւն ունեցած ժամանակ՝ ներկայանում է իբրև պետութիւն և պատասխանատու չէ պետութեան մէջ եղած որ և է իշխանութեան։ Նրան չեն կարող փոխել, դատել կամ պատժել օրինական միջոցներով։

Հասարակապետութեան մէջ, ընդհակառակը, իշխանութիւնը պատկանում է ամբողջ ժողովրդին և շատ քիչ դէպքերում միայն ժողովրդի մեծ մասին։ Ժողովուրդն է ընտրում ուղղակի կամ անուղղակի կերպով մի նախագահ (Ֆրանսիայ, միացեալ նահանգներ) կամ կոլլեգիալ մարմին (Զուիցերիայում 7 հոգուց բաղկացած դաշնակցական խորհուրդ) և նրանց յանձնում հասարակապետութեան կառավարութիւնը։

Բացարձակ եւ սահմանադրական միապետութիւններ. միապետութիւններն էլ լինում են երկու տեսակ. բացարձակ (ինքնակալական) և սահմանադրական։ Բացարձակ միապետութեան մէջ իշխանութիւնն ամբողջովին պատկանում է մի անձի. նրան է պատկանում և օրէնսդրական՝ և գործադիր (исполнительная) և դատարանական իշխանութիւնները։ Եւ նա այդ իշխանութիւնները վարելու համար՝ նշանակում է աստիճանաւորներ, որոնք ըստ ամենայնի կախումն ունին իրենից։

Սահմանադրական միապետութիւններում օրէնսդրական իշխանութիւնը պատկանում է գլխաւորապէս պարլամենտին. այսինքն մի հիմնարկութեան, որն ամբողջովին կամ մասամբ ընտրւում է ժողովրդից։ Օրէնսդրական իշխանութեան մասնակցում է նաև միապետը, որը վաւերացնում է օրէնքները ու տալիս է իւր սանկցիան. հետևապէս կարող է և մերժել, չհաստատել առաջարկուած օրէնքները։ Բայց նա չի կարող ինքը մենակ առանց պարլամենտի համաձայնութեան որ և է օրէնք հրատարակել. և հէնց դրա մէջ է սահմանադրական պետութեան էութիւնը։ Բացի օրէնքների վաւերացնելը՝ միապետի իրաւասութեան տակ է գտնւում նաև պարլամենտի բանալու, փակելու, կանչելու և ցրուելու՝ այսինքն նոր ընտրութիւններ նշանակելու գործը։ Բացի այդ՝ միապետին է պատկանում գործադրական իրաւունքը, որին լրումն տալու համար նշանակում է աստիճանաւորներ, որոնք, կախումն ունեն իրենից։ Միապետին է ենթարկւում նաև զօրքը։ Սակայն այս բոլորի դիմաց օրէնսդրութեան մէջ է մտնում նաև հարկերի որոշելն ու նշանակելը, ընդհանրապէս պետական Բիւջէի որոշումը, որով պարլամենտը հնարաւորութիւն է ունենում կանոնաւոր սահմանների մէջ դնելու միապետի գործունէութիւնը։ Միապետն անկարող է առանց պարլամենտի համաձայնութեան այնպիսի

մի գործ կատարել, որի համար ծախք է պահանջւում։ Ի հարկէ այս ճիշտ է միայն այն դէպքերում, երբ նա—միապետը ցանկանում է մնալ սահմանադրութեան որոշած օրինական սահմաններում։ Սակայն պատահում են դէպքեր, երբ միապետը վստահ իւր իշխանութեան տակ ունեցած ուժի—զօրքի վերայ, որի նմանը պարլամենտը չի կարող ունենալ ի հարկէ, առանց պարլամենտի թոյլտուութեան և համաձայնութեան իւր իրաւասութեան շրջանից դուրս գործեր է կատարում և բնականաբար ընդհարւում պարլամենտի հետ, որը երբեմն վնասակար հետևանքներ է ունենում։ Այսպէս օրինակ Անգլիայում երկու անգամ (1643 թ. և 1689 թ.) այդ ընդհարումը յեղափոխութիւն առաջացրեց և հետևանքն այն եղաւ, որ առաջին դէպքում թագաւորը պատժուեցաւ, իսկ երկրորդ դէպքում ստիպուած եղաւ փախչել։ Սակայն պրուսիայում նման ընդհարումը բոլորովին այլ հետևանք ունեցաւ. ամբողջ չորս տարի (1862—66 թ) թագաւորն առանց պարլամենտի որոշման ու թոյլտուութեան հարկեր էր հաւաքում և հակառակ պարլամենտի կամքի ուժեղացնում ու բարեփոխում զօրքը. Պարլամենտն, ի հարկէ, շարունակ կռւում էր թագաւորի հետ։ Սակայն երբ պրուսեան 64 թ. Դանիային և 66 թ. Աւստրիային յաղթեց, ժողովրդի տրամադրութիւնը բոլորովին փոխուեցաւ. փոխուեցաւ նաև 66 թ. վերընտրուած պարլամենտի տրամադրութիւնը։ Նա—պարլամենտն շտապեց ընդհանուր ներումն քուարկել և շնորհել այն բոլոր նախարարներին և աստիճանաւորներին, որոնք կատարելով թագաւորի կամքը կատարած էին եղել ապօրինի (պարլամենտով չթոյլատրուած) գործեր։ Այսպիսով թագաւորը կատարեալ յաղթանակ տարաւ։

Ներկայումս գոյութիւն ունեցող բոլոր հասարակապետութիւններն էլ սահմանադրական են. բոլորի մէջ էլ պետութեան գլուխ անհատի կամ կոլլեգիալ մարմնի իշխանութեամբ օգտուելը սահմանափակուած է ճիշտ այնպէս, ինչպէս միապետինը սահմանադրական միապետութիւնների մէջ։ Ընդհանրապէս հասարակապետութեան նախագահի և սահմանադրական միապետի պարտականութիւնների—իրաւունքների մէջ լիակատար նմանութիւն է նկատւում։ Հասարակապետութիւնների մէջ բարձրագոյն իշխանութիւնը, որ ժողովրդի սեփականութիւնն է առաջ է տարւում նոյն ժողովրդի ձեռքով, նրանից ընտրուած իրար սահմանափակող զանազան իշխանութիւնների միջոցով։ Այնպէս որ Ֆրանսիայում բարձրագոյն օրէնսդրական իշխանութիւնը պատկանում է պարլամենտին, որը բաղկացած

է երկու պալատներից. սենատ և պատգամաւորների պալատ. երկուսն էլ ընտրւում են ժողովրդից, թէև զանազան ձևերով ու ժամանակամիջոցներով։ Իսկ երկու պալատները միասին ընտրում են հասարակապետութեան նախագահ եօթ տարի ժամանակով։ Ընտրուած նախագահն այլ ևս պատասխանատու չէ պարլամենտի առաջ և նրան՝ մինչև ժամանակամիջոցի լրանալն անկարող են փոխել կամ հեռացնել։ Պարլամենտին պատկանում է օրէնսդրական իշխանութիւնը, նախագահին՝ գործադրական իշխանութիւնը. նախագահն է նշանակում նախարարներ և աստիճանաւորներ. նրան է պատկանում, ինչպէս և սահմանադրական միապետութեան մէջ թագաւորին, օրէնքների վաւերացնելու իրաւունքը — սանկցիայ տալը։ Բայց միւս կողմից էլ պարլամենտին է վերապահուած բիւջէի որոշմամբ ու այլ միջոցներով նախագահի գործունէութեան ուղղութիւն տալն ու հսկողութիւնը։ Այստեղից երևում է, որ սահմանադրական միապետութիւնն իշխանութեան կազմակերպութեան տեսակէտից աւելի մօտ է հասարակապետութեան, քան բացարձակ միապետութեան։ Թէ առաջինում և թէ երկրորդում (հասարակապետեան և սահմանադրական միապետութեան մէջ) օրէնսդրական իշխանութիւնը հետևողական կերպով բաժանած է գործադրականից և յանձնած զատ-զատ գործոնների։ Այս նմանութիւնը սակայն չպէտք է թագցնէ մեզանից այն աչքի ընկնող տարբերութիւնը, որ թէ օրէնսդրական և թէ գործադրական իշխանութիւնների աղբիւրը հասարակապետութեան մէջ միմիայն ինքը ժողովուրդն է, այն ինչ սահմանադրական միապետութեան մէջ երկու աղբիւր գոյութիւն ունի — ժողովուրդը և միապետը։

Գալով բացարձակ միապետութեան, պէտք է ասել, որ աղբիւրը դարձեալ մէկ հատ է, ինչպէս և հասարակապետութեան մէջ, սակայն տրամագծօրէն հակադիր ուղղութեամբ. մինչ հասարակապետութեան մէջ իշխանութիւնների միակ աղբիւրը ներկայանում է ժողովուրդը, բացարձակ միապետութեան մէջ ներկայանում է ինքը միապետը, որը միևնոյն ժամանակ թէ օրէնսդիր է և թէ գործադիր իր սեփական նախագծերի *)։

Միայն վերևում յիշած (օրէնսդրական, գործադրական և

Ռուսաց հիմնական օրէնքներում։ (Сводъ Законовъ т. I, ч. I, ст 1). այդ միտքն այսպէս է արտայայտուած. «Համայն ռուսական կայսրն ինքնակալ և անսահման բացարձակ միապետ է. ենթարկուել նրա բարձրագոյն իշխանութեան ոչ միայն վախի, այլ և խղճի պատճառով՝ ինքն Աստուած է հրամայում»։

դատարանական իշխանութիւնների ջոկ-ջոկ օրգանների յանձնած լինելու փոխադարձ սահմանափակումները) չէ, որ հարկադրում է մեզ սահմանադրական պետութիւնը (հասարակապետական, թէ միապետական) հակադրել բացարձակ միապետութեան։ Նոյն եզրակացութեան է բերում մեզ նաև անհատի դրութեան տարբերութիւնը այդ երկու ձևի պետութիւնների մէջ։

Հնումն անհատը պետութեան մաս էր համարուում այն էլ ներգործական. նա մասնակցում էր ժողովրդական հաւաքումներին՝ հետևապէս օրէնսդրութեան մշակման և պաշտօնական անձանց ընտրութեան գործում և իբրև պետութեան մաս՝ ունէր իւր նշանակութիւնը. և ընդհակառակը ոչ մի նշանակութիւն չունէր իբրև անձն, ինքնուրոյն անհատ։ Նա չէր օգտուում որ և է անձեռնմխելի իրաւունքով։ Պետութիւնը նրա համար կանոններ—հաւատալիքներ էր սահմանում և պատժում, երբ նա շեղւում էր դրանցից։ Պետութիւնը կարող էր սահմանել նրա համար հագուստի ձև, նոյն իսկ ճաշի ցուցակ և նա, ի հարկէ, անպայման պիտի հնազանդէր։ Նա չունէր մի արնպիսի ստացուածք, որ ազատ լինէր գրաւումից. ամեն րոպէ կարող էին գրաւել նրա ստացուածքը յօգուտ պետութեան՝ առանց որ և է յանցանքի այդ անհատի կողմից և այլն։ Տեսնում ենք, ուրեմն, որ հնումն անհատական ազատութիւն ասած բանը գոյութիւն չունէր։ Սակայն չպէտք է մոռանալ և այն հանգամանքը, որ հնումն էլ, ներկայիս պէս, անհատի դրութիւնը միակերպ չէր բոլոր պետութիւնների մէջ. Աթէնքում աւելի ազատ էր քան Սպարտայում։ Բայց և այնպէս նոր ժամանակն էր միայն, որ հասկացողութիւն մշակեց մարդկային անհատի իրաւունքների անձեռնմխելիութեան մասին. և այսպէս կայ անհատական իրաւունքների մի առանձին շրջան, ուր պետութիւնն ամենևին չպէտք է խառնուի. օրինակ ներկայումս ընդհանրացած կարծիք է, որ կրօնական հաւատալիքներ չպէտք է սահմանել. հետևապէս չպէտք է պատժել այն մարդուն, որը շեղւում է ընդհանուրից ընդունուած հաւատալիքներից, որքան էլ անպատիժ թողնելը անյարմար լինի պետութեան համար։ Այս բոլորի կողմից ընդունուած խղճի ազատութեան հետ միասին՝ ընդունուած է նաև ընդհանրութեան կողմից խօսքի ու մամուլի ազատութեան գաղափարը, որի ուժով մարդ կարող է ասել ու գրել այն ամենը, ինչոր ցանկանում է, առանց թոյլտուութիւն ստանալու պետական իշխանութիւնից. (ի հարկէ, ենթարկուելով պատժի այն դէպքում, երբ դրանով որ և է յանցանք կը գործէ, օր. մէկին կը վիրաւորէ, կը զրպարտէ, կը

բանբասէ և այլն)։ Անհատի իրաւունքների այդ շարքին է պատկանում նաև առանց թոյլտուութեան—անցաթուղթի մի տեղից մի ուրիշ տեղ գնալու ազատ իրաւունքը, ընկերութիւններ, դաշնակցութիւններ կազմելու իրաւունքները և այլն և այլն։ Ներկայումս գոյութիւն ունեցող բոլոր սահմանադրական պետութիւնների հիմնական օրէնքներում (սահմանադրութիւններում) ճանաչուած և ընդունուած են անհատի յիշեալ իրաւունքները։ Իսկ բացարձակ միապետութեան մէջ, ուր ամէն մի իշխանութեան աղբիւր ներկայանում է միմիայն և միմիայն ինքը միապետը, նման անհատական անձեռնմխելի իրաւունքներ գոյութիւն ունենալ չեն կարող, այլապէս միապետութիւնը կը դադարի բացարձակ լինելուց *)։

Այս բոլորի հիման վերայ աւելի ուղիղ կը լինի ներկայիս բոլոր պետութիւնները բաժանել երկու կարգի. բացարձակ միապետութիւններ և սահմանադրական պետութիւններ. վերջիններս էլ կարելի է բաժանել երկուսի՝ միապետութեան և հասարակապետութեան։ Առաջին կարգի մէջ Եւրոպական պետութիւններից մտնում են Ռուսաստանը, Տաճկաստանը, Չերնագօրիան և Մոնակոյի փոքրիկ իշխանութիւնը. իսկ երկրորդ կարգի մէջ՝ Եւրոպայի մնացած պետութիւններն ու Ամերիկայի պետութիւնները։

Պէտք է ասել սակայն, որ այս երկու տեսակի պետութիւնների մէջ սուր որոշակի սահման դնելը շատ դժուար է. այսպէս օր. Սերբիական թագաւորութիւնը 1869 թ. սահմանադրութեան զօրութեամբ (մինչև 1889 թ.) սահմանադրական թագաւորութիւն էր համարուում. այն ինչ պարլամենտի անդամների մի երրորդ մասը նշանակում էր ուղղակի ինքը թագաւորը. հետևապէս երկու երրորդ մասն էր միմիայն ընտրուում ժողովրդից, սակայն այդ էլ այնպիսի ճնշումների տակ ու կեղծիքներով, որ համարեա միշտ էլ թագաւորի ցանկացած մարդիկն էին պարլամենտի անդամ ընտրուում. իշխանութեան կազմակերպութեան տեսակէտից հետևապէս այդ պետութիւնը շատ էր մօտենում բացարձակ միապետութեան։ Իսկ ինչ վերաբերում է անհատի իրաւունքներին, թէև սահմանադրութեամբ ընդունուած, միշտ էլ

---

*) Սահմանադրութիւն տերմինն այստեղ գործ է ածած հետևեալ մտքով. այնպիսի պետական կազմ. ուր ժողովրդի և անհատի իրաւունքները ճանաչուած են բացարձակ կերպով և ուր բնակչութիւնն ազատում է երկրի օրէնսդրութեան և կառավարութեան գործունէութեան վրայ՝ ուղիղ և շարունակ գործող օրգանների— գլխաւորապէս պարլամենտի միջոցով։

խախտում էին։ Չի կարելի մտածել նաև, որ այն բոլոր սահմանադրական պետութիւնները, ուր պարլամենտն ամբողջովին ժողովրդից է ընտրում և ուր տեսականապէս գործադրում են անհատական իրաւունքների վերաբերեալ օրէնքները, կատարելապէս նման են իշխանութեան կազմակերպութեան նկատմամբ։ Ո՛չ, թէ սահմանադրական պետութիւնների և թէ բացարձակ միապետութիւնների կազմերի մէջ մեծ տարբերութիւններ կան. Չինաստանով Ռուսաստանի և Մոնակոյով Տաճկաստանի մասին դատել՝ անկարելի է։ Բարձրագոյն իշխանութեան (միապետ կամ նախագահ) իրաւունքները, պարլամենտի իրաւունքները, նրանց մէջ եղած փոխադարձ յարաբերութիւնները, պարլամենտի կազմը (միապալատ—երկպալատ), պարլամենտի ընտրութեան ձևը, օրէնսդրական և գործադիր իշխանութիւնների դատարանական իշխանութեան հետ ունեցած յարաբերութիւնները, տեղական ինքնավարութեանց կազմակերպութիւններն ու նշանակութիւնը՝ այս բոլորը զանազան պետութիւնների մէջ շատ զանազանակերպ են և յաճախ այնպիսի նման գծեր են պատահում, որ մի սահմանադրական պետութիւն մօտեցնում, նոյնացնում են որևէ բացարձակ միապետութեան և հակադրում մի այլ սահմանադրական պետութեան, կամ հասարակապետութեան։ Այսպէս օր. մի շատ էական խնդրում—գործադիր իշխանութեան պարլամենտական իշխանութիւնից կախումն ունենալու հարցում բոլոր սահմանադրական պետութիւնները բաժանուում են զուտ ներկայացուցչականի և պարլամենտականի։ Ներկայացուցչական պետութիւններում (Գերմանական կայսրութեան, Պրուսական թագաւորութեան հետ նաև Ամերիկայի Միացեալ Նահանգների հասարակապետութեան մէջ) միապետը կամ հասարակապետութեան նախագահն է իւր հայեցողութեամբ նշանակում և փոփոխում նախարարներին, սրանց միջոցով էլ ուրիշ աստիճանաւորների. և պարլամենտը ոչ մի օրինական կարելիութիւն չունի այդ նշանակածներին հեռացնելու։ Պարլամենտական պետութիւնների մէջ (Ֆրանսիական հասարակապետութեան հետ նաև Բելգիայի, Իտալիայի, Անգլիայի և այլն միապետութիւններ) նախարարները պատասխանատու են պարլամենտի առաջ. որովհետև, թէև նախարարներին նշանակում է թագաւորը կամ նախագահը, բայց իրօք այդ խնդրում նա պարտաւորուում է համակերպել պարլամենտի կամքին՝ հակառակ դէպքում պարլամենտը կտիպէ նախարարներին հրաժարուել։

Աւելի աչքի ընկնող տարբերութիւն է նկատուում պետու-

թիւնների մէջ մանաւանդ ժողովրդի օրէնսդրական գործունէութեան և պարլամենտի ընտրութեան մասնակցելու խնդրում։ Այս գործում բոլոր գլխաւոր հասարակապետութիւնները (Ֆրանսիա, Զուիցերիա, Միացեալ Նահանգներ, Բրազիլիա) նման են։ Սակայն սրանց նման է նաև Գերմանական Կայսրութիւնը, որ յայտնի է իւր ուժեղ միապետական ոգով։ Այս պետութիւնների մէջ պարլամենտի ընտրութիւնը լինում է ընդհանուր, ուղիղ, հաւասար ձայնատուութեամբ և գաղտնի քուէարկութեամբ։

Ընդհանուր.—Ամեն մի չափահաս (Գերմանիայում 25 տարեկանից անց, Զուիցերիայում 20-ից և այլն) տղամարդ (Միացեալ Նահանգների մի քանի շտատներում նաև կին) իրաւունք ունի մասնակցելու պարլամենտի անդամների — պատգամաւորների ընտրութեան։

Հաւասար.—Իւրաքանչիւր ընտրող ունենում է միայն մի ձայն՝ հաւասար միւս ընտրողի ձայնին։

Ուղիղ. – Ամեն մի ընտրող ձայն է տալիս ուղղակի պատգամաւորին և ոչ թէ իրեն և պատգամաւորների մէջ եղած մի ուրիշ ընտրողի։

Գաղտնի.—Վերջապէս իւրաքանչիւր ընտրող այնպէս է ձայն տալիս, որ ոչ ոք չիմանայ. քարը ձգում է ծածկած տուփի մէջ։ Այսպիսով ամբողջ ժողովուրդը մասնակցում է օրէնսդրութեան՝ իւր ներկայացուցիչների միջոցով. հետևապէս պարլամենտն ընտրում է կատարեալ դեմոկրատիկ ռամկավարական եղանակով։ Սակայն կան պետութիւններ, ուր այս կէտերից մէկը կամ մի քանիսը խախտում են. այսպէս օր. Բելգիայում էլ, ամբողջ ժողովուրդը մասնակցում է ընտրութեան, ուրեմն այնտեղ էլ կայ ընդհանուր ընտրողական իրաւունք. սակայն ոչ հաւասար. այսինքն թէև ամբողջ ժողովուրդն է մասնակցում ընտրութեան, բայց մասնակցողներից պահանջւում է կալուածական ցենզ և այդ պահանջին բաւարարութիւն տուող հարուստ մարդիկ ունենում են երկու, երբեմն նաև երեք ձայն իսկ աղքատ դասակարգն զրկւում է ընտրութեան իրաւունքից, թէև իբրև Բելգիացի նա վայելում է տեսականապէս այդ իրաւունքը, Աւստրիայում էլ աւելի վատ. այստեղ ոչ միայն խախտում է հաւասարութեան սկզբունքն (ինչպէս Բելգիայում), այլ և ընտրութիւնը կատարւում է անուղղակի կերպով և ոչ գաղտնի, այլ բաց յայտնի քուէարկութեամբ։ Այստեղ թէև ամբողջ ժողորուրդն է դարձեալ մասնակցում ընտրութիւններին, բայց դասակարգերով. փոքրաթիւ կալուածատէրեր, վաճառա-

կաններ, ունևոր քաղաքացիներ ու հարուստ գիւղացիներ ընտրում են որոշ թուով պատգամաւորներ. այնուհետև ժողովրդի մնացած մասը, դարձեալ ոմանց հետ մէկ տեղ, ուրեմն այս անգամ ամբողջ բնակչութիւնը ընտրում է պատգամաւորների ընդհանուր թուից՝ 425 հոգուց միմիայն 72 հոգի։ Այսպիսով հարստութիւնն իրաւունք է տալիս պարլամենտում զօրեղ ներկայացուցչութիւն ունենալու. կը նշանակի՝ խախտում է հաւասարութեան սկզբունքը։ Բացի այդ՝ գիւղացիները և առհասարակ վերջին դասակարգն (կուրիա) ամբողջովին ոչ թէ ուղղակի պատգամաւորներ են ընտրում, այլ ուրիշ ընտրողների, որով ընտրութիւնը կատարւում է ոչ թէ ուղղակի, այլ անուղղակի՝ կրկնաստիճան (двухстепенное) այն էլ ոչ գաղտնի, այլ բաց յայտնի քուէարկութեամբ. իսկ այս վերջին հանգամանքն ուրիշներից կախումն ունեցող մարդկանց համար յաճախ անկարելի է դարձնում իրենց սեփական համոզումներով օգտուելու իրենց իրաւունքներից։ Վերջապէս շատ պետութիւնների մէջ ընտրութիւններին մասնակցում է ժողովրդի միայն մի մասը. օր. Անգլիայում ընտրութեան իրաւունքով օգտւում են կամ կալուածատէրերը, կամ այնպիսի ունևոր մարդիկ, որոնք որոշած չափից բարձր գին ունեցող բնակարաններ են վարձում. այնպէս որ բնակչութեան քառորդ մասը զրկւում է ընտրութեան իրաւունքից։ Իտալիայում ձայնի իրաւունքով օգտւում են միայն այն անհատները, որոնք պետութեան օգտին բաւական մեծ չափով հարկ են վճարում։ Նման պետութիւնների շարքին են պատկանում մի քանի քիչ նշանակութիւն ունեցող հասարակապետութիւններ (ինչպէս Չիլին Ամերիկայում և Օրանժինն Աֆրիկայում, որն ինչպէս յայտնի է, կորցրել է արդէն իւր անկախ գոյութիւնը)։ Բոլոր այս պետութիւններում ուրեմն օրէնսդրական գործունէութեան մէջ մասնակցում է ժողովրդի մի (շատ կամ քիչ նշանաւոր) մասը. միւս մասը հետևապէս զրկուած է քաղաքական իրաւունքներից և պետութիւնը (հասարակապետութիւն, թէ միապետութիւն) ներկայանում է ոչ իբրև ռամկավարական—ժողովրդապետական (դեմոկրատիկ), այլ ազնուապետական, կամ աւելի շուտ հարստապետական, որովհետև քաղաքական իրաւունքներ ընձեռողը ոչ թէ ծագումն է, այլ հարստութիւնը։

Անմիջական հասարակապետութիւն. այստեղ էլ, ինչպէս նաև ներկայացուցչական հասարակապետութեան մէջ, ժողովրդի ձեռքին է գտնւում օրէնսդրական իշխանութիւնը. միայն այն զանազանութեամբ, որ մինչդեռ ներկայացուչականի

մէջ ժողովուրդն ընտրում է պարլամենտ և նրա միջոցով առաջ տանում օրէնսդրութիւնը, այստեղ՝ անմիջական հասարակապետութեան մէջ ժողովուրդը հէնց ինքն է կազմում հաւաքումներ և որոշումներ տալիս։ Անմիջական էին համարեա բոլոր հին հասարակապետութիւնները (Աթէնք, Սպարտա և այլն)։ Ներկայումս կատարեալ անմիջական են Զուիցերիայի միայն մի քանի կանտոնները (Ուրի, Ունտէրվալդէն, Ապէնցէլ, Գլարուս)։ Անմիջականի և ներկայացուցչականի միջին տեղն են բռնում այն հասարակապետութիւնները, ուր թէև օրէնքները մշակում են օրէնսդրական խորհրդում (պարլամենտում), բայց յետոյ ենթարկւում են ամբողջ ժողովրդի քուէարկութեան (ռեֆերենդում) և վերջինիս իրաւունքն է հաստատել, կամ մերժել։ Այս ձևի պետութիւններից է ամբողջ Զուիցերիայի հասարակապետութիւնը, նմանապէս նրա կանտոններից շատերը,

Պարզ (унитарный) և բարդ կամ միաւորեալ (сложный) պետութիւններ։ Եթէ վերցնենք դիտելու օր. Ռուսաստանը, Ֆրանսիան, Անգլիան, Իտալիան և այլն, կը տեսնենք, որ չնայած դրանք բոլորովին տարբեր կազմակերպութիւն ունեցող զանազան տեսակների ու ձևերի պատկանող պետութիւններ են (մէկը հասարակապետական, միւսը սահմանադրական և մի ուրիշը բացարձակ միապետական), բայց և այնպէս դրանց մէջ կայ մի նշանաւոր կէտ, որով դրանք միմեանց շատ նմանւում են. այսինքն դրանք բոլորն էլ պարզ պետութիւններ են. դրանց տերրիտորիայում գործում է մի պետական իշխանութիւն։ Միւս կողմից սրանց կողքին տեսնում ենք այնպիսի պետութիւններ, ինչպէս օր. Գերմանական կայսրութիւնը, Զուիցերական հասարակապետութիւնը, կամ Ամերիկայի Միացեալ Նահանգները (տարբեր ըստ ձևի), որոնցից իւրաքանչիւրը թէև մի առանձին պետութիւն է ներկայացնում, բայց կազմուած է զատ-զատ պետութիւններից։ Այսպէս Միացեալ Նահանգները կազմուած են 45 առանձին նահանգներից—շտատներից, որոնցից իւրաքանչիւրը ներկայացնում է կատարեալ անկախ հասարակապետութիւն։ Ընդհանուր գործերի, ինչպէս օր. օտար պետութիւնների հետ յարաբերութիւն ունենալը, պատերազմ և խաղաղութիւն, զօրք և նաւատորմիղ, դրամների, չափերի և քաշերի նշանակելը, փոստ և այլն, կառավարելու համար՝ այդ 45 շտատները մի կապ—Դաշնակցութիւն են կազմել, որը կազմակերպուած է իբրև ներկայացուցչական (ոչ անմիջական կամ պարլամենտական) հասարակապետութիւն և կառավարւում է հասարակապետութեան նախագահի և պարլամենտի (կոնգրէս)

միջոցով. վերջիններս թէ մէկը և թէ միւսը ընտրւում է բնակչութիւնից։ Սակայն միմիայն ընդհանուր գործերն են ներկայացւում դաշնակցութեան կառավարութեան, իսկ մնացած բոլորը՝ կրթութիւն, բանտ, դատարան (քիչ սահմանափակումներով) և այլն, մնում են առանձին շտատների կառավարութեան ձեռքին. իւրաքանչիւր շտատ կառավարւում է իւր պարլամենտով և նահանգապետով, որոց ընտրում է շտատի բնակչութիւնը (նահանգապետն այստեղ ոչ թէ նշանակած պաշտօնական անձն է, այլ շտատի ընտրած գլուխ. նոյնն՝ ինչ որ հասարակապետութեան նախագահը)։ Սխալ կը լինէր, ի հարկէ, եթէ Միացեալ Նահանգները նմանեցնէինք այնպիսի պետութիւնների, որոնք ունին ընդարձակ տեղական՝ նահանգական և գաւառական ինքնավարութիւն. թէև այդպիսի պետութիւնների մէջ նահանգներն ու գաւառներն անկախ կերպով կառավարւում են իրենց տեղական գործերն, ինչպէս և շտատները, սակայն տեղական ինքնավարութեան կազմը (զեմստվո, խորհուրդ, գաւառական լանդաղներ և այլն) մեծ կախումն ունի ընդհանուր պետական իշխանութիւնից և վերջինս իրաւունք ունի փոփոխել ու փոխարկել տեղական ինքնավարութեան կազմն ու ծրագիրը։ Այն ինչ Միացեալ Նահանգներում իւրաքանչիւր շտատ ունի իւր սահմանադրութիւնը, որը փոխել կարող է միմիայն ինքը շտատը։ Նա բոլորովին անկախ է, ինչպէս Միացեալ Նահանգների հասարակապետութեան նախագահից, այնպէս էլ նրանց պարլամենտից։ Նոյնը տեսնում ենք նաև Զուիցերիայում. լինելով հասարակապետութիւն՝ ինքն էլ բաղկացած է 22 անկախ հասարակապետութիւններից ու կանտոններից։ Նոյնն է նաև գերմանական կայսրութիւնը, միայն այն զանազանութեամբ, որ սա իբրև միապետութիւն՝ կազմուած է առաւելապէս միապետութիւններից. այնպէս որ 22 միապետութիւնների հետ մէկ տեղ (Պրուսիա, Բաւարիա, Սաքսոնիա և այլն) նրա կազմի մէջ մտնում են միմիայն երեք փոքրիկ հասարակապետութիւններ (Համբուրգ, Բրեմեն, Լիւբէկ)։ Այսպէս ուրեմն այն պետութիւնները, որոնք բաղկացած են մի քանի պետութիւններից, կոչւում են բարդ-միաւորեալ՝ հակառակ պարզ պետութիւնների։ Բարդ պետութիւնները լինում են կամ դաշնակցական (ինչպէս Գերմանական, Միացեալ Նահանգների և Զուիցերական պետութիւնները) և կամ ունիա, այսինքն երկու կամ աւելի համազօր, համահաւասար, իրարից բոլորովին անկախ պետութիւններ համաձայնութեան են գալիս մի թագաւոր ճանաչելու (ինչպէս Շվեդ-Նորվեգիան, Աւստրո-Վենգրիան)։

Հ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

Շվեդ-Նորվեգիայի ունիան կարելի է արդէն խանգարուած համարել։ Ծ. Թ.

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՀԼԱՒՈՒՆԻՔ

Տ. Բարսեղ Ա. Անեցի

23. Վկայասէրի մահուամբ կաթողիկոսական աթոռը դիրք չփոխեց. Բարսեղ կաթողիկոս էր արդէն 24 տարի է իվեր, և իւր կաթողիկոսութիւնը շարունակեց ըստ առաջնոյն. միայն թէ այլ ևս չկարաց դառնալ Անի, իւր առաջին աթոռը, նոր արշաւանքներ ոտնակոխ ըրեր էին այն կողմերը, աւելի դժուարացած էր տեղական կացութիւնը, ընդհակառակն աւելի զօրացած էր գաղթականութեանց կողմը, որոց կեդրոն դարձած էր Կիլիկիա, մէկ կողմէն դէպի Փոքր Հայք և միւս կողմէն դէպի Եփրատացիք տարածուելով, որք միահամուռ ամբողջութիւն մը սկսան կազմել Կիլիկիա անունին ներքև։ Բարսեղ օգտակարագոյն սեպեց այլ ևս այդ կողմերէն չհեռանալ, գուցէ և այդ եղաւ հանգուցեալ հայրապետին յանձնարարութիւնը, որոյ ներկայութիւնն ազդեցութիւն ունեցած էր Կիլիկեցի գաղթականութիւնները աճեցնելու և զօրացնելու։ Բարսեղ իւր աթոռը հաստատեց ի Շուղր, որ է Սեաւ լերան վանքերէն մին. և այնտեղ մնաց իւր կենաց մնացեալ ժամանակը, այսինքն է այլ ևս 8 տարի։ Նոր գործեր և նշանաւոր դիպուածներ չեն պատմուիր։ Բարսեղի բոլոր աշխատութիւնն ամփոփուեցաւ նոր դիրքը ամրացնելու և գաղթական ժողովրդեան հաստատուն կերպարան մը տալու մէջ. ինչ որ արդեամբ իրականացաւ, զի նոր երկիրը հայական կերպարանի փոխուեցաւ և երկին ալ պետութիւնն ալ Հայոց անունով սկսան ճանչցուել օտարներէն։ Ռուբէն իշխան մեռած էր կանուխ 1095-ին, քիչ ետքն ալ մեռաւ նորա որդին Կոստանդին իշխանը 1110-ին, և Թորոս կիշխէր երբ վկայասէր մեռաւ և Բարսեղ առանձինն կաթողիկոս մնաց։ Թորոսի ժամանակ հետզհետէ միացան գաղթական իշխանութիւնները, և Կիլիկիա ընդարձակուեցաւ և պետութեան մը ձևն առաւ, և Բարսեղ ժամանակակից և գործակից եղաւ այդ եղելութեանց։

24. Բարսեղ կաթողիկոս մեռաւ 1113-ին, և շատ չէր մեռած ատեն թէպէտ 32 տարիէ ի վեր կաթողիկոսական իշխանութիւն կը վարէր։ Իսկ մահը հանդիպեցաւ դիպուածական պատահարով մը։ Երուսաղէմ երթալու նպատակով պիտի հեռանայր իւր աթոռէն, և Վարդավառի տօնին եպիսկոպոսներ հրաւիրեց, որպէս զի նոյն առթիւ եպիսկոպոսական ձեռնադրութիւն տայ Գրիգորի, ինչպէս յանձնարարած էր Վկայասէրը։ Մատթէոս կըսէ թէ Պէհէնու Վարդաներ գիւղին մէջ փլաւ տանիքը, որուն վրայ կաթողիկոսը եկեղեցականաց բազմութեամբ աղօթելու ելած էր (Ուռհ. 411)։ Իսկ Վարդան կըսէ թէ Շուղրի մէջ նոր շէնք մը շինել տուած ատեն, հեծան մը շինողներուն ձեռքէն սահեցաւ և կաթողիկոսին զարկաւ ու վնասեց (Վարդ. 116)։ Համաձայնութեամբ պատմուած է թէ Բարսեղ վտանգէն ետքը 3 կամ 5 օր ևս ապրեցաւ, Գրիգորը ձեռնադրեց և Շուղրի մէջ մեռաւ և այնտեղ թաղուեցաւ 1113 տարին, տրէ ամսոյ 5-ին. այսինքն Մայիս 26-ին, մինչ Վարդավառը պիտի տօնուէր յուլիս 13-ին։ Բարսեղ լրացուցիչն եղաւ Վկայասէրի պաշտօնավարութեան և գործունէութեան. թէպէտ ինքնին իբր առանձին գործիչ մեծ փայլ մը չցուցներ, սակայն անտարակոյս է թէ մեծաւ մասամբ իւր արդիւնքն է Վկայասէրին յաջողութիւնը, և իրեն գործն է Վկայասէրին ձեռամբ գոյացեալ վիճակը։ Բարսեղ ի հարկէ անմասն չէր ուսումնական կարողութենէ, բայց այդ մասին յատուկ յիշատակ մը կամ արդիւնք մը թողած չէ։ Աւելի վարչական մարդ մը եղած է, գործունեայ գլուխ մը, վտանգներու մէջ ժիր, դժուարութեանց դէմ արի, հովուական ջանքերու մասին անխոնջ։ Երկրորդն է ինքն Պահլաւունի տան հայրապետներէն, որոց շարքը տևեց մինչև ԺԲ դարուն վերջը։

8. Գրիգոր Գ. Պահլաւունի։

25. Հայ կաթողիկոսաց մէջ ամենէն երկար պաշտօնավարողն, այլ և արժանաւորագոյններէն մին է Գրիգորս այս, Պահլաւունի մականուանեալ ի մանաւորի, թէպէտ մականունը հաւասարապէս կրնար պատկանել իւր երկու նախորդներուն և չորս յաջորդներուն, որք միևնոյն ազգատոհմէ են, սակայն ուրիշ մասնաւոր մակդիր անուն մը չունենալէն՝ ընդհանուրը իրեն համար մասնաւոր դարձած է։ Մեք արդէն ծանօթացուցածենք զինքը Վկայասէրին վրայ խօսած ատեննիս, յայտնելով թէ որդի էր Մագիստրոսի դստեր և Ապիրատ Պահլաւունի

իշխանին Ծովքի. և թէ վկայասէրն յատուկ խնամքով սկսեր էր հոգալ իւր քրոջ թոռները, Գրիգորն ու Ներսէսը, ինքնին մանանձնելով անոնց դաստիարակութիւնը, և յանձնելով զանոնք Շուղր վանից առաջնորդ Ստեփանոս վարդապետին խնամոց։ և մահուան պահուն իբր նուիրական աւանդ թողլով իւր վեհ թոռները Բարսեղ կաթողիկոսին։ Յիշեցինք վերև Գրիգորի եպիսկոպոս ձեռնադրուելը պատանեկութեան մատաղ հասակի մէջ նոյն Բարսեղ կաթողիկոսի ձեռամբ։ Վկայասէրն յանձնարարեր էր Բարսղի և ազգին որ պատշաճ ժամանակին ջանան կաթողիկոսացնել Գրիգորը, և Բարսեղ կերպով մը նախապատրաստութիւն տեսած կըլլայ կանուխէն տալով նմին եպիսկոպոսական ձեռնադրութիւնը, թէպէտ չէր մտաբերեր թէ շուտով պիտի հասնէր մանկահասակ Գրիգորը այդ բարձրագոյն աստիճանին։ Բարսեղ ինչպէս ըսինք, անակնկալ վըտանգով մահուան մօտեցաւ. Վկայասէրի կտակը և Բարսեղի հոգատարութիւնը ծանօթ էին. եկեղեցականք և աշխարհականք, որոց գլուխը կը գտնուէր Թորոս իշխանը, համակամ հաւանութեամբ ուզեցին յարգել թէ Պահլաւունեաց տունը, թէ Վկայասէրի կամքը և թէ Շուղրայ աշակերտութիւնը։ Գրիգոր ուսմամբ և վարուք մեծէր, նաև կերպարանով փառաւոր և վայելուչ, թէպէտ տիօք կարի երիտասարդ։ Ի՞նչ հոգ տարիքը, երբ կայր եկեղեցական կոչումը։ Գրիգոր քսան տարեկան էր, ըստ հաւանագոյն կարծեաց, թէպէտ ուրիշներ երկու տարի ևս պակաս կուտան նմին։ Բարսեղ չմեռած կարգադրեց Գրիգորի յաջորդութիւնը, որ կաթողիկոս եղաւ 1113-ին։

26. Նորութիւն էր բոլորովին այդչափ մանկահասակ անձի մը կաթողիկոսանալը, և թէպէտ վաղճանը չամչցուց ընողները, սակայն մարդկային խոհականութեամբ և ոչ գերմարդկային գուշակութեամբ կը լինին այդպիսի որոշումներ։ Գրիգորի կաթողիկոսութեան հետևանքը եղաւ Աղթամարայ ապստամբութիւնը։ Դաւիթ Թոռնիկեանց առաջին կաթողիկոս կը համարուի Աղթամարայ, որ զանձն Ամենայն Հայոց կաթողիկոս հռչակել տուաւ և օծուեցաւ ի Զորոյ վանք Վանայ։ Երբ լսեց թէ տղայ մը գրաւեր է Կելիկիոյ աթոռը։ Սակայն հարկ չէ կարծել թէ պարզապէս գայթակղեալ մտաց արդիւնք էր Թոռնիկեանի ապստամբութիւնը։ Այն օրէ որ Հայոց կաթողիկոսներ Աղթամարայ պանդխտութիւն թողլով դարձան Շիրակ Արծրունեաց թագաւորներ չուզեցին անկաթողիկոս մնալ և ըստ կարծելոյ Աղթամարեանց Եղիշէ եղբօրորդի Դաւիթ թագաւորի ձեռնադրուեցաւ կաթողիկոս տանն Արծրունեաց։ Այ

լաւագոյն է կարծել թէ ձեռնադրուեցաւ լոկ իբր մեծ արքեպիսկոպոս մը, և ապա Աղթամարայ արքեպիսկոպոսներ կաթողիկոսութեան ձգտումներ յայտնեցին։ Մեք յիշեցինք որ ըստ Կիրակոսի կայր «և միւս ոմն կաթողիկոս ի Վասպուրականի ի կղզւոջն Աղթամարայ», (Կիր. 57), անդստին վկայասէրի օրէն և անհնար չէ ենթադրել որ սա ինքն Թորնիկեաններէր, որ կանուխէն սկսած էր աճեցնել իւր նախորդաց ձգտումները, և առթի կապասէր իւր փափագոնաց յագուրդ տալ։ Սա ինքն Դաւիթ Թանիկեան Արծրունեաց թագաւորական տոհմէն սերած կը կարծուի։ Աղթամարայ ապստամբութիւնը չկասեցուց ազգը իւր ընտրեալը պաշտպանելէն՝ միւս տարին, 1114-ին. ընդհանուր ժողով մը գումարուեցաւ Սեաւ լերան Շուղր վանքէն ուր 2500 զանազան աստիճանէ եկեղեցականք հաւաքուեցան, մեծաւ մասամբ Սեաւ լերան վանքերէն, որք նզովեցին Դաւիթի յաւակնութիւնը և Գրիգորը Ամենայն Հայոց օրինաւոր կաթողիկոսը ճանչցան։ Սակայն հակառակ Սեաւ լերան ժողովին վճռին՝ Դաւիթ իւր դիրքը պահեց և մնաց իբր առանձինն կաթողիկոս տանն Արծրունեաց, Վասպուրականի մէջ առաւել կամ նուազ ընդարձակութեամբ, և ցայսօր ալ կը մնայ նոյն մասնաւոր աթոռը։ Ցընթացս պատմութեանս ուրեք ուրեք առիթ պիտի ունենանք խօսել Աղթամարայ աթոռոյն վրայ։ Ոմանք այս ժողովին կուտան այն մեծ կանոնը, որով Կիլիկիա նստող կաթողիկոսներուն Սկևեւեայց հետ կապակցութիւնը վերկայելու համար որոշուեցաւ որ առանց Բջնայ և Հաղբատու և Արտազու և Տաթևու եպիսկոպոսներուն հաւանութեան կաթողիկոս չհաստատուի։

27. Գրիգորի գործունէութեան նկատմամբ շատ մանրամասն տեղեկութիւններ չունենք, և իւր 53 տարուան պաշտօնավարութեան վրայ գրելիքնիս համեմատաբար քիչ պիտի ըլլայ։ Զայդ պէտք է վերագրել ժամանակին պարագայից, որ ուշագրաւ պատահարներ չեն ներկայացներ։ Առաջին և մեծագոյն գործն եղաւ կաթողիկոսութեան հաստատուն կայարան կամ պաշտօնական կաթողիկոսարան մը ստեղծել։ Գետադարձիին Անիէն հեռանալէն յետոյ կաթողիկոսները աստանդական մնացեր էին, նա ինքն Գետադարձն ի Սեբաստիա, Խաչիկ ի Տեփրիկիա, Վկայասէր ի Ծամնդաւ, Բարսեղ ի Շուղր, ուր սկը սաւ պաշտօնավարել և Գրիգոր։ Սակայն անապատաւորաց մեծարան մը չէր կրնար հոգևորական իշխանութեան յարմար կենդրոն լինել։ Քանի մի տարի յետոյ, 1125-ին, Գրիգոր զնաց նստիլ ի Ծովք գղեակ, որ իւր հօր իշխանական գղեակն էր,

և ուստից հնար էր յարաբերութիւն պահել թէ կիլիկեցւոց և թէ արևելեայց հետ։ Սակայն հայրապետանոց լինելու ամէն յարմարութիւն չունէր. ուստի թէպէտ և 1125-էն 1147, 22 տարի բնակեցաւ անդէն, բայց աւելի իբր հայրենական տուն մըն էր այն իրեն համար, քան հայրապետական աթոռ, և այս պատճառով այդչափ ժամանակի մէջ չխորհեցաւ երբէք հայրապետանոց մը կառուցանել։ Յարմարագոյն տեղ մը գտնելու ջանքերն անագան պակաչեցան երբ Ժոսելինոս (Ճոսլին կամ Ժոսլէն) լատին կոմս Գերմանիկոյ (Մարաջ) հաւանեցաւ որ Գրիգոր նստի ի Հռոմկլայ (Ռումքալէ) զոր կը կառավարէր իւր կինը. Յոսելինոսի բարեկամութեան շնորհիւ կրցաւ Գրիգոր 1147-ին հանգիստ և ապահով օթեւան մը գտնել այնտեղ, որ քիչ ետքը իւր սեփականութիւնն ալ եղաւ։ Զի Ժոսելին գերի ինկաւ Բերիոյ սուլթանին ձեռք և մեռաւ, և այրի կինը Եւրոպա դարձաւ 1147-ին, իբր աւանդ յանձնելով Գրիգորի իւր դղեակը։ Ժոսելինի սրտին Եւրոպայէ դառնալուց բոլորովին իսկ հրաժարեցաւ դղեակէն և վաճառեց զայն Գրիգորի 1150-ին, որ ստացաւ զայն իբր կաթողիկոսութեան սեփականութիւն, փառաւոր կաթողիկոսարան և հոյակապ կաթողիկէ մը նալ շինեց 1151-ին, ուր և մնաց կաթողիկոսական աթոռը մինչև նոյն քաղաքին կործանումը Ստեփանոս Հռոմկլայեցւոյն ժամանակ 1292-ին։

28. Լատինաց հետ յարաբերութիւնք արդէն սկսած էին խաչակրութեանց առթիւ։ Երբ Գրիգոր աթոռ նստաւ, Թորոս իշխան բարեկամութիւն կը պահէր լատին իշխաններու հետ, և մանաւանդ Անտիոքի լատին իշխաններուն հետ, մինչև իսկ վերջիններուն նպաստաւոր եղած էր, երբ սոքա 1114-ին գրաւեցին Բէսուն, Պերտա (Պերէճիկ) և Կարկառ քաղաքները, որք հայ իշխաններու կը պատկանէին։ Այլ երբ Լևոն իշխան յաջողեց իւր եղբօր Թորոսի 1123-ին, Լատինաց և Հայոց յարաբերութիւնք խանգարեցան։ Լևոն մտադիր էր իւր սահմանները ընդարձակել, և հարկաւ պէտք էր ընդհարուէր մէկ կողմէն Յունաց կայսերութեան և միւս կողմէն Անտիոքի իշխանութեան։ Հոգերիոս (Ռոժեր)՝Անտիոքայ իշխանը նենգութեամբ ձերբակալեց Լևոնը 1126-ին, և Լևոն պարտաւորեցաւ իբրև փրկանք թողուլ քանի մը քաղաքներ, զորս միւս տարին 1127-ին պատերազմով ետ առաւ, և Լատիններու հետ հաշտութիւն հաստատելով Յոյներուն դէմ դարձաւ 1131-ին, այլ Վերջիվերջոյ ձախողեցաւ և 1137-ին գերի ինկաւ, և չորս տարի գերութենէ յետոյ Կոստանդնապոլսոյ բանտին մէջ մեռաւ 1141-ին։ Լե-

ւոնի որդին Թորոս Յոյներուն ծառայութեան մէջ մնաց երեք տարի ևս, մինչև որ 1144-ին կրցաւ ձեռք ձգել իւր հայրենական իշխանութիւնը։ Այս կերպով Ռուբենեանց իշխանութիւնը եօթը տարի ընդհատեցաւ և Կիլիկիա Յունաց տիրապետութեան ներքև մնաց, բայց Գրիգոր Դ. կաթողիկոս յունական բաժնին մէջ չէր, զի կը գտնուէր ի Ծովք, որ աղատ գղեակ մը էր, և դրացի Լատիններուն օգնութեամբ կը պաշտպանուէր։ Բնական էր ուրեմն Գրիգորի աւելի սերտ յարաբերութիւններ ստեղծել Լատինաց հետ, յորոց կրնար իսկ յուսալ Ռուբինեանց իշխանութիւնը վերանորոգելու համար Յունաց դէմ օգնութիւն մը։ Ճիշտ այդ միջոցներուն կսկսի Գրիգորի և Լատինաց յարաբերութիւնը։ Լատինք հաւաժողով մը ունէին յԱնտիոք, Անտիոքայ լատին պատրիարք Հռոդուլիոսի (Ռուդոլֆ) դէմ եղած ամբաստանութիւնները քննելու, և ժողովի կը նախագահէր կարդինալն Ալբերիքոս եպիսկոպոս Ոստիոյ և նուիրակ պապին, և ժողովը կը գումարուէր 1141-ին, նոյն իսկ Լևոնի գերութեան մէջ մեռած տարին։ Ժողովից հրաւիրուած ու ներկայ էին Գրիգոր Դ, կաթողիկոսը և եղբայրը Ներսէս եպիսկոպոս Շնորհալին, որ վեց տարի առաջ եպիսկոպոս ձեռնադրուած էր և իւր եղբօր օգնականն էր։ Ժողովը Հայոց նկատմամբ ընելիք չունէր, և ոչ ալ Հայոց նկատմամբ գործ մը կատարեց փոփոխակի բարեկամական յարաբերութեանց սկզբնաւորութիւն մըն էր միայն, և մինչև այս կէտը ըսելիք մի բան ալ չունիմք։

29. Գրիգոր և Ալբերիքոս փոփոխակի զիրար յարգեցին և իրարու հետ լաւ բարեկամութիւն հաստատեցին, և Անտիոքէ Երուսաղէմ ի միասին ուխտի գացին, և երկուքն ալ փափագող էին սուրբ տեղեաց մխիթարութեան։ Շնորհալին այս անգամ չըսկերացաւ իւր եղբօր, այլ դարձաւ ի Ծովք, յառաջեայ հայրապետանոցն իբր տեղակալ կաթողիկոսութեան 1142-ին։ Ալբերիքոս իբր նուիրակ պապին ժողով մըն ալ գումարեց յԵրուսաղէմ 1143 տարւայ զատկին մօտ, և Գրիգոր բնական կերպով ժողովականներէն մին եղաւ։ Գուլիէլմոս լատին եպիսկոպոս Տիւրոսի, ժամանակակից պատմիչ, Գրիգորը կանուանէ. «Մեծ քահանայապետ Հայոց, գլուխ և պետ ամենայն եպիսկոպոսաց Կապադովկացւոց, Մարաց և Պարսից և երկաքանչիւր Հայաստանեայց, և գերազանց վարդապետ, որ անուանի կաթողիկոս»։ Ի հարկէ հաւաձայն այդ պատուաւոր կոչման տեղ ալ տրուեցաւ Գրիգորի ժողովին մէջ։ Այն տեղ է որ բանակցութիւնք կսկսին հայ և լատին եկեղեցեաց համա-

ձայն և անհամաձայն ծիսից և դաւանութեանց վրայ, բայց այս տեղ ալ մանրամասնութիւնք կը պակսին, զի չունիմք ժողովին գործերը։ Լատինք կըսեն թէ Հայոց պատրիարքը խոստացաւ ուղղել այն դաւանութեան կէտերը, յորս ինքն կը տարբերէր Հռովմայ եկեղեցիէն». այլ մերս Սամուէլ կըսէ թէ Փռանկները «ծանեան ի բանս հաւատոյ (Գրիգորի) զճշմարտութիւն ամենեւիմբ, զոր պայծառ և կանոնական կարգաւ և կանոնով վարդապետական ճոխութեամբ բարբառէր, ուրախացան հաճելութեամբ, և առաւել սէր հաստատեցին ընդ ազգս մեր» (Զամչեան. Գ. 54)։ Մեզ բաւական է դիտել որ երկու կողմերն ալ համաձայն են թէ Գրիգոր իւր եկեղեցիէն ոչինչ փոխեց, և իրենէն դուրս ոչինչ ընդունեցաւ ի ժողովէն Երուսաղէմի, այլ քանի որ նպատակ ունէր Լատինաց հետ սէր և բարեկամութիւն հաստատել, ճարտար կերպով մը կրցաւ համոզել Լատինները թէ էական մի կէտ չկայ որ կարենայ արգելել երկուց կողմանց միաբանութիւնը։ Հայոց հայրապետին համար այդ ընթացքը համաձայն էր իւր եկեղեցւոյն հոգւոյն, Լատինաց կողմէ ալ օգտակար սեպուած էր հաւանել այդ ընթացից, որպէս զի կարենան տակաւ իրենց քաշել Հայերը։ Մեք գիտեմք թէ լատին եկեղեցին ընդարձակ է միշտ առաջին քայլերուն մէջ, և հետզհետէ կը խոտէ իւր պահանջումները։

30. Լատինաց դէպ առ Հայս մօտենալու փափագը չվերջացաւ Անտիոքի և Երուսաղէմի ժողովներուն ցոյցերով։ Ալբերիքոս կարդինալ և ուրիշ լատին գլխաւորներ նպաստաւոր տեղեկութիւններ հաղորդեցին պապին, յուսացնելով անշուշտ թէ Հայերը լաւ նիզակակից մը կը լինէին լատին բանակներուն, գուցէ ալ մօտենան միանալ լատին եկեղեցւոյ։ Ինոկենտիոս Բ. (1130—1143) կամ թէ Լուկիոս Բ. 1143—1144), որ այդ տեղեկութիւնները առաւ փութաց հայրապետական ընծայներ ղրկել Գրիգորի թղթով սիրոյ և բարեկամութեան։ Համբրոնացին կը յիշատակէ գաւազան և քող հայրապետական, սակայն հայրապետական քողը լատին սովորութեան մէջ չգտնուելուն, չենք գիտէր թէ ինչ տեսակ մի զարդ էր որ քող կարծուեցաւ կամ քող թարգմանուեցաւ։ Ընծային և թղթոյն փոխարէն Հայոց հայրապետին կողմէն ալ ընծայներ և թուղթ ղրկուեցան ի Հռովմ, յատուկ պատգամաւորներով, որք Եւգինէոս Գ. պապը (1145—1153) գտան ի Վիտերբիա (Viterbo) քաղաք Իտալիոյ, երբ պապը Հռովմի ներքին խռովութիւններուն պատճառով այնտեղ ապաստանած էր, 1145-ին։ Այս անգամ դաւանական և ծիսական խօսակցութիւնք կսկսին աւելի

մասնաւորուել, և պապին կողմանէ տառջարկութիւններ ալ կըլլան։ Լատին պատմիչը որ այս պարագաները կը պատմէ իրը նշան հպատակութեանց Հայոց առ պապն կըսէ թէ պատգամաւորք տասնևութը ամիս ճանպորդութեամբ եկեր էին, թէ Հայոց կաթողիկոսութիւնը հազարէ աւելի եպիսկոպոսներ ունէր իւր ձեռքին տակ. և թէ Հայերը հացը խմորուն և բաժակը անջուր կը մատուցանեն, և թէ Ծնունդն ու Մկրտութիւնը ի միասին կը տօնին։ Այս յիշուածներուն մէջ խմորուն հացը յայտնի սխալ է, և չեմք գիտէր թէ միւս պատմութիւններն ալ անոր կը նմանին թէ ոչ։ Նոյն հեղինակը կը պատմէ թէ պապին պատարագին ժամանակը հայ պատգամաւորներուն մէջէն եպիսկոպոս մը պապին գլխոյն վրայ երկնային լոյս և երկնային աղաւնիներ տեսնելով ժողովին մէջ վկայից այս տեսիլքին (Կալանոս. Պատմ. 236)։ Տեսիլքին բոլոր ստուգութիւնը միայնոյ հայ եպիսկոպոսին վկայութեան վրայ հաստատուած լինելով, ցանկալի էր գիտնալ թէ Լատինք որչափ վստահութիւն պիտի ընծային այդ յայտարարութեան։ Եւգինէոս պատգամաւորները դարձուց առատ պարգևներով, և ի հարկէ առաւելապէս տեսիլքին եպիսկոպոսը, գիր ալ ուղղեց Գրիգորի, որ լատին հաւաքածոյից մէջ չգտնուեր, այլ կը յիշատակուի 1307 տարւոյ Սսոյ ժողովոյն գործոց մէջ (Կալանոս. Պատմ. 467)։ Գրիգորի առ պապն և պապին առ Գրիգոր ղրկած պատգամաւորաց և թղթոց պատմութիւնք շատ դիտողութեանց տեղի կուտան, սակայն մեզ բաւական լինի յառաջ բերել ինչ որ Լատինք կը պատմեն։

ԲՆՆԱՍԷՐ

(Վերջը միւս անգամ)

ՆՈՐ ԻՍՐԱՅԵԼԻ ՍԱՂՄՈՍՆԵՐԻՑ

IV

Վիշտք դժոխոց պաշարեցին զիս.
(Սաղմոս)

Ա՜խ, արուն—քամի, ա՜խ արուն քամի,
Ա՜խ սիրտս ինչո՞ւ զարկիր վեր գամի.
Կոռնաս այս գիշեր ինչպէս մի չախալ,
Ասում ես, հայ մարդ, մթնաւ քո աշխար...

Ա՜խ, արուն—քամի, ա՜խ արուն քամի
Ա՜խ սիրտս ինչո՞ւ զարկիր վեր գամի.
Եւ արար-աշխար լցրիր դու բօթով—
Արեան ու մահուան հեղձուկով—տօթով...

Վա՜խ, մարդն մեռնում է արդար անմեղ
Հունձերն են խանձուր, հունձն արիւնահեղ,
Եւ լալահառաչ կը վայեմ գլխիս,
Կը հաչես, կոռնաս, - կը փակես ուղիս,

Ա՜խ, արուն—քամի, ո՞րտեղից եկար,
Ո՞ր շնչաւորը ղրկեց քեզ աշխարհ,
Ո՞ր բարձունքներից իջար խաղաղ դաշտ,
Ինչո՞ւ խառնեցիր ժողովուրդներ հաշտ.=

Թէ դու ընածին մի դա՞ժան չարիք
Վատ-վատ նիւթերից—սևցուցիր բարիք՝
Թէ դու ի վերուստ իբրև մի պատիժ
Թունաւորեցիր մարդուն որպէս իժ...

Ա՜խ, արուն—քամի, ա՜խ արուն քամի,
Ա՜խ սիրտս ինչո՞ւ զարկիր վեր գամի...

V

Այլ ես որդն եմ և ոչ եմ մարդ.
Նախատինք մարդկանց և արհամարհանք ժողովրդոց։
(Սաղմոս)

Մռայլ է հողիս զերդ աշնան այերը,
Տխուր է, տրտում ժողովրդիս երգ,
Կանգնած եմ ապուշ—զլո՞ւմ եմ իմ կանչ,
Չարատանջ ազգի որդիս չարատանջ...

Դուք, մեծ հայրերի ոտրաբաղդ որդիք,
Վայրագ ուժերի դարձել էք խորտիկ,
Դուք, փառքի անուան, մեծութեան սերունդ
Լափող վաշտերի եղել էք սնունդ։

Դուք, հայրենիքիս ուժեղ հերոսներ
Հէ՞ր կեանքի չարիք ձեր ուժն անգոսներ,
Եւ ահա վհատ, իմ գլուխս մոխիր
Ես արուն-արուն սգում եմ ոճիր...

Ահա երկինքն է ծխի վիսի մէջ
Ահա լեզուներ ճայթում են հեծ-հեծ,
Հրեղէն յորձանք, ալիքներ բոցի
Մարդկանց փաթթել են մէջն իրանց ծոցի...

Ճչում է մայրը, մանուկը գրկում,
Հեծում են ծերեր, իրար են գրկում—
Մի ակնթարթում լռում է ամեն—
Զկա՞ն էլ մարդիք... վառւո՞ւմ, այրո՞ւմ են...

Զկա՞յ տանտիրոջ բերքն աշխատանքի,
Կայքերը, ինչքը—սիւները կեանքի,
Զկա՞ն եղբարքը, մորթել են այսօր,
Կինը, որդիքը վառուան ինչպէս շոր։

Զկա՞յ և ինքը—տէրը մեծ իշխան
Նորան պատրեցին, ինչպէս մի գազան
Եւ նոցա փոխան լեզուք գեհենի—
Ձգում են երկինք—տուած ձէն-ձէնի...

VI.

Հալածեսցէ ապա թշնամին զանձն իմ հասցէ և կոխեսցէ յերկիր զկեանս իմ և զփառս ի հող բնակեցուսց էր
(Սաղմոս)

Ճանապարհորդը չապում է տուն
Եւ սրտատրոփ սպասում է նա—
Կնոջը, որդոց կը գրկէ իսկոյն
Եւ դարձեալ իրա գործին կը գնա...

Այնտեղ նա ունի կայք ու կալուածներ,
Փառաւոր կացան—բազում բանւորներ,
Այնտեղ նա ունի ճոխ հարստութիւն—
Բայց, Աստուած, այնտեղ հրդէհն է լափում...

Կատաղի վաշտեր, գճլողներ վայրի,
Մորթում են այրում մատաղ և այրի,
Առևանգում են մատաղահաս կանանց,
Յոշոտում մարդոց—թալանում են գանձ...

Ահա ճամբորդը—բռնեց ծանօթին.
Տանից էր գալիս և իւր երկրացին.
Նրան հարցրեց շունչը կըտրուած—
—Գնո՞ւմ եմ... ի՞նչ կայ... ո՞ղջ են անկասկած... —

«Գնո՞ւմ ես, ինչո՞ւ—և որի համար.
Կայքերդ չկա՞ն—եղան բոցահար.
Իսկ թէ գնում ես որդոցդ տեսնես,
Զարկեն գնդակ—այլ արին կէս-կէս.

Իսկ մօրդ կուզես—պառաւ, զառամած,
Ահեղ սարսափից վար ընկաւ յանկարծ,
Իսկ թէ գնում ես տեսնես քո կնոջ—
Իմ աչքի առջև քցեցին հնոց.

Իսկ քո սիրունիկ աղջըկադ Նունուշ
Թ,նամին տարաւ, որ անէ անուշ...
Գնում ես ինչո՞ւ, և որի համար
Շունչդ ժողովէ, յետ դարձիր եղբայր»...

Նայում էր երկար—ակնապիշ կերպով
Դէմքը սևեռած—ճամբորդն էր նայում,
Եւ վերջը մի սուր ճիչ արձակելով
Գետին գլորուեց—արո՞ւն ու արո՞ւն...

ՅՈՎՀ. ԿՈՍՏԱՆԵԱՆ

ՊՐՈՖԷՍՍՈՐ ՄԱԿՍԻՄ ԿՈՎԱԼԵՎՍԿԻՆ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀՊԱՏԱԿՆԵՐԸ

Յայտնի է, որ Դելիանով կոմսի նախարարութեան ժամանակ, երբոր Ռուսաստանի ընդհանուր հոսանքը յետադիմական դարձաւ՝ բազմաթիւ լուսամիտ մարդիկ կամ իրենք հեռացան հայրենիքից կամ նրանց վանտեցին երկրից՝ խլելով նրանցից դասախօսելու կամ գործելու հնարաւորութիւնը։ Մակսիմ Մակսիմովիչ Կովալեվսկին, որ Մոսկվայի համալսարանի փառաւոր շրջանի գործիչներից էր, նոյնպէս արտաքսուեցաւ և գնաց Եւրոպա։ Այժմ հանգամանքները փոխուել են և բոլոր աքսորրուածները և գաղափարի նահատակները նորից առանդ են ստանում գործելու յօգուտ հայրենիքի բարօրութեան։ Այս տեսակ գործիչների մէջ Կովալեվսկին նշանաւոր է ոչ միայն իւր հասարակական ազատամիտ լայն իդէալներով, այլ և իբրև նշանաւոր գիտնական, որի մասնագիտութիւնը թէև հասարակական—տնտեսագիտական ճիւղերն են, բայց նա յայտնի է և իբրև լուրջ պատմաբան և աչքի ընկնող օրէնսգէտ—փիլիսոփայ։ Ահա այս Կովալեվսկին մի փոքրիկ յօդուած է տպագրել «Русскія Ведомости» լրագրի հոկտեմբերի ինների համարում, որ կրում է «Огношенія Россіи къ Окрайнамъ» վերնագիրը։ Մեծ գիտնականների գլխաւոր արժանաւորութիւններից մէկն էլ այն է, որ այդ մարդիկ քիչ խօսքով շատ գաղափարներն պարզում և շատ նիւթ տալիս։ Պրոֆէսսոր Կովալեվսկու վերոյիշեալ յօդուածը խօսում է Ռուսաստանի հպատակ երկիրների մասին և ի միջի այլոց հայերի, ուստի և գէթ համառօտ կերպով պատմել այդ յօդուածի բովանդակութիւնը մենք կարևոր ենք համարում։ Ահա այդ յօդուածի գլխաւոր կէտերը։ Եւրոպական տէրութիւններից շատերը, ասում է Կովալևսկին, գաղութներ ունին և մինչև անգամ միշտ ձգտում են աւելացնելու նրանց թիւը։ Ժամանակակից պատերազմներից շատերը շուկաներ յափշտակելու ձգտումից են առաջանում և այս ըստ իւր կարգին օտար երկիրներ այնպիսի ապրանքների ներմուծումն է ստեղծում, որ նոյն իսկ ոչ Եւրոպայում և ոչ Ամերի-

կայի վաճառականութեան նիւթ չէ դարձել։ Վաճառականական տների վրայ կամաց կամաց աւելանում են կամ զէնքի ուժով կամ տեղական իշխանութիւնների հետ կապած պայմանագրերով նախ մօտակայ և ապա և հեռաւոր հողեր։

Հարուստ քարածուխը, որև է մետաղը, քարեղէնը և այլն հարստութիւնների հանքերը խրախուսում է միջազգային ագահութիւնը։ Առևտրական տները հետզհետէ գաղութներ են դառնում, իսկ թափառող ցեղերից ապահովելու հոգսը ստիպում է գաղութի սահմանները տարածել մինչև աւազների սկիզբը կամ ծովերի ափը։ Ռուսաստանի գաղութների առանձնայատկութիւնն այն է, որ մայր Հայրենիքին կպած են նրանք։ Խառն և մէջէմէջ սեփականութիւնը, որ շատ անյարմարութիւններ է ստեղծում մասնաւոր, անհատական տնտեսութեան մէջ, նոյն պէս անօգտաւէտ է պետական տնտեսութեան համար։ Ծովը ազգի համար ընդհանուր ճանապարհ է դառնում միմիայն խաղաղ ժամանակ։ Պատերազմի ժամանակ այս ճանապարհը կարող է կտրուել զինուորական նաւերով, կրէյսէներով, եթէ չը խօսենք ջրասոյզ մակոյկների և լողացող միներների մասին։

Հէնց հիմիկուանից կարելի է հարցնել թէ Ֆրանսիան չը նայելով իւր ահագին նաւատորմիղին՝ ինչպէս կարող է ապահովեցնել Հնդկա-Չինաստանը Ճապոնիայի դէմ։ Սակայն վերջին պատերազմի դառն փորձը շատ լաւ համոզեց մեզ, որ հեռաւոր գաղութի հետ շարունակ և անընդհատ հողերով կապուած լինելն էլ հնարաւորութիւն չէ տալիս այնտեղ հեշտ կերպով զօրք փոխադրել թէկուզ երկաթուղիների միջոցաւ էլ։ Որքան էլ ձեռնտու է մայր երկրին կպած գաղութներ ունենալը, բայց այս օգտաւէտութիւնը պակասում է և կորցնում է իւր նշանակութիւնը, երբոր գաղութները թէև անջատուած չեն, բայց հեռու են մայր հայրենիքից։ Այս տեսակէտից Իսպանիայի տիրապետութիւնների պատմութիւնը և վիճակը շատ հետաքրքրական է։

Կարլոս հինգերորդը և Փիլիպոս երկրորդը պարծենում էին, որ Իսպանական տիրապետութեան տակ գտնուած երկիրներում արեգակը մայր չէ մտնում իսպառ, իսկ Ալֆոնս XIII թագաւորը այլ ևս չունէր այս բոլորը և մնացել էին Իբերական թերակղզուց դուրս միքանի կղզիներ, որոնցից գլխաւորներն էլ Ամերիկացիք խլեցին։ Գաղութներ տիրելը շատ անգամ աւելի պարտականութիւններ է ստեղծում տէրութեան համար քան իրաւունքներ, աւելի ծախս է պահանջում քան եկամուտ է տալիս։ Ոչ միայն իբրև մխիթարանք կարող հնք ա-

սել, որ Մանջուրիայի տիրապետութիւնը մեզ համար մնանկութեան աղբիւր կդառնար։ Մոսկվայի մեծ մանուֆակտուրիստները մաթեմատիկական հաշուով ապացուցանում էին, որ Հեռաւոր Արևելքի շուկաներում մենք հնարաւորութիւն չունէինք մրցելու Ամերիկական և Ճապոնական ապրանքների ժանուութեան հետ, իսկ կօրէա Ռուսաստանից բրինձ տանելու մասին ի հարկէ խօսք չի կարող լինել։ Մանջուրիայի պէս են մեզ համար առ այժմ և այն անսահման անապատներից շատերը, որ միաժամանակ Թասերլանի պետութեան սահմաններումն էին գտնուում և Սառցային Ովկիանոսից մինչև Բերինգով նեղուց հասնող տունդրան։ Այս բնական սահմանների մէջ, որոնք հարաւից բաժանում են մեզ և ապահովում հարևաններից, իսկ Հիւսիսից սպիտակ արջերից, շատ հողեր կան, որոնց մի մասը արդէն մի փոքր մասնակից է եղել քաղաքակրթութեան, իսկ միւս մասը մշակող ձեռքերի է սպասում։ Այս հողերը բռնուած են աւելի թափառական քան նստակեաց բազմալեզու և բազմակրօն ցեղերով, որոնք ապրում են մասամբ գիւղական, մասամբ տոհմական կեանքի պայմաններում և չեն հասկանում ոչ մեր կարգերը և ոչ Եւրոպական քաղաքակրթութիւն, որ մենք էլ կատարելապէս դեռ չենք ըմբռնել և լաւ չենք հասկացել, ուստի և այդ ցեղերը տանջւում են մեր ադմինիստրացիայի և օրէնքների նրանց ներքին կեանքին վերաբերեալ անտեղի միջամտութիւնից։

Այս ցեղերից ամենից բաղդաւորները նրանք են եղել, որոնց թոյլատրուած է պահել իրենց սովորութիւնները և միջնորդ դատարանները և մեզ վճարել են միմիայն հարկեր և շատ անգամ էլ մորթիներով։ Որքան քիչ են օտարացեղները հանդիպում ռուս պաշտօնեաներին՝ այնքան սակաւ են լինում կաշառակերութեան դէպքեր, որ շատ յայտնի է Սև ծովից սկսած մինչև Կասպից և Ազովեան ծովերը։ Ինձ թւում է թէ առողջ բանականութիւնը, մանէն մէկին պիտի թելադրէ մտածելու, որ անկարելի է այս բազմաթիւ և մեզ խորթ ցեղերին կանչել մեր սեփական վիճակը կարգադրելու գործում ղեկավարութեան։ Ես չեմ կարող երևակայել, որ չերքէսը կամ լեզգին, Ղրղիզը կամ Եակուտը ու Կամչադալը, թէկուզ նա Եւրոպական հագուստ էլ ունենայ և ընտրողական ցենզ, լուրջ կերպով կարողանայ քննելու և խորհելու մեր հողային յարաբերութեան մասին, գործարանական և բանուորական օրէնսդրութեան համար և վճռելու կապիտալի և աշխատանքի ընդհարումից առաջացող հարցերը։ Այս բոլորի մասին նա շատ կդժուարանայ վճիռ տա-

լու նախ այն պատճառով, որ նրանց շատերը գիտէ միայն տոհմական և ցեղական անբաժան հողային սեփականութիւն որ հարկաւոր է որսի կամ արօտի համար։ Երևակայեցէք Կովկասի լեռնականին, որ մասնակցում է քրէական օրէնսդրութեան մշակմանը, որ խորին կերպով համոզուած է թէ արիւնը պիտի արիւնով քաւել կամ սպանուածի փոխարէն ոչխար ու կով ստանալ։ Բայց մեր օտարազգիները վատ ծառայութիւն կատուցանեն մեզ մեր ներքին կեանքի վերանորոգման մասնակցելիս, մենք էլ միւս կողմից միայն կխանգարենք նրանց կեանքի ընթացքը, եթէ խառնուենք նրանց ներքին կեանքին և նրանց վզին փաթաթենք մեր հասարակական և պետական կարգերը, որ չեն համապատասխանում նրանց քաղաքակրթութեան աստիճանին։

Երբոր մեր նահանգական դատարանը մարդասպան Զերբեսին աքսորիէ դատապարտում՝ սիբիր, սպանուածի մօտակայ ազգականը սակայն սա պատիժ չէ համարում և անմիջապէս աքսորուածի յետևից գնումէ Սիբիր վրէժ առնելու։ Կասկած չկայ, որ Ռուսաստանը չի կարող հրաժարուել իւր տէրութեան հպատակ ժողովուրդների մէջ խաղաղութիւն պահպանելու դերից և ապահովելու նրանց աստիճանաբար նիւթական և հոգեկան զարգացումը։ Բայց այս նպատակին նա կարողէ հասնել ոչ թէ խորտակելով այդ ցեղերի տոհմական կեանքը և փաթաթելով նրանց շլնքին մեր քաղաքացիական օրէնքները և ոչ էլ տարածելով նրանց վրայ մեր չինովնիկութիւնը։ Նա այս նպատակին կհասնէ միմիայն քիչ խառնուելով նրանց ներքին կեանքում և այն էլ միմիայն խաղաղութիւնը պահպանելու համար և լուսաւորութիւն տարածելով, որ միմիայն կարող է նպաստել օտարացեղներին մեծամեծ խմբերով ռուսանալու։ Բոլորից պարզ է, որ անմտութիւն կլինի Ռուսաստանի թափառակեաց ցեղերը մասնակից անել մեր ընդհանուր քաղաքական ընտրութիւններին, որպէս և ինչասակար է նրանց վրայ տարածելը մեր ընդհանուր օրէնքները։ Թողնենք, որ նրանք առաջուայ պէս ապրեն իրենց ընտրովի նահապետներով մեր հրսկողութեան տակ, բայց միայն աշխատենք բազմացնելու նրանց մէջ դպրոցներ։ Այս թափառական ցեղերը ոչ թէ այն պատճառով չպիտի մասնակցեն մեր պետական դումային, որ ազգաբնակութիւնը նրանց շատ նոսր է, այլ որովհետև այդ Եակուտները ու Կամչադալները հիմք չունեն հոգալու մեր ներքին կեանքի կազմակերպութեան մասին, որ անհասկանալի է նրանց համար։ Մեր առաջարկած ձևը արդէն գոյութիւն ունի շատ

երկիրներում, ուր ընտրողական կառավարութիւն կայ։ Այսպէս Հիւսիսային Ամերիկացիք հարկաւոր չհամարեցին երկրի բնիկներին (Индѣйцев) մասնակից անելու ոչ պատգամաւորների ոչ սինատորների և ոչ էլ հասարակապետութեան նախագահի ընտրութեան։

Ամերիկացիք իրենց թափառաշրջիկ ցեղերից ստեղծեցին առանձին գաւառ և միջոց տուեցին կառավարուելու նրանց սեփական ձևով, բայց Ամերիկական իշխանութիւնների խիստ հսկողութեան ներքոյ։ Սոյն այսպիսի վարչութեան ձև ես խորհունդ կտայի մտցնել և այն մեր լայնատարած երկիրների հաւար, ուր Նոգայիների, Կիրգիզների, Կալմիկների վրաններն են սփռուած և Սիբիրի նախնական կեանքով ապրող օտարացեղները իրենց տոհմական և տանուտիրական կազմակերպութեամբ։ Սրանցից շատ չպիտի զանազանուի և Կովկասի լեռնային ցեղերի կեանքի կարգաւորումը։ Ձեմ կարծում թէ չէչէները, լեզգիները և սվաները ռուսաց պարլամենտի համար լաւ ընտրողներ լինեն, բայց սրանցից դուրս Կովկասի լեռների միւս կողմում ապրում են մի շարք ազգեր, որոնցից մի քանիսը դաւանում են մահմէդականութիւն, իսկ միւսները մեզ հաւատակից են։ Մինչև Ռուսաստանի հետ միանալ այս ազգերը վայելում էին Պարսկաստանից կախումն ունեցած փոքր կամ մեծ տէրութիւնների սահմանների մէջ, որպէս օրինակ Հարաւային Դաղստանի իշխանութիւններն էին իրենց շամխալներով կամ կաթաղի Ուցմիեվներով։ Բացի այս կային և համարեա անկախ իշխանութիւններ, որ միացած էին Վրաց թոյլ թագաւորների հպատակութեան տակ, իսկ վերջինները շատ էին նեղւում ամեն կողմից ճնշող խալամից, ուստի և չկարողացան դիմանալ և պահպանել իրենց անկախութիւնը և յօժար կամքով ռուսաց թագաւորների իշխանութեան տակ մտան։ Մեր Անդրկովկասի քրիստոնեայ ազգերի մասին ի հարկէ չի կարելի ասել, որ նրանք այսօր ապրում են տանուտիրական (родовой бытъ) կեանքի ձևերով, թէև նրանց մէջ տանուտիրական կեանքը աւելի հետքեր է թողել քան ռուսների մէջ։ Վրաց Վախտանգ թագաւորի դատաստանագիրը շատ հարցերի լուծումը տալիս է՝ արեան սկզբունքը ընդունելով իբրև հասարակական կազմակերպութեան հիմք։ Բայց միևնոյն ժամանակ այս օրէնսգրքի մէջ երևում են և Հռոմէական իրաւագիտութեան քաղաքակրթիչ տարրեր, որի տարածողները Բիւզանդական տէրութեան այս հեռաւոր ծայրերում հայերն էին։

Դեռ այն ժամանակ երբ մենք ռուսներս, որպէս աւանդում է մեր նախնական ժամանակագիրը, ապրում էինք ամեն մէկը իւր տոհմով (Родомъ) և ապրում էինք, որ Քրիստոնէութիւն նոր ընդունող մեր իշխան Վլադիմիր մեր պերուն կուռքը Դնէպր գետը գցել տուեց, արդէն հայերը Անդրկովկասում տարածում էին Բիւզանդական Քրիստոնէութեան քաղաքակրթութիւնը։ Վրացիների իշխանութեան տակ ընկած հայերը ստեղծեցին այս իշխանական և շինական ազգի մէջ երրորդ վաճառականական դասակարգ։ Այս վաճառականները հետզհետէ հարստանում էին և փարթամանում և զուգընթացաբար հայ վաճառականի աճման հետ ընկնում էր վրաց ազնուականութիւնը, որ այս կողմից շատ յիշեցնում է լեհական «Շլեախտա» դասակարգի վիճակը (шляхта—լեհական հողատէրերը)։ Թէև երկու ազգերի էլ կրօնը Քրիստոնէական էր, բայց նրանց մէջ ծագեց սկզբում խուլ և բացարձակ թշնամութիւն, որ առաջացել էր ամտեսական շահերի հանդիպումից։ Միևնոյն ժամանակ արևելեան Անդրկովկասում զօրեղանում է առանց այնէլ թւով մեծաքանակ միւսուլմանութիւնը և հաւասարապէս սպառնում է թէ հային և թէ վրացուն։ Կովկասի դեռ մօտիկ ժամանակուայ կառավարիչները բոլորվին աչքաթող են արել թուրքերի մէջ սկսուող համիսլամական շարժումը։ Կարծես թէ դեռ քառորդից էլ պակաս չէ, որ մենք առիթ ունեցանք հասկանալու թէ ինչ վտանգ է ներկայացնում մահմեդական ֆանատիկոսութեան գրգռումը (երևի պրոֆէսորը ի նկատի ունի Անդիժանի ապստամբութիւնը), կարծես կովկասի նուաճման ժամանակ մենք ստիպուած չէինք կռուելու և այսպէս ասած միւրիդիզմի հետ որ այսպիսի գրգռման արդասիք, որի թէ մարմնաւոր և թէ հոգևոր գլխաւորութիւնը Շամիլի ձեռքին էր։

Ոչ միայն Բաքուայ շրջակայքներն են ներկուած հայի արիւնով և նոյնը պէտք է ասել Երևանի նահանգի մասին։ Այս ցաւալի անցքերը մեզ ցոյց են տալիս մեր մօտակայ անելիքը և դերը։ Անհետացաւ Հռոմի միապետութիւնը, բայց անխախտ մնաց երախտագիտական յիշատակ այն pax Romana—«Հռոմէական խաղաղութեան մասին», որ միջոց էր տալիս բազմաթիւ ազգերին վտանգի ենթարկելու իւր կեանքը ու ստացուածքը աւօրեայ խաղաղ աշխատանքով զբաղուելու, որովհետև բարբարոս և ֆանատիկոս ցեղերի բունները Հռոմէական լեգիոններով էին շրջապատուած լինում և արշաւանքների առաջն առնում էին։ Վաղուց չէ, որ մենք տօնեցինք Վրաստանի միութեան հարիւրամեակը։ Վրաստանի ազգերը մեր հով-

նաւորութիւնը փնտռում էին և մենք պարտաւորուել ենք ապահովել նրանց ներքին և արտաքին խաղաղութիւնը: Սրա փոխարէն մենք իրաւունք ունինք պահանջելու, որ նրանք կատարեն հպատակութեան պարտքը և նրանք չեն հրաժարուել կատարելու և ամբողջ մի դար այդ ազգերը մեզ տուել են թէ մարդիկ և թէ փող: Մեր կապը ամրապնդած է փոխադարձ ծառայութիւններով և կարող է աւելի խոր արմատներ գցել, եթէ փոխադարձ հաւատ լինի: Մենք պէտք է հասկանանք, որ Անդրկովկասը իւր բազմալեզու և բազմացեղ ազգերի պատճառով, որոնք թէ տնտեսական թէ կրօնական թշնամութիւններ ունեն միմեանց հետ, չի կարող և չպիտի դառնայ ոչ նոր իսլամական սուլթանութիւն, ոչ վրացական ոչ էլ հայկական թագաւորութիւն: Մեր դաշնակցութեամբ կովկասը փնտռում է Եւրոպական կուլտուրա և խաղաղ տնտեսական զարգացումի կենցաղավարութեան պայմանները արդարև մեր պայմաններից զանազանվում են, մենք էլ չենք հասկանում վրացական «խիզանութիւնը», որ գիւղական յաւիտենական և ժառանգական կապալառութեան մի ձև է, որպէս և վրացիք ու հայերը դժուար կհասկանան մեր համայնական հողատիրութիւնը: Այսքանս բաւական պիտի լինի մեզ հաւաստիացնելու, որ մեր հարաւային հպատակ երկրի բարեկամութիւնը և հաւատը մենք պիտի ձեռք բերենք ոչ թէ կենդրոնից նրանց վզին փաթաթելով ռուսական կարգերը կամ վրացիներին և հայերին կանչելով մասնակցելու մեր ներքին կարգ ու սարքը վերափոխելու, այլ տալով Անդրկովկասին տեղական լայն ինքնավարութեան շրջան: Անդրկովկասը պիտի սերտ կերպով կապուած մնայ Ռուսաստանի հետ և պիտի վարէ միևնոյն արտաքին, զինուորական և առևտրական քաղաքականութիւն:

Սակայն պէտք է տեղական ինքնավար ժողովներին (сеймъ) իրաւունք տալ նոյն իսկ հողային հարցերի վճռելը, որպէս Գուրիայում, ուր դեռ կատարելապէս գոյութիւն ունին տանուտիրական իրաւազուրկ կարգերի մնացորդները, նոյնպէս և Զաքատալա, ուր բնիկ վրացիների հողային սեփականատէրերի իրաւունքները խառնուած են նրանց նուաճող թուրքերի իրաւունքների հետ: Որպէսզի համաձայն լինին միմեանց հետ Կովկասեան տեղական սէյմերի վճիռները համառուսական դումայի վճիռների հետ՝ պէտք է հետևեալ ձևը ստեղծել: Երկու պալատ եղած ժամանակ և տեղական ներկայացուցչութեան կազմով՝ վերին պալատում ռուս գաւառների ներկայացուցիչների հետ միասին կարող են մասնակցել վերին պալատի նիստերին և

Կովկասեան ժողովների (սէյմերի) պատգամաւորները։ Այսպիսի պայմաններում մեր երկրի ծայրերի և գաղութների ամենալայն տեղական ինքնավարութիւնը չի կարող խանգարել Ռուսաստանի քաղաքական միութիւնը։ Այն ժամանակ մենք դարձեալ ամբողջ պետութիւն կլինենք թէ մեր արտաքին և թէ ներքին թշնամիների դէմ առանց խորտակելու մեր հպատակների ներքին աշխարհը, առանց ստիպելու, որ տեղական ցեղերը զոհ բերեն իրենց ժառանգական իրաւունքները և սովորութիւնները ռուս Մոլոխին *)։

Ազգերի փորձը վաղուց արդէն ապացուցել է, որ մայր Հայրենիքի և գաղթականութիւնների հպատակ երկիրների մէջ ամենաամուր կապը ստեղծում է գաղթականութիւններին տուած ինքնավարութիւնը։ Բաւական է յիշելու թէ ինչպէս Վենեցիան, որ նոյնպէս կառավարում էր կենդրոնից իւր գաղութները, իսպառ կորցրեց բոլորը և նոյն իսկ ինքը Նապոլէոնի ձեռքով Աւստրիային հպատակուեց։ Արժէ՞ արդեօք յիշատակելու թէ ինչպէս Իսպանիան և Պորտուգալիան կորցրեցին իրենց հպատակ երկիրները Ամերիկայում, որովհետև չկարողացան սէր ստեղծել առ մայր Հայրենիքը, որ միմիայն շահագործում էր հպատակներին յօգուտ իւր և ուղարկուած նահանգապետների։ Նոյն իսկ Անգլիան միանգամից չհասկացաւ հպատակ երկիրներին լայն ինքնավարութիւն տալու կարևորութիւնը։ Հիւսիսային Ամերիկայի գաղութների կորցնելը և Իրլանդիայի մշտական անբաւականութիւնները հազիւ համոզեցին, որ Անգլիան իւր նշանաւոր հպատակ երկիրներին լայն ինքնավարութիւն է տալիս։

Եթէ իրաւ է, որ դեռ մի քանի զինուորական գաղթականութիւններ, որպէս Մալտան և Ջիբրալտարը կենդրոնից են կառավարուում, բայց Կանադան, Ավստրալիան և Աֆրիկայի հողերը արդէն լիակատար ինքնավարութիւն ունին և մինչև անգամ Անգլիական ապրանքների մրցումի դէմ կռուում են սեփական մաքսային պահականոցներով։ Նրանք ունին ոչ միայն տեղական պարլամենտներ, այլ և ընդհանուր ժողովների պէս մի հաստատութիւն։ Թող կառավարէ Բրիտանիան—նախկին նշանաբանը այսօր կնշանակի միայն թէ Անգլիական քաղաքական ազատ կարգերը տարածուում են այն բոլոր երկիրներում, ուր ծածանուում է Անգլիական դրօշակը։

*) Փինիկեցոց չաստուած էր։

Անգլիական գաղութների կապերը կենդրոնի հետ։ Այժմ արդէն վճռուած պէտք է համարել թէ որն է լաւ կառավարելու ձևը — միշտ կասկածոտ քաղաքականութիւնը դէպի հպատակ երկիրները և ազգերը թէ ընդհակառակը տեղական ինքնավարութիւն տալը և ընդհանուր հիմնարկութիւններով կապելը։ Անկասկած է, որ տէրութեան հաստատութեան լաւագոյն պայմանն է, որ հպատակ ազգերը հաւատով վերաբերուին, որ ըստ իւր կարգին կ'ծագուի, երբոր տէրութիւնը տալիս է նրանց օրինաւոր վարչութիւն, և լիուլի ինքնավարութիւն վարչական այն բոլոր բաժիններում որ չէ վերաբերում տէրութեան ընդհանուր շահերին, նրա պաշտպանութեան և քաղաքական ամբողջութեանը։ Թող ազգերի դասը զուր չանցնէ Ռուսաստանի համար, թող այս օրինակը փարատէ այնպիսիների կասկածները, որոնք հպատակ ժողովրդոց ազգային և տեղական ազատութիւնը ճնշելու մէջ են տեսնում միութիւնը պահելու կարելիութիւնը։ Թող այս ապացոյց լինի, որ Կայսրութեան ամբողջութիւնը չէ պահանջում բոլորովին, որ ռուսները կլանեն այն բոլորին, որոնց բաղդը միացրած է նրանց հետ *)։

Գ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ

---

*) Մենք պատմեցինք պրոֆէսորի գլխաւոր մտքերը։

ԲԵՀԱՅԻՆԵՐ ԿԱՄ ԲԱԲԻԶՄ *)

36 Գոռոզ շիաները, որոնք միւթէշարիներից դուրս ամբողջ աշխարհի վրայ զզուանքով ու արհամարանքով էին ակնարկ գցում, որոնց համար համայն մարդկութիւնը, բացի իմամների երկրպագուներից, ապականութիւն ու գարշանք էր ներկայացնում, չէին կարող համբերութեամբ լսել, տեսնել ու չբորբոքուել նորաղանդների դէմ։ Բաղդադ ու Քէաղչիմէյն ապրող շիաները սրտմտած Հիւսէյն-ալի դէմ, իրենց կոնսուլից պահանջում էին, սանձել իմամների «հադիսները» հերքող, աւանդութիւնները եղծող, ժողովուրդը գայթակղեցնող Բաբի վարդապետութեան յամառ քարոզողներին։ Իրաք—Արաբի սրբավայրերում ապրող իւլէմաները ամեն շաբաթ հաստ ծրարներ էին ուղարկում Թէհրան վէզիրներին ու շահին, պահանջելով որ միջոցներ ձեռք առնեն և այս հայոյողի (քեաֆիր) գոյութիւնը ջնջեն իրենց միջից։ Նրանք Բողոքում էին. թէ նորաղանդները պղտորում են սրբավայրերը այցելող շիա ուխտաւորների միտքը և թերահաւատութեան որոմը ցանում են ճշմարիտ հաւատացեալների սրտում, կասկածներ են զարթեցնում իմամների, Հադիսների, Հաբուլգայի և ուրիշ գերագոյն յայտնութիւնների մասին։ Դրութիւնը այնտեղ հասաւ, որ կոնսուլը հրաւէր կարդաց Նէջէֆի, Քիւֆէի և Քէրբէլայի բոլոր իւլէմներին, որոնք ժողովեցան Բեաղիմէյն քննելու և դատապարտելու Բաբի աշակերտներին։ Այս ժողովով էլ շիաները չը հասան ցանկութիւններին, քանի որ այն ժամանակի շիա-մի-թաշարիների յայտնի Միւջթէհիդ Հաջի Միրզա-Մուրթուզան ժողովից դուրս եկաւ կրկնելով, թէ—Ինքը որևէ կրօնի հակառակ և դատապարտելի ընթացք չի նկատում Հիւսէյն-ալիի գրքերում և վերադարձաւ Նէջէֆ։ Այս անյաջողութիւնից բորբոքուած, երբ կոնսուլը ջանում էր շահի որևէ հրովարտակով կալանաւորել և պարսկաստան վերադարձնել բաբիներին, վերջիններս խմբով դիմեցին և ընդունեցին Օսմանեան հպատակութիւն և հովանաւորութիւն։

---

*) Տես «Լումայ» № 6—7.

37. Բաբիների Օսմանցիներից հովանաւորութիւնը աւելի գրգռեց—բորբոքեց Բաղդադի պարսիկ գաղթականութեան և Հիւսէյն-ալի սկսեց աւելի համարձակ քարոզել նորաղանդի վարդապետութիւնը։ Պարսիկ կղերը շարունակ նրան այցելում էին և անդադար վիճում։ Մի օր երբ նրանից նշան պահանջեցին, նա ասաց—Հրաշքը այն սրբազան գրութիւններն է, որոնք թողել է մեր կրօնի հիմնադիրը։ Մթթէ իսլամի վարդապետութեան ամենամեծ և միակ հրաշքը Ղուրանը չէր, որին հաւատացին ու դաւանեցին միլիոնաւոր ժողովուրդ։ Երբ առարկեցին, թէ անգրագէտ Մահմեդը Աստուածային ներշնչումով գրեց և յանձնեց Ղուրանը, իսկ Բաբը իւրանից է գրել, Հիւսէյն-ալին բորբոքուած ասաց.—«Դնացէք կանչեցէք բազարից որև է Բէդուին (արաբ)»։ Երբ Բէդուինը ներկայացաւ ժողովականներին, Հիւսէյն ալին հրամայեց մի խօսքով—«(Ղուլ) կարդա»։ Բէդուինը ամբողջ կէս ժամ անդադար երեք-չորս հարիւր «Այաթ» կարդաց ընտիր արաբական գրական ոճով և ապշեցրեց հանդիսականներին։ Հիւսէյն-ալին Բէդուինին դադարեցրեց, երբ բոլորը հետաքրքրուեցան և համոզուեցան, որ նա անգրագէտ և տգէտ մարդ է, խօսում է արաբական աղաւաղուած բարբառով, մնացին շուարած-տարակուսած և շատերը հակուեցան Բաբիների կողմը։ Երբ մի ուրիշ ժողովում ամեն կողմից հարցախեղդ արին և Հիւսէյն-ալիից նշան էին պահանջում, նա կանգնեց և ասաց, թէ—«Բոլորդ հանգեցէք մի որոշման պահանջեցէք մի բան, մինչև անգամ եթէ կամենում էք այս Շաթ գետին (Տիգրիս) հրամայեմ, որ նա դառնայ»—բոլորովին բորբոքուեցան և ամեն միջոցի դիմեցին, մինչև որ համոզեցին խալիֆին և յատուկ հրովարտակ, պաշտօնականներ ղրկել տուին Բաղդադ, որոնք նորաղանդներին իրենց առաջնորդի Հիւսէյն-ալիի հետ տարին կ, Պօլիս 1863 թուականին, Բաղդադում տասն ու մի տարի քարոզութիւնից յետոյ։

38. Երբ պաշտօնականների հետ ճանապարհ էին ընկնելու դէպի Կ. Պօլիս, Միրզա-Հիսէյն-ալին յայտնութեան ժամը հասած համարելով, Նէջիբ փաշայի այգում հաւաքուած բաբիների խմբին նա պարզեց իւր անձնաւորութիւնը, թէ ինքն է այն ԲէՀա-Ուլահը (Աստուծոյ լոյսը), որի մասին կարապետել էր Բաբը իւր Բէյան գրքում։ Այդտեղ տուած պատգամը («Լոհ») ակսում է.—«Նա է, որ բազմած և ընակուած է այս լուսեղէն կենդանի տաճարի մէջ...»։ Այս խօսքերով նա ցոյց տուեց իւր կուրծքը և պատգամը վերջացնելով ճանապարհ ընկան։ Նորան ընկերակցում էին ընտանիքը, զաւակները, եղբայրները, բա-

բի ազգականները և նշանաւոր հետևորդները ընդամենը 86—90 հոգի, որոնք միասին ուղևորուեցին մինչև Կ. Պոլիս։ Էղէլին, որ տասներկու տարի անվերջ թափառելով վարժուել էր հետի ճանապարհորդութեան, անցել էր Իրանը, Թուրանը, Աֆղանը, Հնդկաստանը ամբողջ Միջագետքը դէրվիշի քէշկիլով, ուղեկցում էր հեռուից և այս կարավանին կողմնակի ճանապարհներով, հետի, որպէսզի թուրք-ոստիկանութեան ճանկը չընկնի։ Պատուով մտան Կ. Պոլիս, յարգանքով ընդունեցին Օսմանեան նախարարները այս տարօրինակ աքսորականներին, Հիւսէյն-ալիին այցելեցին Հիւնքեարի մայրաքաղաքի բոլոր նշանաւոր պաշտօնակալները և աչքի ընկնող անձնաւորութիւնները, որոնց մօտ շատ վեհ դիրք բռնեց Բէհան։ Ցեսակցեցաւ մինիստրների հետ և որովհետև որոշ գաղափար չկարողացան կազմել երեք ամիս Կ. Պոլսում ապրելուց յետոյ, Խալիֆի յատուկ հրովարտակով աքսորուեցան Ադրիանուպոլիս (Էտիրնէ)։

38. Ադրիանուպոլսի աքսորավայրից Բէհան սկսեց գրել իւր «Լոհերը» (պատուիրանները) և տարածել հետևողներին Միջագետք, Պարսկաստան և Հնդկաստան։ Այդտեղից գրեց և ուղարկեց Նասր-էդդին շահին այն ընդարձակ թուղթը, որով բացատրեց, թէ ինքը և իւր վարդապետութիւնը երբէք նպատակ չունին որև է աշխարհային իշխանութեան ձգտելու, կամ որևէ պետութիւն—թագաւորութիւն տապալելու։ Նա փաստացի կերպով բացատրեց, որ թէ իւր և թէ բաբի լոհերը սահմանաւորուած են միայն մարդկային հոգու և բարքի կրթութեան, կատարելութեան հասցնելու նպատակով։ Թէ իւր հետևողներին խստիւ արգելուած է ոչ միայն որևէ իշխանութեան դէմ ապստամբիլը, հակառակուիլը, կռուիլը, և արիւնահեղութիւնը, այլ նրանք խօսքով, լեզուով անգամ իրաւունք չունին վշտացնելու որևէ անհատի, ինչ ազգի, ցեղի ու աստիճանի էլ որ պատկանի, նրանք պարտաւոր են սիրել, ներել ոչ միայն թշնամիներին, հակառակորդներին, այլ մինչև անգամ իրենց կեղեքող, կողոպտող և սպանող չարագործներին։ Այդ թղթով նա խոստովանում է, որ Թէբէրսի, Նէյրիզի, Զէնջանի ընդդիմութիւնները սխալմունք, տգիտութեան արդիւնք էին, իւր հետևողները մինչև անգամ անձնապաշտպանութեան իրաւունք չունին, չարին հակառակելու արտօնուած չեն, ոչ զինուելու, ոչ դիմադրելու, ոչ պատերազմ գնալու և ոչ էլ որև է պատճառով մարդ սպանելու. պիտի մեռնեն, բայց չպիտի սպանեն։ Մանաւանդ, նա յաւելացրել էր, Սատգի արարքը ոչ միայն հիմնովին հակառակ էր իւր վարդապետութեան հոգուն, այլ

մի խելացնորի գործ էր։ Օսմանեան հպատակութեան անճարութիւնից դիմելու պարտաւորուիլը յայտնելուց յետոյ, առաջարկում էր շահին իւր հովանաւորութեան տակ մի ժողով գումարել և շիա միւջթէհիդների հետ վիճաբանելուց յետոյ, երբ բաբիների ուղղամտութեան մասին համոզուի, թոյլատրէ նոր աղանդներին էլ ազատ ապրելու իրենց ծննդավայրում մնացեալ այլակրօն ցեղակիցների հետ։ Բայց բաբի վարդապետութեան ռամկավարական հոգին, զինաթափութիւնն և զինուորականութեան ջնջումը հիմնովին հակառակ լինելով Շահնշահերի անսահման իշխանութեան, այդ պատճառով ոչ միայն Բէհաի թուղթը շահին ներկայացնողը գլխատուելու պատուհասին արժանացաւ, այլ բէհաին էլ պատասխան չգրուեց։ Այստեղից գրեց Եւրոպայի արքունիքներին իւր յայտնութիւնը և հրաւէր կարդաց դէպի իւր կրօնը։

39. Բէհաի հետ եղբայրը Էզէլին էլ աքսորուած էր Ադրիանուպոլիս։ Էզէլին իւր խորհրդակից Իսֆահանցի Սէիդ-Մէհմէդի, Միրզա Աղաջանի և Թաւրիզեցի Ռզա-Ղուլիի հետ միացած՝ խորհուրդ արին և բողոքեց Բէհաի յայտնութեան և քարոզութեան դէմ, առարկելով թէ բաբը Էզէլին է անուանել իւր վարդապետութեան «Արշալոյսը» (Սուփ-Էզէլ), նրան է յայտարարել իւր «Մէրաթը» (Հայելին) և նրան է կարդել իւր հետևողների Խնամակալը (վէսին), թէ եղբայրը իրաւունք չունի իրեն Բէհա-Ուլլահ անուանելու, «Լոհ» տալու, կամ բաբի գրութիւնների մասին բացատրութիւն գրելու։ Այսպէս Էզէլին հերքելով եղբօր յաւակնութիւնը, բողոքելով նրա ընթացքի դէմ, բաժանուեց եղբօրից և նրա հետևորդներից, առանձին հերձուած կազմելով վերադարձաւ Կ. Պոլիս։ Այստեղ նա կարողացաւ ներկայանալ Օսմանեան պաշտօնականութեան, յայտարարեց թէ ինքն է Բաբիների առաջնորդը, եղբայրը յափշտակել է իւր իրաւունքը և խնդրեց, որ, որպէս աքսորական, պետական գանձից նրան թոշակ յատկացնեն։ Այդ օրերը Օսմանեան զինուորականներից մէկի մօտ գտել էին Բէհաի «Լոհերից» մի քանիսը, որոնց բանակի մէջ տարածուիլը, մրտքեր յուզելը, նորանոր գազափարների արծարծելը մեծ յուզում էր պատճառել բարձր պաշտօնականութեան, որոնք Էզէլի այս խստովանութիւնից օգտուելով, Բ. Դուռից հրաման հանեցին և երկու եղբօրն էլ աքսորեցին. Էզէլին՝ Կիպրոս, իսկ Բէհաին՝ Աքէա 1868 թուականի օգոստոսին։ Բէհաի հետևորդները չը ցանկացան բաժանուել իրենց առաջնորդից, այնպէս որ կտռավարութիւնը նրանց էլ աքսորեց երկու եղբայրների

հետ, թուով 80 – 90 հոգի։ Պարսից դեսպանը յաջողեցրեց, որ Էզէլիի հետևորդներից երեք հոգի կցեն Բէհաի խմբին և Բէհաի մարդերից երեք հոգի Էզէլիի խմբին, որպէսզի կարողանայ դրանց միջոցով պառակտում գցել և քայքայել աղանդաւորներին։ Յանկարծ Աքէյում, Էզէլիները մի օր երեքն էլ անյայտացան, այնպէս որ կառավարութիւնը որքան խուզարկեց, ինչ քննութիւնների չը դիմեց հնար չեղաւ դրանց գտնելու։ Ենթադրում էին, որ դրանց սպանել, անհետացրել էին Բէհաի 75 հոգուց աւելի բանտակիցները. իսկ կառավարութիւնը որև է դրական փաստ չկարողանալով գտնել, ժողացութեան տրուեց խնդիրը։ Իսկ Կիպրոսը անգլիացիների ձեռքը անցնելուց յետոյ, երեք Բէհաիները 1878 թ. վերադարձան իրենց առաջնորդի մօտ։

Օսմանեան կենդրոնական վարչութեան կարգադրութեան համաձայն Աքքէի բերդի հրամանատարը Բէհաին և հետևորդներին բանտարկեց բերդի մեծ զօրանոցում, ուր վերևի յարկում ապրում էր Բէհան ընտանիքով և սպասաւորներով, իսկ ներքևի յարկում բնակւում էին հետևորդները, առանց որև է կապանքի. Այս պատճառով Բէհան իւր գրութիւնների մէջ իր անձը—մարմինը կալանաւոր, տանջուած էր անուանում։ 1868—1870 թուականը, գրեթէ երկու տարի աքսորականները ապրեցան զօրանոցում, բայց երբ պահեստի զօրքը զէնքի կանչուելով կառավարութիւնը զօրանոցի պէտք ունեցաւ, նրանց թոյլատրեցին քաղաքում ապրելու։ Աքէայի բանտից Բէհան նորից գրեց իւր թղթերը ինչպէս Եւրոպայի նշանաւոր արքունիքներին, պապին, նոյնպէս և աշխարհի ամէն կողմի հետևողներին։ Բանտից ազատուելու պէս նա գրեց Բէհականների Մուրբ-Գիրքը (Բիթաբի-Ադդէս), ֆարսերէն, ապա միւս գրութիւնները, որոնք երեք հարիւր հատորից աւելի կարող են կազմել։ Բաղդադում գրած «Իգանից» (ապացոյց) յետոյ, նրա գրուածներից նշանաւորներն են «Միւբին» (թագաւորների թղթերը), Իշրագաթ (դաղաստանագիրք), Իգթիդարաթ (զօրութիւն), Մարիւմն-իւլ-էսգէր (աւետիսների հաստատութիւնը), Բիւլի-թաամ-Հէլլէն Բէնի-Իսրայէլ (ամէն կերակուր հալալ է իսրայէլի զաւակներին), բացատրութիւն Ղուրանի Ադամի, Էյուբի սուրիէների, ևն, ևն, ևն։

40. Բէհան (Հիւսէյն-ալին) ծնել է 1233 թ. հեջրի Մուհարէմի —2ին (30 Հոկտեմբերի 1817-ին)։ Աքէա աքսորուելիս Բէհան արդէն յիսուն տարին անցկացրած էր։ Մանուկ հասակից նա ցոյց էր տուել իւր հանճարեղ սրամտութիւնը և բնա-

ձիր տաղանդը։ Եօթը տարեկան հասակում եղած ժամանակը հայրը ստացել էր Ատրպատականի ֆինանսի կառավարչից պետական ելմտից տարեկան հաշուէցուցակը։ Հիւսէյն-ալին ձեռքն առաւ կարդալու այդ հաշիւը և խաղալով պատառեց, մանրեց, թափեց։ Երբ հայրը շուարած չէր իմանում անելիքը, երեխան նստեց, գրեց իսկութեամբ ամբողջ հաշուէցուցակը և յանձնեց հօրը։ Մեծ եղաւ տանեցիների զարմանքն ու ապշութիւնը, երբ Ատրպատականից ստացուած երրորդ պատճէնի հետ համեմատելով գրուածի բոլորովին ճշտութիւնը ստուգեցին։ Մի անգամ աղա Բուղուրգը-Աբբասը իւր բնագիտական հմտութեամբ պարծենալիս, ասաց, որ եթէ Քրիստոսը ներկայ լինէր, պիտի հաստատէր, թէ ինքը աշխարհի երեսին ամէնից բարձր բնագէտն է, Եւրոպացի գիտնականներից աւելի մասնագէտ և աւելի խորաթափանց։ Այդ ժամանակ մանուկը նրան պատասխանելով ասաց.—«Մի թէ դու կարող ես ներկիւղ դիմել շահին, եթէ նրա տասը ֆարրաշները յանկարծակի քեզ առաջնորդեն աշխարհի հրամանակալի ներկայութեան»։ Ապա յանդիմանեց հօրը, որ նա չյանդգնի պարծենալ ու խրոխտալ, որ կարող է Յիսուսի նման Աստուծու պատգամաւորին—հոգուն մատենալ և կամ նրա մասին անվայել կարծիքներ յայտնել։ Հիւսէյն-ալին մանկուտ ծանրաբարոյ էր, միշ խորասուզուած անսահման մտածութիւնների մէջ և անչափ սակաւախօս էր։ Նա անչափ համեստ էր, երկար ժամանակ Թէհրանի և Բաղդադի հասարակութեան չէր պարզւում, իւր քարոզութիւնները, իւր գրութիւնները, իւր արտադրութիւնները Եզէլի միջոցով, կամ նրա անունով էր յայտարարում։ Փոքր հասակում դաստիարակուելով հմուտ ուսուցիչների հսկողութեամբ, հրաշալի կերպով ուսումնասիրել էր պարսկական և արաբական լեզուները, սրանց գրականութիւնը, մանաւանդ իսլամի և նրա աղանդաւորների պատմութիւնը, վարդապետութիւնները և փիլիսոփայական տեսակէտները։ Բաբիները Բէհաի աստուածայայտնութիւնը խոստովանել են հիմնուելով նրա տաղանդաւոր գրական արտադրութիւնների, վսեմ մտքերի, հրաշալի գեղարուեստական ոճի ու արտայայտութիւնների վրայ։ Նրա գրած երեք հարիւր հատոր երկերի մէջ չէ կարելի մի նախադասութիւն գտնել, որ ոճի, դասաւորութեան կամ, բառերի կազմութեան և ձևերի մէջ նմանութիւն ունենայ Ղուրանում, Իսլամի գրականութեան, կամ կտակարանների մէջ։ Նա նոյնպէս ուսումնասիրել է յունական և Հռոմէական կլասիքները, Սոկրատը, Արիստոտելը, Պլատոնը, Հիպոկրիտը և ուրիշները, որոնք թար-

գմանուած են արաբականի Աբբասիների շրջանում, բայց շատ քիչ գաղափար ունէր Երոպական գրականութեան, պատմութեան, գիտութիւնների և արուեստի հսկայական առաջադիմութիւնից։ Բէհա հեռատես մտքով, խորաթափանց հայեացքով արուեստի, գեղարուեստի և գիտութեան կատարած արտակարգ յաղթանակները նկատել, զգացել և իւր բնական ընդունակութիւններով որոշ գաղափար կազմել էր դրանց ապագայի մասին, սրանց օգտակարութիւնը պատուիրել էր։ Նա անչափ անգամ կրկնել է հետևորդներին, պատուիրել է, անպայման աշակերտել այդ գիտութիւններին և արուեստներին, տքնել իւրացնել և գործադրել կեանքի պայքարում, մանաւանդ բնական գիտութիւնները, որոնք մարդկային ազգին անբաւ բարիք են խոստանում։

41. Բաբի և Բէհաի քարոզած Աստուածը Եհովան է, որ Մի է, անսկիզբ, անզուգակից, անփոփոխ և յաւիտենական— անվախճան։ Բաբը ընդունելով Աստուածաշնչի և Ղուրանի բոլոր քարոզիչներին, խոստովանելով Նրանց երկնքից տրուած շնորհները, պատգամները, իւր յայտնութեամբ ջնջել էր Նրանց պատուիրանների ոյժը և հրամայել էր ժամանակի կարիքներին համապատասխան իւր բերած օրէնսդրութեան հպատակել։ Նա փոփոխեց վերացական-աներևոյթ աշխարհի մասին եղած ենթադրութիւնները, աշխատեց համաձայնեցնել գերբնականութիւնը բնական օրէնքներին։ Հետևելով Բաբին, Բէհա-Ուլլահը քարոզեց սէր, միութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն և անխտրութիւն։ Բայց Բէհաի քարոզութեան ամենամեծ կէտն այն է, որ նա մարդկութեան հրաւէր կարդաց մշտնջենաւոր խաղաղութեան, հանրամարդկային զինաթափութեան, կատարելութեան վայել պարտաճանաչութեան, ցեղերի, ազգերի, տոհմերի, դասակարգերի տարբերութեան ջնջման, համերաշխութեան և համայնացման։ Աշխարհի վրայ բարեբաստիկ վիճակ ստեղծելու, բռնութիւնը- խտրութիւնը ջնջելու համար, Բէհան իւր հետևորդներից պահանջեց՝ ամբողջ հողագնդի ազգերին իրենց հարազատը, արիւնակիցը ընդունելով, երբէք նրանց դէմ, որև է մարդու դէմ զէնք չը բարձրացնել, մարդկային արիւն երբէք չողողել։ Հռչակելով իր յայտնութիւնը, նա աւետում էր աշխարհին, որ շուտով լոյսը պիտի սփռուի և մարդիկ պիտի զգաստանան, վայրենութիւնից, գազանավայել արիւնահեղութիւններից ձեռք պիտի վերցնեն։ Բէհան բաբի վարդապետութեան՝ Բէյանի պատուիրանների մէջ նկատած բոլոր խստութիւնները մեղմացրից, ժողովրդի վրայ դրուած

պարտականութիւնները և տուժերը թեթևացրեց, ջնջեց, վնասակարները, դժուարինները վերցրեց, հաստատելով մնացորդը։ Բէհան թոյլատրեց օգտուել և վայելել աշխարհի բերքն ու բարին, հաճոյքը, միայն թէ չվնասել, չվշտացնել, չտուժել տալ ուրիշներին։ Նա ինքն իրեն լոյս էր անուանում, լոյսի (Բէհա) ծնունդ, արշալոյս և հետևողներից պահանջում էր միշտ դէպի լոյսը ձգտել, թափանցել խաւարի, աղջամուղջի ամէն մի խաւը, տարածել լոյսը ճշմարտութիւնը ամէն մի անկիւն, ձգտել անվերջ դէպի առաջ գիտութիւններով և արուեստներով, բարձրացնել պայծառացնել մարդկային միտքը վսեմ գաղափարներով։

Բէհան անվերջ քարոզում էր հետևողներին.

—«Ո՜վ հետևորդներ, աշխարհի ցեղեր, ամէն կրօնի հետևող ժողովրդի հետ սիրով, անկեղծ հոգւով յարաբերութիւն կապեցէք։

«Գիտութեան ծառի ամենավսեմ խորհուրդն այն է, որ դուք բոլոր ազգերդ մի ծառի պտուղ էք, միևնոյն ոստի տերևներ։

«Հայրենասիրութիւնը առաքինութիւն չէ, ամբողջ աշխարհը պարտաւոր էք ընդունել ձեր արիւնակցի, սրտակցի նման։

«Ո՜վ Բէնա-Ուլլահի հետևորդներ, դուք սիրոյ արևելքն էք, բարեսրտութեան արևածագը։ Մի՛ վարժեցնէք ձեր լեզուն որև է անարգանքի, կամ նախատինքի։ Աչքերդ զգուշացէք անարգ տեղեր հայեացք գցելուց։ Ոչ ոքի վշտին պատճառ մի՛ դառնաք, ուր մնաց թէ կռուել կամ ապստամբել մէկի դէմ։ Աստծու օրէնքն ու հաւատքը միմիայն համերաշխութեան համար է երկնքից երկիր իջել. այդ բանը երբէք հակառակութեան և հերձուածի առարկայ մի դարձնէք։

«Այս խօսքերը նման են ջրի, որը պիտի հանդցնէ սրտերի խորքերում ծածկուած ու կուտակուած կրօնական ատելութեան բոցերը։

«Աւելի լաւ բան ցանկացէք ուրիշների համար, ինչպիսի հաճելի բաներ ցանկանում էք ձեր անձի համար. այս է Ալլահի պատգամը, եթէ դուք կարողանաք ըմբռնել։

«Ո՜վ իմ բարեկամներ, դուք ձեր անձի համար չէք ստեղծուել, այլ աշխարհի համայնքների համար։ Թողէք այն բոլորը որտեղ տեսնում էք ձեր անձնական շահը, կապուեցէք նրա հետ, որտեղ ընդհանրութեան շահն էք տեսնում։

«Ո՜վ մարդու որդի, եթէ ուզում ես առաքինի լինել, թող

քո անձնական շահերը, հետևիր և ձեռքումդ պինդ բռնիր ընդհանրական շահերը։

«Եթէ արդարութեան ես հետևում, ուրիշներին էլ տուր այն իրաւունքները, արտօնութիւններ, ինչ որ իւրացրել ես քո անձիդ համար։

«Երանի՜ այն մարդու վիճակին, որ պառկած տեղը նրա հոգին լուսաւորւում է ընդհանրական սիրով։ Երանի՜ այն մարդուն, որ ծառայում է ընդհանրութեան շահերին։

«Ով որ իւր, կամ ուրիշի զաւակներին դաստիարակէ, Աստուծոյ որդիներին կրթած կը լինի։ Նրան հանի իմ լոյսը, իմ ճառագայթը, իմ ողորմութիւնն ու օրհնութիւնը։

«Աշխարհի յառաջադիմութիւնը, դաստիարակութիւնը, զարգացումը մարդկային կեանքի ապահովութեան և խաղաղութեան համար է, որն Աստուծոյ պատուիրանի ամենագլխաւոր կէտն է։

«Կեանքի իսկական ճաշակը պարզ մշակութեան մէջն է։

«Կը գայ ժամանակ, երբ գահերը թափուր կը մնան, ոչ ոք չի ցանկալ նրանց տիրանալ։

«Լրագիրը կեանքի հայելին է, երանի՜ այն խմբագրին, որ նեղելութիւնները քննում է, փնտռում է և ճշմարտութիւնը նկարագրում»։

ԱՏՐՊԵՏ

(Կը շարունակուի)

ԱՅԴԵՄԻՐԿԱՆ

(Չերքէզական մի հին երգ)

Դարերը ոսկէ գընացին, անցան.
Զրկուեցինք փառքից, եղանք ցիրուցան...
Թշուառ չերքէզներ, մեզ բաժին մնաց
Միայն դառնագին տառապանք ու լաց.
Այժմ մեր իշխանն ու իշխանուհին
Գլուխ են տալիս թուրքերի խանին։
Բայց կար ժամանակ, երբ Այդեմիրկան
Արթուն հովիւ էր, տէր ու տիրական.
Նորա օրերով ազատ էր չերքէզ՝
Օդում սաւառնող արծիւների պէս։

—

Քաջ Այդեմիրկան մանկութեան օրից
Զէնքը չէր թողնում երբէք իր ձեռից.
Իր կեանքն ամբողջ նա անց էր կացնում
Արշաւանքներում և արեան դաշտում։
Կռուի, տագնապի ժամին ահաւոր
Միշտ մեզ հետ էր մեր պետը զօրաւոր.
Նա էր չերքէզին հզօր աջակից,
Իր կտրիճներին ընկեր-ուղեկից.
Իսկ նորա միակ ուղեկիցները
Աստղերն էին, պայծառ աստղերը...

—

Ոսոխը հէնց որ դնում էր իր ոտ
Չերքէզի հողի սահմանների մօտ,
Վազում էր իսկոյն քաջ Այդեմիրկան՝
Իբրև չերքէզի տէր ու տիրական.
Սլանում էր նա հեծած նժոյգ ձին,
Ահ ու սարսափանք տարածում չորս դին.
Սլանում էր նա, թշնամուն զարկում,

Կարմիր արիւնով գետինը ներկում.
Խաւար գիշերի կայծակի նման՝
Թողում էր ձեռին թուրը յաղթական։

—

Վոլգայի, Դոնի ափերին դալար
Էլ շաւիղ չը կար, էլ կածան չը կար,
Որ հազար անգամ կոխած չ'ըլնէին
Քաջ Այդեմիրկանն ու իր նժոյգ ձին.
Քառասուն տարի ճակատամարտեց
Ու Հաշտարխանի խաներին ջարդեց.
Մեզ համար այնժամ՝ մրջիւնի նման՝
Ընչին միջատ էր ամենայն մի խան...
Ահ, ինչպէս էին մերոնք կեանք վարում
Երազի նման՝ անցած հին դարում։

—

Այսպէս էր ասում քաջ Այդեմիրկան.
«Ով զանազանել կամենայ իրան
Թուլամորթ, վախկոտ գեղեցիկ սեռից—
Ը պիտի թողնի սուրը իր ձեռից.
Ով կրի «չերքէզ» անունը մաքուր—
Ը պիտի լինի երբէք անձնատուր,
Թէկուզ կտրատեն նորան անխընայ
Ու մարմնից միայն մի մատը մնայ,
Ը պիտի ընկնի իր երիվարից,
Քանի դեռ կաշին չեն քերթել վրայից»։

—

«Չերքէզը պիտի նեղ բոպէներին
Ը յուսահատուի, օգնի ընկերին.
Չերքէզը պիտի աւանդի հոգին
Ոչ թէ իր տանը, իր կնոջ կողքին,
Այլ պատերազմի արիւնոտ դաշտում
Սուրբ հայրենիքի քաջերի վաշտում.
Իսկ իրանց տանը մեռնում են նոքա,
Որոնց երեսին բեղ-մօրուս չը կայ»...
Այսպէս էր ասում. ազնիւ չերքէզներ,
Քաջ Այդեմիրկան պետն անվեհեր։

—

Այսպէս էր ասում, այսպէս էլ անում.
Իր ընտրած ճամբով անշեղ ընթանում։
Բայց եկաւ ահեղ օրհասը յանկարծ,

Երկնքից թռաւ մեր աստղը անդարձ...
Մեր հզօր իշխանն, որ կեանքում երբէք
Չէր իջել ձիուց, որ գիշեր-ցերեկ
Նժոյգը հեծած՝ ոտն ասպանդակում,
Հովիւ էր լինում, իր ազգին հսկում—
Դուրս հանեց յանկարծ ոտն ասպանդակից,
Մեր սրտում թողեց դառնագին կսկիծ...

—

Թուրքերը եկել, իբրև մեծ հեղեղ,
Քանդում էին մեր բոլոր տուն ու. տեղ,
Երբ յանկարծ վազեց քաջ Այդեմիրկան՝
Ձեռին շողշողուն թուրը յաղթական...
Կարմիր արիւնով գետինը ներկեց,
Իսկ Ջահէլ խանին մահուանից փրկեց.
Ականջը միայն սրով կտրելով,
Արձակեց նորան այսպէս ասելով.
«Դու դեռ Ջահէլ ես, քեզ չեմ սպանի,
Թէ չէ քո մայրը դարդից կը մեռնի»։

—

Հէնց այդ միջոցին մթնեց մեր երկին,
Մթնեց յաւիտեան Չերքէզի գլխին...
Երբ Այդեմիրկան՝ ձեռքը արիւնոտ
Խրոխտ կանգնած էր մեռելների մօտ,
Դիերի միջից մի նետ սլացաւ,
Շեշտակի եկաւ, սրտում ցցուեցաւ.
Իշխանը գոչեց, հառաչեց ուժգին,
Նժոյգից ընկաւ, աւանդեց հոգին.
Սառը հողի տակ ննջեց յաւիտեան,
Ազգը թողնելով անտէր, անպաշտպան...

—

Եւ չարաբաստիկ այն սև օրուանից,
Երբ մենք զրկուեցինք մեր քաջ իշխանից—
Չերքէզի փառքը թաղուեց հողի տակ,
Էդիգէյ խանին եղանք հպատակ,
Չերքէզի սուրը մնաց պատեանում,
Իսկ ինքը մնաց թուրքի ճիրանում.
Էլ չը կայ մէկը, որ ոտքի ելնի,
Որբացած ազգին քաջ հովիւ լինի,
Սլաքներ շաղ տայ թշնամու գլխին
Ու փոխարինի Այդեմիրկանին.

Ձերքէզի անկեղծ, անբաժան ընկեր
Անվեհեր ոգին չի չքացել դեռ.
Մի՛ յուսահատուէք. մեր երակներում
Մեր քաջ պապերի արիւնն է հոսում։
Եւ մեր պապերից սուրը ժառանգած
Դեռ շողշողում է, դեռ չի ժանգոտած.
Մեր նախնիքները այդ պողպատ սրով
Ծայռ էին ճեղքում լոկ մի հարուածով.
Ուրեմն եկէք այդ սրովը մենք,
Գերութեան շղթան յաւիտեան փշրենք։

—

Մեր պապերը թէ դուրս ելնեն մամռոտ
Գերեզմաններից, սլանան մեղ մօտ,
Այնժամ փոխանակ թշնամիների՝
Ոտնատակ՝ կը տան վախկոտ ու գերի
Իրանց անարժան, ստրուկ թոռներին,
Անէծք կը թափեն բոլորիս գլխին
Ո՛չ, բաւական է որքան ծաղրեցինք
Մենք մեր անունը և անարգուեցինք.
Ծնուել ենք ազատ, անվախ, համարձակ.
Այնպէս էլ պիտի մտնենք հողի տակ։

—

Թէպէտ թշնամին անթիւ է, զօրեղ,
Բայց մեր սրտի հուրն աւելի ահեղ,
Աւելի դաժան, բուռն է, զօրաւոր.
Նա կը խորտակէ լուծը դարաւոր,
Գերութեան շղթան կը փշրի խպառ
Ու հիմնայատակ կ'աւերէ աշխարհ։
Օ՛, քաջ ձերքէզներ դէ՛ ոտքի ելէք,
Շողշողուն սուրը պատեանից հանէք
Թուրքերի արեամբ եկէք լուանանք
Դարշ ստրկութեան մեր սև ամօթանք։

—

Նայեցէք—ահա մեր Էլբրուս սարը *)
Վեր բարձրացնելով հպարտ կատարը՝
Գերի ձերքէզին բախտ է խոստանում
Ու նորա սուրը վերևից օրհնում...
Եւ մեր սևաչեայ ձերքէզուհիներ,
Որոնք դարձել են խանների հարճեր,
Թող այսուհետև հարեմից դուրս գան,
Ազատ, համարձակ ժպտան ու խնդան։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆ

---

*) Էլբրուս ձերքեզերէն Օխշամախս, որ նշանակում է բաղդաւոր սար։
Ծան. Հեղ.

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

—

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

Վերջին թղթակցութենէ ետքը,—թէև ոչ անմիջապէս,—բաւական կարևոր դէպքեր տեղի ունեցան Կ. Պոլսի մէջ։ Բայց ամենէն մեծ դէպքը տեղի ունեցաւ Կովկասի մէջ՝ Հայոց դպրոցական և եկեղեցական խնդիրներուն բարւոք կարգադրութեան մասին հրատարակուած կայսերական Ուրազով, դէպք մը՝ որ մեզ ալ պատճառեց մեծ ուրախութիւն և ոգևորութիւն։

Խօսենք այդ դէպքերու վրայ։

Ա.

Ամենէն յառաջ ժամանակագրապէս պէտք է յիշատակեմ, թէև քիչ մը ուշ, պ. Կարապետ Եզեանցի մահը՝ Ռուսիոյ մայրաքաղաքին մէջ և այստեղ՝ Թուրքիոյ Մայրաքաղաքին մէջ՝ իր յիշատակին եղած յարգանքը։ Պէտք է խոստովանել՝ որ պատկառելի շքեղութեամբ մը յարգուեցաւ և օրհնուեցաւ Եզեանցի յիշատակը այստեղ՝ շնորհիւ Ազգ. Պատրիարքարանի կողմէ եղած պաշտօնական կարգադրութիւններու և սարքուած հոգևոր հանդէսին.—կարգադրութիւնները՝ հանգուցեալոյն դագաղին վրայ պատկեր դնելու համար, և հանդէսը՝ այս տեղ երևան բերելու համար իր ծառայութեանց արժէքը։ Քանի որ Եզեանց ուղղակի յարաբերութեան մէջ մտած էր Թուրքիոյ Հայոց հետ՝ թէ Սանասարեան Վարժարանով և թէ Սահակ-Մեսրոպեան Գրական Մրցանակով, Ազգ. Պատրիարքարանը, իբր պաշտօնական կենդրոնը այդ երկու հաստատութիւններուն, լիովին կատարեց իր բարոյական պարտականութիւնները։ Մայրաքաղաքիս թերթերը առաւել կամ նուազ ճշտութեամբ նկարագրեցին արդէն Բերայի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ՝ կատարած հանդէսը՝ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր։ ԼՈՅՍ շաբաթաթերթի այս մասին գրածները աւելի ուշագրաւ էին։

Եզեանցի մասին արտայայտուած յարգանքները աւելի ևս շեշտուեցան՝ երբ լսուեցաւ՝ թէ հանգուցեալը իր Հարստութեան կարևոր մէկ մասը կտակած է Սանասարեան Վարժարանի։ Շատեր կարծեր էին որ Եզեան միայն խօսքով բարերար մը եղած էր. բայց այդ կտակը ցոյց տուաւ՝ որ նա իսկապէս հասկցած է բարերարութեան նշանակութիւնը։

Բայց մենք դեռ աւելին կսպասենք։ Եղեանցը սկիզբէն ի վեր ճանչցուած է ազգասէր մը. կարելի չէր սակայն, այս տեսակէտէն ուսումնասիրել զինքը Կ. Պոլսի մամուլին մէջ. այս մասին շատ աւելի ձեռնհասութիւն ունի Կովկասի մամուլը։ Եղեանցի ոգին հարկաւ ծածկուած է իր գրական գործերուն մէջ, որոնք ռուսերէն են մեծ մասամբ։ Մենք լսած ենք՝ որ այդ գործերը ընդհանրապէս ուրիշներու աշխատութեան արդիւնք են *) և Եղեանցի անունը կկրեն։ Այսպիսի աշխատութիւն մը անարժէք չէ. վասն զի կենթադրուի՝—որ Եղեանց ինքը կյղանար ոև է գործին ծրագիր և գործադրել կուտար զայն ձեռնհասներուն կամ մասնագէտներուն։ Այսպէս կամ այնպէս, մենք կսպասենք՝ որ չէնք շնորհք ուսումնասիրութիւն մը հրատարակուի, հատոր մը **) Ռուսիոյ մէջ, որ պատկերացնէ Եղեանցը իր ամբողջ կեանքով։ Ինչ թերութիւններ ալ ունենան մեծ անձնաւորութիւններ, որոնք սակայն ամենէն գործունեայ դեր մը ունեցած են իրենց ազգին մտաւոր և գրական կեանքին մէջ, եայլն, պէտք է որ այսպիսիներու կեանքը իրենց ամբողջութեամբ ուսումնասիրուի ու տրուի ժողովրդեան ձեռքը։ Այսպիսի ուսումնասիրութիւններ ամենէն ընտիր և ամենէն օգտակար գրքերն են, որ շարունակ կրնան կարդացուիլ ժողովրդի ամեն դասակարգերուն մէջ։

Մեր մէջ Եղեանցը ճանչցողներ ու չճանչցողներ հաւասարապէս բաներ մը գրեցին ու խօսեցան իր մահուան առթիւ։ Ասոնք, մանաւանդ ձրի խօսքեր ու գրուածներ, բան. մը չեն արժեր. կատարեալ և լուրջ աշխատութիւն մը պէտք է Եղեանցի մասին, զինքը ծանօթացնելու համար։ Շատ փափագելի է որ Լումայ գոնէ Եղեանցի ռուսերէն գործերը ծանօթացնելու ձեռնարկ մը ընելու առաջնութիւնը ունենար. ձեռնարկ մը լուրջ և անաչառ։

Բ.

Մայրաքաղաքիս մէջ ամենէն կարևոր դէպք մըն էր Յուլիս 8. Ուրբաթ օր պատահածը, Սէլամլըք-ի հանդիսի պահուն, դաւաճանութեան դէպք մը Վեհ. Սուլթանի անձին դէմ, որ չհասաւ իր նպատակին։ Թէ Թուրքիոյ և թէ Եւրոպայի թերթերը լայնօրէն զբաղեցան այս դէպքին նկարագրութեամբ, ա-

*) Հիմնովին սխալ է այդ լուրը. Եղեանցը ինքնուրոյն և ամենալուրջ գրագէտն էր Ռուսիոյ հայոց մէջ։ ԽՄԲ.

**) Լումայի աշխ. պ. Ս. Գաբրիէլեանն արդէն պատրաստում է հանգ. մանրամասն կենսագրութիւնը։ ԽՄԲ.

տոնք հարկաւ ծանօթ են Ռուսահայոց. հետևաբար աւելորդ է ատոնց կրկնութիւնը. նոյն իսկ եթէ ուզէինք կրկնութիւն մը ալ ընել՝ կարելի չէր ճշտութեամբ ընել. վասն զի դեռ քննութիւնները կշարունակուին դաւադրութեան բոլոր պարագաները ճշտելու և ստուգելու համար, որոնք անծանօթ են ժողովրդին. բայց ինչ որ ծանօթ է և մեծ կշիռ ունի Թուրքիոյ Հայոց համար, այն ալ սա է՝ թէ դաւադրութեան հեղինակները հայ չեն։ Հակառակ քանի մը պաշտօնականներու պնդումին, որոնք իբր թէ երկրին և Սուլթանին մեծ ծառայութիւն մը մատուցած ըլլալու դիտումով ըսած և պնդած են՝ թէ հայեր եղած ըլլան դաւադրութեան հեղինակները, Սուլթանը այս նուազ արդարադատ շեշտով մը վճռած է՝ թէ հայեր չեն ատոնք. և իրաւի եղած քննութենէն կհետևի որ անարշիստներու կողմէն գործադրած դաւադրութիւն մըն է փորձուածը, և պելճիզացի մը, որ կալանաւորուած է այս առթիւ, խոստովանած է ամեն բան։

Այս դէպքը մեծ կարևորութիւն ունի Թուրքիոյ հայոց համար, մանաւանդ Կ. Պոլսի մէջ. վասն զի հայեր հազիւ չունչ կառնեն դեռ ծանօթ դէպքերէն ի վեր։ Զանազան ձեռնարկութիւններու և փորձերու արդիւնքով՝ Հայոց յայտնի հաւատարմութիւնն ու ծառայութիւնները դէպի Օսմանեան գահը կասկածելի դարձած էին և դեռ են. դաւառներէն մայրաքաղաք ամենէն պատուաւոր մարդոց երթևեկն իսկ դժուարացած և գրեթէ անկարելի դարձած է. դժուարութիւնները այնքան շատցած են՝ որ մարդիկ նախամեծար կհամարին չշարժիլ իրենց տեղերէն. և այս դժուարութեանց արդիւնքով վաճառականական գործառնութիւններ ալ դժուարացած և գրեթէ այլափոխուած են։ Երբ դեռ այս վիճակի մէջ է հայութիւնը Թուրքիոյ մէջ, մեծ կարևորութիւն ունի Սուլթանի անձին դէմ փորձուած դաւանքին ձախողուելը, և մանաւանդ սա պարագան թէ հայեր չեն այս դէպքին հեղինակները։

Կրնամ վստահեցնել ձեզ՝ թէ Թուրքիոյ Հայեր կուզեն խաղաղ ապրել. բուն ժողովուրդը՝ նուիրուած իր գործին և զբաղմունքին՝ երբէք համամիտ չէ այն բոլոր գործերուն, որ տեղի ունեցան երբեմն մասնաւորներու կողմէն. և բուն ժողովուրդը ոչ միայն համամիտ չէ ատոնց, այլ նոյն իսկ լուր ալ չունի եղածներէ։ Մեզ համար շատ շատ ուրախալի պարագայ մըն ալ սա է՝ որ Թուրքիոյ Սուլթանը անձնապէս այս համոզումը ունի և քանիցս յայտարարած է Հայոց Պատրիարքին՝ թէ ամեն ազգի մէջ չար մարդիկ կգտնուին, թէ ինքը վստահ է Հա-

յոց հաւատարմութեան վրայ, և այլն. այնպիսի խօսքեր ու ենթադրութիւններ, որ ցանկալի կլլար յաճախ լսել թագաւորի մը բերնէն։ Հայոց Պատրիարքն ալ ամէն առթին եկեղեցոյ բեմէն պաշտօնապէս արձագանք եղած է կայսերական յայտարարութիւններուն։

Եթէ Ուրբաթ օրուան դէպքը աւելի աղետալի ելք մը ունենար, աւելի քան ինչ որ ունեցաւ, եթէ այս կամ այն հայատեաց պաշտօնեաներու խօսքերը կշիռ մը ունենային, կարելի չէր որ Թուրքիոյ հայեր և մասնաւորապէս մայրաքաղաքացիներ չկրէին աղետալի հետևանքը նոյն դէպքին։ Բայց ուրախալի է՝ որ Կայսրը քանիցս իր կայս. բարևները հաղորդել տալով Հայոց Պատրիարքին՝ Իր վստահութիւնը յայտնած է Հայոց մասին և Ս. Պատրիարքի կողմէն մատուցած ուղերձները արժանացած են կայսերական գոհունակութեան։ Երանի՜ թէ կայսերական այս բարի տրամադրութիւնները խանգարող ոև է դէպքեր տեղի չունենային՝և հայ անունը երբէք չյիշուէր այնպիսի արարքներու մէջ, որոնք ոչ պատուաբեր են, ոչ ալ օգտակար Հայ Ազգին համար։ Վասն զի ոչ հայերու կողմէ կշահագործուի հայոց այդ դժբաղդ վիճակը և ամէն հաւանականութիւն կայ ոև է կասկած իրագործելու և Հայոց վերագրելու ոև է դէպք, նոյն իսկ մատացածին բաներ, որոնց արձագանք կըլլայ եւրոպական մամուլը։ Ասոնց կարգէն է ահա Իզմիրի (Զմիւռնիա) դէպքը, ուր աստին անդին գտնուած են հրազէն և պայթուցիկ նիւթեր և ասոր հետևանքով կալանաւորուած են բազմաթիւ հայեր։ Իրողութիւնը ստոյգ է, բայց երևոյթը սըխալ. վասնզի Իզմիրի պէս քաղաք մը, ուր մարդիկ դրամէ և կնոջմէ զատ բանի մը կարևորութիւն չեն տար, ելլել հայոց վերագրել այնպիսի արարքներ, որ ոևէ նպատակ կամ նշանակութիւն չունին ազգային շահերու համար, տարօրինակ իրողութիւն մըն է։ Առ այժմ յայտնուածը սա է՝ որ ատոնք ա-նարշիստ-ներու գործեր են, որոնց մէջ կրնայ գտնուիլ ամէն ազգէ անհատներ։

Վերջերս զրոյցներ ալ տարածուեցան Փոքր Ասիոյ և Սիրիոյ ինչ ինչ քաղաքներուն, մանաւանդ Կեսարիոյ մասին, ուր իբր թէ օդը հանուած ըլլան երեք մզկիթ, և այլն. բայց ասոնք զրոյցներ էին իսկապէս և հաւանաբար յատկապէս շինուած՝ հայերը նորէն թշուառացնելու՝ առիթ տալով կատաղի կոտորածներու։ Այս բոլոր երևոյթները պէտք է նշանակութիւն ունենան անոնց համար, որ իրենց բան գործ ըրած են ազգէն հեռու ապրիլ, ազատ տեղեր, անազգայ անոր ներքին ցաւերուն

և պէտքերուն անտեղեակ, ապրել այդ տեղեր և խաղալ բուն անմեղ ժողովրդի կեանքին, պատուին, վարկին և դրամին հետ։

Չենք գիտեր՝ թէ ինչ պիտի ըլլայ այս վիճակին վերջը։ Գիտեմք միայն՝ թէ երբ չշահագործուիր բարի ժողովրդեան խաղաղութիւնը Թուրքիոյ մէջ՝ ան կրնայ աւելի լաւ զգալ ինքզինքը, կեդրոնացնելով իր բոլոր ոյժերը իր կրթութեան ու դաստիարակութեան, իր հարստութեան, իր եկեղեցական բարեկարգութեան գործերուն մէջ։

Գ

«Աչքերնիս լոյս»։—1903 Յունիս 12 էն մինչև 1905 Օգոստոս 1, գրեթէ երկու տարուան տագնապներէ ետքը, Ազգիս Վեհ. Հայրապետը կրցաւ քաղել իր ջանքերուն արդիւնքը Ռուսահայոց եկեղեցական և դպրոցական կալուածներու խնդրին բարւոք կարգադրութեան համար հրատարակած Ուքազով։ Ամեն. Հայոց Ս. Կաթողիկոսին հեռագիրը, ուղղուած Թուրքիոյ Հայոց Ս. Պատրիարքին, կատարելապէս մխիթարական էր և մեծ յոյսեր կներշնչէր. որովհետև ոչ միայն Բլէվէի և Կալիցինի «մեծ» անձնաւորութեանց Հայոց մասին ըրած անիրաւութիւնները կջնջէին, այլ նաև հայոց իրաւունքները կճանչցուէին 1874-ի օրէնքին համեմատ։ Այս մեծ բարեբախտութիւն մըն է Հայ Եկեղեցոյ համար ընդհանրապէս և մասնաւորապէս Ռուսահայոց համար, որոնք մէկէ աւելի աւանդներ ունին իրենց քով, որ ընդհանուր Ազգին կպատկանին և ետքը իրենք իրենց վերահաստատուած իրաւունքներուն շնորհիւ յառաջդիմութեան և զարգացման նոր դարագլուխ մը կբանան ազգային պատմութեան մէջ։ Այս յաջողութիւնները ձեռք բերելու համար անխոնջ աշխատութիւններ նուիրուեցան վեհափառ և ալեփառ Հայրիկէն սկսեալ ամէն եկեղեցական, որ գիտէր խնդիրը և կրնար բան մը ընել՝ ըրաւ։ Թուրքիոյ Հայոց Պատրիարքին գործունէութիւնը մասնաւորապէս արժէքաւոր է երկու տարուան ընթացքին մէջ։ Մենք երախտագիտութեամբ կյիշատակենք այս պարագան և մեր խորունկ յարգանքը կարտայայտենք բոլոր անաչառ և անկեղծ աշխատողներուն, ըլլան եկեղեցական, ըլլան աշխարհական։

Պէտք է ըսել, որ մենք անձնապէս շատ յոռետես էինք և չէինք ակնկալեր՝ որ այսպիսի յաջող ելք մը պիտի ունենային եղած դիմումները։ Այս յոռետեսութիւնը սակայն՝ հարևանցի բան մը չէր։ Համալաւական շարժումին արդիւնքն էր ան. այն շարժումին, որ Վրաց եկեղեցին ձուլեց իր մէջ, այն շարժումին, որուն առջև Կովկասի այլացեղ և այլալեզու հա-

ժայնքները ցիր ու ցան եղան, այն շարժումին, որ հրէաները սարսեց Ռուսիոյ մէջ, այն շարժումին, որ ֆիններները զրկեց իրենց ազգային մեծ իրաւունքներէն, այն շարժումին, որուն առջև Ներսէս Ե.-էն ետքը հայերն ալ սկսան անհանգիստ ըլլալ և այլ և այլ սեղմումներով վերջապէս իրենք զիրենք գտան 1903 յունիս 12-ի Ուքազին առջև։ Մեր յոռետեսութիւնը սաստկացաւ մանաւանդ, երբ տեսանք թէ Ամէն. Հայոց Կաթողիկոսը նախահոգ միջոցներ ձեռք կառնէր Լուսաւորչի Աթոռին ապագային համար և այս նպատակաւ ներկայացուցիչ մըն ալ կղրկէր Կ. Պոլիս խորհրդակցութեան համար։ Կան մարդիկ, որ հակառակ տիրող յոռետեսութեան, հայոց դիմումներուն այս յաջող և փառաւոր ելքը կվերագրեն Ռուս և Ճաբոնական պատերազմի ելքին, որ իր աննպաստ բնութեամբ կուգայ վերիվայր փոխել և բարեփոխել ինչ որ աննպաստ է ռուս կայսրութեան յառաջադիմութեան և զօրացման և հետևաբար այս բոլորին սկիզբը, կարամտեն, շնորհակալ պէտք է ըլլալ Ն. Կ. Վեհ. դեղնափառն Միքատոյի, որ առիթ ընծայեց իր թշնամւոյն, որպէս զի իր տկարութեան պատճառները վերցնէ և իր ամբողջութիւնը կազմող այլազան ազգային տարրները զօրացնէ հաւասքական և համայնական ներքին զօրութիւն մը կազմելու համար։

Ինչ ալ ըլլայ սակայն, պատերազմի ելքն ու ազդեցութիւնը Ռուսաստանի ներքին կեանքի կազմակերպութեան վրայ Հայեր պարտ են շնորհակալ և երախտագէտ ըլլալ իրապէս մեծ այն անձնաւորութեանց, յանձին Միրսքիի, Վիտտէի, Վորոնցովի նման հայրենասէրներու և մարդասէրներու, որոնք շատ աւելի լաւ ըմբռնած էին իրենց հայրենիքին զօրացման և բարգաւաճման պայմանները, քան անոնք, որ պատճառ եղան շա՜տ մը դժբախտութիւններու և անպատիւ ու արատաւոր գործողութիւններու։

Տեսնենք՝ թէ Ռուս կայսրութեան ձեռք առած սահմանադրական ուղղութիւնը իր իսկ ներքին կանոնաւորութեան և զարգացման ծառայելէ ետքը ինչչափ օգտակար պիտի ըլլայ իր արտաքին քաղաքականութեան տեսակէտով ալ։

Բայց մենք հիմայ ամենէն աւելի հետաքրքիր ենք 1905 Օգոստոս 1-ի Ուքազի գործադրութիւնը տեսնելու։ Վասն զի կզգանք՝ թէ ի՞նչ ոգևորութիւն կայ հիմայ է մեր ռուսահայ եղբարց քով, ի՞նչ նոր ծրագիրներ ու առաջադրութիւններ հայ տարրը լուսաւորելու և զօրացնելու համար։ Հայ մամուլը հարկաւ իր օգտակար դերը կատարելութեան պիտի հասցնէ սկսելով Ս. Էջմիածնէն.—նոր նոր գրքեր լոյս պիտի տեսնեն,

թերևս նոր թերթեր և հանդէսներ ալ՝ աւելի լուրջ, աւելի շահեկան նիւթերով. ծխական և թեմական դպրոցներ իրենց իրաւունքներուն սահմանին մէջ պիտի տան հայու զաւակներուն այն կրթութիւնը, որ անհրաժեշտ է մեր անհատական և ազգային տեսակէտներով։

Կարելի պիտի ըլլա՞յ արդեօք այս ոգևորեալ վիճակին մէջ ողջունել նաև Թիֆլիզի Հրատարակչական Ընկերութեան վերահաստութիւնն ալ, որ ամէնէն մեծ ծառայութիւն մատուցանող հաստատութիւն մը եղած էր։ Օ՜, մեր բարի նախանձը շարժելու չափ հմայիչ ապագայ մը կենկատուի մտքիս առջև Ռուսահայոց համար, որոնք պիտի վայելեն խորհելու, խօսելու, գրելու և մանաւանդ հրատարակելու ազատութիւնն ու զոհունակութիւնը։

Երանի՜ թէ ռուսահայք նախաձեռնութիւնը ունենային իրենց առջև բացուած այս նոր ասպարէզին մէջ խորհելու և գրելու համար հայ ազգի ամբողջութեան վրայ, արմատախիլ ընելու նպատակով անոր մէջ նետուած որոմներն ու բոյսերը։

Դ.

Երբ այս տողերը կվերջացնեմ՝ նոր դէպք մը կուգայ իրը յաւելուած թղթակցութեանս. Նորէն հայու մը սպանումը հայու մը ձեռքով։—Օգոստոս 13, Շաբաթ՝ առտուն, ժամը 2-ին, Վսեմ. Աբիկ էֆ. Ունճեան գնդակահար կիյնայ Կ. Պոլիս, Ղալաթիա, Խավեար Խանի ետև փողոցի մէջ. գնդակահար ընողն է 30—32 տարեկան հայ մը, որ Ամերիկայէն եկած է եղեր։ Դեռ վերջնական բան մը չենք գիտեր հարցաքննութեան ելքին վրայ, բայց ինչ ալ ըլլայ այն՝ քստմնելի է։ Ինչ կնշանակէ մարդ զարնել, սպանել։ Ունճեան իր բոլոր թերութիւններով դէմք մըն էր, որ կպակսի Թուրքիոյ Հայոց մէջէն. ամիրայական տիպերու մէկ մնացորդն էր ան, որ թէև շրջապատուած այնպիսիներէ, որոնք շատ շըփացուցած էին զինքը, բայց իր հարստութեամբ օգտակար եղած անձնաւորութիւն մըն էր։ Անոր յուզմնալից բանտարկութիւնը ինը տարի յառաջ իր ազգասիրութեան համար էր, որ գէշ հասկցուած էր. թերևս իր հարստութիւնը շահագործելու համար թակարդի մէջ ձգեցին զինքը, բայց նա հաստատուն մնաց իր հաւատարմութեան մէջ և իր ատեն մատուցած ծառայութիւնները շեշտեց Օսմ. Կայսրութեան հանդէպ, որու զինուորական պէտքերու ամէնէն նշանաւոր հայթայթիչը եղած է և հարիւր հազար ոսկւոյ մեծ քանակութեամբ, կըսեն, պահանջներ ալ ունի Կառավարութենէն։

Ինքը խիստ բնաւորութեան տէր հին գլուխ մը, որ սա-

կայն սիրող եկեղեցւոյ և բարեգործական աշխատութիւններու, մեծ նուիրատուութիւններ ըրած է։ Կ. Պոլիս, Իւսկիւտար Ս. Կարապետ Եկեղեցին ինքը շինած է 5—6000 օսմ. ոսկի ծախսելով. Դպրեվանքի Խնամակալութեան մէջ այդ հաստատութեան դրամական հոգը ինքը ստանձնած էր և կարծեմ 7—8000 օսմ. ոսկի ալ ատոր նուիրած է, թող ուրիշները, որոնց հաշիւը չէ որ պիտի ներկայացնեմ։ Վասն զի վստահ եմ որ լրագիրներ մանրամասնօրէն պիտի զբաղուին ատոնցմով. ես միայն սկզբունքին վրայ կամիմ ծանրանալ։ Իր դրամական գործածութիւններուն մէջ Ունճեան սովելոց խնամակալութեան հաշիւը տալէ յետոյ, մնացորդին հաշիւը տուած չէ. այս պարտականութիւնը գուցէ պզտիկութիւն կհամարէր իրեն կամ անվստահելի երևնալու նշան մը. այս է պատճառը՝ որ ազգը մոտէն լուր չունի Ունճեանի ձեռքով եղած այդ վերջին մատակարարութեան մասին, բայց հաշիւ բռնած լինելը գիտենք և հարկաւ այս բոլորը երևան պիտի գան գործնականապէս հաստատելու Ունճեանի մատակարարական ուղղութիւնը։ Շա հաւանական է նաև որ կտակ ալ ունենայ հանգուցեալը։ Բժիշկները, որ դիազնութիւն ըրին իր կուրծքին գամուած գնդակները հանելու համար, շատ առողջ գտած են իր սիրտն ու թոքը և յայտարարեր են՝ որ կրնար դեռ շատ ապրիլ, երբ արդէն ապրած էր 72 տարիներ։

Ի՞նչ շահ այսպիսի բռնի մահերէ։ Ունճեան իբր անհատ և ամուրի մարդ կրնար թերութիւններ ունենալ. բայց իբր ազգային անհատ արժէք մը ունէր, և իբր քաղաքացի մեծ յարգ կվայելէր կառավարչական պաշտօնատուներու և պաշտօնեաներու քով։ Պալայի աստիճան ունէր որ զօրաբաժնի զօրավարէն բարձր է. և առաջին աստիճանի Մէճիտիէ շքանշան։ Նոյն իսկ Սուլթանին համարումը շահած էր, այնպէս որ բանտարկութենէն շատ ետքը դարձեալ արժանացաւ կայսերական շնորհաց իր մատուցած ծառայութիւններուն համար։ Ունճեանի մահը ցաւ պատճառած է կայսեր ինչ որ հաղորդուած է պաշտօնապէս Ս. Պատրիարք Հօր և իւր եղբօր Մաթուս էֆէնտիի։

Եւ ամէն մարդ՝ որ կճանչնար Ունճեանը, հակակիր թէ համակիր, հաւասարապէս ցաւ զգացին այս զոհին հանդէպ։ Գարակէօզեանի սպանումով ազգը 40,000 օսմ. ոսկի կորսնցուց, Ժամհարեանի մահով Թուրքիոյ մէջ իր նպաստած որբանոցները փակուեցան. Թողունք Ռուսիոյ մէջ իր ըրած բարիքները. Պալեօզեանով՝ Իզմիրի նահապետը ոչնչացաւ իր բարեգործութիւններով, և Ունճեանի այս դժբախտ վախճանը ո գիտէ քանի-

ներ դժբախտ ըրաւ և Ազգը զրկեց թերևս մեծագոյն կտակներու բարիքներէ — թէև լսած ենք, ինչպէս ըսինք, որ կտակ ունեցած ըլլայ։

Ունճեան այս վերջին տարիներու մէջ իբր թէ քաշուած էր Պատրիարքարանի գործերէն ժողովականի հանգամանքով։ Բայց ոտքով ձեռքով մէջն էր հեռուէն, ստէպ օգտակար, երբեմն ալ աւելորդ կերպով։ Իսկ ուղղակի մէջն էր Սանասարեան Վարժարանի և Դպրեվանքի Խնամակալութիւններուն։ Դպրեվանքի համար այլ ևս չէր առատաձեռներ առաջուան պէս։ Դպրեվանքի մատակարարութիւնը փոխանակ բարձր պահելու, ինչպէս կընէր իր առաջին տարիներու մէջ՝ առատացնել դպրեվանքի հասոյթը, կը բաւականանար միմիայն անհրաժեշտը լրացնելով վարել ատոր մատակարարութիւնը։ Այս դրութիւնը բաւականին նեղը ձգեց Դպրեվանքի մատակարարութեան ճիւղը, սկսաւ ազդել բարոյականի ալ վրայ, և Դուրեան Սրբազան՝ Արիկ էֆ.-ի հետ գէշ չըլլալու համար այն աստիճան համակերպեցաւ, որ այս անտանելի կացութեան դարման մը գտնելու համար հրաժարեցաւ Դպրեվանքի Փոխ-Վանահայրութենէն և Վերատեսչութենէն։

Ունճեան այս վիճակին մէջ կը թողու Դպրեվանքը, որուն հետ ամենէն աւելի կապուած և յիշուած է իր անունը։ Բայց հաւանական է, որ իր կտակը նոյն իսկ Դպրեվանքի համար եղած ըլլայ։ Մեր այս միակ կրօն. ուսումնական հաստատութիւնը կը վայելէ իւր եղբօր ալ խնամքը, և կը յուսանք ինչպէս և կփափագինք, որ աւելի գործնական, հետևաբար՝ աւելի օգտակար ապագայն։

* * *

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՈՒԱՅԻՑ

Մեծարգոյ Հայր Խմբագիր

Անցեալ 1904 թ. «Լուսայի» № 5-ում իւր ժամանակին լոյս տեսաւ և «Սարգիս Արքեպիսկոպոս Ջալալեանի նամակը Խալիպեանին» երջանկայիշատակ Ներսէս V կաթողիկոսի մահուան առթիւ։ Նամակիս հրատարակիչ պ. Ե. Շահազիզը դորան կցում է մի ընդարձակ ծանօթութիւն, ուր ի միջի այլոց, խօսելով Ներսէսի և Մատթէոս արքեպիսկոպոսի յարաբերութիւնների մասին, ասում է թէ «այդ բոլորի հետևանքը լինում է (իբր թէ) մի տեսակ սառնութիւն տէրութեան և կաթողիկոսի յարաբերութիւնների մէջ» և թէ այդ պատճառով

նոր Կայսեր (Ալէքսանդր II-ի) թագադրութեան հանդիսին հրաւիրուում է ներկայ լինելու Մատթէոս սրբազանը, իսկ կաթողիկոսին, պատրուակ բռնելով նորա ծերութիւնը, առաջարկուում միայն ներկայացուցիչ ուղարկել իւր կողմից»։

Նոր-Նախիջևանի պատմութեան անխոնջ հեղինակի վերջին խօսքերը թէև ճշմարիտ են միանգամայն, սակայն կարօտ են մի այլ լուսաբանութեան։ Նախ և առաջ կնկատենք, որ այս դէպքում տէրութիւնը մեղք չունի բնաւ. նորա և Ներսէս V-ի յարաբերութիւնները բարեկամական էին և խիստ կորրեկտ. և թագադրութեան չհրաւիրուելու պատճառը Լազարեանք եղան նորա վաղեմի բարեկամները։ Պարզենք այդ առեղծուածը։ Լազարեան ճեմարանի մատենադարանում պահուում են հարիւր տասնևհինգ ահագին մատեաններ (ֆոլիանտ), որոնք բովանդակում են իւրեանց մէջ Լազարեանց պերճ տոհմի անհուն գրագրութիւնները զանազան պետական, պաշտօնական և մասնաւոր անձանց, որպէս քաղաքների ու հասարակութիւնների հետ, թէ Ռուսաստանից, և թէ օտար և հեռաւոր երկիրներից։ Այս նամակների մէջ իւրեանց քանակութեամբ աչքի են ընկնում Ներսէս արքեպիսկոպոսի, յետոյ կաթողիկոսի գրութիւնները, որոնք կազմում են ամբողջ, համարեա, հատորներ, գրուած Թիֆլիսից, Նոր-Նախիջևանից, Էջմիածնից, Քիշնևից Յովակիմ աղա Լազարեանին, նորա երկու որդւոց Յովհաննէս և Խաչատուր Լազարեաններին մանաւանդ այս վերջինիս և սորա նշանածին։ Յիշեալ բոլոր մատեանները միով բանիւ կոչւում են Դիւան Լազարեան տոհմի (Архивъ фамилій Лазаревыхъ)։ Ճեմարանիս արդի պատուաւոր հոգաբարձու իշխան Ս. Աբամելիք-Լազարեանի յանձնարարութեամբ նորա տոհմի դիւանի բոլոր հայերէն գրութիւնները երեք տարուայ ընթացքում ինձ յաջողեցաւ առանձին նկարագրել իշխանի համար, որ մտադիր է ապագայում լոյս ածել դիւանի յիշատակարանները, իւր յատուկ ընտրութեամբ, հայերէն բնագիրներին զուգընթացաբար հետևելու են նոցա ռուսերէն թարգմանութիւնները։ Այս դիւանից մտադիր էին քաղուածներ անել հանգուցեալ հնագէտ Ա. Երիցեանցը և Կ. Եզեանցը, որ անցեալ տարի ժամանելով Մոսկուա մի օր պրոֆ. Գր. Խալաթեանցի տանը, մեր ներկայութեամբ, սպառնում էր մեզ բարեկամական խօսակցութեան մէջ ասելով՝ որ եթէ մեր ճեմարանը չի հրատարակի դիւանիս Հայոց նոր պատմութեան վերաբերեալ նիւթերը, ինքն Եզեանցը ազգային լուսաւորութեան պ. մինիստրի միջնորդութեամբ բերել կտայ Ս. Պետերբուրգ մեր

գիւանի նշանաւոր մատեանները և անձամբ կգրաղի այդ խնդրով։ Մենք մեր կողմից պաշտպանում էինք այս գործում ճեմարանի ձեռներեցութիւնը յանձին իշխան Աբամելիքի։ Բայց վերահաս մահը արգելեց պ. Եղեանցին իւր դիտաւորութիւնը ի կատար ածելու։ Մի պարզ գաղափար տալու համար հայ հասարակութեան Ճեմարանի դիւանի մէջ ամփոփուած նիւթերի մասին, բաւական է միայն յիշել, որ Սիմէոն կաթողիկոսից յետոյ, բարձրագոյն շնորհած Հայոց ազգին հրովարտակները տրուած են Լազարեանց տոհմի անմիջական դործակցութեամբ։ Ռուսաց Հայոց նորագոյն պատմութիւնը սերտ կապուած է Լազարեանց ցեղի պատմութեան հետ։ Չկայ մի հայաբնակ քաղաք կամ հասարակութիւն, որ նեղը ընկած տեղում չդիմէր Լազարեանց աջակցութեանը, որոնք մի զարմանալի անձնուրացութեամբ բարեխօս էին լինում բարձր կառավարչական շրջաններում Հայոց համար. օրինակի համար Աստրախանից, Մոզդոկից, Ղզլարից, Թիֆլիզից, Նախիջևանից (հին և նոր) Էջմիածնից, Ղրիմի քաղաքներից, Քիշնևից, Գրիգորապօլից, Հընչեստ աւանից և այլ տեղերից։ Աստրախանցիք խնդրում են Լազարեաններին պաշտպանել տէրութեան առաջ իրանց մագիստրատի իրաւունքները, Մոզդոկեցիք՝ գաղթած լինելով Դերբենտի կողմերից, գանգատում են թէ տեղական իշխանութիւնը նրանց կաղակ դասակարգի մէջ է գրել, հարկադրելով իրանց հաշուով զինուել և ձի ունենալ, մինչդեռ իրանք միշտ խաղաղ երկրագործ են եղել, անսովոր ու անվարժ զէնքի գործածութեան, Ղզլարցիք գրում են թէ տեղական իշխանութիւնները նրանց նեղում են զանազան պահանջներով, ուստի նրանք ստիպուած են դեպուտատներ ուղարկել Ս. Պետերբուրգ և խնդրում են Լազարեաններին աջակցել նրանց մայրաքաղաքում, ցոյց տալով ուր և ում դիմել. Թիֆլիզից իշխան Օսափ Բեհբութեանը իւր կաղետ Բարսեղ որդուն (Вас. Ос. Бебутовъ) յանձնում է Յովակիմ աղայի հսկողութեանը, Նոր-Նախիջևանի, Ղրիմի և Գրիգորապօլի Հայերը բողոքում են Լազարեանցին՝ թէ Կազեննի պալատը (Казенная палата) նոցանից պահանջում է գիլդիական վկայականներ ձեռք բերել առևտուրի իրաւունք ստանալու համար, այն ինչ Հայերը, իրանց բարձրագոյն շնորհած հրովարտակների վրայ յենուելով հրաժարւում են կատարել այդ պահանջները. իսկ Գրիգորապօլում ոստիկանապետը միանդամայն փակել է տալիս Հայերի կրպակները և առևտուրը միաժամանակ իսպառ դադարում է և Հայոց մագիստրատի անդամները պաշարում են Լազարեան-

ներին իրանց գանգատներով։ Ցիշեալ ոստիկանապետը, օգուտ քաղելով մերայնոց անել դրութիւնից, աւելի ևս կեղեքում է Գրիգորապոլցիներին. բայց երկու ամսից յետոյ յանկարծ գըլխակոր արտաքսւում է պաշտօնից, առանց աւելի բարձր պաշտօն ստանալու, ինչպէս այժմ ընդունուած է բիւրոկրատական շրջաններում։ Գիլդիյական խնդիրներում Լազարեանք աշխատում են համոզել մեր Հայերին, որ նոքա փոքր ինչ չափաւորեն իւրեանց պահանջները՝ առարկելով թէ, իւրաքանչիւր նպատակի պարտականութիւնն է որոշեալ պայմաններում համակերպուել տէրութեան և եթէ բոլոր քաղաքացիք խոյս տալով իրանց պարտականութիւններից, տուրքեր չվճարեն, այն ժամանակ պետութեան գանձարանը բոլորովին դատարկ կմնայ։ Բայց այնուամենայնիւ Լազարեանք կարողանում են իւրեանց ազդեցութեան շնորհիւ Ս. Պետերբուրգում մեղմացնել գիլդիյական խիստ պահանջները։ Վրացիք Մոզդոկից, ու Թիֆլիսից լսելով Լազարեանների մշտական աջակցութիւնը և հովանաւորութիւնը Հայերին, իւրեանց կողմից նոյնպէս դիմում են նրանց ու խնդրում, որ իրանց հովանաւորութիւնը տարածեն նրանց վրայ ևս. խնդիրքը յարգւում է Լազարեանների կողմից։ Անցեալ դարու սկզբներում Ռուսաց Հայոց առաջնորդներն Յովհաննէս արքեպիսկոպոսը, Եփրեմ արքեպիսկոպոսը յետոյ կաթողիկոս միշտ վայելում են Լազարեան տոհմի խորհուրդները ու աջակցութիւնը, էլ չենք ասում իշխանազն Յովսէփ արքեպ. Արդութեանի մասին, որ սերտ բարեկամ էր կոմս Յովհաննէս Լազարեանի։ Սոցա խորհրդով տեղի ունեցաւ Ղրիմի հայոց գաղթականութիւնը և Նախիջևանի հիմնարկութիւնը։ Առաջին երկու սրբազանների միջնորդութեամբ Լազարեանները ճանաչեցին Թիֆլիզում հաստատուած Վրաստանի Հայոց նոր առաջնորդ հանճարեղ Ներսէս արքեպիսկոպոսին և նորա հետ սկսեցին նամակագրութիւն, որ ժամանակով ահագին ծաւալ ստացաւ։ Ներսէսը իւր բոլոր նամակները գրում է յատուկ իւր ձեռքով և գրաբար, վասնզի աշխարհաբարը տակաւին երկունքի մէջն էր գտնւում և նորա քաղաքացիութեան իրաւունքների մասին խօսք անգամ չէր կարող լինել այն ժամանակ։ Լազարեան աղաներն էլ պատասխանում էին նոյն գրաբարով։ Ի դէպ, Յովակիմ աղա Լազարեանի նամակները կարդալիս, իմ ձեռքն ընկաւ նորա ոտանաւոր խորհուրդները՝ գրած իւր խաչիկ (Христафоръ Екимович) որդուն։ Յովակիմ աղայի երկու որդիք Յովհաննէս և Խաչատուրը ծառայելով արտաքին գործոց կոլլեգիայում սերտ յարաբերութիւններ էին պահպանում

դրանիկ մարդկանց բարձր բիւրոկրատիայի հետ և միևնոյն ժամանակ անընդհատ թղթակցութիւններ էին վարում զանազան սահմանակից քաղաքների մերազնէից հետ, որոնք հաղորդում էին նրանց պէսպէս քաղաքական լուրեր՝ վերաբերեալ Ռուսաց պետութեան, մանաւանդ Պարսից և Տաճկաց պատերազմներից առաջ և պատերազմական գործողութիւնների միջոցին։ Ներսէսը այդ թղթակիցների թւում առաջիններից մէկն էր շնորհիւ իւր բարձր դիրքին։ Նորան յաջողել էր գրաւել Կովկասի գլխաւոր հրամանատարների կատարեալ յարգանքն ու սէրը սկսեալ գեներալ Ռտիշչեվից, Երմոլովից, Պասկեվիչից մինչև կոմս Վորոնցովն և իշխան Բարեատինսկին։ 1827 թ. Պարսից պատերազմից առաջ Երմոլովը նկատելով կովկասցի Հայերի ճարպիկութիւնը և շնորհը հասարակական կեանքի ամենայն ասպարէզներում և երկիւղ կրելով, թէ մի գուցէ երկրի բոլոր վաճառականութիւնը իրենց ձեռքը ձգեն ի վնաս միւս տեղացիների, սկսում է հնարել զանազան ծրագիրներ Հայերի գործունէութիւնը կասեցնելու դիտաւորութեամբ։ Աչալուրջ Ներսէսը գործերի այս դրութեան մասին հաղորդում է Լազարեաններին, որոնք նորան պատասխանում են, թէ կառավարչական բարձր շրջաններում շատ էլ գոհ չեն Երմոլովից, որին փոխարինելու է շուտով Պասկեվիչը և նամակը գեներալ Բենկենդորֆի ձեռքով ուղարկում են Ներսէսին, որին ի դէպ յանձնարարում են այս գեներալին ընդունել սիրով և յարգանքով։ Նամակի վերջում նոքա յարում են՝ «այսօր բոլոր մինիստրները մեզ մօտ ճաշի էին»։

Վերջապէս Պասկեվիչը նոր զօրքով հասնում է Թիֆլիս և ծանօթանում է Ներսեսի հետ և միշտ խորհրդակցում է հետը Կովկասեան գործերի մասին։ Նոր հրամանատարի գալըստեան լուրը առնելով՝ Երմոլովը հիւանդ է ձևանում և չէ ընդունում Պասկեվիչին։ Ներսէսը գնում է, նորան էլ հրաժարւում է ընդունելուց, գալիս է, վերջապէս կոմս Դիբիչը և տեսնելով Երմոլովի դուռը փակ, բռնի ներս է մտնում և խիստ յանդիմանում Երմոլովին, որ, շուտով, դորանից յետոյ թողնելով իւր պաշտօնը վերադառնում է Մոսկուա։ Ներսէսը իւր նամակներում մանրամասնօրէն նկարագրում է պատերազմական գործողութիւնները արդի Երևանի նահանգում, Երևանի, Սարդարապատի, Էջմիածնի պաշարումը. առաջին երկուսը Ռուսներից, վերջինը պարսիկներից։ Ներսէսի գրութիւնները Լազարեաններին մասամբ լրացնում են, մասամբ էլ լուսաբանում պաշտօնական հաղորդութիւնները այդ պատերազմի մասին,

ուր ինքն ուղեկցում էր Ռուսաց զօրքին Պասկեվիչի խնդիրքով։ Պատերազմից յետոյ, նախանձոտ Պասկեվիչը չկարողանալով տանել Ներսէսի հեղինակութիւնը Կովկասում, ամէն կերպ աշխատում է հեռացնել նորան այն տեղից և թելադրում է կառավարութեան նշանակել նորան Բեսարաբիոյ Հայոց առաջնորդ քանի որ Գրիգոր արքեպիսկոպոս Զաքարեանի *) մահից յետոյ յիշեալ թեմը թափուր էր մնացել։ Կաթողիկոսին Ս. Պետերբուրգից առաջարկում են հանգուցեալ Գրիգոր սրբազանի տեղը նշանակել մի այլ բարձրաստիճան եկեղեցական և հասկացնում են, թէ Կայսեր ցանկալի կլինէր այդ պաշտօնում տեսնել Ներսէսի նման մի փորձուած ու հմուտ արևելեան գործերին անձնաւորութիւն, որից Ռուսիան նորանոր ծառայութիւններ է սպասում Ռուս-Տաճկական 1828—29 պատերազմի միջոցին։ Ներսէս, որ իւր յարաբերութիւնների մասին Պասկեվիչի հետ միշտ տեղեկագրում էր Լազարեաններին, թէ և սկզբում չէր համաձայնում գնալ Բեսարաբիա, բայց լսելով կոմս Բենկենդորֆի և Լազարեանների խորհուրդը, գնաց Քիշինև և այնտեղից խիստ բողոք գրեց Կայսեր Նիկոլայ Պաւլովիչին Պասկեվիչի վրայ։ Վերջինս այդ միջոցին այն է 1829 թ. Դանուբի ափերումն էր գտնուում Բալկանեան թերակղզում, իբրև գլխաւոր հրամանատար Ռուսաց բանակի, որ գործում էր Օսմանցոց դէմ։ Կայսրը Ներսէսի նամակը կոմս Դիբիչի միջնորդութեամբ ուղղեց Պասկեվիչին, որին Դիբիչի բերանով խորհուրդ էր տալիս զգուշութեամբ վարուել առհասարակ այն ամենայն նշանաւոր Հայերի հետ, որոնք որևիցէ ազդեցութիւն ունին իւրեանց հայրենակիցների վրայ։ Նոյն թուականին Խաչատուր Լազարեանն էլ, իբրև արտաքին գործոց կոլլեգիայի պաշտօնեայ, ուղարկուեցաւ Բեսարաբիա և Ռումինիա այնտեղի Հայոց շահերը պաշտպանելու և կարգաւորելու պատերազմի պատահարներից։ Ջերմ հայասէր Խաչատուր կամ Խաչիկ աղան որի կրտսեր եղբայր գնդապետ Ղազարոսը 40,000 Հայեր էր գաղթեցրել 1828 թ. Պարսկաստանից Ռուսաց սահմանները, հանգիստ չէր կարող մնալ Ս. Պետերբուրգում, քանի որ Հայերի վիճակը Բալկանեան թերակղզում անապահով էր պատերազմի երեսից։ Նա գնում է Քիշինև, Եասսա, Բուկարեշտ և ամենայն տեղ ուսումնասիրում է մերայնոց դրութիւնը և ձեռքից եկած օգնութիւնը հասցնում է նրանց իւր պաշտօնական դիրքի շնորհիւ։ Նոյն դիւանի թղթերում մենք գտնում ենք

*) Նորա ազգականներից մի քանիսը տակաւին կենդանի են և բնակւում են Քիշնև։

նամակներ Հին-Զուղայից, Բաղդադից, Երուսաղէմի պատրիարքից, Կ. Պոլսի ականաւոր հայերից, նոցա պատրիարքից, Վիեննայի Մխիթարեանց աբբահօրից, Վենետկից. Արևմտեան Եւրոպայի հայագէտ ուսումնականներն էլ չեն վրիպում Լազարեաններին սրատես աչքից և մեծ նպաստներ են ընդունում նոցանից. Նէյման, Պետերման, Լանգլուա, Էմ. Դիւլորիէ, Բոսսէ զանազան խրախոյս և պատուէրներ են ստանում այս հռչակաւոր տոհմի անդամներից։ Դիւլորիէն Խաչեն աղային իւր Ֆրանսերէն նամակներում մեծարում է mr. Comte պ.կոմս տիտղոսով և հաղորդում է թէ Դաբ. Այվազեանի աշխատակցութեամբ մեր հեղինակների երկերը թամգմանել է կամ տակաւին թարգմանում է ֆրանսերէն և ընդ սմին արտայայտում է իւր անկեղծ շնորհակալութիւնները տպագրութեան ծախսերի համար, որ Լազարեանները առատօրէն նուիրում էին նորան։ Դարձեալ նոյն դիւանում մենք գտնում ենք բազմաթիւ նիւթեր Լազարեանների առևտրական ընդարձակ գործերի մասին. օր. Պերմ քաղաքում երկաթի հանքերի և գործարանի մասին. Մոսկվայում նոքա ունէին ձեռակերտ կերպասների առաջին գործարանը. շատ են նաև ճեմարանի պատմութեան վերաբերեալ նիւթեր։ Նրանց Լապօտկօվա գիւղում իջևանել է Կատարինէ II կայսրուհին, դորա նկարագրութիւնը։ Յովհաննէս Լազարեանը իւր արևմտեան կալուածներում ընդունել է Աւստրիոյ Յովսէփ II կայսրին, որից ստացաւ կոմսութեան կոչումը, հրովարտակը այդ մասին պահւում է դիւանում։ Էջմիածնի զահակալները Պարսից խաներին գոհացնելու համար միշտ դիմում են Լազարեանների առատաձեռնութեանը։ Միով բանիւ այս սերճ տոհմը իրան միայն յատուկ վեհանձնութեամբ անդադար բարերարում են ամբողջ հայ ազգը, առանց մի ակնկալութեան վերջնիս կողմից։ Եթէ պետական բարձր շրջաններում միորևիցէ խնդիր է ծագում մի հայ հասարակութեան մասին, բարձրագոյն հրամայւում է հարցրել Լազարեանների կարծիքը այդ խնդրի մասին և ապա ընթացք տալ գործին կամ կարճել։ Այն հարևանցի տեսութիւնից յետոյ դիւանի գործերի մասին, կարծեմ պարզ է ընթերցողի համար այն ահագին դերը, որ կատարել են մեր նոր պատմութեան մէջ Լազարեանները, որոնք ամենայն իրաւամբ կոչւում էին մերայիններից աղաներ (магнаты)։ Ահա այդ պանծալի տոհմի անդամներից մէկը Խաչատուր Լազարեանը մի օր դիմում է Ներսէս արքեպիսկոպոսին և թոյլտուութիւն է խնդրում պսակել իւր Աննա դուստրը իւր հարազատ քրոջ որդու Յովհաննէս Դելանեանի (յետոյ ազգային լուսաւորութեան

նախարար կոմս Դելեանով) հետ։ Ներսէսը մի ընդարձակ խրատական նամակով աշխատում է համոզել Խաչիկ աղային, յետ կենալ այդ դիտաւորութիւնից. վասն զի դա նախ՝ արեան մերձաւորութեան տեսակէտից հակառակ է Հայաստանեաց եկեղեցու կանոններին, երկրորդ մի այդպիսի բացառութիւն կարող է տեղիք տալոչ ցանկալի գայթակղութեան։ Ա. Լազարեանը ակնջ չէ դնում դորան և հարկադրում է վերոյիշեալ Մատթէոս արքեպիսկոպոսին հրաման տալ պսակելու սիրահար զոյգը և այսպէս տեղի է ունենում սառնութիւն Ներսէս V և Լազարեանների մէջ, որոնք արգելառիթ են լինում կաթողիկոսի գալուն Մոսկվա Ալէքսանդր II թագադրութեան։ Կովկասի նախկին փոխարքայ կոմս Վորոնցովը ի մխիթարութիւն կաթողիկոսին գրում է, թէ թագադրութիւնից յետոյ գալու է Թիֆլիզ նոր փոխարքայ իշխան Բարեատինսկին, որ թագաւոր Կայսեր կողմից բերելու է նորան մի նոր կայսերական շնորհ։ Ինչպէս երևում է այս նամակից, Կայսրը իւր ափսոսանքն է արտայայտել, որ Ներսէս կաթողիկոսը իւր ծերութեան պատճառով չէ կարողացել ներկայ լինելու իւր թագադրութեան հանդիսին։ Եւ այդ շատ բնական է, քանի որ կայսրը իւր ժառանգ լինելու միջոցին ճանապարհորդելով Կովկասում և նոր նուաճուած երկիրներում, բարեհաճել էր այցելել Ս. Էջմիածինը, ուր փառաւոր ընդունելութիւն գտաւ արքեպիսկոպոս Ներսէսի և բոլոր միաբանութեան կողմից. այս պատճառով կայսրը միշտ յիշում էր Ներսիսին։

Խաչիկ աղայի և Ներսիսի մէջ տեղի ունեցած միջնադէպքը չպիտի սառցնէր հայ հասարակութիւնն յարգանքը դէպի Լազարեանց տոհմը, թէև Գէորգ IV կաթողիկոսն էլ 1867 թ. ընդհարում ունեցաւ նոյն Խաչիկ Լազարեանի հետ։ Վերջնիս թոռն իշխան Սիմէոն Աբամելիք-Լազարեանը իւր նախնեաց ահագին կալուածների հետ ժառանգել է նաև նրանց առաքինի վեհանձնութիւնը և բարեմասնութիւնները, որ հանդէս հանեց մեր վերջին եկեղեցական կալուածների և ուսումնարանների խնդրում, ոչ պակաս աջակցելով Վեհափառ կաթողիկոսի Ս. Պետերբուրգ ուղարկած նուիրակներին։ Իբրև պատուաւոր հոգաբարձու իւր տոհմի հիմնած ճեմարանի, նա իւրաքանչիւր տարի ձեռքից եկածը անում է, հետևելով իւր նախորդների օրինակին։ Այսպիսի անձնաւորութեան ներկայութիւնը մայրաքաղաքում շատ օգտաւէտ է ազգիս համար. այդ չպէտք է մոռանալ։ Sapienti sat.

Մ. ՇՈՎՐԵԱՆ

Օգոստոս 24 ին 1905 թ.
Մոսկուա

P. S. Հանգուցեալ Կարապետ Եղեանցը, որ, իւր նախկին պաշտօնով ներքին գործոց նախարարութեան մէջ պարտական էր Լազարեանց, իբրև նրանց ճեմարանի սան, իւր բոլոր կեանքի ընթացքում իրօք հետևող է հանդիսացել իւր բարերարներին, օգնութեան հասնելով թէ մանաւոր անձանց և թէ դանազան հայ հասարակութիւններին։ Եղեանցի հոգին յօժար էր, բայց մարմինը տկար. կամիմ ասել նա չունէր Լազարեանների նիւթական կարողութիւնը և բարձր դիրքը. այդ անհրաժեշտ առաւելութիւնները տուած են իշխան Աբամելիք-Լազարեանին։

Մ. Շ.

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

ԲԵՐԻՆԳԻ ՀՍԿԱՑԱԿԱՆ ԳԻՒՏԸ

Հիւանդ մարդկութիւնը նորից յուզուեց ամենավտանգաւոր աղէտներից մէկի յաղթութեան ցնցող լուրից, այն հիւանդութեան, որ ամեն տարի գերեզման է տանում հարիւր հազարաւոր մարդիկ։ Հռչակաւոր գիտնական Բերինգը, որի անունը կապուած է դիֆտերիտի շիճուկի հետ, նոր միջոց է գտել թոքախտի դէմ։ Բերինգը գնացել է Փարիզ բժշկական ժողովին մասնակցելու։ Ժողովից առաջ դիմել է Matin-ի խմբագրութեան և իր գիւտի մասին կարճ տեղեկութիւններ տուել։ Ահա այդ տեղեկութիւնների էութիւնը։

Արդէն մի քանի տարի է, ինչ Բերինգը Մարբուրգին կից իր սեպհական կալուածքում ունի 400 արտաչափ գետին։ Այդտեղ արածում են նրա ձիաների երամները, կովերի, եզների և հորթերի հօտերը, որոնց վրայ Բերինգը շատ տարիների ընթացքում տուբերկուլեօզի վարակման և ահռելի հիւանդութեան դէմ կռուի հետ կապուած մի շարք փորձեր էր կատարում։ Այդ փորձերից երևացել է, որ վարակումը լինում է մեծ մասամբ մանկութեան հասակում։ Վերևը յիշած փորձերը ոչինչ չեն ասում թոքախտի բժշկութեան մասին, այլ ցոյց են տալիս մանուկներին թոքախտով վարակուելուց պահպանելու անհրաժեշտութիւնը։

Այժմ գործը ըստ երևոյթին ուրիշ կերպարանք է ստանում։ Ահա Բերինգի բառերը, որ առաջ է բերում Matin-ը.

«Տուբերկուլոզի բժշկութեան իմ գտած նոր միջոցը, որ գտել եմ մի շարք փորձերով, կայտարարեմ մինչև օգոստոս ամիսը։ Այդ ոչ շիճուկ է և ոչ էլ ծաղկաժահր։ Այլ մի նախազգուշացնող և մեկնոյն ժամանակ բժշկող միջոց։ Առայժմ ես ստիպված եմ գաղտնի պահել նրա պատրաստելը, ինչպէս իր ժամանակին արեցի դիֆտերիտի շիճուկի վերաբերմամբ։ Ես ամենքին կպատմեմ իմ գիւտի մասին, ինչպէս արդէն ասել եմ Մեչնիկովին ու Ռուին և թոյլ կտամ բժիշկներին օգտուել նրանից։ Բայց մի փոքր ժամանակ գաղտնի կպահեմ, որովհետև արդարացի եմ համարում ժամանակաւորապէս օգտուել այդ գիւտից, հետևեալ փորձերը կատարելու համար։ Այո, կարծեմ որ յաջողուեց ինձ տուբերկուլեոզի դէմ միջոց գտնել։ Ես խնդրում եմ ժամանակ տալ ինձ մինչև օգոստոս»։

Մեր հայրենակից Մեչնիկովը ասում է, որ դա մի փոշի է, որ Բերինգը PX է անուանում։ Մի կարծէք, ասում է նա, որ Բերինգի զեկուցումը վաղաժամ է։ Այդ մարդը մի հանճար է։ Մտաբերեցէք նրա գիտական կեանքը։ Ցարգելի գիտնականը ամբողջովին նուիրուեց դիֆտերիտի շիճուկ գտնելու։ 10 տարի նրա ջանքերը ապարդիւն անցան, բայց նա աւելի և աւելի էր աշխատում, բազմապատկում էր հետազօտութիւնները. և երբ ամենքը կարծում էին թէ նա տարուած է, հասաւ իր նպատակին։ Պակաս ջանք չգործ դրեց Բերինգը իր մեծ կենդանիների ծաղկաժահր գիւտի վրայ։ Ես ոչինչ չգիտեմ Բերինգի գիւտի մասին նրա բաղադրութեան և գործածութեան մասին։ Բայց համբերութիւն և յոյս ունենանք»։

Այս դէպքից մի քանի օր յետոյ, սեպտեմբերի 24-ին շաբաթ օրը, Բերինգը կարդաց ժողովում իր զեկուցումը, որ բարձր ծափահարութեամբ ընդունուեց։ Ժողովի բոլոր անդամները, նախագահի առաջնորդութեամբ, շրջապատեցին շնորհալի գիտնականին և շնորհաւորում էին նրան։

Այն բժշկական միջոցը, որ տուբերկուլեոզի բժշկութեան ժամանակ Բերինգը ներգործական է գտնում, ստացւում է նրա տուբերկուլեոզի թոյնի առանձացումից։ Զանազան հակազդեցութիւնների միջոցով, Բերինգը հեռացնում է այդ թոյնից մանրէների երեք գոյացութիւնները, որոնցից մէկը յայտնի է իր անսովոր ուժեղ թունաւորութեամբ (այդ գոյացութեան մէկ դրամը աւելի թունալից է քան Կոխի մէկ լիտր տուբերկուլինը)։ Այդ գոյացութիւնից հեռացնելով տուբերկուլեոզի մանրէն, անկերպարան գոյացութիւնն է մնում, շատ հեշտութեամբ ծծւում է կենդանիների փորի աւշային ցանցերով։ Այդ

գոյացութիւնների ազդեցութեամբ (որ Բերինգը PC է կոչում), աւշային ցանցերը փոխւում են և նրա հետ կազմուածքի մէջ հիւանդութեան հեռանալու դրութիւն է առաջանում։ Բերինգի կարծիքով, մարդուս հիւանդ կազմուածքը կռւում է անոնելի կերպով հիւանդութեան հետ, ինքը մշակելով PC գոյացութիւնը։ Եթէ մենք բժշկական միջոցով պատրաստենք այդ գոյացութիւնը, դորանով կազմուածքը ազատած կլինենք երկար և վտանգաւոր աշխատանքից։

«Ցոյս ունեմ, ասում է Բերինգը, որ ես ուրիշներից աւելի երջանիկ եմ, և որ այն բժիշկները, որոնք Մարբուրգ վերադառնալուն պէս կյայտնեմ իմ գաղտնիքս, նոյն տեսակ կամ գուցէ աւելի լաւ ստանան քան ես։ Յիշեցնում եմ ձեզ, որ իմ այս զեկուցումը զարմանալի կերպով նման է իմ 1890 թ. դիֆտերիտի դէմ նոր գիւտի զեկուցման»։

Բերինգը խօսեց և նրա մասին, որ շնորհիւ PC-ի աջակցութեան, նրան յաջողուեց ձեռք բերել դիֆտերիտի շիճուկը այն միջոցով, որ բժշկականութեան մէջ քաղաքացիութեան իրաւունք է ստացել։ Նա վերջացրեց իր զեկուցումը ցանկալով, որ բաղդը PC-ի նման մի ընկեր ուղարկէր իրան։

ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

—

1. *Մարգար.* Հալածանքի ծնունդը. քերթուած (Բաբիի երգերից) Ալէքսանդրապոլ. 1905. էջ 64.

Պ. Մարգարը գրելու ձիրքի նշաններ է ցոյց տալիս. այս անգամ նա շատ յաջող նիւթ է ընտրել, բայց տարաբախտաբար չէ կարողացել լաւ մշակել իւր գաղափարը։ Եթէ հեղինակը իւր ընտրած նիւթը կարգին ուսումնասիրէր և սիմվոլական ցնորքներից հեռու մնար՝ շատ սիրուն և գաղափարական պատկեր կարող էր լինել «Հալածանքի ծնունդը»։ Առհասարակ նոր սկսող գրիչները չեն կարող յաջողութիւն ունենալ այդ ուղղութեամբ. սիմվոլիզմը միմիայն շնորհալի ու տաղանդաւոր վիպագիրների գրուածքների մէջ մի բանի նման է լինում, թէ չէ մեծ մասամբ անշնորհք և անհասկանալի բառերի կուտակումն է ներկայացնում։ Եթէ ժողովրդին ընթերցանութեան նիւթ էք տալիս և ուզում էք, որ նա օգտուի կարդացածից և զարգանայ, այնպէս գրեցէք, որ նա բան հասկանայ. հակառակ դէպքում մի երկու էջ կարդալուց յետոյ գիրքը դէն կշպռտուի. ընթերցողն ամեն անգամ ոչ տեղ որոնի պ. Մարգարին ու հարցնի՝ թէ ինչ է նշանակում «ուղիների տիտան հասակ», «(մեծ ուղիների տիտան հասակը ահա չափելով... ես քուն եմ մտնում» էջ 1). «բռնաբարուած ուղեղ» («բռնաբարուած խղճուկ ուղեղս մեղմիկ շոյում է». էջ 1.), «սրտի արգանդ» («Որ ծնունդ առար սրտիս արգանդում» էջ 6.), «աղիքների ականջներ» («Թող նոցա փորում գարշ աղիքների սուր ականջներին իւր գաղտնիքները յաւիտեան պատմէ». էջ 41), «թլպատած խիղճ», «հոգով ներքինի» (Եւ հզօր շահի՝ խիղճը թլպատած, հոգով ներքինի բիւր ծառաները». էջ 45) և այլ այսպիսի անմտութիւններ։ Խնայեցէք ընթերցողներին։ Պ. Մարգարի մուսաներն էլ տարօրինակ բաներ են «Քե՛զ՝ սիրոյ ծնող, սիրոյդ՝ վշտի մայր, վշտին՝ ինձ դայեակ—ահա ծօնում եմ ձեր ար-

զասիքը...։ Դո՛ւք էք իմ մուսան»—էջ 7. հանելուկ. ո՞վ կաւ քնչն է Մարգարի մուսան։

---

2. Ֆ. ՄԱՍՍՈՆ. Նապաստակ Խէշանի վրէժխնդրութիւնը կամ ինքդ քեզ օգնիր. զրոյց պատկերազարդ, ֆրանս. փոխադրեց Լեոն Մելիք-Եղամեանց. Թիֆլիզ 1905. էջ 57.

Ճիշտն ասեմ՝ վաղուց է այսպիսի հայաշունչ լեզուով գրուած մանկական գիրք չէր ընկել ձեռքս. թէև գրքի վրայ փոխադրութիւն է տպուած, բայց իսկապէս ինքնուրոյն աշխատութեան տպաւորութիւն է թողնում։ Գրքի իւրաքանչիւր էջից բուն հայ լեզուի բուրմունքն է ստացում. գեղեցիկ ոճեր, ժողովրդական բառեր, կոկ, պարզ դէպ իւրըմբռնելի նախադասութիւններ. այսպիսի յատկութիւնները գնահատելի են գրքերի և մանաւանդ մանկական ընթերցանութեան գրքերի համար։ Այս մանկական զրոյցի բարոյականն է ինքնօգնութեան գաղափարը, որ շատ յարմար ընթերցանութեան նիւթ է մանաւանդ մեր ժամանակներում. միշտ ուրիշների լուսով ապրողը վերջը բոլոր ունեցածն էլ կկորցնի։ Գրքի արտաքինն էլ համապատասխանում է ներքին արժանաւորութեանը. տպուած է մաքուր, խոշոր տառերով և ընտիր թղթի վրայ. յաջող են նաև պատկերները։

---

3. ՑՈՐ. ԵՍԱՑԵԱՆ. Միենոյն դաղաղում... պատկեր. Թիֆլիս 1905 թ. էջ 16.

Վերջին տասնամեակի ընթացքում հայ ժողովրդի կրած սոսկալի տառապանքները, հայի բնակավայրը արեան հեղեղներով ծածկող գազանային արարքները, մի այնպիսի դրութիւն ստեղծեցին, որի առաջ նսեմացան մեր պատմագիրների և ձեռագիրների յիշատակարաններում նկարագրուած արիւնալի ու հոգեմաշ դժբաղդութիւնները, հայութեան սև ճակատագրի միշտ և շարունակ կրկնուող պատահարները։ Ժողովրդական սարսափի ոգը տեսակը մնաց, որ չկրեց բազմաչարչար հայութիւնը. կոտորած, աւերում սով, հրդեհ, երկրաշարժ, երաշտ, մորեխ, խօլերա, բռնութիւն, բանտ, աքսոր... էլ ո՞ր մէկն ասեմ։ Եթէ այս դառնութեան ու լեռնացած վշտի շրջաններում մենք տաղանդաւոր գրողներ ունենայինք, կարող էին իրենց անունն անմահացնել՝ իրական կեանքի արիւնաներկ դրամաները շարահիւսելով. բարթուղիմեան պատմական գիշերները մեր ներկայի լոկ ուրուագծերը կարող են լինել...։ Տարաբախտաբար

հայութեան միջավայրը տաղանդներ չէ արտադրում. ունեցել ենք և ունինք շատ թէ քիչ շնորհալի գրողներ, որոնք իրենց կարողութեան չափ նկարագրել են սոսկալի իրականութեան միայն թոյլ անդրադարձումները։

Վերջին սարսափների մի փոքրիկ միջադէպք է նկարագրուած «միևնոյն դագաղում» պատկերի մէջ. մեր ժողովրդական գրողների շարքն անցնող Յ. Եսայեանն իւր սովորական շտապ գրչով պատկերացրել է Բագուի աղէտներից մի էպիզոդ, որի էութիւնը հետևեալն է. ծերունի գաղթական մշակը, որ իւր ժամանակին փախել է Տաճկահայաստանի կոտորածից, Բագուի հանգստարանում գերեզման է փորում՝ թուրքերի պիղծ ձեռքով մորթոտուած զոհերի համար. թաղուող դիակների մէջ ծերունին ճանաչում է իւր միակ երիտասարդ զաւակին և ինքն էլ անշնչացած ընկնելով թաղւում է, միևնոյն դագաղում, իւր իսկ փորած գերեզմանի մէջ։

Թէև նկարագրութիւնը պարզ և անպաճոյճ է, բայց տըպաւորութիւնը զօրեղ է, որովհետև գրուածքի բոլոր թերին լրացնում է ընթերցողի երևակայութիւնը։ Այսուհետև երևի այսպիսի պատկերներ դեռ շատ կկարդայ բաղդից հալածուած թշուառ հայ ժողովուրդը։

---

4. Совѣщаніе учителей начальныхъ училищъ.—Перепечатано изъ газеты «Кавказъ».

Բաւական ժամանակից ի վեր Կովկասի դպրոցական գործը բոլորովին շեղուելով բնական ընթացքից՝ փոխանակ մանկավարժական սկզբունքներով ղեկավարուելու, միմիայն քաղաքական տեսակէտով էր առաջնորդւում։ Այսպիսի թիւր դպրոցական սիստեմը հարկաւ լաւ արդիւնք ու հետևանքներ չէր կարող ունենալ. մի գեղեցիկ օր պէտք է երևան գար, որ այդ ճանապարհով՝ ձգտած նպատակի ճիշտ հակառակն է եղել արդիւնքը։ Այդպէս էլ եղաւ։ Կովկասի նոր նշանակուած նորին կայսերական մեծութեան տեղակալը տեսնելով տարրական դպրոցների այդ անմխիթար դրութիւնը և սխալ սիստեմի հետևանքները, անհրաժեշտ համարեց արմատական փոփոխութեան ենթարկել դպրոցական գործը և կրկին մանկավարժական հիմքերի վրայ դնել. նա հրամայեց, որ տարրական դպրոցներում ուսուցումը տեղի ունենայ սովորողների մայրենի լեզուով, իսկ ռուսաց լեզուն ուսուցանուի մայրենի լեզուի օժանդակութեամբ. ռուսերէն գրագիտութիւնը պէտք է սկսուի եր-

կրորդ տարուայ սկզբին։

Այս սկզբունքների համեմատ ծրագիր մշակելու համար Կովկասեան դպրոցական հոգաբարձուն առանձին յանձնաժողով է կազմում տարրական դպրոցների հայ, վրացի, թուրք ուսուցիչների մասնակցութեամբ. այս յանձնաժողովի խորհրդակցութեանց արդիւքն է ահա վերոյշեալ ռուսերէն բրոշիւրի բովանդակութիւնը։

Երևանեան նահանգի ժողովրդական դպրոցների վերատեսուչ պ. Ճիճինաձէի նախագահութեամբ գործող ուսուցչական այդ մասնաժողովը ծրագիր է մշակել՝ չորսամեայ դասընթացով դպրոցի համար. զարմանալի՜ ծրագիր. մասնաժողովի տարրական դպրոցի մասին ունեցած գաղափարը ոչնչով չէ զանազանուում մեր մոնթերի խալիֆաների «կամ թէ այժմեան թուրքական մեդրեսէների» «մոլլաների» գաղափարից։ Արդեօք Աֆրիկայից են հրաւիրուել մասնաժողովի յարգելի անդամները։ Անհասկանալի բան է, որ այժմեան հասկացողութիւնների ու մանկավարժական պահանջների գիտակցական ժամանակաշրջանում՝ չորսամեայ ժողովրդական դպրոցի ծրագիրը միմիայն երեք առարկայից է բաղկացած. կրօն, լեզու, թուաբանութիւն։ Պակաս է միայն «Խալիֆայի» ճիպոտը կամ «մեդրեսէի» ամբողջ մարմնով օրօրուելը...։

Չորս տարի յաճախող երեխաներն ուրեմն ոչ մի գաղափար չպէտք է ունենան ոչ իրենց ծննդավայրի ու հայրենիքի մասին, տարրական հասկացողութիւն անգամ չպէտք է ունենան բնութեան երևոյթների, կենդանական, բուսական աշխարհների մասին, չպէտք է գիտենան աշխարհիս մասերը և այլն։ Նրանք չպէտք է կարողանան գոնէ մի երկու ժողովրդական երգ երգել կանոնաւոր կերպով. գծագրութեան մասին գաղափար չպէտք է ունենալ և այլն։

Ահա մասնաժողովի մշակած (?!) ամբողջ ծրագիրը.

	I տարի	II տ.	III տ.	IV տ.
Կրօն . .	3	3	3	3
Մայրենի լեզու .	8	8	8	8
Ռուսաց լեզու .	7 (յուն.)	8	8	9
Թուաբանութիւն .	6	5	5	4
	24	24	24	24

Ի՞նչպէս պէտք է բացատրել այս տխուր երևոյթը. մի՞թէ մասնաժողովի անդամները—որոնց մէջ կան ուսուցչական սեմինարների ուսուցիչներ, դպրոցների տեսուչներ և այլն—այս-

քան սահմանատակ մոքի տէր մարդիկ են եղել՝ թէ դարձեալ մի գաղտնի «և» կայ այդտեղ։

---

5. Աղէքսանդրապօլից Ղանլիճա, ուղեորի յիշողութիւններից. գրեց Ն. Ֆ. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ։ Ալեքսանդրապօլ. 1905. էջ 62.

Մեր նորագոյն գրականութեան 70—80 ական թուականների շրջաններում բաւականին խոշոր տեղ էին բռնում ճանապարհորդական լուրջ նկարագրութիւնները, որտեղ դիւրամատչելի ձևով նկարագրում էին տեղագրական կամ ազգագրական նիւթերը և օգտակարն ու զուարճալին շատ անգամ միանալով՝ շարժում էին ընթերցողների հետաքրքրութիւնը։ Վերջին ժամանակներս ազգագրական ու տեղագրական նիւթերը մեծ մասամբ իբրև գիտական մշակման առարկայ նկատուելով՝ հրատարակւում են չոր ու ցամաք, համակարգուած կամ առանց համակարգութեան և այդպիսով սակաւաթիւ անձանց հետաքրքրութեանը բաւականութիւն տալիս։

«Աղէքսանդրապօլից Ղանլիճա» գրքոյկը ձեռքս առնելով՝ սպասում էի թէ կկարդամ մի ճանապարհորդական նկարագրութիւն—մանաւանդ որ գրքոյկի ճակատին էլ գրօշմուած է «ուղեւորի յիշողութիւններից». բայց որքան եղաւ հիասթափութիւնս, երբ գիրքը ծայրէծայր կարդալով՝ միայն գտայ մի մասլահաթ, որ տեղի է ունեցել ճանապարհին հեղինակ քահանայի և մի տիրացու Գալուստի մէջ։ Այսպիսի ամեն տեսակ դատողութիւններով խճողուած զրուցատրութեան համար ի զուր է հեղինակը ոտքով Ղանլիճա գնացել. նա կարող էր տիրացու Գալուստին իւր տուն հրաւիրել և հանգիստ նստած մասլահաթ անել...։ Այդ դէպքում գոնէ գրքոյկի վերնագիրը կհամապատասխանէր բովանդակութեանը։

Ճանապարհորդ քահանան հանդիպելով տիրացու Գալուստին՝ ոչ թէ միայն նրա որտեղացի լինելն ու անունն է հարցնում, այլև ասիական հետաքրքրութեամբ՝ թէ խուրջինի մէջ ինչ ունի, թէ արդեօք նաղդ փողով է գնել, թէ ապառիկ և այլն։ Այնուհետև սկսւում է մասլահաթը՝ ապառիկների, մուրհակի, վաճառականների ու գիւղացիների փոխադարձ անբարեխղճութեան, տգիտութեան, ուսումնարանի, լրագրի, գրքերի, բժշկի, երազի ճշտութեան, գանձ փորելու մասին և այլն, յետոյ ճանապարհին պատահում են հովիւ Հասօին և նրա հետ սկսում մասլահաթն ու լսում են նրա սրնգի հնչիւնները. վերջապէս հասնում են գիւղ և ապշած ընթերցողին հեղինակը կերա-

կրում է գրքոյկի վերջին տողերին կցած հետևեալ ծանօթութեամբ. «Ղանլիճանների նկարագրութիւնը իրանց ներկայ և անցեալ տեսակետներով (?), կարելի է գտնել 1904 թ. Արարատի մէջ։

Մի՞թէ արժէր այս երկու տող յայտարարութեան համար 62 էջ լցրած մասլահաթներով զբաղեցնել ընթերցողին։

ԲՐԻԶ

Ստացուած գրքեր

- Մ. Շովրեան. Գ. Խալաթեանցի «Հայոց Արշակունիք Մ. Խորենացու հայոց պատմ. մէջ». Ժատեն. Վենետիկ. 1904
- Միք. Մանուէլեան. Էսքիզներ. Ս. Պ. Բ. 1905. գ. 40 կ.
- Ե. Փրանգեան. Ատրպատական. պատկերազարդ. Թիֆլիս 1905. գ. 1 ռ. 50 կ.
- Փառնակէս. Կը կակղես կուտես. վոդ. մէկ ար. Երևան 1905 գ. 40 կ.
- Բժ. Վ. Արծրունի. Մանկիկ. նկարներով. Թիֆլիս 1905. գ. 40 կ.
- Մորիս Լըմերսիէ. Մարդ. թարգմ. Մ. Վ. Բագու. 1905. գ. 5 կ.
- Արսէն աւ. ք. Բագրատունի. Ձեռնարկ կրօնական գիտելիքների. գ. տ. Թիֆլիս 1905. գ. 40 կ.
- Դաբրիէլ Սունդուկեանց. Ամուսիններ. կատակ չորս արարուածով. երրորդ տպագրութիւն. ուղղած. Թիֆլիս 1905 (1 ռ).
- Մ. Շուտ. Սև հարսանիք. Ռուսճուք 1905 (10 կ.)
- » Դատ. կրիտիքական անալիզ. Ռուսճուք 1905 (10 կ).

Նշտար. Ժահրոտ վէրքեր. արտ. Տարազից. Թիֆլիս 1905 (15 կ).

- Մ. Սեմենկա. Առաջին վաստակ. զրոյց. փոխադրեց Լ. Մ.—Ադամեանց. Թիֆլիս 1905 (60 կ).
- Կօտ Մուլիկա. Փոքրիկ Ցոլակ ու խլըշիկ նապաստակը. փոխադրեց նոյն. Թիֆլիս 1905 (1 ռ).
- Վիկտորիէն Սարդու. Ոգեհարցութիւն. թատր. 3 ար. թարգմ. նոյն. Թիֆլիս 1905 (50 կ).
- Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք. հրատարակեաց Յարութիւն Քրիստափորեան ի յիշատակ իւր կողակից Իսկուհի Քրիստափորեանի դստեր Յարութիւնի Ունճեան, որ անցեալ տարի վախճ. Տփխիսում։ Թիֆլիս 1905։
- Խաչատուր աբեղայի Զուղայեցւոյ Պատմութիւն Պարսից (ժբ. դար). աշխ. Բաբգէն վ. Աղաւելեանց. Վաղարշապատ 1905 (1 ռ. 25 կ.)։
- Գ. Զուբար. Մահտեսի Սարգիս. գիրք Ա. Նոր-Նախիջևան 1905

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Բարձրագոյն մանիֆէստ կոնստիտուցիայի մասին։— Համառուսական գործադուլ։ Հոկտեմբերի 17-ի մանիֆէստը։ Ժողովրդի քաղաքացիական ազատութիւն։ Ազատութեան տօնախմբութիւնը Ռուսիայում։ Ազատութեան թշնամի տարրերը եւ. նոցա դիմադրութիւնը ազատական շարժման։ Խուլիգանային բարբարոսութիւններ հայրենասիրական դիմակի տակ։ Ռուս մամուլի միահամուռ բողոքը կատարուած գազանութիւնների դէմ։ Կառավարութեան մեծ սխալը։ Ի՞նչպէս պիտի հաստատուի սահմանադրութիւնը Ռուսաստանում։— Ազատութեան տօնը Թիֆլիսում։ Հոկտ. 21 ի պարադը։ Մանիֆէստացիայի նախօրը։ Մամուլի ազատութիւն։ Հոկտ 22-ի ջարդը։ Սպանուածներ եւ վիրաւորներ։ Խմբագրութեանց գնդակումը։ Սպանուածների թաղումը։ Ռումբերի առաստպելը։ Հայ ժողովրդի շնորհաւորութիւնը Հոկ. 17-ի մանիֆէստի առիթով։Կուսակցութիւնների երեւան գալը։ Զինուորական դրութեան վերացում։ Դպրոցական գործադուլ։ Եւրոպական տէրութեանց սպառնալիքը։—Հայոց ջարդը. — Ներքին լուրեր Նամակ խմբագրութեան։

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՄԱՆԻՖԷՍՏ

Աստուծոյ ողորմութեամբ Մենք Նիկոլայ II Կայսր և ինքնակալ համայն Ռուսիայի, Թագաւոր Լեհաստանի, Մեծ իշխան Ֆինլանդիայի և այլն և այլն, յայտարարում ենք Մեր բոլոր հաւատարիմ հպատակներին, որ Մեր կայսրութեան մայրաքաղաքներում և ուրիշ շատ տեղերում եղած խռովութիւններն ու խառնակութիւնները մեծ վշտով լցնում են Մեր սիրտը։ Ռուսիայի Կայսեր բարօրութիւնը անխզելի կապուած է ժողովրդական բարօրութեան հետ և ժողովրդի վիշտը Նորա վիշտն է։

Այժմ ծագած խառնակութիւններից կարող է առաջ գալ ժողովրդական խորը անկարգութիւն և Մեր Պետութեան ամբողջութեան ու միութեան համար սպառնական դրութիւն։

Թագաւորական կոչման մեծ ուխտը հրամայում է Մեզ՝ Մեր իշխանութեան և բանականութեան բոլոր ոյժերով ձգտել շուտով վերջ դնելու Պետութեան համար այդքան վտանգաւոր խառնակութիւններին։

Հրամայելով պատշաճաւոր իշխանութիւններին միջոցներ ձեռք առնել, որպէս զի վերացուին անկարգութիւնների, խռովութիւնների և բռնութիւնների ուղղակի արտայայտութիւնները ի պաշտպանութիւն նոցա, որոնք ձգտում են իրանց պարտքը խաղաղ կերպով կատարել,

Մենք անհրաժեշտ համարեցինք միացնել բարձր կտրա-

վարութեան գործունէութիւնը, որպէս զի լաջող իրագործուին մեր նախագծած ընդհանուր միջոցները Պետական կեանքի խաղաղացման համար։

Պարտք ենք դնում կառավարութեան վերայ ի կատար ածել Մեր անխախտ կամքը.

1. Շնորհել ազգաբնակութեան՝ քաղաքացիական ազատութեան անխորտակելի հիմունքներ՝ անձի իրական անձեռնմխելիութեան, խղճի, խօսքի, ժողովուների և դաշնակցութիւնների ազատութեան սկզբունքներով։

2. Զգաստարեցնելով Պետական Դումայի համար արդէն նշանակած ընտրութիւնները, մինչև դումայի գումարումը մնացած ժամանակամիջոցի կարճութեան համապատասխանող հնարաւորութեան չափով դումային մասնակցելու կոչել ազգաբնակութեան այն դասակարգերը, որոնք այժմ բոլորովին զրկուած են ընտրական իրաւունքներից։ Դորա հետ միասին, ընդհանուր ընտրական սկզբունքի յետագայ զարգացումը թողնել նոր հիմնուելիք օրէնսդրական ձևին։

3. Հաստատել իբրև անխախտ կանոն, որ ոչ մի օրէնք այժ չստանայ առանց Պետական Դումայի հաւանութեան և որպէս զի ժողովրդից ընտրուածները ապահովուած՝ հնարաւորութիւն ունենան իրապէս մասնակցել այն վերահսկողութեան, որ լինելու է Մեր կողմից նշանակած իշխանութիւնների գործողութեանց օրինաւորութեան վերաբերմամբ։

Հրաւիրում ենք Ռուսիայի բոլոր հաւատարիմ զաւակներին յիշել իրանց պարտքը դէպի հայրենիքը, օգնել դադարեցնելու այս չլսուած խռովութիւնները և Մեզ հետ միասին բոլոր այժերը լարել՝ հանգստութիւնը և խաղաղութիւնը վերականգնեցնելու հայրենի երկրում։

Տուած Պետերհոֆում, հոկտ. 17-ին 1905 թ. իսկ Մեր թագաւորութեան 11-րդ տարին։

Իսկականի վերայ Նորին Կայսերական Մեծութեան սեպհական ձեռքով ստորագրուած է ՆԻԿՈԼԱՅ

Հոկտեմբեր ամսի սկիզբը ներկայացնում էր ռուս ժողովրդի յեղափոխական գործունէութեան ամենահրատապ ժամանակը, իսկ նոյն ամսի 14-ին տեղի ունեցաւ համառուսական տնտեսական և քաղաքական լիուլի գործադուլը, երբ փակուեցան բոլոր խանութներն ու գործարանները, դպրոցներն ու բոլոր հաստատութիւնները, դադարեցին տրամվայներն ու կառքերը, հեռագիրն ու հեռախօսը, երկաթուղիներն ունոցա վար-

չութիւնները և ամբողջ քաղաքները ամայութեան և խաւարի դատապարտուեցան։ Այդ դրութեան եթէ աւելացնենք գրեթէ Ռուսաստանի մեծ մասի ուժեղացրած պահպանութեան և զինուորական դրութեան մէջ լինելը, բոլոր փողոցների լցուիլը զինուորներով, հեծելազօրով և կոզակներով, արհաւիրքի պատկերը կատարեալ կլինի։

Երկրի այդ անկերպարան վիճակում, հոկտեմբերի 17-ին յանկարծ կայծակի արագութեամբ տարածուեց այն մանիֆեստի, ազատութեան այն մեծ ակտի հրատարակութեան հեռագրալուրը, որ վերը առաջ բերինք ամբողջութեամբ։

Ռուսաստանի ներքին կեանքի այս ամսուայ ամենախոշոր երևոյթը հոկտեմբերի 17-ի այդ մանիֆէստն է Պետական դումայի վերակազմութեան վերաբերեալ, որով խոստացուում են սահմանադրական ընդարձակ իրաւունքներ ժողովրդին։

Կատարուեցաւ պատմական մի խոշոր իրողութիւն։ Կայսերական մանիֆէստով ժողովրդին տրուեցան քաղաքացիական ազատութեան անսասան հիմունքներ անհատի իսկական անձեռնմխելութեան, խղճի, խօսքի, մամուլի, ժողովների և դաշնակցութիւնների ազատութեան սկզբունքների վերայ, այժմէն իսկ թոյլատրելով հրաւիրել ազգաբնակութեան բոլոր դասակարգերին մասնակցել դումայում և որպէս անպրդուելի կանոն սահմանուեց, որ այսուհետև ոչ մի օրէնք իրաւական ոյժ չունենայ առանց Պետական Դումայի հաւանութեան արժանանալու և ժողովրդական ներկայացուցիչները իրաւունք ունենան իրական մասնակցութիւն ունենալ հսկելու օրէնքը գործադրող իշխանութեան վերայ։

Այսպէս ուրեմն, ինչի համար որ տքնեցան ռուս լաւագոյն մտածող մի քանի սերունդներ, այն ազատութիւնը, որի համար վաստակեցին ու ընկան հազար հազարաւոր նրիտասարդ ուժերը, արք և կանայք, ժողովրդի այն անկապտելի իրաւունքները, որով տոգորուած են ներկայումս Ռուսիայի բոլոր ինտէլիգէնցիան, ժողովրդի բոլոր աշխատող դասակարգերը, այդ ազատութիւնը արդէն բարձրագոյն կամքով տրուած են ժողովրդին, իսկ այդ ազատութեան տեսականութիւնն ու բարգաւաճումը յանձնուած է Պետական Դումային։

Միապետական, ոստիկանական Ռուսիան տեղի տուեց իրաւական, ազատ Ռուսիային—կոնստիտուցիական, սահմանադրական տէրութեան։

Ճշմարիտ է, կոնստիտուցիա բառը չէ յիշուած մանիֆէստի մէջ, բայց երբ մի անգամ կայ անձի իրական անձեռնմխելիութիւն, խօսքի, մամուլի, համախմբումների և դաշնակցութիւն-

ների ազատութիւն, օրէնսդրական ժողովրդական իրաւունք, ընտրական ընդարձակ արտօնութիւններ, և երբ ժողովրդի ընտրեալներն իրաւունք ունին հսկել օրէնքների գործադրութեան վերայ, այլ ևս ապահոված է սահմանադրութիւնը և այսուհետև ժողովրդի ընտրեալների խորհրդին է մնում մշակել իսկական կօնստիտուցիան։

Ոգևորուեցաւ բիւրօկրատիայի, չինովնիկութեան ձեռքին հեծող ժողովուրդը։ Քաղաքներում և աւաններում խուռն ամբոխը խռնուած փողոցներում, կարմիր դրօշակները ձեռքներին, հանդիստ ու անվրդով, առանց ոստիկանութեան ներկայութեան, օրինակելի կարգապահութեամբ տօնեց Կայսեր շնորհած ազատութիւնը, ժողովրդի խաղաղ տարրերը բարձրագոյնս թոյլատրուած հանդէսներ կազմեցին և ուրախութեան աղաղակներով տօնեցին գերութիւնից ազատուող Ռուսիայի նոր կեանքի արշալոյսը։

Բայց որքան ոգևորուած էր Ռուսիայի համայն ժողովուրդը մանիֆէստի հրատարակութեան առաջին օրերում, նոյնչափ նա հիասթափուեցաւ բիւրօկրատիայի և բռնապետութեան շնորհիւ ապրող տարրերի հակա-ազատական արհաւիրքներից։ Յայտնի է, որ հարիւր հազարաւոր մարդիկ ապրում էին բռնութեան, ճնշման, մատնութեան կաշառակերութեան արդիւնքներով և գանձարանի կողոպուտով. ուստի և հասկանալի է որ խաւար տարրերի այս ահագին ոհմակը իւր մահուան ճգնաժամին սոսկալի կռիւ պիտի մղէր նոյն իսկ թագաւոր Կայսեր անդառնալի կամքի դէմ։

Այդ խաւար տարրերը համախմբեցին բոսեակներին և խուլիգաններին և իրանց նեցուկ ունենալով ջախջախուող և քայքայուող հին կառավարութեան գործիք՝ ոստիկանական կազմը, կոլակ կոչուած տարրը և շատ տեղ նոյն իսկ զօրքը, սկսեցին հրապարակից քշել ազատութեան սիրահար անմեղ ժողովրդին, մանաւանդ ինտէլիգէնցիային և ուսանողներին և կատաղի կռիւ մղելով նոցա հետ՝ սկսան աջ ու ձախ ջարդել, կոտորել, այրել և ամբողջ շրջակայքը ամայացնել ինչպէս գերեզմանատուն, ինչպէս առասպելական Պղնձէ քաղաքը և այս ամենը յանուն... հայրենասիրութեան, դէթ այսպէս են կոչում ամեն տեղ կապուտ և կողոպուտ առաջացնող խմբերը։

Գլուխը կորցրած կառավարութիւնն էլ չկարողացաւ լաւ հասկանալ իրերի դրութիւնը և անկեղծօրէն պաշտպանել թագաւոր Կայսեր հրամանը։

«Ռուսական ազատութիւնը, ասում է Русск. Вѣд. լուրջ և խիստ ազդեցիկ թերթը, տանջալից ցաւերով է ծնուում. դեռ

երեք օր է անցել այն օրից, ինչ որ յայտարարուած է ազատութեան աւետիքը, և ինչ մութը խաւար տականք ասես չմիացաւ գոհութեան առաջին լուսաւոր զգացմունքներին։ Ռուսիայի ամեն ծայրերից, թէ մեծ քաղաքներից և թէ շրջականներից սարսափելի լուրեր սկսան տեղալ իբրև հետևանք այն բանին, որ ժողովուրդն իւր ուրախութիւնն սկսեց արտայայտել փողոցներում։ Ամենուրեք սպանութիւններ, վիրաւորութիւններ, կոտորած, հրդեհներ...»։

Այո, այդ անկարագրելի ցնծութեան յաջորդող օրերը լսւում էր խուժադուժների վայրենի աղաղակը, ժողովրդի տրդէտ և հին կարգերի նախապաշարումներով կուրացած ամբոխի բարբարոսական գազանութիւնների ձայնը...

Թէ որքան անկեղծօրէն ընդունեց հոկտեմբերի 17-ի հրովարտակը ռուս ազատամիտ կուսակցութիւնը և ինչքան շուտ նա հիասթափուեցաւ կառավարութեան բռնած երկդիմի դիրքից, այդ երևում է ռուս մամուլի միահամուռ բողոքից, որ ուղղուած է դէպի կառավարութեան հին ռէժիմը, որը համարւում է այդ խժդժութիւնների իսկական պատճառը։

Ի զուր չէ ասում Աւետարանը թէ «գինի նոր ի տիկս նորս արկանելի է». նոր կարգերը միմիայն նոր մարդկանցով կարելի է գործադրել. և կառավարութեան մեծ սխալն այն է, որ նա կամեցաւ սահմանադրութիւն մտցնել երկրի մէջ չինովնիկների ձեռքով, փոխանակ նախօրօք փոխելու ամբողջ բիւրոկրատիայի կազմակերպութիւնը, որ միշտ հակառակ է եղել ամեն տեսակ բարեփոխութեան, ամեն տեսակ ազատագրական շարժողութեան։

Ահա թէ որքան անհաստատ է և երերուն Ռուսաստանի արդի քաղաքական վիճակը ու հազիւ թէ կարելի է գուշակել թէ արդեօք կառավարութեան ձեռքով կհաստատուի Ռուսաստանում սահմանադրութիւնը, թէ տեղի կունենայ սոցիալական ռէվոլիւցիա, որի նպատակն է բռնի ոյժով ստանալ բիւրոկրատիայի և բուրժուազիայի ձեռքից պետական իշխանութիւնը և յանձնել ժողովրդի ներկայացուցիչներին։

— —

Ազատութեան տօնը Թիֆլիսում։ Հոկտ. 17-ի մանիֆէստը յեղաշրջեց քաղաքի դրութիւնը. ամբողջ քաղաքը համարեա փողոց դուրս եկաւ և զբօսնում ու աւետում էին միմեանց՝ զգալու, խօսելու ու գրելու ազատութիւնը։ Հարիւրաւոր կարմիր դրօշակներ ձեռներին յեղափոխական բոլոր աղգերի կուսակցութիւնները միտինգներ կազմելով՝ վերջիվեր-

ջոյ կանգ էին առնում Գոլովինսկի պրոսպէկտի վերայ և այս ու այն ճառախօսներ ճառում ազատութեան մասին։ Երեք օր տևում է այս հանդէսը և ամսի 20-ին բոլոր կուսակցութիւնները պատգամաւորութիւն են ուղարկում Փոխարքային, առաջարկելով՝ վերացնել պատերազմական դրութիւնը և էկզէկուցիան, ազատել քաղաքական յանցաւորներին և պատժել հայ թրքական կոտորածների հեղինակներին։ Ազատութեան օրերը կարգը կատարեալ էր ամենուրեք։

Հոկտ. 21-ի պարադը։ Ճիշտ հետևեալ օրը Կայսերական տօնն էր։ Պալատի առաջ տեղի ունեցաւ պարադ. այնտեղ էին ամբողջ զօրքը, հեծելազօրը, կազակներն ու բոլոր թնդանօթները։ Դուրսն էր Թիֆլիսի ամբողջ զինուորական ոյժը։

Մանիֆէստացիայի նախօրը։ Նոյն օրը երեկոյեան 500 հոգուց բաղկացած «հայրենասէրներ» դրօշակներով և Կայսեր պատկերով եկան Պալատի առաջ շնորհաւորելու մանիֆէստը։ Ճանապարհին ոմանց ջարդեցին, ոմանց վիրաւորեցին, բայց բարեբաղդաբար անցաւ առանց մեծ դժբաղդութեանց։

Մամուլի ազատութիւնը Կովկասում։ Հոկտ. 22-ի 12 ժամին Թիֆլիսի լրագիրների և ամսագիրների բոլոր խմբագիրները հրաւիրուած էին գրաքննական կոմիտէ, ուր նախագահ պ. Հակկէլը Կովկասի Տ. Փոխարքայի կողմից յայտնեց սմենին, որ ըստ զօրութեան Հոկտ. 17-ի մանիֆէստի ինքը կարելի է համարում Կովկասեան մամուլը ազատել նախնական ցէնզուրայից, որով մամուլն այսուհետև պիտի ղեկավարուի պատժական օրէնքներով։ Այս դէպքը պատահեց Գոլովինսկի պրոսպէկտի վերայ կատարուած ջարդից կէս ժամ առաջ։

Գոլովինսկի պրոսպէկտի ջարդը։ Ազատութեան տօնախմբութիւնը չափազանց դժբաղդ վախճան ունեցաւ։ Հոկտ. 22-ին, երբ հասարակութիւնը մեծ խմբերով զբօսնում էր Գոլովինսկի պրոսպէկտի վերայ, «հայրենասէրների» խումբը, մի քանի հազար հոգուց բաղկացած, այր և կին, որոնց մէջ բազմաթիւ իւնկերներ և կադետներ, դրագուն զօրքի ընկերակցութեամբ, ռուս ազգային դրօշակներով և Կայսեր պատկերը ձեռներին, ժամի 1-ի մօտերքը անցան Գոլովինսկի փողոցով դէպի պալատ։ Ճանապարհին՝ I գիմնազիայի մօտ, ինչպէս պարզւում է հետզհետէ, առանց մի զգալի պատճառի՝ սկսուեցաւ հրացանաձգութիւն «հայրենասէրների», խուլիգանների և զօրքի կողմից, և զարհուրած ժողովուրդը ահից ցրուեց և պատսպարուեց ով ուր կարող էր։ Գնդակների այդ տարափը, որոնց թիւը լրագիրները 38,000-ի են հասցնում, երկու ժամ տևեց երկու ընդհատումով։ Եւ արիւն էր որ թափւում էր հեղեղի պէս։

Սպանուածներ եւ վիրաւորներ։ Մեր սրտից արիւն է կաթում, երբ յիշում ենք թէ ինչ տեսարան էր ներկայացնում Ջարդի բեմը, Ջահել Ջահել, մատղաշ տունկեր, դպրոցական աշակերտներ և երիտասարդներ, գունատուած և յոշոտուած դիզուած էին միմեանց վերայ։ Քիչ չէր դոցա թիւը, 40 ի չափ ռուս, 30-ական վրացի և հայ և մի մի հոգի հրէայ և այլն։ Դոքա բոլորը տարուեցան հիւանդանոց. հիւանդանոց այցելող մի գիմնազիստ մեզ պատմեց, որ բոլոր դժբաղդ զոհերը կողոպտուած էին մինչև վերջին շապիկը և բաճկոնը։

Խմբագրատներ զնդակուած։ Կարծելով թէ Тифл. Листокъ и Возрожденіе լրագիրների խմբագրատներից ատրճանակ կամ բոմբեր էին արձակել, որ ապա հերքուեց լիուլի, զօրքը գնդակահարեց այդ խմբագրատների շինութիւնները, իսկ խմբագրատները կողոպտուեցան և թալանուեցան։

Սուզ. Հոկտ. 26-ին, ամսի 22-ի անմեղ զոհերի թաղման գիշերը Թիֆլիսը ընկղմուած էր խորը սգի մէջ. ամբողջ քաղաքը խաւարի մէջ էր, չէր վառուում ոչ մի լապտեր, ոչ մի տան ճեղքից լոյսի նշան չկար արդէն երեկոյին 6 ժամից յետոյ։ Այսպէս արտայայտեց Թիֆլիսը իւր անհուն զայրոյթը դէպի Բեղզեհեմի անմեղ մանուկների կոտորողները։

Ռումբերի առասպելը. Լրագիրներից ոմանք հաղորդեցին, որ հոկտ. 28-ին ռումբեր են գցել I գիմնազիայի, Тифл. Листокъ-ի խմբագրատնից և Թիֆլիսի ժողովարանից, այդ պատճառով էլ որպէս թէ հրամայուել է գնդակահարել այդ հաստատութիւնները։ Այն ինչ հաստատուած իրողութիւն է, որ երկու ռումբ հենց այդ միջոցին պայթեց Բարոնսկի և Տրոյեցկի փողոցների անկիւնում անցնող մի իմերէլի ձեռքին, որից մեռաւ թէ ինքը իմերէլը և թէ մի քանի անցնողներ։ Ուրեմն ռումբերի պատմութիւնը ճիշտ այնպիսի մի խայտառակ առասպել դուրս եկաւ, ինչպէս և Կ. Պոլսի ռումբերի՝ հայոց ձեռքով պատրաստուիլը։

Հայոց պատգամաւորութիւնը Տ. Փոխարքայի մօտ. Հոկտեմբերի 24-ին մի քանի բարեմիտ անձինքների նախաձեռնութեամբ Թիֆլիսի Հայոց առաջնորդարան ժողովուեցան հայ լրագիրների խմբագիրներ և հասարակութեան ուրիշ անդամներ թուով մօտ 80 հոգի և խորհրդակցութիւն ունեցան իրերի ներկայ կացութեան մասին։

Ժողովը որոշեց 30 հոգուց մի պատգամաւորութիւն ուղարկել Տ. Փոխարքայի մօտ հայ ժողովրդի կողմից շնորհակալութիւն յայտնելու հոկտ. 17-ի մանիֆէստի առիթով և խնդրելու որ հայ ժողովրդի հաւատարմութեան զգացմունքնե-

ը հաղորդուի Թագաւոր Կայսեր։— Նոյն օրը երեկոյեան 5 ժամին պատգամաւորութիւնը բաղկացած երկու եպիսկոպոսներից, երկու վարդապետներից, մի քանի հայ խմբագիրներից և հասարակութեան այլ ներկայացուցիչներից ներկայացաւ Փոխարքային և յայտնեց հայ ժողովրդի հաւատարմութեան զգացմունքները. միևնոյն ժամանակ խնդրելով խիստ միջոցներ գործադնել Բագուի հայկական կոտորածի առաջն առնելու։

Փոխարքան ընունելով նոցա՝ յայտնեց որ ինքը համոզուած է հայ ժողովրդի հաւատարմութեան մասին, խոստացաւ կարգադրութիւն անել Բագուի մասին, իսկ հայ ժողովրդի հաւատարմական զգացմունքները մատուցանել Թագաւոր Կայսեր։

Մի քանի օրից յետոյ փոխարքան ծանուցել է Թեմիս առաջնորդին Թագաւոր Կայսեր հեռագրով յայտնած շնորհակալութիւնը հայ ժողովրդին։

Կուսակցութիւնների երեւան գալը. Հոկտ. 17-ի մանիֆէստը հրապարակ հանեց այն բոլոր յեղափոխական կուսակցութիւնները, որոնք տիրող օրէնքի երկիւղից գործում էին գաղտնի կերպով և ներկայումս գրեթէ ամեն օր նոքա իւրաքանչիւրը միտինգներ են գումարում և առաջ մղում իրենց կուսակցութեան որոշումները։

Զինուորական դրութեան վերացնելը Թիֆլիսում. Կովկասի Փոխարքան հոկտ. 30ի հրամանով վերացրեց զինուորական դրութիւնը Թիֆլիսում և Թիֆլիսի գաւառում, վերացնելով նաև ժամանակաւոր գներալ գուբերնատորի պաշտօնը։ Սորա հետ միասին վերացուեցաւ զօրեղացրած պաշտպանութիւնը, որով քաղաքս աղատուում է ի միջի այլոց նոր տեսակ ոստիկան դոնապաններից, որոնց սարսափը պակաս յուզմունքի մէջ չէր պահում քաղաքս մի քանի տարի շարունակ։

Դպրոցական գործադուլ. Ընդհանուր գործադուլի հետ գործադուլ էին արել բոլոր դպրոցական կազմերը՝ ուսուցիչներ և աշակերտներ։ Այդ գործադուլը շարունակուեց մինչև Նոյեմբերի 10ը, երբ արդէն որպէս թէ պիտի բացուին բոլոր ուսման տաճարները։ Գիմնազիական միտինգներից աչքի է ընկնում III գիմնազիայի աշակերտների պահանջները, որոնց մէջ մտնում է և հայ-թուրքական կոտորածներին վերջ տալու առաջարկը։

Եւրոպական տէրութեանց սպառնալիքը։ Կառավարչական բարձր շրջաններում լուր է պտտում, որ Եւրոպական տէրութիւններ (Пет. raз. ասելով՝ Անգլիան, Գերմանիան, Աւստրիան, Իտալիան, Շվեցիան և Ֆրանսիան) հաւաքական ծանու-

ցագիր են ուղարկել Կառավարութեան, որ աչքի առաջ ունենալով, որ Ռուսիային սպառնում է անիշխանութիւն և կառավարութիւնն անզօր է կռուել նորա դէմ, նոյնպէս և որովհետև կառավարութիւնը ցանկութիւն չունի քաղաքացիների պահանջները բաւարարել, պետութիւնները ստիպուած կլինին ուղարկել Կրօնշտադ միացեալ նաւատորմիղ և զօրքով գրաւել սահմանային ամրութիւնները, որովհետև Ռուսիայում շարունակուող անկարգութիւններից վնասում են օտարազգիք, նոյնպէս և օտար տէրութեանց դրամագլուխներ, որոնք տեղաւորուած են ռուսական ձեռնարկութեանց մէջ։ (P. B.)

Հայ ազգի Ջարդը։ Հայ ազգի սիստեմատիքական ջարդի մասին աւազակ և վայրենի թուրքերի ձեռքով նոր ոչինչ չունենք աւելացնելու, քան ինչ որ Լումայի անցեալ համարում ասել ենք և նկարագրել։ Նոյն սպանութիւնները անմեղ մարդկանց, նոյն խմբական կոտորածը, նոյն կապուտ ու կողոպուտը անզէն հայ գիւղացիների ինչքի և սեպհականութեան թուրք հրոսակների և ծպտած կողակների կողմից, ոստիկանութեան նոյն ընթացքը, ինչպէս և առաջ, թուրքերին թողնել քաջազէն, իսկ թշուառ հայի ձեռքից վերջին ինքնապաշտպանութեան խղճուկ զէնքն էլ խլելը, նոյն գունաւորուած զեկուցումները այս և այն պաշտօնէի, որոնցով թուրքերը պաշտպանուում են իսկ հայերը խռովարար և անբարիշտ հռչակուում, ռուսական հեռագրական գործակալութեան նոյն դիտաւորեալ խեղաթիւրուած հեռագիրները Ռուսիայի թերթերում, որոնց ետևից բազմաթիւ հերքումներ այդ տենդենցիօզ տեղեկութեանց, անաչառ քննութեանց բացակայութիւն և արդարադատութեան լռութիւն, Կովկասեան բարձր իշխանութեան բուռն ցանկութիւն հայ թուրքական արդէն գագաթնակէտին հասած վայրենութեանց վախճան դնելու, սակայն այդ ցանկութեան կատարման արգելքներ ստորադրեալ իշխանաւորների կողմից...

Մենք քանիցս ասել ենք և դարձեալ նոյնն ենք կրկնում. բանի որ տասն ամսուայ դառն փորձը ցոյց տուեց, որ հայոց ջարդի առաջն առնել անկարելի է ոչ թափորներով և կոչերով, ոչ ժանաժողովներով և խորհրդածութիւններով, ոչ էլ սենատական քննութիւններով, անհրաժեշտ է թոյլ տալ իրան ժողովրդին, որ նա ինքը մտածէ իւր համար։ Մենք տեսանք, որ ուր հայը զօրեղ կերպով դիմադրութիւն ցոյց տուեց թիւրքերին և մի լաւ դաս տուաւ նոցա, այնտեղ նոքա յայտնի չափով զգաստացան և այլ ևս չյանդգնեցան գէթ ափաշկարայ մի վնաս հասցնել հայերին։ Սա ամենալաւ ապացոյցն է, որ եթէ

ինքնապաշտպանութեան ընդարձակ միջոցներ տրուին հայերին, Թուրքերի նախայարձակումները ինքնին կվերանան։ Եւ յիրաւի. գոյը, աւազակը եթէ տեսնի, որ կարող է անպատիժ կերպով սպանել, կողոպտել, առևանգել, այրել, եթէ մանաւանդ նա զուրկ է բանականութիւնից, էլ ինչո՞ւ չանէ իւր շահատակութիւնները, ինչո՞ւ չօգտուի ուրիշի գոյքից և կարողութիւնից։ Պատիժն է միայն, արդարադատութեան տուած անողոք պատիժն է միայն վայրագ մարդուն բանական մարդ դարձնում։

Տուէք ուրեմն հային ինքնապաշտպանութեան ընդարձակ միջոցներ, պատժեցէք, անխնայ կերպով պատժեցէք յանցաւորներին և դուք մի երկու օրում վերջ տուած կլինիք Թուրքական սրածութեան։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

▬ Կովկասեան իշխան փոխարքան թոյլատրեց «Լումայ» ամսագրի ծրագիրը լրացնել քաղաքական բաժնով։

▬ Պ. Հայկ Տէր Աստուածատրեանցին թոյլ է տրուած, «Մատենագէտ» անունով մի ամսագիր հրատարակել Թիֆլիսում։ Թերթը լոյս կտեսնի առաջիկայ տարուայ յունուար ամսից։ Ցանկանում ենք յաջողութիւն։

▬ Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի Յովհաննեան օրիորդական դպրոցի տեսուչ ընտրուել է գիտնական պ. Կարապետ Կոստանեանը։ Կարող ենք շնորհաւորել դպրոցի վարչութեան այդ օրինակելի և յաջող ընտրութեան համար։ Պ. Կոստանեանը երկար տարիներ վարել է Ներսիսեան դպրոցի և Էջմիածնի Ճեմարանի տեսչական պաշտօնները։

▬ Վերջապէս Պ. Բուրգից ստացուել է հայոց վանական և եկեղեցական կալուածները հայ հոգևոր իշխանութեան յանձնելու ծրագիրը հաստատուած և այս օրերս տեղի կունենայ յանձնումը։

▬ Խմբագրութեանս քարտուղար օր. Նուարդ Աղանեանցը առաջիկայ յունուարից բաց է անում գեղարուեստական արագատիպ տպարան, ուր տպուելու է և «Լումայ» ամսագիրը։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Մեծարգոյ խմբագիր

Աւելի քան երկու տարի է, որ մեր ապաբաղդ հայրենիքը անօրինակ թշուառութիւնների ասպարէզ է դառել։ Նուրբ դիւանագիտութիւն, վայրագ բարբարոսութիւն, խորամանկ և նախանձոտ դրացիութիւն, արեան ու արցունքի անձրևով ոռոգե-

ցին Հայն ու Հայաստանը, աւերակների աշխարհում նոր աւերակներ դիզելով։

Սիրտ չմնաց, որ չխորտակուէր, աչք չմնաց որ չարտասուէր մեր սիրելի ազգի վերայ տեղացող տառապանքներից։ Սակայն մարդկի կերածից յետոյ արտը նորից պէտք է մշակել որ խպառ չխոպանանայ։ Ամենայն հայ մարդու քաղցրագոյն պարտքն է չթողնել, որ անդաստանը խոպան մնայ, որ աւերակների թագաւորութիւնը տևական լինի։ Նոցա տակից յարութեան ձայներ պէտք է լսուին, հին հին փառքեր նոր ընձիւղ տան, որով աւերուած դրախտը վերաշինուի։

Այս նպատակին հասնելու համար նահատակ հայ ժողովրդի թշուառ մնացորդին խնամել պէտք է։

Հայ մարդ ենք մենք և խորը խոցուած մեր ազգի թշուառութեամբ, կամեցանք մերովսանն օգտակար լինել մեր ազգի ցաքուցրիւ մնացորդին, մեր հրկիզեալ հայրենիքին։ Ի՞նչ կարող էինք անել. առաքեալի խօսքն յիշեցինք. «Ոսկի և արծաթ չունիմ որ տամ, ինչ որ ունիմ՝ այն պիտի տամ». և մենք որոշեցինք առ այժմ մի մեծահատոր, շքեղ, պատկերազարդ ժողովածու հրատարակել «Արէլի արիւն» վերնագրով և նորա ամբողջ եկամուտը յատկացնել մեր ազգի վերջին աղէտներից թշուառացածներին։

Այդ առթիւ արդէն դիմում ենք արել բազմաթիւ գերմանացի, ֆրանսիացի, անգլիացի, ռուս և հայ ականաւոր պրոֆէսորներին և հրապարակախօսներին, ինչպէս և մեր ազգի ընտրելագոյն գրագէտներին, մասնակցելու իրանց գրաւոր վաստակներով ներկայ հրատարակութեան և բաղդաւոր ենք, որ արդէն նոցանից շատերի սիրայօժար պատրաստակամութիւն ենք ընդունել։

Գանձած եկամուտը մնօրինելու է մեր կազմած մնայուն բիւրօն, տեղնուտեղը ուսումնասիրելով ժողովրդի դրութիւնը և բաժանելով նպաստը կարօտեալներին։

Մուտքի և ծախքի վաւերական հաշիւները տարէցտարի հրատարակուելու են առանձին տետրերով։

Այժէն իսկ բացուած է բաժանորդագրութիւն. իւրաքանչիւր հատորի բաժնեգինն է 10 ռուբլի կանխիկ վճարելի։

Այս նպատակով ընդունուում են նաև կամաւոր նուէրներ։

Մեր հրատարակչական մնայուն բիւրօի հասցէն է. Թիֆլիս, տպարան օր. Նուարդ Աղանեանցի Պոլիցեյսկայա, 7, խմբագրութիւն «Արէլի արիւնի»։

Ի դիմաց բիւրօի { Բենիկ վարդապետ
Գիւտ ա. ք. Աղանեան

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

—

«Լուսայի» խմբագրութեան

№ 206 «Մշակում» Հ. Առաքելեանը զետեղել է մի նամակ, որով յարձակուելով ոչ-մշակական գրողների բանակի դէմ և դրանց բոլորին անուանելով «մութ ոյժեր», ուզում է հաւատացնել «Մշակի» դժբաղդ ընթերցողներին, թէ միայն Առաքելեաններն են լուսաւոր ոյժեր, առանց որոնց Հայոց ազգը խարխափելու էր անթափանց խաւարի և տգիտութեան ճիրաններում։ Երանի՜ Հայ ժողովրդին, որ Առաքելեանի նման հազուագիւտ հայհոյաբաններ է ծնել. բ՞ինչ կըլինէր մեր ազգի վիճակը, եթէ Առաքելեանները չը հաճէին ամենակինտոյաբար ողողել մաքուրի էշերը այդպիսի գոհարներով...

Ողորմելի ինքնագովութեան և զզուելի կինտոյաբանութեան այդ տողերն անշուշտ ուշադրութեան չէի արժանացնիլ եթէ չնկատէի, որ «ծերունազարդ գործիչը» իմ պատճառով համարձակուում է հայհոյել «Լուսայի» և «Տարազի» պատուարժան խմբագիրներին և նրանց աշխատակիցներին։

Ինչպէս ամեն բան, այդպէս և մարդկային անամօթութիւնը պէտք է ունենան իրենց չափն ու սահմանը։ Բայց Հ. Առաքելեանը ցոյց է տալիս, որ ինքն այդպիսի չափ և սահման չի ճանաչում...

Զարմանալի մարդ է մեր կարճահասակ Առաքելեանը. նա խեղաթիւրում է ափ-աշկարայ իրողութիւնները, սևին սպիտակ և սպիտակին սև ներկայացնում. գողանում է ուրիշի սեփականութիւնը, տիրանում այլոց արդար իրաւունքներին, խաբում է նոյն իսկ օտարազգի հաստատութիւնները և դեռ այս ամենից յետոյ սաստիկ էլ նեղանում է, երբ իրա զոհերից մէկն ու մէկը համարձակութիւն է ստանում հրապարակաւ ճշմարտութիւնն ասելու։ Ցաւալի է, որ մարդոց լեզուի ներքև պատուհասող ոսկոր չկայ, ապա թէ ոչ Առաքելեանները չէին յանդգնիլ մարդկանց բարոյական զգացմունքները վիրաւորելու կամ գաղտագողի քարեր շպրտելու սրա կամ նրա հասցէին։ Տեսնելով Առաքելեանի ընթացքը, ես յակամայիցս յիշում եմ պատմական ենիչերիներին, որոնք լրբաբար ոտնատակ էին տալիս թշուառ ռայեաների սրբութիւնները, խոզի նման լափլփում էին, ուտում-խմում, կոտրում-թափում, գողանում, ծե-

ծում անմեղ մարդկանց և յետոյ էլ վեր կենում խստիւ արգելում էին իրենց զոհերին ձայն-ծպուտ հանել։

Առաքելեանը անիրաւաբար տիրացաւ իմ աշխատութեան և տուեց օտարազգի ընկերութեան և յետոյ էլ ենիչէրիաբար ուզում է «զալպ պէշլիկը հէլվաճիին եութտուրմիշ անել», ինչպէս ասում են Կ. Պոլսեցիք։ Ըստ Առաքելեանի բարոյական հասկացողութեան՝ Շուտները պարտաւոր են լռել, իրողութիւնները չշրհրապարակել, եթէ նոյն իսկ նկատեն, որ Առաքելեանները գողանում են իրենց իրաւունքը։

Բայց որովհետև առանց որոշ շարժառիթների ոչինչ չի-կատարւում աշխարհումս, ուստի իմ և Առաքելեանի հակառակութիւններն էլ անշուշտ ծնունդ են մեկին շարժառիթների ու քանի որ դրանք հասարակական բնաւորութիւն ունեն, թոյլ տուէք առաջ բերել նրանցից մի քանիսը։ Ահա.—

Առաջին- Համբարձում Առաքելեանն 1902 թուին ոչ-բարով հրատարակեց մի գրքոյկ, որը ծայրէ-ի-ծայր լիքն է անլուր հայհոյութիւններով (այդ նրա փեշակն է) ու պառաւական ասէ-կոսէներով։ Իմ խօսքը վերաբերում է «Հասարակաց դատաստանին. բողոք առ հասարակական խղճմտանքն» վերնագիրը կրող բրոշիւրին, տպուած Փարիզի հայկական ապարանում։

Ով դժբախտութիւն է ունեցել կարդալու այդ գրական տականքը, նա անշուշտ գաղափար կազմած կըլինի Առաքելեանի, որպէս գրական-հասարակական գործչի (?) անբարեխղճութեան մասին։ Առաքելեանն այդ գրքոյկով ցոյց է տալիս, իմիջի այլոց, որ ընդունակութիւն ունի մատնիչ անգամ լինելու։ Մենք պատրաստ ենք անհերքելի փաստերով ապացուցելու այդ բանը, եթէ Առաքելեանին հաճելի լինի մի այդպիսի անհաճոյ բայց ոչ-անտեղի գործ... Իրա ժամանակին, ի հարկէ, Առաքելեանի յիշեալ գրքոյկն անպատասխան չմնաց։ Այսպէս, օրինակ, «Հնչակ»-ում երևաց մի հակիրճ յօդուած «Մի ինսինուացիայի առիթով» վերնագրով. դա մի անողոք ապտակ էր Առաքելեանի երեսին, եթէ դա «ամերիկական պաղօշ» չէ և մազաչափ ամաչելու ընդունակ։ Այնուհետև Ռուշչուկում հրատարակուող «Վերածնութիւն» շաբաթաթերթի էջերում հրապարակ դուրս եկաւ պ. Ա.. Նազարբէկը և «Զարախօս թզուկը» վերնագրով մի շարք յօդուածներով փաստացի կերպով մերկացրեց Առաքելեանի զզուելի դէմքը։ Նոյն անողոք մերկացումը տեղի ունեցաւ և «Երիտասարդ Հայաստան» թերթի մէջ, որի Թաւրիզի աշխատակիցը լուրջ փաստերով ապացուցեց Առաքելեանի տգեղ աչքակապութիւնները։ Հէնց այդ բրոշիւրն էլ եղել է, այսպէս ասած, մեր մէջի կռուախնձորը և ահա թէ ինչպէս.—1902 թ., երբ Առաքելեանն ընտանիքով եկել էր Անապա ամառն անցկացնելու, նա կամեցաւ ինձ էլ դասել այն արարածների կարգը, որոնք ազգասիրութիւն են համարում շարունակ սրա-նրա միսը կրծոտելը։ Եւ նա յիշեալ բրոշիւրից մի օրինակ տուեց ինձ կարդալու, երևի համոզուած լինելով որ ես էլ դրա բովանդակութիւնը կընդունեմ հալած իւղի տեղ։

Բայց սխալուեց պարոնը։ Բրոշիւրը կարդալուց յետոյ, համակուած բուռն զզուանքով, դիմեցի Առաքելեանին և բացատրութիւն պահանջեցի նրանից՝ այդ սինլքոր տողերով մի ամբողջ կուսակցութեան պատիւը շոշափած լինելուն համար...

Ի վերջոյ բանն այնտեղ հասաւ, որ Առաքելեանն իսկոյն գրեց մեղայական նամակ, որին իսկոյն էլ ուղարկեցի կուսակցութեան պարագլուխներին։ Այդ եղելութեան վկայ են պ. պ. Ծատուրեան, Ներսիսեան, Էփրանոսեանց, Կարամաթոսեան և այլք։ Այդ օրից սկսած՝ Հ. Առաքելեանը ոչ մի առիթ ձեռքից չի փախցրել ինձ դէմ ոտնձգութիւններ յարուցանելու համար։ Յաւօք սրտի պէտք է նկատեմ, որ «Մշակի» խմբագրութիւնն էլ քանիցս ենթարկուել է նրա մեքենայութիւններին՝ տեղ չտալով «Մշակում» իմ մի քանի անմեղ յայտարարութիւններին, մի քանիսն էլ երկար ժամանակ պահելուց յետոյ միայն տպագրելով, որով բազմաթիւ թիւրիմացութիւնների տեղիք է տրուել։

Երկրորդ. Նոյն ամառը Առաքելեանն ստացաւ ինձանից Տաճկա-Հայաստանի քրդերի ազգագրութեան մի մասը Համբուրգում գումարուելիք Արևելագէտների ժողովում կարդալու «որպէս Շուտի աշխատութիւնը»։ Ի դէպ Առաքելեանը «Մշակում» զետեղած (№ 206) իւր նամակում փորձում է հաւատացնել ընթերցողներին, թէ «Շուտը թերուս է» և անկարող ազգագրական մի նիւթ դասաւորելու ինչպէս հարկն է, և իբր թէ ինքն է եղել ինձ ծրագիր և ուղղութիւն տուողը. քիչ է մնում Առաքելեանն Հայ գրականութեան ջոջը դառնայ և բոլոր հայ գրագէտների էլ՝ առաջնորդը, բայց այդ չի խանգարիլ ինձ հաշվարտութիւնն ասել, որ ես երբէք չէի և չեմ կարող ստորանալ այնքան, որպէս զի թոյլ տայի ինձ Առաքելեանի նման փաստալից ծրագիր մուրալու... Ինչևիցէ։ Առաքելեանը կարդալով իմ ձեռագիրը, հակառակ իւր մեծամտութեան, խիստ հաւանեց և իսկոյն էլ խոստացաւ «Օրիէնտալիստների ժողովում կարդալուց յետոյ ձեռագիրը ներկայացնել Ռուսաց Կայսերական Աշխարհագրական Ընկերութեան», խնդրելով վերջնից, որ դրամական միջոցներ տրուին ինձ քրդերի մանրամասն ազգագրութիւնը կազմելու համար։ Անցաւ 1902 թուականը, անցաւ և 1903-ը. քանիցս բացատրութիւն եմ պահանջում Առաքելեանից իրա խոստմնազանցութեան առթիւ, բայց միշտ էլ առաձգական պատասխաններ եմ ստանում... Դու մի ասիլ, որ Առաքելեանն «իրա գլխից բարձր ապուր ուտելու» կպատրաստուի եղեր, ինչպէս ասում են տաճկահայերը։ 1904 թ. աշնան, վերջապէս, ստանում եմ մի մեծագիր գրքոյկ «Курды въ Персій» վերնագրով։ (отдѣльный оттискъ изъ № 1-го XVII тома «Извѣстій» Кавказскаго отдѣла Императорскаго Русскаго Географическаго О-ва Тифлисъ, типогр. К. П. Козловскаго 1904 г.) և տեսնում եմ, որ Առաքելեանն առանց կարմրելու ստորագրել է գրքին որպէս հեղինակ։

Կարդում եմ գիրքը և ահա թէ ինչ եմ տեսնում.

I. Առաջին երեսները նուիրուած են Առաքելեանի ինչ-որ ճանապարհորդութեան և առանձին կապ չունին բուն քրդական

ազգագրութեան հետ. և եթէ տեղ-տեղ Առաքելեանը կամենում էլ է մի բան ասել քրդ. ազգ. վերաբերմամբ, իսկոյն ընկնում է հակասութիւնների և անհանդուրժելի սխալների մէջ, ուստի և «Извѣст.»-ի խմբագրութիւնը ստիպուած է լինում ընդարձակ ծանօթութիւններով ջրել նրա ասածները: Ասենք, այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև երբ մի մարդ ձեռնարկում է իրան անմիջապէս ծանօթ չեղող որև է նիւթի ուսումնասիրութեան, նա անշուշտ կարգին մի բան դուրս չի բերիլ: Առաքելեանն ինքն անծանօթ լինելով քրդերի լեզուին, վարք ու բարքին, իրաւաբանական սովորութիւններին և առտնին նիստ ու կացին,—բնականաբար տեղի պիտի տար հրատարակիչների լուրջ և փաստացի դիտողութիւններին: Մինչդեռ քիչ յետոյ, երբ Առաքելեանն սկսում է «օգտուել» իմ ձեռագրից (իմա ծայրէ ի ծայր, բառացի կերպով թարգմանել նրան) այդտեղ արդէն դադարում են Ընկ. նկատողութիւնները:

Պ. Թէ առաքելեանն այս կամ այն ժողովում, իրօք, կարդացել է քրդերի մասին «զեկուցումներ» —այդ իմ գործը չէ. ես այսքանը գիտեմ, որ «Курды въ Персіи»-ի մէջ զետեղուած բուն ազգագրական նիւթերը իմ սեպհական աշխատութիւնն են և ոչ Առաքելեանի: Այդ բանում կրհամոզուի իւրաքանչիւր ոք, երբ աչքի առաջ ունենայ իմ ձեռագիրը (այժմ առանձին գրքով լոյս տեսած՝ «Քրդերը Տաճկաց-Հայաստանում վերնագրով) և «Курды въ Персіи» գիրքը: Մօտիկ յառաջիկայում, երբ միջնորդ դատարանը կըքննէ այդ երկու աշխատութիւնները, այն ժամանակ հրապարակաւ կըյայտնուի ճշմարտութիւնը և մեղաւորը կստանայ հասարակութիւնից իրա արժանաւոր պատիժը:

III. Բայց որ Առաքելեանը գիտակցաբար զողանում է իմ խօսքերը և Կ. Աշխ. Ընկ. ներկայացնում որպէս իրա ինքնուրոյն աշխատութիւնը, դա երևում է, իմիջի այլոց, և նրանից, որ «Курды въ Персіи» գրքի 30 երեսում Առաքելեանն ասում է. «На мой вопросъ, почему такъ безусловно вѣрять жениху и не производять разслѣдованія курды отвѣтили мнѣ, что и т. д.», իբր թէ Առաքելեանն ինքն է հարցրել քրդերին և նրանք պատասխանել են ուղղակի իրան. ... Օ՜, պոչաւոր, փաթենթաւոր սուտ, որ Առաքելեանների բերանումը ոսկէզօծւում ես և յաճախ կուլ գնում մտաւոր հիւանդների կոկորդն իվայր: Բանը նրանումն է, որ յիշեալ հատուածը նա դուրս է բերել իմ ձեռագրից, որտեղ այսպէս է տպուած. «Ձեր հարցին, թէ ինչպէս կարելի է առանց անհերքելի ապացոյցների հաւատալ մի միայն փեսի լոկ երկու խօսքին ու կընոջը այդ դրութեանը հասցնել, քիւրդը կրպատասխանէ»... («Քրդերը Տաճկաց-Հայաստանում» էջ 217—218-ը): Կարծում եմ, որ մարդ այդքան առաջ գնալու համար պէտք է ոտքից մինչև ականջները կարմրի...

IV. Որպէսզի ցոյց տանք «Լուսայի» ընթերցողներին, որ Հ. Առաքելեանն արդարև հնարաւորութիւն չունի ինքնուրոյնաբար կազմելու քրդերի ազգագրութիւնը՝ արժէ յիշել և այն որ իմ ձեռագիրը ներկայացնելով քրդ. ազգագրութեան առա-

ջին մասը—ա. Աշխարհագրական և Պատմական Տեղեկութիւն-ներ—բ. Մարդաբանական Տեղ.—գ. Քրդու Բնակարանը և Նրա Պարագաները—դ. Քրդու Հացը, Օճախի շուրջը, Լուսաւորութեան առարկաներ և Ամաններ—ե. Երկրագործութիւն և Գործիք—զ. Որսորդութիւն—է. Զգեստ և Զարդ—ը. Ձէնքեր և Նրանց Պարագաները—թ. Ուտելիք և Խմելիք—ժ. Հարսանիք,—Առաքելեանն էլ «իւր ուսումնասիրութիւնը» (?) սահմանափակում է միայն այդ նիւթերով։ Նա գիրքը վերջացնում է հետեւեալ տողերով. «Для полноты моего очерка мнѣ нужно было бы описать еще обряды похоронъ траура по убитому или умершему, но я боюсъ злоупотребить вашимъ вниманіемъ и, даканчивая *мой очеркъ*, надѣюсъ, что успѣлъ дать вамъ если неполное, то, по крайней мѣрѣ, болѣе или менѣе конкретное панятіе о курдахъ»... (էջ 31)։

Դա լոկ զուգադիպութեան կամ պատահականութեան արդասիք չէ. Երբէք. պարոնն ուրախութեամբ կըշարունակէր «իւր ուսումնասիրութիւնը», եթէ... եթէ «թերուս» Շուտը տուած լինէր նրան քրդ. ազգագրութեան Բ. և Գ. մասերն էլ։

Բայց, ի հարկէ, բաւական է, որքան շահագործել է վստահութիւնն ուրիշների և նրանց քրտնաջան աշխատութեամբ դափնիներ քաղել այս ու այն կողմից. այժմ յայտնի է մեզ Առաքելեանի իսկական դէմքը, ուստի և այսուհետև չխաբուելու չափ անխոհեմութիւն ունենալը բարուք կըհամարենք։

Երրորդ. Առաքելեանն իւր նամակում («Մշակ» № 206) կամենալով ցոյց տալ, որ Շուտներն յետին մտքերով են յարձակւում նրա վրայ, խորհրդաւոր եղանակով ասում է. «Ես այստեղ չեմ բաց անում վարագոյրը, թէ ինչից, ինչ գծուած հաշիւներից դրդուած, Շուտը յարձակւում է իմ դէմ...»։

Ինչո՞ւ չէք բաց անում «Վարագոյրը», պ. Առաքելեան, ինչի՞ցն էք քաշւում, քանի որ ձեզ համար ոչ մի սրբութիւն գոյութիւն չունի, բացի ուրիշի իրաւունքով փորներդ հաստացնելու հոգսից։ Աւելի լաւ կանէք, եթէ բաց անէք վարագոյրը և ցոյց տաք մարդկանց ձեր ողորմելի դէմքը... բայց դուք փորացաւ ունիք, գիտեմ։ Եթէ մի րոպէ ձեր նեղլիկ շրջանակից դուրս նայէք, պիտի տեսնէք, որ ամենուրեք գիտեն ձեզ, սակայն ոչ ձեր կարծածին պէս։

Ազնիւ մարդը երբէք չի ծամծմել իւր խօսքերը, մթին, փողոցային միջոցների չի դիմել իւր արարքները քողարկելու համար, փրփրած բերանով չի յարձակուել մի ամբողջ կուսակցութեան վրայ, որի շարքերը բռնող գաղափարական զինուորները մասնութեան և դողութեան միջոցով ձեռք բերուած ժամանակին դափնիների կարիք չեն զգում... Դուք գործ ունիք մի անհատի հետ, որը մեղադրում է ձեզ գրական գեղծման մէջ, հետևաբար դուք էլ պէտք է ձեր բացատրութիւններն ու ասելիքներն ուղղէք այդ անհատին դէմ. այո, դուք չպէտք է, ձեր առջև լայն-լայն բացուած ժամուլի էջերին վրայ յենուելով՝ համարձակուիք հայհոյել այս կամ այն կուսակցութեանը, որ-

քան էլ և այդ կուսակցութեան սկզբունքներն ու տակտիկան հակասեն ձեր սահմանափակ աշխարհահայեացքներին։ Այլապէս հասարակական տնողոք բայց և անաչառ դատաստանը կըտայ իւր աքացին ձեր կրծքին և դուք կը գահավիժէք ձեր անարժան դիրքից. Դիմեցէք միայն և միայն ազնիւ զէնքերի, եթէ ուզում էք ծառայել ժամուլին և հասարակութեանը։ Բոլորովին համաձայն եմ միջնորդ դատարանի միջոցաւ հասարակութեան առաջ դնելու անաչառ քննութեան արդիւնքը։։

Մ. Տ. ՇԻՈՏ

Նոյեմբերի 2 1905
Անապա

Տաճիկ ոստիկանութեան դաւադրութիւնը Օսմանեան հայերի դէմ։ Կ. Պոլսից նոյեմբերի 4-ին հեռագրում են Русскія Вѣд. լրագրին հետեւեալ նշանաւոր տեղեկութիւնը.

«Սուլթանը ապացոյցներ ստացաւ, որ այն բոմբերի ու դինամիտների մեծագոյն մասը, որոնք կարծւում էին թէ հայերի ձեռքով են տարւում Տաճկաստան, ձեռք են բերուած տաճիկ իշխանաւորների ձեռքով, որոնց յանձնուած էր քննութիւն կատարել հայերին վերագրած դաւադրութիւնների մասին և որոնք այս գործիքները տարածել են ամեն կողմ։ Սուլթանը սարսափելի կերպով զայրացած է և միտք ունի արտաքսել բոլոր յանցաւորներին»։

Մեր պատասխանը Հ. Առաքելեանի հայհոյանքներին միւս անգամ։

Խմբագրութեան պատասխաններ

Շուշի. Յ. Խանլարեան.—«Որբացած ազգը» ինչպէս տեսնում էք այս համարում չկայ։ Եթէ չենք սխալւում, այս 6-րդ բանաստեղծութիւնն է ձերը, որ... չի տպւում։ Այսուհետև տեսնենք։

Նախիջեւան. Լևոն Խանզադէ.—«Աւետարանի եղբայրները» վէպը ստացանք և կտպուի։

Թիֆլիս. Հ. Տ.—Ասում էք՝ «Բազմավէպ» պապական թերթը մեզ հայհոյել է և թէ ինչու չենք պատասխանում։ Մենք այդ թերթը չենք ստանում. կարիք էլ չկայ ստանալ մի կեղտոտ թերթ, որ միայն հայհոյել գիտէ։ Բայց մխիթարեանների դիմակը պատռուեց արդէն հայութեան առջև. ամբողջ տարի է հայկական աշխարհը արեան դաշտ է դառել թուրք հրոսակների ձեռքով, բայց նոքա իրանց երկու օրգաններով ոչ մի տող, ոչ մի կարեկցութեան նշոյլ ցոյց չտուին, նոքա նստած Եւրոպայի կրծքում «քաղաքականութեամբ կպարապին կոր, ինչպէս կլայ եղեր, որ մեր մեծ ֆաղիշահը դիտնայ, թէ հայ կաթոլիկ պատերները կգրեն կոր թուրքերուն դէմ, ան ատեն իրենց թերթերուն մուտքը կարգելուի կոր Տաճկաստան, կը հասկնաք իշտէ».— Մի հատիկ խօսք էլ. Տաճկաստանում հայ ժողովրդի արեան գետեր հոսեցին. Ռուսաստանում ազգային ոգէտը մաշեց մեր ժողովրդին. բանտ, տարագրութիւն, նահատակութիւն, հուր ու սուր մեծ հունձ գործեցին մեր տառապեալ ժողովրդի մէջ։ Երևակայեցէք ոչ այնտեղ, ոչ այստեղ Վենետկի հայ պատերների դաստիարակ զաւակների քիթն էլ չզրլեցաւ. և դեռ համարձակւում են հայ անուն կրել իրանց վրայ։ Հասկացաք։

Ուրմիա. Գ. Իսք.—«Արեան հայրենիք» բանաստեղծութիւնը ստացանք։ Կաշխատենք տպել։

Թիֆլիս. Հ. Տ. Ա. Վրացերէնից թարգմանած բանաստեղծութիւնը ստացանք։

Թիֆլիս. Յ. Տէր Ման.—Միայն Դուք չէք. շատ շատերը Ձեզ նման այդ խնդրի առթիւ դիմել են մեզ նամակներով և անձամբ. Ձեզ մեր տալիք պատասխանը թող կարդան և նոքա։ Հարցնում էք՝ ինչու մեր շնորհալի քարոզիչ Տ. Բենիկ վարդապետը չի քարոզում վանաց մայր եկեղեցում, քանի որ ժողովրդի ցանկութեամբ վեհ. կաթողիկոսն ու առաջնորդը նորան այդ պաշտօնին հրաւիրել են դեռ գարունքից։ Այդ մասին առաջարկում ենք իմանալ կամ պ. երեցփոխից, կամ առաջնորդարանից և կամ նոյն իսկ Հ. Բենիկից։ Մենք ձեռնպահ ենք այդ խնդիրը շօշափելուց և խնդրում ենք էլ չդիմել մեզ այդ հարցով։

Ախալցխա. Ս. Վ.—Նախորդ յօդուածը մենք չենք ստացել. այս վերջինը ստացանք Լումայի լոյս տեսնելու նախօրը։ Կտնօրինենք։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԳՈՒՈՑ Ա. Գ. ԱՂԱՆԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

,,ՆՈՐ-ԴԱՐԻ"

բաժանորդագրութիւն

Թերթի վարչութիւնը որոշել է «Նոր-Դար»-ի սոյն տարուայ վերջին (հոկտ., նոյեմբ. և դեկտեմբ.) ամիսների համարները Զրի ուղարկել նրանց, որոնք ցանկանում են «Նոր-Դար»-ին բաժանորդ գրուել առաջիկայ 1906 թուականին հետևեալ պայմաններով.

1) Այժմէն 1906 թ. համար բաժանորդ գրուողը վճարում է 10 ռուբլի բաժանորդագինը և այս տարուայ համարների էքսպեդիցիայի համար 50 կոպէկ և ստանում է բաժանորդ գրուելուց յետոյ այս վերջին երեք ամիսուայ ընթացքում լոյս տեսնող համարները Զրի։

2) Նրանք որոնք չեն կարող միանուագ վճարել տարեկան բաժանորդագինը, կարողեն բաժանորդ գրուելով ուղարկել 5 ռուբլի և 50 կոպ., իսկ դեկտ. վերջումը մնացորդ 5 ռուբլին և կըստանան այս վերջին երեք ամսուայ ընթացքում լոյս տեսնող համարները Զրի և առաջիկայ 1906 թուականի համարները մինչև տարուայ վերջը։

Հասցէն՝ Тифлисъ, редакція ,,Норъ-Даръ".

1906 թ. Յունուարից

Աշխատակցութեամբ նոր և յայտնի գրագէտների կսկսուի պատկերազարդ

2 ռ. ,,ՄԱՏԷՆԱԳԷՏ" 2 ռ.

Նոր ամսագրի հրատարակութիւնը, որի նպատակն է ծառայել հասարակութեան որպէս գրական ինքնակրթութեան աղբիւր։ Համարը կունենայ 48-64 էջ։

Զ Ր Ա Ր

Մինչև դեկտեմբերի 10-ը բաժանորդ գրուողը կստանայ «Բառարան Հայ կենսագրութեանց» գիրքը, որ առանձին արժէ 70 կոպ. իսկ եթէ բաժանորդների թիւը հասաւ 1200-ի, ամեն մի բաժանորդ կըստանայ «Հայոց պատմութեան նոր շրջանը» գիրքը, որ կարժենայ առանձին 1 ռ. 25 կոպ.

Բաժանորդագինը միմիայն 2 ռուբլի տարեկան, Պարսկաստան 2 ռ. 50 կ. արտասահ. 8 ֆր.

Հասցէն Тифлисъ, Ред. жур. «Матенагетъ» Պանասեիչա փող. № 1 (կուկիա)։ Բաժանորդ կարելի է գրուել նաև Զ. Գրիգորեանցի և «Գուտտէնբերգ» գրավաճառանոցներում։

Տասը բաժանորդ գտնողը ինքը ծրի կը ստանայ։

Խմբագիր-Հրատարակիչ՝ Հայկ Տէր-Աստուածատրեանց

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱՐՇԱԼՈՅՍ“

գրական, հասարակական, քաղաքական, տնտեսագիտական
պատկերազարդ օրաթերթի

որ լոյս է տեսնում օգոստոս ամսի վերջերից՝ ռուսաց «Русскія вѣдомости» օրաթերթի մեծութեամբ (տարեկան բաժանորդագինը 7 ռ.)։

«Արշալոյսի» նպատակն է լինելու ընթերցանութեան՝ թարմ և օգտակար նիւթ մատակարարել հայ ընթերցողներին՝ արծարծելով առաջադիմական լուսամիտ գաղափարներ, բացատրելով ընթացիկ կեանքի երևոյթները, հասարակական պէս-պէս հոսանքներն ու հրատապ հարցերը և այդ բոլորի միջոցով նպաստել հայ ազգի զարգացմանն ու քաղաքակրթութեանը։ Աշխատակցելու հրաւիրուած են յայտնի հեղինակներ ու մասնագէտներ։ Բացի դրանից խմբագրութիւնը լայն ասպարէզ է բանալու հայ երիտասարդութեան առաջ, առանձնապէս աշխատելով տեղ տալ թարմ ու օգտակար ոյժերին և գործադրելով գրական աշխատանքի վարձատրութեան սկզբունքը։

Բաժանորդագրութեան պայմանները

Թիֆլիսի եւ Ռուսաստանի համար		Արտասահմանի համար
4 ամիսը (սեպ.—յուն.)	2 ռ. 50 կ.	4 ամիսը 4 ռ.=9 մարկ
3 »	2 »	
2 »	1 » 50 »	= 11 ֆրանկ=9 շիլլին
1 »	» » 75 »	=2 դոլլար

Խմբագիր-Հրատարակիչ՝ Գ. ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳԵՈԶԵԱՆ

1906 ՏԱՍՆԵՒՄԻԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ 1906

Բացուած է բաժանորդագրութիւն

ԼՈՒՄԱՅ

Գրական, բաղաքական, պատմական եւ հանրային

ԱՄՍԱԳՐԻ

ԼՈՒՄԱՆ ՑՈՒՆՈՒԱՐԻՅ ԿՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՀԵՏԵՒԵԱԼ ԼԻԱԿԱՏԱՐ ԾՐԱԳՐՈՎ.

1. Ինքնուրոյն և ռուսերէնից ու օտար լեզուներից թարգմանուած վէպեր, պատմուածքներ և ոտանաւորներ· այլ և կենսագրութիւններ:
2. Կովկասագիտութեան վերաբերեալ ամեն տեսակ պատմական վաւերագրեր և յօդուածներ:
3. Ճանապարհորդութիւններ և ժողովրդի կենցաղի նկարագիրներ:
4. Բարոյագիտական յօդուածներ:
5. Մատենախօսութիւն և կրիտիկա գրական երկերի:
6. Ներքին տեսութիւն:
7. Քաղաքական տեսութիւն.
8. Այլ և այլք. տեղեկութիւններ գիտութիւնից և արուեստից:
9. Խմբագրութեան պատասխաններ:
10. Յայտարարութիւններ:

«ԼՈՒՄԱՅ»-ին կաշխատակցեն մեր հետեւեալ աշխատակիցները.—Օր Նուարդ Աղաեան, ս. ս. Զատիկ Շիլինկարեան, Տիրուհի Կոստանեան, պ. պ. Ասրպես, Արշակ Շիլինկարեան, Արշակ Շոպանեան, Բենիկ վարդապետ, Գար. Ենգիբարեան, Գրիգոր Վանցեան, Երուանդ Ճանազիզ, Իսահակ Յարութիւնեան, Իւրի Վիսելովսկի Կարապետ Կոստանեան, Միհաս Բերբերեան, բժ. Մ. Արամեան, Միքայել Թամամշեան, Մկրտիչ Բարխուդարեան, Մկրտիչ Ղազարեան, Մուրացան, Մուշեղ Վ., MARS, Մ. Շովրեան, Յովհաննէս Յովհաննիսեան. Ն. Յարոյ, Նիկ. Քարամեան, Շիրվանզադէ, Պերճ Պոշեան, Սարգիս Մանասեան, Ստեփան Գաբրիելեան, Վրդանէս Փափազեան, Տ. Վ., Քաջբերունի, Քենասեր, *** եւ այլն եւ այլն:

Տարեկան բաժանորդագինն է Ռուսաստանում 8 ռուբլի, կէս տարուանը՝ 5 ռուբլի, իւրաքանչիւր համարը՝ մի ռուբլի, Արտասահմանում 27 Ֆրանկ:

Բաժանորդագրութիւնն ընդունւում է Թիֆլիսում «Լումայ»ի խմբագրատանը Պոլիցէյսկի 7, և Կենտրոնական գրավաճառանոցում. իսկ գաւառներում մեր գործակալների մօտ.

Յայտարարութիւնների տողը արժէ 10 կոպէկ:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում:

Խմբագրութեան հասցէն. Тифлисъ, Редакція ежемѣсячнаго журнала „ЛУМА“, արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien „LOUMA“.

Խմբագիր Հրատարակիչ ԴԻՈՑ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ